

ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

WISDOM
МУДРОСТЬ



№1 2013

ՀԱՆՂԵՄԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝ Բրուտյան Գեորգ	Ակադեմիկոս, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի, Հայոց փիլիսոփայական ակադեմիայի, ՀՊՄՀ Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի նախագահ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Զիջյան Ռոբերտ	Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գևորգյան Սրբուհի	ՀՊՄՀ կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, Հայոց փիլիսոփայական ակադեմիայի թղթակից անդամ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Զապավսկի Իգոր	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հայոց փիլիսոփայական ակադեմիայի ակադեմիկոս
Հակոբյան Նաիրա	«Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» գիտական հանդեսի գլխավոր խմբագիր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հովհաննիսյան Հասմիկ	ՀՊՄՀ փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ, Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի փոխստորեն
Հովհաննիսյան Հովհաննես	ԵՊՀ դոցենտ, Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի փոխստորեն, ՀՀ Հանրային խորհրդի Քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի նախագահ
Մոսինյան Դավիթ	ՀՊՄՀ փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի ասիստենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Գրական խմբագիրներ

Մեյսոն Զոն (ԱՄՆ)	Հոլինս (ԱՄՆ) համալսարանի պրոֆեսոր
Միքայելյան Տիգրան	ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու
Ֆրիկ Մարիա Լուիզա (Ավստրիա)	Ինսբրուքի (Ավստրիա) համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի դասախոս, փիլիսոփայության դոկտոր

Խմբագրական խորհուրդ

Միրզախանյան Ռուբեն	Խմբագրական Խորհրդի պատվավոր նախագահ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի պատվավոր դոկտոր
Գասպարյան Յուրա	ՀՊՄՀ սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ-ի հումանիտար գիտությունների ակադեմիայի անդամ
Գրիգորյան Արամ	ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի բաժնի վարիչ, ակադեմիկոս
Գրիգորյան Էռնեստ	ՀՊՄՀ սոցիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր
Դանիելյան Էդուարդ	Հայոց փիլիսոփայական ակադեմիայի ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դռուխանյան Աելիտա	ՀՊՄՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կենպ Պիտեր (Դանիա)	Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, Փիլիսոփայական ընկերությունների միջազգային ֆեդերացիայի նախագահ
Կոխլեր Հանս (Ավստրիա)	Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ, փի-3333լիսոփայության պրոֆեսոր
Ղազարյան Էդվարդ	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «Գիտության աշխարհում» հանդեսի գլխավոր խմբագիր
Մումջյան Կարեն (Ռուսաստան, Մոսկվա)	Մոսկվայի Պետական համալսարանի Սոցիալական փիլիսոփայության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մոսթատպոուլու Եվանգելու (Հունաստան)	Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ, փիլիսոփայության դոկտոր, ակադեմիկոս
Վարդանյան Կամո	ՀՊՄՀ գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մտյոպին Վյաչեսլավ (Ռուսաստան, Մոսկվա)	ՌԳԱ ակադեմիկոս, փիլիսոփայության միջազգային ակադեմիայի անդամ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ստրոուդ Բարրի (ԱՄՆ)	Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ, ակադեմիկոս
Ուրսուլ Արկադի	Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի անդամ, Նոոսֆերայի միջազգային ակադեմիայի անդամ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Օհանյան Քաջիկ (Ռուսաստան, Մանկտ Պետերբուրգ)	-Մանկտ Պետերբուրգի Պետական Ինժիներա-տնտեսագիտական Համալսարանի Սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ռաֆաել. Արիստոտելը և աթենական դպրոցը



Դավիթ Անհաղթ (5-6 դդ.)

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներկայացվող հանդեսը կրում է «Իմաստություն» խորագիրը (անգլերեն՝ *wisdom*, ռուսերեն՝ *мудрость*): Իհարկե, ինչպես միշտ, մենք պետք է նկատենք այդ հասկացությունների արմատները հին հունական մտածողների գործերում): Թերևս «իմաստություն» բառը տարբեր լեզուներում համեմատելիս հնարավորություն կընձեռի բացահայտել այդ բառի մեջ ամփոփված հասկացությունը, սակայն այստեղ առաջանում են դժվարություններ՝ «իմաստություն» անհամեմատ ավելի շատ հանդիպում է հոգևոր գրականությունում՝ մասնավորապես Աստվածաշնչում, քան անգամ փիլիսոփայական և հարանման գործերում:

Աստվածաշնչի մի շարք հրատարակություններում խոսվում է «իմաստության» մասին, այսպես օրինակ՝ Աստվածաշնչի հին և նոր հրատարակություններում Սողոմոնը դիմում է Տիրոջը հետևյալ խոսքերով. «...Ինձ իմաստություն ու իմացություն տուր, որ կարողանամ ղեկավարել քո այս ժողովրդին, այլապես ով պիտի ղեկավարի» (Աստվածաշունչ 2001թ., էջ 506, տե՛ս նաև 1994թ-ի մոսկովյան հրատարակություն, էջ 549):

Աստծուն դիմելն այս հարցում համատարած է: Ավելին, Սոլոնը հայտարարում է, թե «իմաստության մեջ առաջինն Աստվածն է» (Дιοген Лаерски, էջ 71), մեկ այլ տեղում «իմաստությունն ինքը Աստվածն է» (էջ 118): Սակայն որոշ փիլիսոփաներ հակված չեն նույնացնել իմաստությունն Աստծո հետ և փնտրում են այլ փաստարկներ՝ ապացուցելու համար, որ իմաստությունը մարդկային հատկություն է: Դիոգեն Լայերտացին ամենամեծ իմաստունը Սոկրատեսին է համարում (Дιοген Лаерски, էջ 118): Մեկ այլ հույն մտածող՝ Արիստիպը, նույն միտքն արտահայտում է հետևյալ կերպ. «Երբ ես իմաստության կարիք ունեի, ես Սոկրատեսի մոտ էի գնում, երբ դրամի կարիք՝ ուրիշներին էի դիմում» (Дιοген, էջ 128): Բոլոր դեպքերում գրականության մեջ չկա իմաստության մի ընդհանուր սահմանում, «իմաստության» տարբեր նկարագրություններ ունեն և տարբեր են նրանց գնահատականները մտավորական աշխարհում: Ոմանք իմաստությունը համարում են «գերագույն ճշմարտություն», «ճշմարտությունների միասնություն», «ճշմարտություն, որը ձեռք է բերվում ոչ միայն մտքի ուժով, այլև փորձով ու փորձությամբ» և այլն: Տիպական է բանաստեղծության ոգով արտահայտված աղոթքը.

ՏԵ՛Ր ԻՄ,
ՈՒԺ ՏՈՒՐ ԻՆՁ,
որ կարողանամ
փոխել այն ամենը,
ինչը կարող եմ փոխել:

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՏՈՒՐ ԻՆՁ,
որ կարողանամ հաշտվել
այն ամենի հետ,
ինչը փոխել չեմ կարող:

ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՏՈՒՐ ԻՆՁ,
որ ես կարողանամ առաջինը
տարբերել երկրորդից:



ՃԱՆԱՉԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԶԻՐԱՏ,
ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ
(Այս նախադասությունը առաջինն է, որ Մեսրոպ Մաշտոցը թարգմանել ու գրել է հայերեն)

Հայ հանճարեղ բանաստեղծ Եղիշե Չարենցն իր կյանքի վերջին օրերում գրել է մի բանաստեղծություն, որտեղ հիմնական հասկացությունն *իմաստությունն* է:

Թումանյանի երգերը կարդալիս՝ միշտ ես
Միտք եմ անում, թե արդյոք
Կարո՞ղ եմ ես էլ
Լինել այդքա՞ն *իմաստուն*
Երբ լինեմ ծեր...



Կարողանա՞մ պիտի ես
Արդյոք, ինչպես նա
Այդքան հանգիստ ընդունել
Թե՛ անկում, թե՛ մահ.
Շա՞ղ տալ ձեռքով լիառատ
Երգեր ու գանձեր,
Իմաստությամբ անարատ,
Երբ, լինեմ ծեր...

Այս ուսանելի բանաստեղծությունից կարելի է առաջին իսկ հայացքից գալ այն եզրահանգման, որ *իմաստունն* այն անձնավորությունն է, ով հանգիստ է ընդունում ինչպես մահն այնպես էլ անկումը: (Նկատի ունենալով այս բանաստեղծության գրելու տարեթիվը, նրա ենթատեքստը մեզ հասկացնել է տալիս, որ Չարենցը բանտարկության այս տարիներին սպասում էր իր մահվան դատավճռին, այդ վճիռն ընդունելով իմաստասերին վայել հանգստությամբ): Ավելորդ չէ նշել, որ լիառատությունը և անարատությունը նույնպես Չարենցը համարում է *իմաստության* բնորոշ հատկանիշներ:

Եթե շարունակենք պրպտումներն ըմբռնելու համար, թե ինչ է *իմաստությունը*, ապա կնկատենք մի շարք հատկություններ, որոնցով օժտված է վերջինս, այն է՝ ճշմարտությունների միասնությունն, գերագույն ճշմարտություն, զգացմունքների կայունություն, լավն ու վատն ընկալելու հանգիստ պատրաստակամություն և նման կարգի այլ հատկություններով օժտված, մինչև վերջ չբացահայտված մի երևույթ, որի մասին բոլորը կարծում են, թե ունեն գաղափար, սակայն իրականում նրանցից շատերը բացարձականացնում են իրենց այդ ճանաչողական ունակությունը:

Չթվարկելով *իմաստության* շատ այլ մեկնաբանություններ՝ նշենք միայն *իմաստության* մի այլ ըմբռնում, որը համահունչ է ժամանակակից փիլիսոփայության շուրջ վիճաբանությանը: Խոսքը վերաբերում է մետափիլիսոփայությանը: «Dialogue and Universalism» հանդեսը մետափիլիսոփայությունը դիտարկում է որպես գիտության, արվեստի և կյանքի *իմաստություն* (Vol. XVI, N5-6/2006):

Այստեղ ճշմարտությունն առաջին հերթին այն է, որ *իմաստությունն* առնչվում է ն՝ գիտությանը, ն՝ արվեստին, և՛ կյանքի տարբեր դրսևորումներին: Այո, ըստ էության, *իմաստությունը* մետափիլիսոփայության հետ բազմաթիվ կապերով միահյուսվում է և փիլիսոփայական վերլուծության շնորհիվ նրանցից յուրաքանչյուրն իր տեղն է գտնում *իմացության* տեսության մեջ:


Այդ մասին են վկայում նաև այն, որ դարերի ընթացքում *իմաստասիրությունը* դարձել է անգամ մայրաքաղաքների անուն, Հին Հունաստանում Աթենքը համարվում էր *իմաստության*, ռազմական գործունեության և արհեստների Աստված: Նման հատկությամբ էր նաև օժտված

Բուլղարիայի հնագույն մայրաքաղաքը՝ Սոֆիան, որն ինչպես նշում են մասնագետները, առաջացել է հունական «σοφία» բառից, և որը բուլղարերենում հնչում է որպես իմաստություն, վարպետություն:

Իմաստության տարբեր և բազմապիսի ըմբռնումներն ու մեկնաբանությունները կարող են ընթերցողի մոտ հարց առաջացնել, թե արդյոք այդ հանգամանքը չի խանգարում յուրաքանչյուր դեպքում ճիշտ ըմբռնել և հասկանալ իմաստության բովանդակությունը: Ոչ միայն այս դեպքում, այլ նաև յուրաքանչյուր մտքի ամրագրված արտահայտությունը հասկացման և ըմբռնման խնդիր ունի: Ռուս գրողներից մեկը նշել է, որ յուրաքանչյուր տեքստ կարելի է կարդալ հետևյալ ձևերով. կարելի է կարդալ և չհասկանալ կարդացածը, կարելի է կարդալ և հասկանալ կարդացածի իմաստը, քիչ չեն նաև այն դեպքերը, երբ կարելի է կարդալ և հասկանալ ոչ միայն այն, ինչ ուղղակի ձևով ասված է տեքստում, այլ նաև տողերի միջև արտահայտվածը: Այստեղ շատ կարևոր նշանակություն ունի համատեքստի ճիշտ վերլուծությունը, համատեքստի և ենթատեքստի համապատասխան փոխհարաբերությունը, որը ցույց է տալիս մեր մոտեցումից կախված հնարավոր համատեքստի և ենթատեքստի տեղերի փոխանակումը և դրանով իսկ մեր հասկացածի ընդարձակումը: Բոլոր պարագաներում պետք է ձգտել հասկանալ, թե ինչ է ասում տվյալ իմաստասիրական արտահայտությունը և պարզել, թե ինչպես է պետք այն վերլուծել ու դարձնել ընթերցողի գիտակցության սեփականությունը:

*
* *

«Իմաստություն» հանդեսում, որի առաջին համարը ներկայացվում է ընթերցողին, հրատարակվելու են առաջին հերթին գիտության զարգացման համար կարևոր հոդվածներ, վերլուծություններ, որոնք կարող են օգտակար լինել մասնավորապես հումանիտար և հասարակական գիտությունների ասպարեզում: Իր առջև դրված խնդիրը իրականացնելու նպատակով խմբագրությունը հոդվածների հեղինակներին առաջարկում է խմբագրությանն ուղարկել արդեն հեղինակի կողմից խմբագրված տարբերակը: Ընդ որում հեղինակները պատասխանատու պետք է լինեն հոդվածներում ներկայացված փաստերի և մեջբերումների ճշգրտության համար: Պետք է նշել այն կարևոր հանգամանքը, որ խմբագրությունն ամեննին էլ չի պահանջում, որ հոդվածներում առաջադրված կարծիքները համապատասխանեն կամ անգամ համահունչ լինեն խմբագրության համապատասխան հայեցակետին:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն



Խմբագրության կողմից

Առաջաբան

Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրները
Փիլիսոփայության ոլորտ

Հոգեբանության ոլորտ

Մամուլի արձագանքները խմբագրության խմբագրմամբ

Փիլիսոփայության միջազգային օր

«Փիլիսոփայությունն անսահմանություն է, իսկ մենք՝ չնչին հյուլեններ...»

2011 թվականի նոյեմբերի 17-ի ՀՊՄՀ-ում ՀՖՀՀ ռեկտոր տիկին Ժոել լը Մորգելեկի ողջույնի
խոսքը (Ֆրանսերեն տեքստը և հայերեն թարգմանությունը)

Գրիգոր Ասատրյան՝ Հումանիզմը գլոբալացման դարաշրջանում

Փիլիսոփայական խոհեր

Զվարճալի փիլիսոփայություն

Փիլիսոփաները զվարճանում են, բայց երբեմն էլ զարմանալիորեն լրջանում են...

Ովքե՞ր են ամենահետաքրքիր փիլիսոփաներն ըստ հայ լրատվական միջոցների

Ո՞վ է հզորագույնը մտքերի աշխարհում

Հարցազրույցներ

Սեդա Դադոյան (փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԱՄՆ)

Նունե Ավետիսյան (AABC հեռուստաընկերություն «Բարև» հեռուստահաղորդում, ԱՄՆ)

**ՓՈՒՍԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԱՌԱՋԱԲԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը 2012 թվականի ապրիլի 16-17-ին կազմակերպել էր գիտական համաժողով՝ նվիրված փոխակերպվող հասարակության տեսական և գործնական հիմնախնդիրների փիլիսոփայական և հոգեբանական տեսանկյունների քննարկմանը: Հայաստանի և արտասահմանյան որոշ երկրների գիտնականների շրջանում այս թեմայի ընտրությունը մեծ հետաքրքրություն առաջ բերեց: Կազմակերպչական խնդիրների լուծման առաքելությունը ստանձնեց Համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը, ում առաջարկով համաժողովի կազմակերպիչներ դարձան նաև Փիլիսոփայության միջազգային ակադեմիան և Հայոց փիլիսոփայական ակադեմիան, ինչպես նաև՝ Համալսարանում վերջերս ստեղծված Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային



ՀՊՄՀ ռեկտոր՝ Ռուբեն Միրզախանյան

գիտահետազոտական ինստիտուտը (նախագահ՝ ակադեմիկոս Գեորգ Բրուսյան):

Ժողովին մասնակցած գիտնականների շարքում էին միջազգային լայն ճանաչում ունեցող Եվանգելոս Մոութսոպոուլոսը (Աթենքի (Հունաստան) համալսարանի պատվավոր ռեկտոր, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ), Հանս Կոխլերը (Ինսբրուքի (Ավստրիա) համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի ղեկավար, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ), Պիտեր Կեմպը (Կոպենհագենի (Դանիա) Աարհուսի համալսարանին կից կրթության դպրոցի էթիկայի և իրավունքի կենտրոնի տնօրեն, Փիլիսոփայական ընկերությունների միջազգային ֆեդերացիայի նախագահ, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս), Աննա Բազակը (Բուխարեստի (Ռումինիա) պոլիտեխնիկական համալսարանի պրոֆեսոր), Յուհա Ռայկան (Տուրկուի (Ֆինլանդիա) համալսարանի պրոֆեսոր), Վլադիմիր Բերկովը (Մինսկի (Բելոռուսիա) պետական համալսարանի պրոֆեսոր) և այլոք:

Այնպիսի նշանավոր գիտնականներ, փիլիսոփաներ, ինչպիսիք են՝ Յաակո Հինտիկան (J. Hintikka) (ԱՄՆ), Նոամ Չոմսկին (N. Chomsky) (ԱՄՆ), Յուհանի Պիետարինը (J. Pietarinen) (Ֆինլանդիա), Էնրիկո Բերտին (E. Berti) (Իտալիա), Մարկոնդես Ցեզարը (M. Cesar) (Բրազիլիա), Չարլզ Ստրոդը (Ch. Strode) (ԱՄՆ), իրենց հետաքրքրությունը հարցի նկատմամբ հաստատելով, հայտնեցին, որ չեն կարող մասնակցել համաժողովին՝ ուսումնական կազմակերպչական, մանկավարժական գործունեության և այլ հանգամանքների պատճառով, բայց պատրաստ են որոշ ժամանակ անց զեկուցումներով և դասախոսություններով հանդես գալ Հայաստանում, մասնավորապես՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Համաժողովի առանձնահատկություններից էր այն, որ վերջինս ընդգրկել էր Հայաստանի ավելի քան տասնհինգ պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների դասախոսների և ուսանողների: Դրանք են՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, Երևանի պետական համալսարանը, Մ. Հերացու

անվան Երևանի պետական բժշկական համալսարանը, Վ. Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարանը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, Հայաստանի պետական ագրարային համալսարանը, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը, Հյուսիսային համալսարանը, Արցախի պետական համալսարանը, «Ինտերլինգվա» լեզվագիտական համալսարանը, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտը, Գավառի պետական համալսարանը, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը և այլն: Համաժողովին մասնակցում էին Հայաստանի հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչներ, ՀՀ ԳԱԱ-ի անդամներ:

Ընդհանուր առմամբ համաժողովին մասնակցում էին շուրջ տասը երկրների (Ավստրիա, Արգենտինա, Բելոռուսիա, Դանիա, Հունաստան, Շոտլանդիա, Ռումինիա Ֆինլանդիա Ֆրանսիա և այլն) ներկայացուցիչներ:

Համաժողովի կարևոր առաքելություններից մեկն էլ այն էր, որ ուսանողների մուտքը բաց էր ոչ միայն իրենց ուսուցիչների և արտասահմանյան հյուրերի զեկուցումներն ունկնդրելու, այլև՝ սեփական զեկուցումները ներկայացնելու համար: Արդյունքում՝ ուսանողների մի քանի լավագույն զեկուցումներ հրատարակման ներկայացվեցին նշանավոր գիտնականների զեկուցումների կողքին: Համաժողովի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Ապրիլի 16-ին Անի Պլազա հյուրանոցի ընդարձակ դահլիճում: Նիստը բացեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի նախագահ, Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ արձրթեր Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Գեորգ Բրուսյանը: Ողջունելով ներկաներին՝ հայ փիլիսոփան ասաց. «Մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հնի և նորի պայքարում ստեղծվում է փոխակերպման միտված հասարակություն: Այդ գործընթացում տեղի է ունենում անցյալից մեզ հասած լավի, օգտակարի ծիլերի օրգանական զուգակցում: Դա նշանակում է, որ հինը ոչ թե դեն է նետվում բոլոր դեպքերում ու պայմաններում, այլ կերպարանափոխվում է նորի ազդեցության տակ և նպաստում նորի զարգացմանը: Դա այն է, ինչ մասնագետներն անվանում են փոխակերպվող հասարակություն: Այդ փոխակերպումը ներառում է զարգացման հիմնական շերտերը և փուլերը: Տվյալ պարագայում մեր համաժողովը քննության նյութ է դարձնում փոխակերպվող հասարակության գիտական ըմբռնումը՝ ընդհանրապես (մեթոդաբանական տեսանկյուն) և խնդրո առարկայի հետ առնչվող գիտական մոտեցման ու նվաճումների քննական արժեքավորումը՝ մասնավորապես»:

Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին ողջունեց Հայաստանի հանրապետության վարչապետ, Մանկավարժական համալսարանի խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը: Նշելով, որ քննարկվող թեման խիստ արդիական է գիտնականների, և քաղաքական գործիչների համար, նա ավելացրեց. «Համոզված եմ, որ այս համաժողովը կնպաստի Մանկավարժական համալսարանի միջազգային կապերի ամրապնդմանը: Մենք մշակել ենք համալսարանի զարգացման հավակնոտ ծրագիր՝ նրա մակարդակը միջազգային լավագույն համալսարանների չափանիշներին բարձրացնելու համար... մենք ապրում ենք մի աշխարհում, որի թիվ մեկ



ՀՊՄՀ –ի մի խումբ դասախոսներ

բնութագիրն արագ փոփոխություններն են, որոնց արդյունքում էապես ուժգնացել են փոխադարձ ազդեցությունները, և աշխարհը դարձել է շատ ավելի բաց: Մեր աչքի առջև ձևավորվում է որակապես նոր տիպի՝ պոստինդուստրիալ հասարակություն, որի հենքային գործընթացը ոչ թե ապրանքների, այլ գիտելիքի արտադրությունն է: Ժամանակակից է այն հասարակությունը, որն ի վիճակի է արտադրել ժամանակակից գիտելիք»: Այնուհետև ՀՊՄՀ խորհրդի նախագահը նշեց, որ համաշխարհային, տնտեսական ճգնաժամն առավել սուր ձևով է ներկայացնում փոխակերպվող հասարակության խնդիրները և պահանջում, քաղաքական գործիչներից՝ գտնել այնպիսի լուծումներ, որոնք թույլ չեն տա քաղաքացիներ կենսամակարդակի նվազում:

Լիագումար նիստում «Հավիտենական տիեզերքը և մարդու դատապարտված իրավունքը. համակերպում, թե նախաձեռնողականություն» թեմայով առաջին զեկուցումը ներկայացրեց պրոֆեսոր Եվանգելոս Մոութսոպոլոսը: Այնուհետև պրոֆեսոր Հանս Կոխլերը հանդես եկավ «Արդի բազմաաշակույթային հասարակությունը և միջմշակութային հարաբերությունների հերմենևտիկան», իսկ պրոֆեսոր Պիտեր Կեմպը՝ «Կոսմոպոլիտիզմը մեր ժամանակներում» թեմայով զեկուցումներով:

Հանդիսավոր նիստի վերջում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի նախագահ Գեորգ Բրուտյանը՝ Ակադեմիայի նախագահության որոշմամբ, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին շնորհեց Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի պատվավոր դոկտորի կոչում, ինչը Տիգրան Սարգսյանը երախտագիտությամբ համարեց պարտավորեցնող:

Համաժողովի աշխատանքը շարունակվեց փիլիսոփայության ոլորտի երեք և հոգեբանության ոլորտի երկու մասնաճյուղերում: (Գիտաժողովի բացման տեսանյութը տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կայքում՝ www.armspu.am):

Ինչպես համաժողովին մասնակից գիտնականները, այնպես էլ երևանյան մամուլը բարձր գնահատեցին համաժողովի արդյունքները: Անկասկած, այդ հաջողությունները պայմանավորված էին մի շարք գործոններով, որոնց մեջ առանձնանում է հենց համաժողովի թեմայի ընտրությունը:

Թեման, իրոք, արդիական էր, ինչը և հետաքրքրություն առաջացրեց ինչպես զեկուցողների, այնպես էլ՝ ունկնդիրների շրջանակներում: Աչքի էր զարնում մի երևույթ, որի վրա հարկ է հատուկ ուշադրություն բևեռել: Փոխակերպվող հասարակության պրոբլեմը զեկուցողները քննարկում էին դուրս գալով այդ խնդրի նեղ՝ հասարակական, սոցիալական շրջանակներից և ծավալվում դեպի հարակից բնագավառները, մասնավորապես՝ դեպի տեսական տրամաբանությունը, հոգեբանությունը և, իհարկե, դեպի փիլիսոփայությունը (վերջինս, անշուշտ, այդպես պետք է լիներ ըստ սահմանման):

Կազմկոմիտեն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի գլխավորությամբ, որոշել էր առավելագույն չափով օգտվել համաժողովում միջազգային համբավ ունեցող մասնագետների ներկայությունից և առաջարկել նրանց դասախոսություններ կարդալ նաև համալսարանի ուսանողների համար իրենց նախընտրած թեմաներով: Հյուրերն այդ առաջարկն ընդունեցին ըմբռնումով և ուրախությամբ:

Դասախոսություններ կարդացին ակադեմիկոսներ՝ Մոութսոպոլոսը (Հունաստան), Քեմպը (Դանիա), Կոխլերը (Ավստրիա), Բագակը (Ռումինիա): Հետաքրքրությունը դեպի



Համաժողովի նախագահություն
Հ. Կոխլեր, Գ. Բրուտյան, Ե. Մոութսոպոլոս

հյուրերի զեկուցումները մեծ էր: Համաժողովից անմիջապես հետո Երևանի տարբեր համալսարաններից և որոշ կազմակերպություններից դիմում էին ՀՊՄՀ ղեկավարությանը՝ խնդրելով զեկուցման օրինակները:

Ի դեպ, համաժողովի կազմկոմիտեն կարողացել էր հիանալի ծրագիր մշակել նաև հրավիրված գիտնականներին Հայաստանի որոշ հիշարժան վայրեր ցույց տալու հարցում:



Մասնակիցների այցելություններն ավարտվեցին Եղեռնի հուշարձանին ծաղկեպսակներ դնելով և իրենց հարգանքի տուրքը մատուցելով այն ամենին, ինչ հիշեցնում է 1915 թվականի Մեծ Եղեռնը: Ինչպես հյուրերը, այնպես էլ համաժողովի հայաստանյան մասնակիցներից ոմանք պարզևատրվեցին մեղալներով, իսկ ոմանք էլ ստացան պատվավոր գիտական կոչումներ:

Հրավիրված գիտնականները մեծ գոհունակությամբ խոստումներ տվեցին ապագայում ևս ստեղծագործական կապեր հաստատել Հայաստանի, մասնավորապես, Խաչատուր Աբովյանի անվան Պետական Մանկավարժական Համալսարանի հետ:

Այժմ խնդիրն այն է, որ գիտաժողովում ձեռքբերվածը ինչպես հյուրերի, այնպես էլ հայաստանյան գիտնականների համատեղ ուժերով, ոչ թե բավարարվածության զացմունք առաջացնի մեր գիտական կազմակերպությունների և, ընդհանրապես, գիտնականների շրջանակներում, այլև նոր, ամուր և

Ռուբեն Միրզախանյանը և Գեորգ Բրուստյանը Մեծ Եղեռնի հուշարձանին ծաղկեպսակ դնելիս

կարևոր հիմք հանդիսանա քննարկված գիտական խնդիրների հետագա զարգացման համար: Ինչպես արտահայտվել է ակադեմիկոս Գ. Բրուստյանը. «*Գիտության մեջ կանգ առնելը նշանակում է ոչ թե դռնի տեղում, այլ հետ գնալ*»: Այդ խնդիրն, անշուշտ, նպաստում է այն կարգն ու ձևը, որով ղեկավարվում էր դիտարկվող համաժողովը: Առաջին հերթին պետք է նշել, որ համաժողովում տիրում էր մտքերի փոխանակում բազմազան ձևերով՝ զեկուցումների և դասախոսությունների քննարկման միջոցով, որին մասնակցում էին և՛ անվանի գիտնականները, և՛ հայաստանյան գիտության ներկայացուցիչները և, նաև ուսանողները:

Հարկ է նշել, հատկապես, այն հանգամանքը, որ համաժողովի շնորհիվ ստեղծվեց որոշակի միասնական դաշտ՝ փիլիսոփայության և հոգեբանության բնագավառում: Դա հնարավորություն ընձեռեց խուսափել խուլ և համրերի հաղորդակցումից, որը տեղի է ունենում որոշ գիտաժողովներում, որտեղ ոչ բոլոր կողմերն են տիրապետում միևնույն լեզվին, և այդ լեզվական դժվարությունը առաջ է բերում է՛լ ավելի մեծ դժվարություններ գիտության խնդիրների, հարցերի փոխըմբռնման հարցում: Իսկ երբ լեզվական գործոնը չի խանգարում փոխըմբռնմանը, ապա առավել ավելի մեծ ոգևորությամբ են ցանկանում կատարելագործել անգլերենի իմացությունը՝ առավել հասկանալի դարձնելու հեղինակի միտքը: Դա էլ իր հերթին պայմաններ է ստեղծում, որ հարցերի լուսաբանումը տեղի ունենա «ոչ թե ուժի փաստարկմամբ, այլ՝ փաստարկման ուժով»: Գ. Բ.



ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ, ՀՊՄՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԳՐԱՆ
ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Թեման, որ մենք այսօր ձեզ հետ միասին պետք է քննարկենք, ունի մի շարք առանձնահատկություններ:

Ես ցանկանում եմ ձեր ուշադրությանը ներկայացնել այն գոյաբանական սկզբունքները, որոնցով ղեկավարվում է ՀՀ գործադիր իշխանությունը, և բարձրացնել հարցեր, որոնց պատասխաններն ակնկալում ենք ստանալ այստեղ ներկա գիտնականներից:

Համաշխարհային ճգնաժամն առավել սուր ձևով է ներկայացնում փոխակերպվող հասարակության խնդիրները և պահանջում արդյունավետ լուծումներ, որոնք թույլ չեն նվազեցնել քաղաքացիների կենսամակարդակը: Մյուս կողմից՝ քաղաքական գործիչները քաջ գիտակցում են, որ գիտությունն ի վիճակի չէ պատասխանելու շատ հարցերի:

Մենք փորձել ենք դուրս բերել այն հիմնարար, կարևորագույն առանձնահատկությունները, որոնք բնորոշում են մեր ներկան:

ՀՀ Վարչապետ, ՀՊՄՀ Խորհրդի նախագահ՝
Տիգրան Սարգսյան

Առաջին՝ մենք ապրում ենք մի աշխարհում, որի առաջնային բնութագրիչը արագ փոփոխությունն է: Երբևէ մարդկությունը չի ապրել այնպիսի ժամանակներում, երբ փոփոխություններն այդքան ակնհայտ են: Մի սերունդը չի հասնում ամբողջությամբ այն յուրացնել, հասկանալ հենքային գործընթացները, բացահայտել օրինաչափություններ, դրանից ելնելով ձեռակերպել խնդիրներ և դրանց լուծումներ տալ:

Ժամանակակից աշխարհի երկրորդ առանձնահատկությունն այն է, որ էապես ուժգնացել են փոխադարձ ազդեցությունները: Աշխարհն այսօր շատ ավելի բաց է, քան քսան կամ հիսուն տարի առաջ. պետությունների փոխազդեցություններն էական նշանակություն ունեն:

Երրորդ առանձնահատկությունն այն է, որ ակնհայտորեն ձևավորվում է որակապես նոր տիպի հասարակություն, որին շատ հաճախ անվանվում են պոստինդուստրիալ:

Հասարակության հիմնական հարաբերությունների ձևավորման առանցքում պետք է լինի ոչ թե ապրանքների, այլ գիտելիքի արտադրությունը:

Հաջորդ առանձնահատկությունը բխում է նախորդից. եթե հենքային գործընթացի հիմքում ընկած լինի գիտելիքի արտադրությունը, ապա հասկանալի է, որ հիմնական ռեսուրսը կլինի մարդը: Ժամանակակից կիսամարվի այն հասարակությունը, որը կստեղծի առավել բարենպաստ պայմաններ մարդու՝ նոր գիտելիքներ ստեղծելու համար:

Փոխակերպվող հասարակության մյուս առանձնահատկությունը արժեքային համակարգի ճիշտ կողմնորոշումն է:

Պետք է ճշգրտել ժամանակակից հասարակությանը բնորոշ արժեքները, գրված և չգրված կանոնները և հասկանալ մարդկության զարգացմանը խոչընդոտող հնամաշ արժեքները:

Կան բավականին բուռն շրջադարձեր, որոնց լուծումները միանաշնակ չեն:

Մենք պետք է համակերպվենք այն մտքին, որ աշխարհը գնում է ոչ միայն միաձուլման և միասնական ստանդարտների ներկրման, այլև պայքարում է իր տեսակի և առանձնահատկությունների՝ արժեքների համար:

Այդ տեսակետից ազգային մշակույթի զարգացումը, ազգային ինքնության պահպանումը նույնպես ունի ֆունդամենտալ նշանակություն:

Մենք պետք է գտնենք եզրեր փոքրացող աշխարհի միասնական ստանդարտների և բազմազանության միջև:

Մի քանի տարի առաջ տեղի ունեցած տնտեսագիտության համաշխարհային մեծության ֆինանսական հավաքի ժամանակ բոլոր գիտնականները խոսում էին սպառվելիք ֆինանսական և տնտեսական ճգնաժամի մասին: Նրանցից ոչ մեկը համարձակություն չունեցավ բացատրելու դրա հիմնական պատճառները. համերաշխությունը ձևավորվեց միայն հետևյալ հարցի շուրջ՝ ճգնաժամից հետո մենք կբացատրենք, թե որոնք են ճգնաժամի պատճառները և ինչ է պետք անել:

Մարդկությունը թևակոխել է զարգացման մի նոր փուլ, որը ենթադրում է շարունակական փոխակերպումներ:

Այս առանձնահատկությունը մշտապես հետապնդելու է մեզ: Պետք է ստեղծել նախադրյալներ, որ քաղաքացիները պատրաստ լինեն ընկալելու մշտապես փոփոխվող հասարակությանը:

Այդ տեսակետից մեր սպասելիքները գիտաժողովից մեծ են: Բոլորիս ցանկանում եմ բեղմնավոր աշխատանք հավաստիացնելով, որ գիտաժողովի արդյունքները լինելու են Կառավարության ուշադրության կենտրոնում:

ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ ԿԱՐԴԱՑԱԾ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ հանրային խորհրդի քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի նախագահ, «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի նախագահ, Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ-ի առընթեր Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի փոխտնօրեն

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լայն իմաստով **փոխակերպվող** կարելի է համարել ցանկացած փոփոխվող և զարգացող հասարակություն: Սակայն, վերջին տասնամյակների ընթացքում **փոխակերպվող հասարակություն** հասկացությունն առավելապես գործածվում է քաղաքական, տնտեսական, իրավական, գաղափարական, մշակութային առումներով արմատական և համակարգային, թեև՝ ոչ հեղափոխական, այնուհանդերձ՝ դինամիկ, երբեմն էլ՝ դրամատիկ վերափոխումներ ապրող անցումային հասարակությունները բնութագրելու համար:

Այդ վերափոխումների արդյունավետ ընթացքն ու շահեկան ելքերը մեծապես պայմանավորված են հիմնարար հետազոտությունների վրա խարսխված և մեթոդապես ապահովված կառավարման ու որոշումների ընդունման քաղաքականությամբ:

20-րդ դարի 40-ական թվականներին կառուցվածքային ֆունկցիոնալիզմի նշանավոր ներկայացուցիչ ամերիկացի սոցիոլոգ Ռ.Մերտոնն առաջարկեց միջին մակարդակների տեսության գաղափարը (Девятко 1997): Այս հայեցակարգի համաձայն, հետազոտության օբյեկտ են հանդիսանում ոչ թե հասարակությունն ու քաղաքակրթությունն՝ ընդհանրապես, ոչ թե առանձին անհատներն ու նրանց գործունեությունը, այլ սոցիալական ինստիտուտները (հաստատությունները), խմբերն ու գործընթացները:

Սույն հոդվածը նվիրված է փոխակերպվող հասարակության համակարգում տեղի ունեցող գործընթացների կառուցվածքային և գործառնությանին առանձնահատկությունների վերլուծությանը, որտեղ որպես հասարակական համակարգի տարրեր դիտարկվում են հասարակական ինստիտուտները:

Հաճախ կարելի է հանդիպել «հասարակական ինստիտուտ» հասկացության չափազանց լայն գործածությունների, երբ այն տարածվում է նաև սոցիալական մեխանիզմների (կառուցակարգերի), ավանդույթների, ենթակառուցվածքային միավորների վրա: Օրինակ՝ խոսվում է պատգամավորին ետ կանչելու ինստիտուտի, դատարանի վճիռը բողոքարկելու ինստիտուտի, խնամախոսության ինստիտուտի մասին: Մինչդեռ, ավելի ճիշտ կլիներ խոսել ետկանչի ու բողոքարկման մեխանիզմների, խնամախոսության ավանդույթի կամ արարողակարգի մասին:

Այդ արտահայտությունների ճշգրտմանը պետք է հետամուտ լինել հասկացությունների սահմանման գործընթացներում: Մասնագիտական գրականության մեջ հանդիպում են հասարակական ինստիտուտների նկարագրական, համեմատական, նաև՝ այլաբանական բնույթի մեկնաբանություններ (որպես տրոբված արահետ, հուն, կենդանական բնագոյների սոցիալական անալոգ և այլն) (Бергер 1996: 84-85, Кравченко 2001: 183-186):

Հասարակական ինստիտուտի էությունն առավել ամբողջական կարելի է արտահայտել հետևյալ սահմանմամբ. **հասարակական ինստիտուտները հանրային կյանքի կազմակերպման և կառավարման հարաբերականորեն կայուն ձևերն ու եղանակներն են, որոնք հասարակական**

հարաբերություններն ու գործընթացները դարձնում են սոցիալ-կառուցվածքային տեսանկյունից առավել կարգավորված ու նորմավորված (Հովհաննիսյան 2003: 9):

Այդպիսիք են տնտեսությունը, որտեղ տեղի են ունենում նյութական բարիքների ու ծառայությունների արտադրության, փոխանակման և սպառման գործընթացները, ընտանիքը, որը կատարում է մարդկային ներուժի վերարտադրության, ինտիմ հարաբերությունների կարգավորման, առաջնային սոցիալականացման, բարոյահոգեբանական աջակցության գործառույթներ, կրթությունը, որտեղ տեղի է ունենում ավագ սերնդի փորձի ու գիտելիքների կազմակերպված փոխանցումը երիտասարդ սերնդին: Մակայն տնտեսության գործունեությունը ենթադրում է ֆինանսական ենթահամակարգի առկայություն, վերջինիս գործունեությունը՝ բանկերի առկայություն, դրամի փոխանակման կետերի անհրաժեշտություն և այլն: Ընտանիքի ձևավորման և կենսագործունեության համար անհրաժեշտ են իրավական նորմեր, ավանդույթներ ու սովորույթներ: Ինստիտուտների գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքային այդպիսի միավորներն ընդունված է անվանել մեխանիզմներ, արարողակարգեր, պրակտիկաներ:

Ժամանակակից սոցիոլոգիան հասարակական համակարգում առանձնացնում է վեց գլխավոր ինստիտուտներ, որոնցից կազմված է հասարակության ողնաշարը՝ տնտեսություն, քաղաքականություն, ընտանիք, կրթություն, գիտություն և կրոն:

Պետք է նկատել նաև, որ տարբեր հասարակական համակարգերում վերը նշված գլխավոր ինստիտուտների շարքում ևս կան դոմինանտներ և «երկրորդայիններ»: Օրինակ՝ նախկին ԽՍՀՄ-ում դոմինանտորը քաղաքականությունն էր, գաղափարախոսական բաղադրիչը: Այն իր կնիքն էր թողնում տնտեսության, կրթության, ընտանիքի, կրոնի, հասարակական կյանքի մյուս կողմերի ու հարաբերությունների վրա: Թերևս տեղին է նկատել, որ մարքայան հայտնի դրույթը, թե կեցությունն է որոշում գիտակցությունը և համապատասխանաբար՝ հասարակական հիմնաշենք է որոշում վերնաշենքային գործոնների բնութագիրը (Մարքս, Էնգելս: 17-19, 51-52), ԽՍՀՄ-ում իրականացվել էր ճիշտ հակառակ տարբերակով. վերնաշենքային գործոններն (գաղափարախոսությունը, քաղաքական սկզբունքներն) էին թելադրում հիմնաշենքային (տնտեսական) հարաբերությունների ինչպիսին լինելը:

ԱՄՆ-ում ազդեցիկ և որոշիչ է տնտեսական հատվածը: Այն իր կնիքն է թողնում կրթական համակարգի, գիտության, ընտանիքի վրա: ԱՄՆ-ը առաջատարների շարքում է պայմանագրային ամուսնությունների, կրթության շուկայամետության ցուցանիշներով: ԱՄՆ-արտաքին քաղաքականությունը զգալիորեն ուղղորդվում և բացատրվում է հենց տնտեսական շահի գործոնով:

Իրանի Իսլամական Հանրապետությունում բավական ազդեցիկ է կրոնը՝ որպես այդ երկրի պետական անվտանգության և տարածքային ամբողջականության երաշխիք: Կրոնն իր կնիքն է դնում թե կրթության, թե քաղաքականության, թե ընտանեկան հարաբերությունների և թե հասարակական կյանքի այլ կողմերի վրա:

Հայ հասարակության համար, վերը նշված վեց գլխավոր ինստիտուտների շարքում թերևս առավել ազդեցիկ ու դոմինանտոր են ընտանիքն ու կրթությունը: Թեև համաշխարհայնացման գործընթացների և տնտեսական գործոնի ավելի ու ավելի կարևորման ընթացքում ընտանիքի ինստիտուտը սկսել է թուլանալ (ավելացել են ամուսնալուծությունները, դիսուկալ ամուսնությունները, ոչ լրիվ ընտանիքները և այլն), սակայն կրթական համակարգը մեր հասարակության համար մնում է արժեհամակարգի գլխավոր բաղադրիչներից մեկը: Հանրային կարծիքն ավելի զգայուն է արձագանքում ընտանեկան արժեքների ու կրթական համակարգի հետ կապված գործընթացներին, քան տնտեսական աշխարհում կատարվող փոխակերպումներին:

Նշված առանձնահատկությունների իմացությունն ու հաշվի առնելն անհրաժեշտ է հասարակական վերփոխումների վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներում:

Այնուհանդերձ, հասարակական համակարգի զարգացումներն ու փոխակերպումները տեղի են ունենում ինստիտուցիոնալ կառույցների էվոլյուցիայի, ավանդական սոցիալական հաստատությունների արդիականացման և նորերի ձևավորման ճանապարհով:

Նոր ինստիտուտի ձևավորման, սոցիալական նորմերի, դերերի ու կարգավիճակների ամրագրման գործընթացը կոչվում է **ինստիտուցիոնալացում**:

Դրա արդյունքում հասարակական գործունեության ինքնաբերական ձևերը, վերափոխումներն ու շարժումները դառնում են սոցիալ-կառուցվածքային տեսանկյունից առավել կարգավորված ու նորմավորված:

Նոր ինստիտուտի ձևավորման-ինստիտուցիոնալացման գործընթացում կարելի է առանձնացնել երկու տեսանկյուններ՝ **կառուցվածքային** և **գործառույթային** բաղադրիչները:

Ինստիտուտը կառուցվածքային առումով կայացած կարելի է համարել, եթե առկա են դրա գոյության և կենսագործունեության համար անհրաժեշտ

- Օրենսդրական դաշտն ու իրավական-նորմատիվ պայմանները
- Նյութական-ֆինանսական ռեսուրսները
- Մարդկային-կադրային ռեսուրսները:

Գործառույթային առումով ինստիտուտը կայացած է, եթե այն լիարժեք կերպով կատարում է իր վրա դրված առաքելությունը, դերը հասարակական կյանքում:

Ներդաշնակ, աստիճանական զարգացումներ ապրող հասարակության մեջ սոցիալական ինստիտուտի այս երկու կողմերի ձևավորումն ու զարգացումը սովորաբար տեղի է ունենում ներդաշնակ, զուգահեռաբար: Սակայն, արմատական շրջադարձային փոխակերպումներ ապրող հասարակությունների պարագայում կարող են լինել ինստիտուտների ձևավորման կառուցվածքային և գործառույթային բաղադրիչների ոչ սինխրոն զարգացումներ:

Հայաստանյան իրականության մեջ ժողովրդավարական հաստատությունների մի հատվածը կարելի է ձևավորված համարել գլխավորապես կառուցվածքային առումով: Կան բազմաթիվ կուսակցություններ՝ իրենց կանոնադրությամբ, անդամներով, որոշակի նյութական ռեսուրսներով, սակայն որպես հանրության լայն խավերի շահերն ինտեգրելու և քաղաքական որոշումների կայացման մակարդակում դրանք ներկայացնելուն կոչված կառույցներ՝ դեռևս զարգացման ու կայացման խնդիրներ ունեն: 2004 թվականից ՀՀ-ում գործում է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Առկա են համապատասխան իրավական դաշտ, նյութական-ֆինանսական ռեսուրսներ ու աշխատակազմ, սակայն հանրային կյանքի տարբեր ոլորտներում այդ ինստիտուտի ներկայությունն ու գործառնությունը միշտ չէ, որ բավարար է: 2012թ. տվյալներով ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված են 3780-ից ավելի ոչ կառավարական կազմակերպություններ¹՝ իրենց կանոնադրությամբ ու անդամներով, համապատասխան իրավական դաշտով, սակայն դրանցից շատերն ի վիճակի չեն կատարելու իրենց կանոնադրական առաքելությունը: Գործառույթային առումով այդ կազմակերպությունները դեռևս կայացման ճանապարհ ունեն անցնելու:

Կարող է լինել նաև հակառակը, երբ ձևավորվել է այս կամ այն գործառույթի նկատմամբ հասարակական պահանջարկ, առակա է խնդիր, որը ստանում է ինքնաբերական ու իրավիճակային լուծումներ, սակայն դեռևս չկա որևէ կոնկրետ կառույց, որը պաշտոնապես ստանձներ ու իրականացներ այդ գործառույթը:

Օրինակ՝ 1980-ականների վերջին Ադրբեջանի հետ սահմանին հնչում էին կրակոցներ, զոհվում էին Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի քաղաքացիներ, և առակա էր հայկական բնակավայրերն ու բնակչությանը պաշտպանելու անհրաժեշտությունը: Սակայն չկար ոչ պաշտպանության նախարարություն, ոչ էլ ազգային բանակ, որը ստանձներ այդ գործառույթի իրականացման պարտականությունը: Խնդրի լուծում իրականացվում էր սահմանամերձ գյուղերի բնակչության, ներքին գործերի նախարարության, ազգային անվտանգության ծառայության և երկրապահ կամավորականների ջոկատների ուժերով: Եվ միայն 1991թ. ՀՀ նախագահի կողմից ստորագրվեց հրամանագիր կառավարության կազմում պաշտպանության

նախարարությունն ստեղծելու մասին, որի վրա դրվեց կամավորական ազատամարտիկների խմբերի հիման վրա ազգային բանակի կորիզը ձևավորելու առաքելությունը:

Ինստիտուցիոնալացման հակառակ երևույթը *ինստիտուցիոնալ ճգնաժամն* է: Դա մի իրավիճակ է, երբ ինստիտուտն, ի վիճակի չլինելով կատարել իր վրա դրված գործառնությունները, սկսում է խոչընդոտել հասարակական զարգացման գործընթացները, առաջացնել նորանոր խնդիրներ:

Քաղաքական ինստիտուտների և իշխանական կառույցների ճգնաժամն, օրինակ, կապված է հասարակական կառավարման բնագավառում իրենց առաքելության ոչ արդյունավետ իրականացման հետ և դրսևորվում է բնակչության շրջանում դրանց նկատմամբ վստահության անկմամբ: Ձևավորվում են երկու հիմնական միտումներ. լայն խավերին բնորոշ քաղաքական իներտություն, քաղաքական կյանքից օտարվածություն և քաղաքական կառույցների՝ քաղաքացիներին իրենց կողմը գրավելու ոչ ժողովրդավարական մեթոդներին (ընտրակաշառք, վարչական ռեսուրսների և միջոցների կիրառում) դիմելու գործելակերպի աճ (Հովհաննիսյան 2003: 11-12):

Վերջին տասնամյակների փորձը վկայում է, որ փոխակերպվող հասարակության մեջ պարբերաբար աճում է իշխանության ինստիտուտների և քաղաքական կուսակցությունների նկատմամբ անվստահությունը: Ճգնաժամը, սակայն, վեր հանելով ինստիտուտի գործառնության մեջ եղած խոչընդոտները, օգնում է նաև մեթոդապես հիմնավորված գործունեության դեպքում վերացնել դրանք՝ կատարելագործելով հասարակական համակարգի կառուցվածքային և գործառնությանն նկարագիրը:

Ինստիտուցիոնալ ճգնաժամի հաղթահարման առնվազն չորս ելքեր կարելի է առանձնացնել.

- ինստիտուտը դադարում է գոյություն ունենալուց,
- ինստիտուտը իր գործառնությունների մի մասը փոխանցում է այլ ինստիտուտի,
- ստեղծվում են նոր ինստիտուտներ, որոնք ստանձնում են ճգնաժամ ապրող ինստիտուտի կողմից չիրականացվող գործառնությունները²,
- իրականացվում են ինստիտուտի կառուցվածքային բարեփոխումներ, որի արդյունքում ինստիտուտը վերստանձնում է իր գործառնությունները:

Նոր ինստիտուտների ձևավորման և ինստիտուցիոնալ ճգնաժամի երևույթները հասարակական համակարգի զարգացման ու վերափոխման գործընթացների անխուսափելի իրողություններն են: Առանց ճգնաժամերի և դրանց հաղթահարման դժվար է պատկերացնել ինստիտուտների զարգացումն ու հասարակական առաջընթացը:

Հասարակական փոխակերպվող համակարգերում տեղի ունեցող գործընթացների գնահատման և արդյունավետ կառավարման տեսանկյունից առանձնակի ուշադրության է արժանի հասարակական ինստիտուտների գործառնությանն առանձնահատկությունների վերլուծությունը:

Ավանդաբար առանձնացվում են դրական և բացասական գործառնությունները: Ինստիտուտի գործառնությոը դրական է, եթե նա իր գործունեությամբ նպաստում է հասարակական հարաբերությունների կատարելագործմանը, առկա խնդիրների արդյունավետ լուծմանը: Գործառնությոը բացասական է (դիսֆունկցիա), եթե ինստիտուտի գործունեությունը խոչընդոտում է հասարակական հարաբերությունների զարգացմանը, առաջ է բերում նորանոր խնդիրներ:

Սակայն առավել կարևոր է հասարակական հաստատությունների գործունեությունը բացահատ և ոչ բացահայտ գործառնությունների դիտանկյունից վերլուծելու հանգամանքը:

Գործառնությոը կոչվում է բացահայտ, եթե այն ամրագրված է օրենսդրությամբ և ինստիտուտի իրավական փաստաթղթերում, հռչակված է, և այդ մասին լավատեղյակ է հանրային կարծիքը: Գործառնությոը կոչվում է ոչ բացահայտ (թաքնված), եթե այն ամրագրված չէ

իրավական փաստաթղթերում, հրապարակված չէ և դժվար նկատելի է հանրային կարծիքի համար (*Мертоп 1996*):

Բուհի դրական բացահայտ գործառույթները (կրթության գործի կազմակերպում, մասնագետների պատրաստում, գիտահետազոտական ծրագրերի իրականացում) ամրագրված են նրա կանոնադրության մեջ: Սակայն, բուհը նպաստում է նաև երիտասարդների միջև ընկերական կապերի ձևավորմանը, երբեմն էլ նոր ընտանիքների ձևավորմանը, ինչը ոչ բացահայտ դրական գործառույթների շարքում պետք է դիտարկել: Բայց, երբ բուհը ձգտում է իրականացնել բիզնես գործառույթներ՝ ֆինանսական եկամուտները դիտարկելով ոչ թե իբրև կրթական գործի կազմակերպման միջոց, այլ՝ գլխավոր նպատակ, սկսում է իրականացնել ոչ բացահայտ բացասական գործառույթ՝ թողարկելով անլիարժեք ու թերի մասնագետներ:

Բանակի դրական գործառույթը երկրի և բնակչության անվտանգության ապահովումն է արտաքին վտանգներից: Սակայն, երբ բանակը փորձում է ազդել ներքաղաքական գործընթացների վրա, կամ էլ, երբ բանակում չեն գործում կանոնադրական հարաբերությունները, և ծառայողները զոհվում կամ խեղվում են մինչև ճակատային գիծ հասնելը, բանակը սկսում է իրականացնել ոչ բացահայտ դիսֆունկցիաներ:

Այս առումով մտահոգիչ են և միաժամանակ հետաքրքիր վերլուծության նյութ են հանդիսանում հայստանյան կրթական հաստատություններում սովորողների գիտելիքների գնահատման գործող և ժամանակ առ ժամանակ փոփոխվող սանդղակները:

Խորհրդային տարիներին կրթական հաստատություններում առավել տարածված էր գիտելիքների գնահատման հինգմիավորանոց համակարգը, որտեղ նվազագույն դրական գնահատական համարվում էր «3»-ը: Այդ ընտրությունը հիմնավորված էր ընդհանուր կրթական քաղաքականությամբ. սովորողի գիտելիքները «բավարար» կարող էին գնահատվել, երբ նա յուրացրած լիներ դասընթացի սահմանված ծրագրի առնվազն կեսը և ավելին: «3»-ը կազմում է 5-միավորանոց սանդղակի 60%-ը:

Կրթական համակարգում վճարովի և անվճար հատվածների ձևավորման և մրցակցային սկզբունքների ներմուծմանը զուգահեռ գիտելիքների գնահատման առավել զգայուն սանդղակների կիրառման պահանջարկ առաջացավ: Հայաստանյան կրթական հաստատություններում սկսեց գործել 20-միավորանոց համակարգը, որտեղ սկզբում «10», իսկ հետո «8» միավորը սահմանվեց որպես նվազագույն դրական գնահատական: Դրանք 20-միավորանոց սանդղակում ունեն համապատասխանաբար՝ 50% և 40% տեսակարար կշիռ: Փաստորեն, նվազագույն դրական գնահատականի շեմն իջեցվեց սկզբում 10, ապա 20%-ով: 20-միավորանոց սանդղակը 5-միավորանոցի փոխակերպելու պարագայում առաջինի «8» միավորը համապատասխանում էրկրորդի «2»՝ «անբավարար» գնահատականին: Նույնն է պատկերը նաև հանրակրթական հաստատություններում կիրառվող 10-միավորանոց սանդղակի դեպքում, որտեղ նվազագույն դրականի շեմը սահմանված է «4» միավորը: Տես Աղյուսակ 1:

Աղյուսակ 1.

Սովորողների գիտելիքների գնահատման սանդղակներ, որոնք կիրառվում են կրթական հաստատություններում

1	1	1
2	2	2
3 → 60%	.	3
4	.	4 → 40%
5	8 → 40%	5
	.	6
	10 → 50%	7
	.	8
	.	9
	.	10
	20	

Այս ամենը, սակայն, չարյաց փոքրագույնն է, կարծես: ՀՀ բուհերում գնահատման նոր սանդղակների ներմուծմանը զուգահեռ, սկսեց ձևավորվել միջանկյալ քննությունների կամ ստուգումների համակարգը, որը հնարավորություն է ընձեռում սովորողին կիսամյակային նյութը հանձնել հատվածաբար: Սկզբունքն ինքնին վատը չէ: Բայց այստեղ էլ կիրառվող գնահատման սանդղակները պարունակում ոչ բացահայտ դիսֆունկցիաներ:

Մինչև 2011թ. որոշ բուհերում կիսամյակի ընթացքում 64 և ավելի ժամաքանակով մատուցվող առարկաների պարագայում կիրառվում էր կիսամյակի ընթացքում սովորողի գիտելիքները չորս անգամ գնահատելու պրակտիկան: Յուրաքանչյուր ստուգում կարող էր գնահատվել առավելագույնը «4» միավոր, իսկ հաճախումների (մասնակցության) համար ուսանողը կարող էր վաստակել ևս «4» միավոր: Արդյունքում ստացվում էր, որ եթե ուսանողը կարողացել է 4 ընթացիկ ստուգումներից ստանալ «1»-ական միավոր (որը, 4-միավորանոց սանդղակի ¼-ը լինելով, չի կարող դրական գնահատական համարվել) և պարտաճանաչ հաճախել է պարապմունքներին, ապա վաստակում էր «8» (նվազագույն դրական) միավոր: Տես Աղյուսակ 2:

Աղյուսակ 2.

Ուսանողների գիտելիքների միջանկյալ գնահատման տարածված սկզբունքներից մեկը և հնարավոր ելքը

1-ին ստուգում	2-րդ ստուգում	3-րդ ստուգում	4-րդ ստուգում	Մասնակցություն	Ամփոփիչ գնահատական
«4»	«4»	«4»	«4»	«4»	«20»
«1»	«1»	«1»	«1»	«4»	«8»

Փաստորեն, չորս անգամ «անբավարար» ստացած սովորողը, որը պարտաճանաչ հաճախել էր պարապմունքներին, «հրաշքով» դրական ամփոփիչ միավոր էր վաստակում: Խնդիրն էլ ավելի է լրջանում, երբ առաջակրվում է միջանկյալ քննությունից կես միավոր ստանալու դեպքում այն «կլորացնել» 1-ի՝ սովորողի օգտին:

Գնահատման համակարգերի քննարումների արդյունքում որոշ դրական տեղաշարժեր արձանագրվել են: Մասնավորապես, ԵՊՀ-ում գործող գնահատման սանդղակում 2011 թվականից սկսած հաճախումների (մասնակցության) բաղադրիչը ընդհանուր սանդղակում սահմանվել է մինչև 10%, իսկ ընթացիկ քննությունները կիսամյակի ընթացքում կարող են լինել մինչև երկուսը: Փոփոխություններն, իհարկե, դրական են, սակայն միջանկյալ «անբավարար» գնահատականների արդյունքում ամփոփիչ «բավարար» գնահատական ստանալու հնարավորությունը դեռևս պահպանվում է. տես Աղյուսակ 3-ը:

Աղյուսակ 3.

1-ին ստուգում	2-րդ ստուգում	հանրագումարային քննություն	մասնակցություն	Ամփոփիչ գնահատական
«4»	«4»	«8»	«2»	«20»
«1»	«1»	«2»	«2»	«8»

Հարցի լուծման բանալին, թերևս, գտնվում է.

ա) միջանկյալ և հանրագումարային քննությունների համար միանման սանդղակների կիրառման,

բ) եթե քննական նյութերի ծավալները հավասարազոր են, ապա ստացած գնահատականների ոչ թե գումարման (կումուլյացիայի), այլ թվաբանական միջինի սկզբունքը

կիրառելու, իսկ եթե տարբեր քննությունների նյութերը ծավալային (և/կամ բովանդակային արժեքի) տեսանկյունից տարբեր են, ապա համապատասխան գործակիցների սահմանման,

գ) գիտելիքների գնահատման կիրառվող սանդղակներում նվազագույն բավարարի շեմը 60%-ը վերասահմանելու մեջ (20–միավորանոց սանդղակի դեպքում՝ «12»-ը, 100- միավորանոց սանդղակի դեպքում՝ «60»-ը և այլն):

Այսպիսով, փոխակերպվող հասարակության պայմաններում բարեփոխումների արդյունավետությունը երաշխավորելու առումով անհրաժեշտ են համակարգի կառուցվածքային և գործառույթային առանձնահատկությունների վերլուծությանն ուղղված հետազոտությունները: Հասարակական հարաբերությունների զարգացման նպատակով ծրագրեր իրականացնելիս և որոշումներ կայացնելիս տվյալ համակարգի անվտանգության և կայուն զարգացման շահերը պահանջում են համակողմանիորեն հետազոտել հաստատությունների ոչ միայն ֆունկցիաները, այլև հնարավոր դիսֆունկցիաները, հաշվի առնել ոչ միայն բացահայտ, այլև ոչ բացահայտ գործառույթների հավանականությունն ու բնույթը՝ այդ համակարգի այլ բաղադրիչների հետ կապի և ներդաշնակ հարաբերակցության տեսանկյունից:

Հասարակական բարեփոխումների իրականացման գործընթացներում մեթոդապես հիմնավոր մոտեցումներն են, որ թույլ են տալիս խուսափել չկանխատեսված և անցանկալի հետևանքներից, որոնց հաղթահարման համար վճարվող գինը կարող է սովորել բարեփոխումների գաղափարը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Strengthening Civil Society and its Interaction with State Institutions. Policy Paper. European Union Advisory Group To the Republic of Armenia. Septembre, 2012.

² Երբ 1980-ական թթ. ԽՍՀՄ հանրակրթական համակարգ այլևս չէր բավարարում շրջանավարտների գիտելիքների այնպիսի մակարդակ, որն անհրաժեշտ էր բուհ ընդունվելու համար, ձևավորվեցին ֆակուլտատիվ դասընթացները դպրոցներում, նախապատրաստական կուրսերը բուհերում, երևան եկավ և արագորեն լայն տարածում ստացավ կրկնուսույցների ինստիտուտը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հովհաննիսյան, Ն. Օ. (2003). Հասարակական համակարգի զարգացման

Հիմնախնդիրները, Երևան:

Մարքս, Կ. & Էնգելս, Ֆ. Ֆոյերբախ: Մատերիալիստական և իդեալիստական

հայացքների հակադրությունը: - Մարքս Կ., Էնգելս ֆ.: Ընտիր երկեր, հ.1, էջ 17-19; 51-52:

Бергер, П. Л. (1996). Приглашение в социологию: гуманистическая перспектива. Пер. с англ. Под ред. Батыгина. М..

Девятко, И. Ф. (1997). Р. Мертон и его теория среднего уровня. “История теоретической социологии” в 4-х т. Т. 3. Под ред. Ю. Н. Давыдова. М.: Канон.

Кравченко А.И. (2001). Социология: учебник. М.

Мертон Р. К. (1996). “Явные и латентные функции” // Американская социологическая мысль. Под ред. В. И. Добренкова. М.,

BAGRATYAN BAGRAT

Yerevan State University MA, Faculty Of Law
Armenia, Yerevan

THE ESSENCE OF EDUCATIONAL JURIDICAL NORM

Educational Juridical Norm is solicited by the state power, which is obligatorily and formally defined dictation in the form of instruction and recommendation. Being a certain legal circle of social regulation, it is directed towards the adjustment of some type of relations.

This kind of definition is applicable in the sphere of education, for the educational relations are a subject of juridical regulations. Not only educational juridical relations are reflected in the above mentioned norm, but also such objectives and problems which are solved by specific legal sphere.

Though educational juridical norms dominate in educational right, not all of them are pure educational juridical. Some of them are not independent, but a peculiar complex normative case, which tends to regulate general and special elements of educational system.

The part of educational juridical structure where certain educational problems and peculiarities are defined is called disposition.

Educational relations which are considered to be complex institutions include administrative, labour, property, pedagogical and some other relations.

This very circumstance settles the nature of educational right as a complex of juridical institutions.

BAGRATYAN BAGRAT

Yerevan State University MA, Faculty Of Law
Armenia, Yerevan

INTERNATIONAL DEVELOPMENT OF HUMAN RIGHTS

To understand the process of defending human rights entirely first of all it's noteworthy to study its origin and development. The issue of human rights has its prehistory and is connected with the development of society, state and humanity.

"In the current stage of historical development of humanity the defense of human rights is the real indicator of any leading society. And the process of giving them certain description is the property of the state which is following the radical civilization"(Falk 1981).

Historically the first viewpoints of dignity and the autonomous position of an individual towards historical government belong to philosophers, historians and lawyers of Ancient Greece and Rome. It's worth mentioning that in that period nobody has an idea about "human rights" in Ancient Greece and Rome.

In the Middle Ages freedom was restricted as the feudal society was a society of a universal dependence. There was dominating willfulness and power. But in that period in England they were trying to restrict the rights of monarchy and establish some rules for the monarch to follow them. The antagonism of monarchs, barons and knights was over in 1215 by the adoption of "Magna Charta".

Magna Charta fixed the victory carried by the nobility of England towards monarch. Studying the articles of Magna Charta we can conclude that its main content is the following:

- ✓ The king must preserve feudal routine with his vassals.
- ✓ Taxes are obliged to levying only in case of general council's decision.
- ✓ Any arrest should be based on the testimony of trustful witnesses.
- ✓ People can be arrested, expelled, disgraced only by legal judgment.

The importance of the mentioned document is that there is fixed the inviolability right of a free person. That is, a person can be arrested and imprisoned only on the bases of legal sentence of a

court. "Magna Charta" is the statute which gave a rise to the development of the modern institution of a person's testimony.

The other important Act in this field is "The editor on Rights" 1628, which refers to the development period of bourgeois orders in England. The main statements of that Act are:

- ✓ Constitutional monarchy should define taxes only by councils decision.
- ✓ Arrests should take place only in a legal order.
- ✓ Extreme courts should be abolished.

The next important step for the Human Rights was "the Habeas Corpus" Act, 1679 which is the constituent part of England's unwritten constitution. It can be called like "Act on warrants of Human Rights". It's the only Act in human history in which not only the Human Rights are declared but also the warrants of their provision are fixed. According to the Act:

At present there exist three forms of government: republic (representing two types – democratic and socialist), monarchy and timocracy (timē honor + kráteein to rule). In timocracy ambition for power and glory motivates the rulers and although possession of property is not necessary qualification for holders of offices, love of honor is supported by illegal greedy accumulation of wealth. Rulers are here warriors suited with the name “enemies of man” (Martin Luther). The collapse of the USSR led to the rise of a heap of timocratic states. To talk about these states with precision and understanding, it is necessary to have new names. The fascist terms “authoritarianism” and “totalitarianism” that lead us into error since the Cold War are out of place here.

On the evidence of Giovanni Sartori the word “totalitarianism” first appeared in 1925 and like “authoritarianism” it was an invention of fascism. Authors like Friedrich, Brzezinski and Juan Linz who are believed to become classics of political science in their life-time borrowed these fascist words in order to create a new classification of forms of government: democracy, authoritarianism, totalitarianism. In 1956 the word “totalitarianism” was easily and at will applied to Soviet Union as if this country did not fight during the Second World War on the side of free and democratic mankind. Such cynicism concerning the recent true ally can be explained only as a result of fall of state morals in western countries during the Cold War. As Fichte said: there is no knowledge without conscience (kein Wissen ohne Gewissen). The ignorant classics applied to the Soviet Union one-dimensional terrorist principle of totalitarianism instead of analyzing the two-dimensional principle of democratic centralism in which centralism is only a terrorist means of reaching the democracy.

The absurd classification of classics who were hawks of the Cold War pursued the single purpose to destroy the state of democratic centralism which by mistake was taken for totalitarian “empire of evil” (Roland Reagan) and to plunder its wealth. And today their followers (Segert 2012: 46-52) see in Putin’s Russia only an authoritarian regime foretelling its full destruction and incalculable sufferings of the people. But we need the peaceful transition to democracy. We have to develop the democratic elements of timocracy as mixed form of government. Timocracy can be taken for tyranny, for democracy, for oligarchy, for life royal power. Our task is to understand and use the main trend of its dynamics. Already Aristotle had expressed this trend in his famous proposition: Timocracy turns into democracy because it also desires to be the rule of majority.

The basis of the new contemporary classification of forms of government is the teaching of Plato concerning state morals or moral principles that are inherent in every type of state, secure its existence and prevent from transformation into another type. Thus the vital condition of democratic republic is the moral principle of human rights. The principle of socialist republic is democratic centralism.

1. Totalitarianism and democratic centralism have quite different historical roots. In the first case it is signoria of the mediaeval Italian timocratic republics with their deviation to tyranny for tyranny. In the second case it is the ancient Greek tyranny in which Pisistratus trained Athenians to obeying free democratic laws of Solon. Tyranny was here only a means of reaching “beautiful Athenian democracy” (Hegel).
2. Attitude towards democracy. Totalitarianism declares itself to be enemy of democracy. Its aim is unification (Gleichschaltung) of all political, economic and cultural organizations. Democratic centralism promotes trade-unions, cultural revolution and internationalism. Thus it contributes to pluralism and democracy.
3. In both cases there are quite different political parties. Bolsheviks as party and as political type rank with revolutionary Independents of Cromwell and Jacobins. What unites all of them is love of republic. There are two types of republic: democratic and socialist. Nazis are quite another matter. On the evidence of the best Nazi jurist Ernst

Rudolf Huber NSDAP pursued “the education of the people to the idea of Reich” (Huber 1940: 46-47).

4. The difference between republic and monarchy (empire) was ignored by Friedrich and Brzezinski. This allowed them to help together Nazism and communism. But up to now it is essentially important as at time of Montesquieu. His classification of forms of government (republic representing two types: democratic and aristocratic, monarchy and despotism) replaced the traditional classification of Aristotle (monarchy, aristocracy, democracy).
5. Totalitarianism does not see the difference of principle between democracy and democratic centralism. That’s why the Third Reich attacked the Soviet Union in 1941.
6. As leaders of their states Hitler and Stalin were undoubtedly both tyrant. But only the Fuehrer swore his soldiers on his name requiring absolute obedience (unbedingten Gehorsam) and readiness to the self sacrifice at any time and the murder of other peoples. Therefore only Hitler as absolute tyrant was enemy of man (Martin Luther).

REFERENCES

- Segert, D. (2012). “Putins Russland als Erfolgsstory. Eine Lektion über autoritäre Regime”. WELT TRENDS Zeitschrift für internationale Politik, Nr. 82, Januar/Februar.
- Huber, E. R. (1940). “Aufbau und Ausbau der deutschen Reichsverfassung”. “DAS REICH” Deutsche Wochenzeitung. Berlin, 6. Oktober, 1940.

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի ասիստենտ

ՔՈՉԱՐՅԱՆ ՌՈՄԻԿ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի ասիստենտ

ԷՄՊԻՐԻԿ ՄՈՂԵԼՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Էմպիրիկ մոդելները, ըստ էության, սոցիալական աշխատանքի պրակտիկ փորձառության «ինքնագիտակցում» և տեսականորեն բանորոշ ձևակերպումներն են: Ինչպես նշում է Մարկ Մատենին (Mattiani et al. 1998: 140), «մոդելները հաճախ առաջանում են մարդկային փորձառության, զարգացման, փոխազդեցության յուրահատուկ տեսական հասկացումներից»: Այս առումով, խոսել մոդելների մասին, կնշանակի խոսել պրակտիկ սոցիալական աշխատանքի տեսության ձևավորման գործընթացի մասին: Սոցիալական աշխատանքի ընդհանուր տեսության ձևավորման համար անհրաժեշտ է ապահովել նրա երկու բաղադրիչների. մի կողմից այցելուների կենսական պրակտիկ գործողությունների և մյուս կողմից հատուկ հասարակական պայմաններում մասնագետ սոցիալական աշխատողի գործունեության, տեսական հիմքը (Бернгард 2011):

Սոցիալական աշխատանքի գիտակարգի կայացման ու նաև գիտականության տեսադաշտի ու իմաստի նորովի հասկացմանն ուղղված այդ մտորումների համար որպես նշանակալի՝ ստորև ներկայացվում են նրա պատմական կայացման, ամբողջական խնդրակարգի նկատմամբ իրենց պոտենցիայի ու հավակնության, գործնական կիրառության տեսակետից նշանակալի ու առավել տարածված հետևյալ մոտեցումներն ու մոդելները.

Հոգեօսոցիալական մոդել (psychosocial approach). Պատմական կայացման տեսակետից հոգեօսոցիալական մոտեցումը սկիզբ է արել 1917 թ. լույս տեսած Մերի Ռիչմոնդի «Սոցիալական ախտորոշում» (1917) գրքից, որը տարիներ շարունակ սոցիալական աշխատողների ուսուցման և պրակտիկ գործունեության համար եղել է հիմնական մեթոդական ձեռնարկ:

Սոցիալական աշխատանքում այս մոտեցումը սկիզբ է առել և սահմանվել է որպես ախտորոշիչ, իր մեջ ներառելով տեսական-մեթոդաբանական և գործնական-կիրառական բաղադրամասեր և դիտավորություն ունի աջակցել շահառուներին ներանձնային և միջանձնային խնդիրների պրակտիկ լուծման ժամանակ առաջացող դժվարությունների հաղթահարման գործընթացում (Hollis & Woods 1982: 4-16):

Խնդրալույծ մոդել (problem-solving approach). 50-ական թվականների վերջին Հելեն Պերլմանի կողմից մշակվեց «խնդրալույծ» մոտեցումը, որի նպատակն էր շահառուների ակտիվացման և անձնական ուժերի զարգացման միջոցով հասնել հիմնախնդիրների լուծմանը: Խնդրալույծ մոտեցման ուղղվածությունն էր՝ ստեղծել շահառուի հիմնախնդրի հստակ ձևակերպում, սխեման, որը հիմք է հանդիսանում հետագայում դիագնոստիկայի և միջամտության պլանավորման և իրականացման համար (Perlman 1994: 114):

Խնդրակենտրոն մոդել (task-centered approach). Այս մոտեցումը ձևավորվել է 70-ական թվականներին՝ Ռիդի և Էփշտայնի աշխատություններում (Reid & Epstein 1972): Այս մոդելը ծագել է խնդրալույծ մոտեցման սահմաններում և ունի հետևյալ բնորոշումները, բարձրագույն աստիճանի կառուցվածքայնություն՝ արդյունքին հասնելու համար մշակված հատուկ հստակ տեխնիկաներ, հիմնախնդիրը ձևակերպվում է այնպես, ինչպես այն ի հայտ է գալիս կամ ըմբռնվում է կլիենտի կողմից, իրագործվում է հստակ սահմանված ժամկետներում, կարող է իրագործվել տարաբնույթ տեսությունների սահմաններում, փոփոխություններն առաջանում են փոքր խնդիրների լուծմանը հասնելու հետևանքով, գործում է «այստեղ և հիմա» սկզբունքով:

Խնդրակենտրոն մոտեցման մոդելը ձևավորվել է պրակտիկ սոցիալական աշխատանքի ընթացքում առաջացած էմպիրիկ գիտելիքի կիրառության ժամանակ: Ղեկավարվելով այս մոդելի մոտեցմամբ, սոցիալական աշխատողը հետևում է ընդհանուր գործունեության էթիկական կանոններին՝ հարգել շահառուին, նրա հավատարիքներն ու էթնիկ առանձնահատկությունները:

Ճգնաժամային միջամտություն (crisis intervention). Մոդելի նպատակն է՝ հնարավորինս կարճ ժամկետներում վերադարձնել ընտանիքը բնականոն գործունեության: Ժամկետը որոշվում է ճգնաժամի լուծման համար անհրաժեշտ քայլերն իրագործելիս, ըստ մարդկային կարողության և իրերի կացությամբ ընձեռնվող հնարավորության, նվազեցնելով ու չեզոքացնելով բացասական հետևանքների՝ ցավի, էմոցիոնալ լարվածության ազդեցությունը ընտանիքների անդամների վրա: Ճգնաժամային միջամտությունը կարճաժամկետ, արդյունավետ սոցիալական աշխատանքի մոդել է, որի նպատակն է կարճ ժամկետում հասնել ընտանիքում առաջ եկած և սովորաբար էմոցիոնալ բնույթ կրող խնդրի լուծմանը, ընտանիքի ադապտատիվ մեխանիզմների հզորացմանը (Thorman 1982: 50):

Որպես ճգնաժամային միջամտության մի ձև կարելի է դիտել բազմատեսակ ազդեցության մոդելը (multiple impact): Այդ մոտեցման հեղինակ համարվում է ՄաքԳրեգորը (MacGregor 1964), որն այն կիրառել է տարիքային հոգեբանության և վարքի խնդիրներ ունեցող դեռահասների և իրենց ընտանիքների հետ աշխատելիս, որի թիրախ խումբն են հանդիսանում դեռահասները և իրենց ընտանիքները: Այդ մոտեցման հիմնական նպատակն է աջակցել շահառու ընտանիքներին հաղթահարել առաջացած այն խնդիրները, որոնք կապված են անչափահասների դեվիանտ վարքի հետ: Տվյալ մոտեցման ժամանակ սոցիալական աշխատողի ուշադրությունը բևեռվում է կարճ և ինտենսիվ միջամտության արդյունքում ընտանիքում ստեղծված իրավիճակում դրական փոփոխություններին հասնելուն:

Ընդհանրական մոդել (generalist approach). 70-ական թվականների վերջից ԱՄՆ-ում լայն տարածում և ընդունելություն է գտել սոցիալական աշխատանքի «ընդհանրական մոտեցումը», որն իրենից ներկայացնում է ինտեգրացված և համակցված մոտեցում, և որի նպատակն է «աջակցել անձերին, ընտանիքներին, փոքր խմբերին, սոցիալական համակարգերին՝ փոփոխությունների ուղղված աշխատանքներում, որոնք կարող են բերել մարդկանց և միջավայրի առավել բարեկարգված հարաբերություններին: Այդ գործընթացում կիրառվում են սոցիալական աշխատանքի ցանկացած մեթոդներ՝ ավանդական կամ իննովացիոն, միասնական կամ առանձին-առանձին՝ հետամուտ լինելով բավարարել կլիենտի ռեալ կարիքները, հաղթահարել ստրեսային իրավիճակները, ուժեղացնել նրա ներքին հնարավորությունները» (Brown 1982: 123):

Էկո-համակարգային մոդել. Ընդհանրական մոտեցման շրջանակներում դիտարկվում է նաև էկո-համակարգային մոտեցումը (Meyer 1988), որի հիմքում ընկած է ընտանիքի դիտարկումը որպես ենթահամակարգ բազմատեսակ այլ համակարգերի կոնտեքստում, որոնց հետ ընտանիքի անդամներն ունեն փոխհարաբերություններ (Janzen C. & Harris 1997: 6): Էկոլոգիական կամ էկո-համակարգային մոտեցման տեսակետից շեշտը դրվում է մարդկային ադապտացիոն գործառնության վրա: Ըստ այդ մոտեցման, մարդն ու իր միջավայրը գտնվում են մշտական փոխազդեցության մեջ, իսկ ադապտացիան դիտվում է որպես անձանց աճի, կայացման և այդ ընթացքում նաև այլոց նկատմամբ դրական ներգործության դինամիկ գործընթաց: Միջավայրը սահմանվում է որպես կոնկրետ աշխարհագրական, սոցիալապես նշանակալի, ժամանակային հստակ միջակայքում մարդկանց ու նաև նրանց միջև փոխազդեցությունների և փոխներթափանց գործունեությունների կոմբինացիա անձերի և ընտանիքների կյանքում, ինչպես նաև սոցիալական և մշակութային համակարգերի կյանքում կառուցված տարածություն: Մարդիկ մի կողմից՝ ներգործաբար մասնակցում են իրենց միջավայրի կայացմանը և մյուս կողմից՝ կրում միջավայրի ազդեցությունը:

Կյանքի մոդել («life» model). Այս մոտեցումն իր մեջ ինտեգրել է վարժման և ռեֆորմների ավանդույթները, ընդհանրացնելով ու շեշտելով անձանց և իրենց սոցիալական ու ֆիզիկական միջավայրի փոխհարաբերությունների դիսֆունկցիոնալությունը (Gitterman & Germain 1989: 115): Ըստ այդ մոդելի, կարիքներն ու արդյունքները վերափոխվում են «անհատական» և «միջավայրային» վիճակից դեպի կյանքի պրոբլեմները: Սոցիալական աշխատանքն իր դիտավորությամբ ուղղված է մի կողմից՝ մարդկանց ադապտացման ունակությունների և հմտությունների ուժեղացմանը և մյուս կողմից՝ սոցիալական միջավայրի կողմից ստեղծվող պայմանների բարելավմանը:

Ընտանիքի ուժեղացման մոդել (family centered empowerment). Այս մոտեցման սկզբնավորումը կապում են 1980-ական թվականներին տպարված Հարսոմանի և Լաերդի գրքի հետ, որտեղ ամփոփ ներկայացված էին այդ մոտեցման նպատակն ու առանձնահատկությունները (Hartman & Laird 1983): Այդ մոտեցման հիմնական սկզբունքն է՝ ընտանիքում ձևավորել այն համոզմունքը, որ բավարար ռեսուրսների առկայության պարագայում ընտանիքի անդամներն ի վիճակի են ինքնուրույն հասնել իրենց առջև դրված նպատակին՝ բարեկարգելով ընտանիքի կենսապահովման պայմանները: Անհրաժեշտ է նաև շեշտը դնել ընտանիքի անդամների միջև սիրո, հոգատարության և փոխօգնության փոխհարաբերությունների հաստատման և զարգացման վրա (Wise 2005: 50):

Կառուցվածքային մոտեցում. Կառուցվածքային մոտեցումը նպատակ ունի լուծել ընտանիքներում առկա խնդիրները ընտանիքների կառուցվածքների վերակազմակերպման միջոցով: Մինուչինի աշխատանքների թիրախ խումբ են հանդիսացել բազմախնդրային, ցածր եկամուտներով և տարբեր պատճառներով դիսֆունկցիոնալ իրավիճակում հայտնված ընտանիքները:

Հաղորդակցային մոտեցում. Ըստ այդ մոտեցման, մարդկային վարքն իրենից ներկայացնում է շփման ուղերձների (messages) բազմամակարդակ հարաբերակցություն և ընտանեկան հարաբերությունները դիտվում են որպես շփման արդյունք: Ընտանիքի անդամները հիմնում են կանոններ, որոնց հետևելով՝ կառուցում և կարգավորում են միմյանց ու միջավայրի հետ շփման ձևերն ու շրջանակները: Կառուցվածքային տեսությունը սոցիալական աշխատանքում և ընտանեկան թերապիայում, ըստ էության, ոչ թե պասիվ ունկնդրություն ու մասնակցություն է ընտանիքի կյանքում, այլ գործուն մոտեցում և բնորոշվում է որպես գործողություն-թերապիա կամ՝ միջամտություն, որն ուղղված է ընտանիքի «այստեղ և հիմա իրականացվող փոխազդեցություններին, դիտավորություն ունենալով փոփոխել դրանց ետևաբեմում ընկած և դրանք պայմանավորող հիմնային կառուցվածքները: Ընտանիքը դիտվում է որպես կենդանի համակարգ, որը պահպանում է միջավայրի հետ իր հարաբերությունները շփման միջոցով՝ հաղորդելով ու ստանալով ուղերձներ, ինչպես նաև մասնակից դառնալով հետադարձ կապի գործընթացին (Nichols & Schwartz 1995: 240):

Ռազմավարային մոդել (strategic approach). Այս մոտեցումն ուղղված է ներընտանեկան կրկնվող վարքային տեսակների և դիսֆունկցիոնալ հիերերխիայի հետևանքով առաջացող խնդիրների լուծմանը: Մոտեցման տեսական հիմք է հանդիսանում ընդհանուր համակարգերի տեսությունը և կիբեռնետիկան: Յուրաքանչյուր ընտանիք դիտարկվում է իր եզակիության ու անկրկնելիության մեջ և, որպես հետևանք, շեշտն առավելապես դրվում է կոնկրետ ընտանիքի առանձնահատուկ խնդիրների լուծման համար ռազմավարություններ մշակելու և կիրառելու վրա:

Սոցիալական ուսուցանման մոդել (social learning approach). Սոցիալական ուսուցանման մոտեցումը արդյունավետ օգտագործվում է սոցիալական աշխատանքի տարբեր փուլերի մեջ՝ հիմնախնդրի վերլուծության, վարքային փոփոխությունների պլանավորման, միջամտության ռազմավարության մշակման: Սոցիալական ուսուցանման մոտեցմանը հետևող մասնագետներն իրենց ուշադրության կենտրոնում են պահում վարքային փոփոխություններին հասնելը և,

առհասարակ, մասնագետի մոտ ընտանիքը գալիս է հենց այդ խնդրով՝ անհանգստացած իր անդամներից մեկի վարքով, որը խոչընդոտում է ամբողջ ընտանիքի լիարժեք գործառնությանը: Ինչպես և նկատվում է պրակտիկ սոցիալական աշխատանքի տեսության մեջ պրակտիկ փորձառության «ինքնագիտակցված» մոդելների այսչափ քանակի համառոտ շարադրանքից տարբեր մոդելների միջև պատմականորեն տեղի են ունեցել և շարունակվում են փոխներթափանցումներ ու միահյուսություններ, արդյունքում փոխլրացնելով մեկը մյուսի մասնավորությունը սոցիալական աշխատանքի խնդրակարգի համալիր ամբողջականության համեմատ: Այդպիսի փոխլրացմամբ կազմավորվող մոտեցումը առավել չափով էր պոտենցիա ցուցաբերում և հայտ ներկայացնում՝ համապատասխանել սոցիալական աշխատանքի ամբողջական տեսությանը: Մեր տեսակետն այն է, որ սոցիալական աշխատանքի պատմականորեն կայացումն իրագործվելով կամ մոդելների փոխներթափանցմամբ ու միահյուսությամբ, ըստ էության, վերընթանում է դեպի իր խնդրակարգի ու կատարումի ամբողջությանն ադեկվատ համընդհանուր (ունիվերսալ) գիտական տեսության կամ հայեցակարգի մշակում ու կայացում: Ներկայացնելով որոշ նշանակալի մոդելների շարքի պատմականորեն կայացումն ու բովանդակությունը, մեր դիտավորությունը դրանց փոխներթափանցման ու միահյուսությունների տեսանելի ֆենոմեններից անդին՝ պրակտիկ սոցիալական աշխատանքի ունիվերսալ հայեցակարգի վերաբերյալ խորհրդածությունն է և բացահայտումը, թե ինչպես է այն հնարավոր և թե ինչպիսի հայեցակարգն է որպես այդպիսին մեզ տեսանելի:

Գոյություն ունեցող՝ վերոշարադրյալ ու նաև շարադրանքում չընդգրկված մոդելների մեջ կան այնպիսիները, որոնց և՛ անվանումը, և՛ բովանդակությունը, նաև պոտենցիան հատկապես նկատի ունի ու ադեկվատ է սոցիալական աշխատանքի ամբողջական խնդրակարգի մեջ միայն որոշ բաղադրատարրերի, թեև ձևակերպվում է որպես թե վերաբերող ամբողջ խնդրակարգին: Մասնավորապես, «ախտորոշիչ» մոդելը սկզբունքորեն նկատի ունի կարիքի բացահայտումն ու գնահատումը, ինչը սոցիալական աշխատանքի ամբողջական խնդրակարգը չէ, և որոշ չափով նաև օգնում է աջակցության տեսակի ընտրությանը: Ասվում է որոշ չափով, որովհետև արդյունավետ աջակցության համար հարկավոր է նկատի ունենալ ոչ միայն կարիքի բնույթը, այլև շահառուի ներքին ռեսուրսները՝ հոգեբանական առանձնահատկությունները, նախասիրությունները, նաև առկա ունակություններն ու հմտությունները, քանզի, եթե մարդը ինչ որ բան է ուզում ավելացնել, ապա պետք է իմանա, թե ինչ՞ հենքի վրա ինչ ավելացնել և եթե հենքի իսկությունը չպարզվի, ապա՝ ավելացվածը կարող է փլվել և ավելացմանն ուղված ջանքերն ունայնության մատնվեն: Ինչ վերաբերում է «խնդրալույծ» կամ «խնդրակենտրոն» մոտեցումներին, ապա նրանք նկատի ունեն աջակցության ընտրության, մշակման, կազմակերպման ու իրականացման փուլերը, որը նույնպես սոցիալական աշխատանքի ամբողջական խնդրակարգը չէ և մասնավոր օգնություն է ցուցաբերում կարիքի բացահայտման ու գնահատման փուլին, կանխորոշ մոտեցում ունենալով ամբողջական կարիքի մեջ որոնում կատարել միայն որոշ հիմնախնդիրների ուղղությամբ: Կամ օրինակ՝ «հաղորդակցական» մոտեցումը, որը շատ կարևոր է ծանոթացման, կարիքի բացահայտման, աջակցողական միջամտության իրագործման ընթացքում, սկզբունքորեն հնարավորելով շահառուի և սոցիալական աշխատողի հարաբերությունները և կայացման որոշակի աստիճանի բերելով նրանց միջև կապը՝ որպես պոտենցիալ հնարավորություն համագործակցության, այնուամենայնիվ, նախընտրելի ու արդյունավետ համագործակցությունը չի կարող դեռ միայն իրենով ապահովել: Միշտ չէ, որ լավագույն սոցիալական աշխատողը նա է, որ հաղորդակցության մեջ մտնելու առավել ունակություններ ունի՝ պայմանավորված հոգեբանական խառնվածքի ու բնավորության առանձնահատկություններով ու բնատուր օժտվածությամբ, քանզի ունենալ այդ առավելությունը դեռ չի նշանակում դրա հետ մեկտեղ ունենալ նաև սիրով կարեկից լինելու ընդունակություն, կարիքի ճշմարիտ բացահայտման ու գնահատման համար անհրաժեշտ գիտական վերլուծական կարողություններ, սոցիալական

կյանքում առկա ինստիտուցիոնալ համակարգի՝ կարիքավորությանն աջակցողական ռեսուրսների վերաբերյալ անհրաժեշտ ու բավարար գիտելիքներ և ավելին՝ սոցիալական կյանքի ու նաև անհատի կյանքի բարեկարգության ուղղված աջակցության համար անհրաժեշտ ու նախընտրելիորեն նպաստավոր բարոյական նկարագիր և բարոյական աշխարհայացքի արժևորում ու գիտելիքներ: «Հաղորդակցության» մոդելի մեջ նշվող հոգեբանական խորաթափանցությամբ օժտվածությունը և ուղերձներին վերահասու լինելը դեռ չի նշանակում լինել սոցիալական կյանքի գիտություն ունեցող, մշակութային և հոգևոր արժեքներն ընդունող ու կրող՝ այդ ամենի բարեկարգության դիտավորությամբ ու մտահոգությամբ, և այդպիսով՝ լինել սոցիալական աշխատանքի ամբողջական խնդրակարգի համար այնքան անհրաժեշտ առավելություններով, պատրաստվածությամբ ու կամեցողությամբ:

Մոդելների ու մոտեցումների շարքում, թեև առավել ադեկվատ միայն սոցիալական աշխատանքի մասնավոր բաղադրատարրերի նկատմամբ, և, այնուամենայնիվ, որպես թե ամբողջական խնդրակարգին վերաբերող նմանատիպ օրինակները կարող են լինել բազմաթիվ: Սակայն բազմատեսակ մոդելների ու մոտեցումների շարքում կարող ենք նկատել ոչ միայն իրենց անվամբ, բովանդակությամբ ու պոտենցիայով սոցիալական աշխատանքի ամբողջական խնդրակարգի լոկ մի մասը որպես իր իսկական խնդրառություն ունեցող մոդելներ կամ մոտեցումներ, այլև այնպիսիները, որոնք, ընդհակառակը, իրենց անվամբ, բովանդակությամբ և պոտենցիայով կարծես հավակնում են ու հնարավորություն ունեն նկատի ունենալու ամբողջական խնդրակարգն ու իրականացվելու այդ ծավալի ու բովանդակության ամբողջականության վերաբերությամբ: Դրանցից են՝ «ընդհանրական», «բիհեվիորիստական», «էկո-համակարգային», «կյանքի» մոդելները և այլն: Նկատենք նաև, որ «ընդհանրական» մոտեցման կարգավիճակը փոքր ինչ այլ է և բացի այն ամենից, որը վերաբերվում է նշված մոդելների հետ նաև իրեն, այն ունի սոցիալական աշխատանքի մոդելների տեսության համար էականորեն նշանակալի մեկ այլ պոտենցիա ևս, որին հարկ ենք համարում հատուկ անդրադառնալ մի փոքր անց:

Բոլոր այս մոդելները սկզբունքորեն մարդու կյանքը և սոցիալական աշխատանքի համար նշանակալի բոլոր հիմնախնդիրները որպես այդպիսին, կնշանակի նաև՝ որպես խոցելի, վտանգված, կարիքավոր տեսնվող անձանց ու խմբերի, համախմբությունների կամ հանրությունների կյանքն ու հիմնախնդիրները, դիտարկում ու քննության են առնում ամբողջական կենսակերպի մեջ: Ե՛վ կարիքի բացահայտումը, և՛ աջակցողական միջամտության իրագործումը դիտվում են կենսակերպի ներքին կազմակերպվածության ամբողջական խնդրակարգում ու տիրություն: Սա, ըստ էության, ճշմարիտ ու ամբողջական կողմնորոշում է, քանզի յուրաքանչյուր կարիք ու կարիքավորություն, ինչպես նաև աջակցողական միջամտություն և նրանով ձեռք բերվող արդյունք, որոնց հետ նպատակայնորեն գործ ունի սոցիալական աշխատանքը, ըստ էության, մարդկային անձի, խմբի, համախմբության, հանրության և, այդպիսով, հոգու և հոգիների առանձին ու համատեղ ներքին կեցողության և դրսևորվող կենսակերպի որպես այդպիսին բացորոշություններն են և տվյալ ներկայում, ըստ կարողության և սահմանված կարգի ու ռեսուրսների, դրանց նպաստավոր կազմակերպվածությանն ու •ործառնությանը միտված գործունեություն: Ասել կուզի, յուրաքանչյուր կարիք ու կարիքավորություն հենց հոգու (հոգիների) կեցողության և դրսևորվող կենսակերպի կարիքն ու կարիքավորությունն է: Սոցիալական աշխատանքի մյուս բաղադրատարրը՝ աջակցողական միջամտությունը, հոգու (հոգիների) կեցողության և դրսևորվող կենսակերպի միտված և դրանում կայացող գործունեությունն է: Եվ վերջապես, այդ գործունեության արդյունքը նույնպես վերաբերում է հոգու ներքին կեցողությանը և դրսևորվող կենսակերպին: Ասվածով, կարծես, լիովին հիմնավորվում է վերոբերյալ միտքը, թե գոյություն ունեն նաև սոցիալական աշխատանքի այնպիսի մոդելներ ու մոտեցումներ, որոնք իրենց անվամբ, բովանդակությամբ ու պոտենցիայով վերաբերում են ամբողջական խնդրակարգին: Սակայն դա միայն թվացյալ է,

քանզի բոլոր այդ մոդելներում դրանց անվան, բովանդակության մեջ և պոտենցիալում պակասում է ամենաէականն ու սկզբունքայինը՝ բարեկարգությանն ուղղորդվածությունը: Ինչպե՞ս հասկանալ այս միտքը:

Երբ ասվում է «բիհեվիորիստական», «կյանքի», «կառուցվածքաբանական», «հաղորդակցային», «սոցիալական ուսման», «ընտանիքի ուժեղացման» ... մոդել, այդ դեռ չի նշանակում որ նրանում որպես այդպիսին, արդեն իսկ ներհատուկ՝ ներկա է անձի, խմբի, համախմբության մարդկային բանական հոգևոր ինքնության կեցողության, վարքի ու այլոց հետ կենսակերպի նախընտրելի ու նպատակային դիտելի իդեան և դրան նպատակամետ ուղղվածությունը, ինչը սկզբունքորեն իսկ այդ մոդելներում նախնականորեն ենթադրում է որոշակի աշխարհայեցողություն ու իմաստություն, որում և հարցերի այդ խմբին կենտրոնացած ուշադրություն ու նաև պատասխաններ: Իհարկե, բոլոր այդ մոտեցումներում այդ հարցերի նկատմամբ առաջարկվում են ու նկատելի են բարենպաստության ու դրական փոփոխության հասնելու առումով որոշակիացածության ինչ-որ աստիճան ունեցող այլևայլ լուծումներ և ուղղվածություններ, սակայն բոլոր դրանք, որպես այդպիսին, սկզբունքորեն ու ներքուստ չեն բխում մոտեցման կամ մոդելի անվանումից, բովանդակությունից ու պոտենցիայից և նույնիսկ կարելի է ասել, որ համարյա միշտ նկատելի է խզվածություն այս երեքի միջև՝ անվան ու բովանդակության, բովանդակության ու պոտենցիայի, կամ անվան ու պոտենցիայի, քանզի միշտ չէ, որ տեսության, մոտեցման կամ մոդելի ներքին հնարավորությունները լիովին արտահայտված են լինում բովանդակության մեջ և գտնում իրենց ճշգրիտ անվանումը: Դրականորեն նպաստավոր այդ լուծումները, որ առաջարկվում են այդ մոտեցումների կամ մոդելների շրջանակներում, միշտ որպես իրենց հիմնադրյուր ունեն մարդկային այլ գիտելիքներ ևս՝ բնույթով աշխարհայացքային ու կյանքի իմաստությանն առնչվող, որ ունեն մոդելն առաջարկող տեսաբան կամ պրակտիկ սոցիալական աշխատող մասնագետները:

Եվ այնուամենայնիվ, չէ՞ որ այդ մոդելների բովանդակությունների մեջ կան որոշակի լուծումներ և ուղղվածություն դեպի այն, թե որն է նպաստավորն ու նպատակային խնդիրը անձի, խմբի, համախմբության հետ տարվող սոցիալական աշխատանքում: Ինչու՞ է այդ դեպքում ասվում, թե վերոնշյալ այդ մոտեցումներում ու նաև չնշված նմանատիպ այլ, թեև ոչ բոլոր, մոտեցումներում ևս պակասում է ամենաէականն ու սկզբունքայինը՝ բարեկարգությանն ուղղվածությունը: Այդ բոլոր մոտեցումներում կամ մոդելներում առկա լուծումները և նպատակային ուղղվածությունները այդ ի՞նչ բնույթի են, որ թեև կարող են լինել դրականորեն նպաստավոր անձանց, խմբերի ու համախմբությունների կարիքային հիմնախնդիրների նկատմամբ և, այնուամենայնիվ, չունենալ ամբողջական, հիմնային, էականորեն սկզբունքային ու հեռանկարային բարեկարգությանն ուղղվածություն:

Սոցիալական աշխատանքի այդ մոտեցումներում կամ մոդելներում նկատելի ուղղվածությունները և ըստ այդմ նպատակային խնդրի սահմանումը բնորոշելի են որպես մասնավոր բնույթի՝ բարեկարգության ուղղվածության տեսակետից, վերջինս, այսինքն՝ նրա իսկությունը հաստող պոտենցիան ու դրանով ընձեռնվող տեսադաշտը, իրենցում սկզբունքորեն չունենալով: Ինչպե՞ս հասկանալ այդ մոդելների նկատմամբ որպես «մասնավոր» բնորոշումը:

Սոցիալական աշխատանքի վերոշարադրյալ բոլոր մոդելներում նկատելի է յուրաքանչյուրին բնորոշ էական ու համընդհանուր մի հատկություն: Ո՞րն է այն: Բոլոր մոդելներում, ինչպես և ասվեց, շատ կարևոր է պարզել նրանց ուղղվածությունը: Մասնագիտական գրականության մեջ քննարկվող մոդելների մեծ մասը սոցիալական աշխատանքը դիտարկում են երկակի ուղղվածությամբ, մի կողմից՝ մարդկանց աղապտացման ունակությունների և հմտությունների ուժեղացման և մյուս կողմից՝ սոցիալական միջավայրի ներկա հնարավորությունների շրջանակներում ընձեռնված պայմանների բարելավման: Սոցիալական աշխատանքի յուրաքանչյուր հաջողված արդյունք, կամ գուցե դեռ չհաջողված, այլ դեռ միայն աշխատանքների ընթացքի նպատակադրության ուղղվածություն դեպի արդյունք՝ որպես այդպիսին է ճանաչվում, երբ իրագործվում է գոյություն ունեցող սոցիումի ամբողջության մեջ շահառուների՝

անհատի, խմբի, համախմբության վերընդգրկում: Սոցիալական աշխատանքի բոլոր կոնկրետ ձևերում, մոդելներում, մոտեցումներում գոյություն ունեցող տվյալ հասարակության սոցիալական հանրակեցության կենդանի ու դինամիկ գործառնող ներկայակերպվածության մեջ ներընդգրկվելը և կամ վերընդգրկվելն է դիտվում որպես պիտոյական ու սկզբունքային անհրաժեշտություն, տարաբնույթ օկարություններով պայմանավորվածությամբ, սոցիալական կյանքից կտրված և գործուն միջավայրից առանձնացած ու միայնացած, որոշակի իմաստով մարզինալ վիճակում հայտնված՝ որպես խոցելի, վտանգված, ճգնաժամային բնորոշելի և, ըստ էության, բոլոր այս առումներով՝ կարիքավորության կարգի մեջ տեսնվող, հասարակության, պետության, այլևայլ կառույցների կողմից անտեսված կամ մոռացության մատնված և այսկերպ՝ անհոգաժության թողնված անձանց և խմբերի նկատմամբ: Իր այդկերպ որպիսությամբ սոցիալական աշխատանքի ուղղորդվածությունը բնորոշելի է որպես գոյություն ունեցող սոցիումին ադապտացիա: Եվ կարելի է ասել, որ այդ մոտեցումներում ու մոդելներում սոցիալական աշխատանքի նպատակային կազմակերպվածությունը որոշակի իմաստով նաև սպառվում է միայն ադապտացվածությանն իր կողմնորոշմամբ: Բոլոր մոդելներին ու մոտեցումներին բնորոշ այս ընդհանրական հատկանիշը, ըստ էության, սահմանափակում է սոցիալական աշխատանքն ու դրական ներգործությանն նրա հնարավորությունները տկար ու կարիքավոր անձանց, խմբերի ու համախմբությունների կյանքում և այս բոլորով ի մի՝ հենց ամբողջական սոցիալական կյանքում: Ներկայացված բոլոր մոդելներում սոցիալական աշխատանքն ուղղված է տվյալ ներկայի սոցիալական կյանքի բարեկեցիկության սահմանված շրջանակներից դուրս մնացած և այս առումով տկար ու կարիք ավոր, կարիքավորության հիմնախնդիրներ ունեցող անձանց, ընտանիքներին, խմբերին, համախմբություններին, ցուցաբերելով նրանց օգնություն և աջակցություն՝ օգտվել հասարակության մեջ ամենքի համար և հենց տվյալ կարիքավորության դեպքում տրամադրվող բարիքներից ու ծառայություններից, հասնել նաև մտածելակերպի, կյանքի ու մարդկանց նկատմամբ վերաբերմունքի և վարքագծի, կենսակերպի մեջ փոփոխությունների՝ գոյություն ունեցող և հասարակության տվյալ ներկայում գործուն պահանջներին հարմարվելու (ադապտացվելու) և այդ սահմաններում՝ ործելու ուղղությամբ:

Նկատենք, սակայն, որ տվյալ ներկայում գործող սոցիալական կյանքին ադապտացումը և սոցիալական հանրակեցության կենդանի գործառնության մեջ սոսկ վերընդգրկումը ամենևին էլ անհատների, խմբերի, համախմբությունների և ամբողջ հասարակության կյանքում սոցիալական աշխատանքի սկզբունքային պոտենցիայի ու նաև գոյություն ունեցող ակտուալացումների ներգործունության վերջնագիծ ու ավարտման սահման չէ: Սոցիալական աշխատանքի որպես այդպիսին (ըստ ինքյան) գոյության պոտենցիան և ըստ այդմ իսկությունն առավել է, քան սոսկ ադապտացումը, գոյություն ունեցող սոցիալական կյանքին հարմարումը (Զիջյան և Քոչարյան 2009: 246): Սոցիալական աշխատանքի իսկության բացահայտումը և իմաստավորումը՝ ըստ նրա կոչման և իսկորեն նախընտրելի գոյության պոտենցիայով ընձեռնվող տեսադաշտի, տեսանել է տալիս, որ կարիքավորության նկատմամբ նրա զորակից աջակցողական բնույթի անելիքը սահմանել ու որոշակիացնել սոսկ որպես տվյալ ներկայի սոցիալական կյանքի կերպի մեջ վերստին ներգրավում ու գործուն մասնակցության մեջ հաստատում, ըստ էության՝ ադապտացում, կնշանակի՝ նպատակադրել ու իրականացնել դեռ միայն մասնավոր խնդիր ու բաղադրատարր բուն սոցիալական աշխատանքի ամբողջական հնարավորության, իսկական գոյության, նրանում բացահայտելի իմաստի ու իմաստության մեջ: Ադապտացման տեսանկյունից սոցիալական աշխատանքի կազմակերպումն իր նշանակալի ներգործությունն է ունենում նրա բոլոր բաղադրատարրերում, այդ թվում՝ ա/ կարիքային հիմնախնդիրների բացահայտման ու նույնորոշման, բ/ լուծման ավտերնատիվ ուղիների սպեկտրից օպտիմալ տարբերակի ընտրության ու մշակման, և ապա՝ գ/ աջակցողական միջամտության իրականացման մեջ: Կարիքի բացահայտման ու գնահատման ընթացքում

շահառուների մոտ որպես բացեր, տկարություններ ու կարիքներ տեսնվում են սոցիալական կյանքին ադապտացվելու և վերընդգրկվելու տեսանկյունից, և որպես այդպիսի կարիքներ կարող են լինել շփման ունակությունների նվազ զարգացածությունը, մասնագիտական հմտությունների պակասը աշխատանքային շուկայի կողմից առաջարկվող պահանջների համեմատ, սոցիալական ինստիտուցիոնալ՝ իրավաբանական, բժշկական, կրթական և այլ աջակից կառույցների կողմից մատուցվող ծառայությունների միջոցով ընձեռնված հնարավորությունների և իրենց իրավունքների վերաբերյալ տեղեկատվության պակասը և այլն: Կարիքավորության այդ հիմքով բացահայտելի աջակցության ուղիներն ու օպտիմալ տարբերակները նույնպես որպես այդպիսին են նկատվում ադապտացմամբ սոցիալական կյանքին վերընդգրկման չափորոշիչով: Եվ իհարկե, աջակցության նպատակային կատարվածությունը և սոցիալական աշխատանքի ավարտագիծը սահմանելի են տեսնվում և իրագործելի նույն այդ ադապտացիայի չափորոշիչին համապատասխան տեսանկյունից, դիտվելով որպես իրագործված՝ ադապտացիայի հասնելու առումով որոշակի չափով բավարար, կամ եթե դեռ ոչ բավարար, ապա՝ հնարավոր չափով նպաստավոր աստիճանում:

Ի տարբերություն վերոբերյալ մոդելների, ըստ աշխատության հեղինակաների տեսակետի, անձանց, խմբերի և համախմբությունների կարիքավորության նկատմամբ սոցիալական աշխատանքի համար սկզբունքորեն որպես նպատակային խնդիր պետք է դիտել կեցողության ու կենսակերպի խնդրակարգում բարեկարգության հասանելը, և բարեկարգությունը որպես այդպիսին ու այն որպես նպատակ սահմանելը սկզբունքորեն առավել է և չի նույնանում սոսկ սոցիալական ադապտացիային ու սպառվում նրանով: Սոցիալական աշխատանքում սկզբունքային նպատակ ունենալ նախընտրելի բարեկարգությունը և երբեմն վերոնշյալ ու չնշյալ այլ նմանաբնույթ մոտեցումներում ասել այդ և, այնուամենայնիվ, իրագործել դեռ միայն ադապտացիա գոյություն ունեցող սոցիալական կյանքի ներկային, կնշանակի՝ լուծել բարեկարգության տեսակետից մասնավոր, բաղադրատարրային խնդիր և այդ լուծման մեջ լինել ոչ լրիվ, թերի ու անկատար: Նկատենք նաև, որ այդ մոտեցումներում կամ մոդելներում բարեկարգության ամբողջական հայեցակարգի տեսադաշտում ադապտացիան չճանաչելով որպես ամբողջի մեջ մաս ու հենց մասնավոր և չբացահայտելով նրա սահմանները շարունակականություն ու հեռանկարային կայացում ունեցող այդ ամբողջի շրջանակներում, արդյունքում՝ ըստ իր իսկության չնույնորոշելով, որ և կնշանակի՝ իսկությամբ չգիտենալով այն, սկզբունքորեն իսկ հնարավոր է դառնում հայտնվել այնպիսի մի իրավիճակում, երբ իրականացվող ադապտացիոն լուծումները բարեկարգության տեսակետից կարող են լինել ոչ միայն թերի, այլ՝ նաև թյուր:

Այսպիսով, մոդելների առաջին տիպը, այն է՝ սոցիալական աշխատանքի ամբողջական խնդրակարգին հավակնող, բայց միայն մասնավոր բաղադրատարրեր նկատի ունեցող և լոկ դրանց նկատմամբ ադեկվատ մոտեցումները, և երկրորդ տիպը, այն է՝ ամբողջական խնդրակարգը նկատի ունենալու հավակնության հետ մեկտեղ, կարծես, նաև իրականացվելու հնարավորություն ունեցող, բայց և սոցիալական կյանքի ներկային միայն ադապտացիա և այդպիսի վերամասնակցություն ու ներընդգրկում նպատակադրող-իրագործող մոտեցումները, երկուստեք, թեև յուրովի, միայն մասնավոր բնույթի խնդիրներ լուծելու կարողություն են ցուցաբերում՝ սոցիալական աշխատանքի պոտենցիայի, ըստ կոչման՝ իսկական գոյության ու իմաստի տեսակետից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ջիջյան, Ա. & Քոչարյան, Ռ. (2009). Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և «քրիստոնեական կենսակերպի արմատավորումը». Երևան. ԴԱԼԼ հրատ.:
Бернгард, Г. (2011). Качественные и количественные исследования в социальной работе.// db.ngo.ru/books/download/55 , 26.12.11

- Bisman, C. (1994). Social work practice. Cases & principles. California.
- Brown, E. G. (1982). Rationale for generalist approach to social work practice .//*Fundamentals of social work practice*, ed. Sanders D. S., Kurren O. & Fisher S. J., Balmont.
- Compton, B. R. & Galawey, B. (1989). *Social work processes*. Balmont.
- Janzen, C. & Harris, O. (1997). Family Treatment in Social Work Practice. Inc., Itasca, Illinois: F. E. Peacock Publishers.
- Hartman, A. & Laird, J. (1983). Family-Centered Social Work Practice. New York: Free Press.
- Hollis, F. & Woods, M. E. (1982). Casework: A psychosocial therapy. New York.
- Mattaini, M., Lowery Ch. T. & Meyer C. H. (1998). The foundation of social work practice: A graduate text. Washington: NASW Press.
- MacGregor, R. et al. (1964). Multiple Impact Therapy with Families. New York.
- Nichols, M. P. & Schwartz, R. C. (1995). Family Therapy: Concepts and Methods. Boston.
- Perlman, H. H. (1957). Social casework. A problem-solving process. Chicago. (հղումը կատարված է ըստ Bisman C. (1994) *Social work practice. Cases & principles*. California).
- Reid, W. & Epstein, L. (1972). Task – centered casework. New York.
- Wise, J. B. (2005). Empowerment Practice with Families in Distress. Columbia university press. New York.

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս

ՓՈԽԱԿԵՐՊԱԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Ակադեմիկոս Գեորգ Բրուտյանը՝ արդեն հասած համաշխարհային լայն ճանաչման իր գիտական նվաճումների շնորհիվ, փոխակերպական տրամաբանության իր գաղափարը առաջին անգամ ձևակերպեց 1976 թ. (Брутян 1976: 24-30): Սակայն նույնիսկ նրա ամբիոնի աշխատակիցները՝ այդ թվում նաև տրամաբանության դասախոսները, չկարողացան ընկալել նոր ուսմունքի գիտական արժեքը: Թերևս դա բնական է, քանի որ հեղափոխական նոր ուղիներ բացող գաղափարները միշտ էլ դժվարությամբ են ընկալվել գիտական հասարակությանը այն ներկայացնելու սկզբնական շրջանում: Բայց երբ հեղինակը բացեց փոխակերպական տրամաբանության իր հայեցակարգի հիմնական բովանդակությունը (Брутян 1981: 14-29) և բազմակողմանիորեն փաստարկեց նրա հիմնադրույթները, ներկայացրեց փոխակերպական կանոնների արդյունավետ կիրառման համոզիչ օրինակներ, հատուկ մենագրություն (Брутян 1983) և հոդվածների շարք գրեց փոխակերպական տրամաբանության հիմնահարցերի շուրջ (Brutian 1982: 1-8; Brutian 1988)՝ իրավիճակն արմատապես փոխվեց (Брутян 1992: 156-168; Brutian 1995, Բրուտյան 2008a): Իմ նախորդ հոդվածում (Ջիջյան 2011) ես ցույց եմ տվել, որ գործերի այդպիսի ընթացքը լիովին համապատասխանում է հեղափոխական տեսությունների հաստատման գիտության պատմաբանների կողմից հայտնաբերված օրինաչափություններին:

Ինչպես դա բնորոշ է բոլոր հեղափոխական նոր տեսություններին, փոխակերպական տրամաբանության ազդեցությունը սկսեց հետևողականորեն տարածվել հարակից գիտությունների վրա: Տողերիս հեղինակը դեռևս 1988 նշել է, որ փոխակերպական տրամաբանությունը, հատկապես փոխակերպական վերլուծությունը, կարևոր տեղ է գրավում փաստարկման տեսության շրջանակներում (Джиджян 1988: 32-39; 1988a): Հետագայում ես ցույց եմ տվել նաև, որ փոխակերպական տրամաբանությունը կարող է մեթոդ ծառայել արհեստական ինտելեկտի մշակման հետազոտություններում (Djidjian 2006: 16-27; Djidjian 2007: 33-45): Ինձ համար առանձնապես մեծ կարևորություն ուներ այն արդյունքը, որ ես կարողացա բացահայտել փոխակերպական տրամաբանության դերը գիտական հետազոտության տրամաբանության մշակման համար, քանի որ վերջին հիմնահարցն էր իմ բոլոր հետազոտությունների գլխավոր առանցքը (Djidjian 1992, Джиджян 2008: 555-574): Ակադեմիկոս Բրուտյանի մի շարք հետևորդների՝ փոխակերպական տրամաբանությանը նվիրված հետազոտությունների արդյունքները 2008 թվականին հրատարակվեցին «Փոխակերպական տրամաբանություն» երկհատորյակում ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի խմբագրությամբ (Բրուտյան 2008):

Իր մեթոդաբանական գործառույթը փոխակերպական տրամաբանությունը, բնականաբար, առաջին հերթին դրսևորել է ձևական տրամաբանության հանդեպ: Իր բնույթով փոխակերպական տրամաբանությունը գիտություն է մտքի ոչ բացահայտ ձևերի և կառույցների մասին: Փոխակերպական տրամաբանության ուսումնասիրության հիմնական առարկան մտքի բացահայտ և ոչ բացահայտ ձևերն են, մտքի բացահայտ և ոչ բացահայտ ձևերը և կառույցները: Ակադեմիկոս Բրուտյանի նոր տեսության շնորհիվ տրամաբանական վերլուծության արդյունավետ միջոց են դարձել մտքի ենթատեքստը և համատեքստը: Սակայն, անշուշտ, նրա տեսության հիմնական միջոցը փոխակերպական կանոններն են: Դրանց միջոցով հաջողվում է բացահայտել մտքի ոչ բացահայտ, «թաքնված» ձևերի առաջացումը, սերումը և բխեցումը մտքի ոչ բացահայտ ձևերի «ընդերքից», ներքին կառուցվածքից: Նշենք, որ փոխակերպական կանոնների միջոցով լուծվում են սկզբունքային նշանակություն ունեցող երկու խնդիր. Ա) մտքի բացահայտ ձևերից ոչ բացահայտ ձևերի սերման խնդիրը, Բ) մտքի բացահայտ ձևերի բնույթի և

տրամաբանական կառուցվածքի ճշգրտման խնդիրը: Ըստ էության, նոր տրամաբանական ուսմունքի հինկական խնդիրն է հանդիսանում մտքի ձևերի սերման և ճշգրտման փոխակերպական կանոնների բացահայտումը և ձևակերպումը:

Փոխակերպական տրամաբանությունը իր գիտական բարձր արժեքն ապացուցեց ձևական տրամաբանության մի շարք խճճված հարցերի համոզիչ լուծումներով ու պարզաբանումներով: Դրանց թվին են պատկանում մասնավոր հաստատական դատողության շրջման, մասնավոր հաստատական դատողության սուբյեկտի և պրեդիկատի ծավալների փոխհարաբերության, անորոշ դատողության տրամաբանական ստատուսի, ընդհանրության քվանտորի էության, հարաբերություն և հատկություն արտահայտող հասկացությունների տարբերակման չափանիշի բարդ խնդիրները:

Մենք համոզված ենք, որ հետևելով ակադեմիկոս Գեորգ Բրուսյանի մոտեցմանը, կարելի է կարևոր արդյունքներ ստանալ նաև փիլիսոփայական կատեգորիաների, ինչպես նաև դասերի տրամաբանության համընդհանուր հասկացության բնույթի ճշգրտման խնդիրներում: Նշանակալից արդյունքներ կարելի է սպասել նաև սահմանման բնույթի և կանոնների փոխակերպական վերլուծության ուղիով: Փոխակերպական տրամաբանության լույսի ներքո կարելի է նորովի իմաստավորել մեծ մաթեմատիկոս Դավիդ Հիլբերտի այն գաղափարը, որ գիտական տեսության աքսիոմների համակարգը կարելի է դիտարկել որպես տեսության կատեգորիաների բովանդակության ոչ բացահայտ սահմանման միջոց: Փոխակերպական վերլուծությունը կարող է նպաստել նաև տարածության և ժամանակի կատեգորիաների բովանդակության ճշգրտմանը և նրանց միանշանակ օգտագործմանը:

Փոխակերպական տրամաբանությունը հնարավորություն է տալիս խորացնել դատողության տեսության մի շարք հարցադրումների ըմբռնումը: Ակադեմիկոս Բրուսյանը փայլուն ձևով ցուցադրել է փոխակերպական տրամաբանության արդյունավետությունը բացառող դատողության վերլուծության, ինչպես նաև տերմինների բաշխվածության խնդրի բացահայտ և ոչ բացահայտ մակարդակների պարզաբանման հարցերում: Նրա ասպիրանտ Ամիրխանյանը նշանակալից արդյունքներ է ստացել ասույթների տրամաբանության շրջանակներում մտքի բացահայտ և ոչ բացահայտ ձևերի ուսումնասիրության ոլորտում (Амирханян 1997, 1999a), ինչպես նաև բնական լեզվի ու տրամաբանական գիտությունների կապակցությամբ (Амирханян 1999, 1999b):

Փոխակերպական տրամաբանության հայեցակարգի միջոցով վերջնական լուծում է ստացել անորոշ դատողության հետ կապված բարդությոը: Այդ հայեցակարգում հաջողվել է նաև վերջնական լուծում առաջարկել բացառող դատողությունների տրամաբանական բնույթի հարցադրման համար: Փոխակերպական տրամաբանության մեթոդիկան կարող է հանգեցնել դատարկ ծավալով սուբյեկտ ունեցող դատողությունների ստատուսի ճշգրտմանը ժամանակակից մաթեմատիկական տրամաբանության տեսության շրջանակում: Փոխակերպական վերլուծության կարիք ունի նաև տրամաբանական շաղկապների արտահայտման լեզվական տարբեր եղանակների ճշգրտման և դասակարգման խնդիրը:

Դատողության տեսության փոխակերպական լուսաբանման հետ է առնչվում նաև պարադոքսների պարզաբանման խնդիրը: «Ստախոսի» պարադոքսը ակնհայտորեն պահանջում է դատողություն հասկացության ստույգ և ճշգրտված սահմանման մշակում: Մեքենայական շարժում և պահ հասկացությունների ճշգրիտ սահմանումը հանդիսանում է Զենոն Էլեացու «Նետ» ապորիայի լուծման նախապայմանը: «Աքիլլես և կրիա» ապորիան կարող էր ուղի բացել նվազող անվերջ շարքերի գաղափարի հայտնագործության համար (Djidjian 2004: 163-173):

Լուրջ փոխակերպական վերլուծություն է պահանջվում նաև մտահանգումների տեսության ոլորտում: Այստեղ նպատակապես հետազոտական աշխատանք պետք է տարվի հատկապես տրամաբանական հետևեցման հարցադրումների ոլորտում: Այդ տիպի ուսումնասիրությունների անհրաժեշտության մասին են վկայում այսպես կոչված «նյութական

իմպլիկացիայի պարադոքսը» և հայտնի տրամաբանների կողմից նրա հաղթահարման համար մշակված «լավ իմպլիկացիաների» աքսիոմատիկ համակարգերը: Նման ուսումնասիրության կարիք ունի նաև բազմարժեք տրամաբանությունը, որի հետ ժամանակին մեծ հույսեր էին կապում, քանի որ այն տպավորությունն էր ստեղծվել, որ այդ ուղիով կարելի է հասնել ճշմարտանման մտահանգումների խնդրի լուծմանը: Բազմարժեք տրամաբանության հետ կապված պետք է մի կողմից ճշգրտել երկարժեքության և բազմարժեքության սկզբունքների միջև հարաբերության իրական բնույթը, իսկ մյուս կողմից՝ հավանականության տեսության ու բազմարժեք տրամաբանության աքսիոմատիկ համակարգի միջև փոխհարաբերությունը: Փոխակերպական վերլուծության կարիք է զգացվում նաև պատճառական կապերի հաստատման ինդուկտիվ մեթոդների կապակցությամբ: Դեռևս 19-րդ դարում են նկատել հետևյալ տարաձայնությունը: Մի կողմից, պատճառական կապերի հաստատման բեկոնյան ինդուկտիվ մեթոդները ընկալվում են որպես բացահայտված պատճառական կապիի ապացույց, իսկ մյուս կողմից, հայտնի են պատմական բազմաթիվ դեպքեր, երբ ինդուկտիվ մեթոդներով հիմնավորված երևույթների պատճառների գաղափարներից հետագայում ստիպված են եղել հրաժարվել:

Փոխակերպական տրամաբանությունը կարող է նոր լույս սփռել մաթեմատիկայի հիմունքներում պարադոքսների բացահայտման և նրանց վերացման ռազմավարության ուղիների վրա՝ հատկապես մաթեմատիկական տեսությունները աքսիոմատիզացման և այնուհետև ձևայնացնելու խնդիրների կապակցությամբ: Փոխակերպական վերլուծությունը սկզբունքային կարևորություն ունի նաև Գյոդելի երկրորդ թեորեմի բովանդակության և նրա ապացուցման ընթացքում ինքնառեֆլեքսիվ նախադրյալների (բանաձևերի) օգտագործման հարցի կապակցությամբ:

Փոխակերպական տրամաբանության մեթոդաբանական գործառույթի տեսանկյունից սզբունքային նշանակություն ունեն փոխակերպական մոտեցման հետևյալ երկու կարգախոսները.

- Ճշգրտել դիտարկվող տեսության հիմքային հասկացությունները,
- Ուսումնասիրվող ոլորտի խնդրակարգում բացահայտել ոչ բացահայտը:

Հաշվի առնելով նշված կարգախոսները, դժվար չէ նկատել, որ *փոխակերպական տրամաբանությունը հաղիսանում է գիտական հրտազոտության տրամաբանության մշակման ուղեցույց*: Գիտական հետազոտության տրամաբանության հիմքը հիպոթեզների մեթոդն է: Վեջինիս դերը հատկապես աճել է մարդկային քաղաքակրթության զարգացման արդի փուլում:

Գիտական հետազոտության տրամաբանությունը փաստորեն ոչ բացահայտ գիտելիքի բացահայտման տեսություն է: Այդ տեսակետից հիպոթեզների մեթոդը գիտական հայտնագործությունների համընդհանուր մեթոդ է հանդիսանում: Այստեղից էլ հետևում է գիտական հետազոտության տրամաբանության առանձնահատուկ տեղը տրամաբանական գիտությունների համակարգում: Գիտական հետազոտության տրամաբանության միջոցների կիրառմանը մեծ առավելություն է տալիս նրա խնդրամետ ռազմավարությունը:

Խնդրամետ ռազմավարության լույսի ներքո գիտական խնդիրների լուծման համընդհանուր մեթոդի հիմնահարցի քննարկումը հանգեցնում է այն եզրակացության, որ հիպոթեզների մեթոդը գիտական հետազոտության համընդհանուր եղանակն է: Հիպոթեզների մեթոդի եռաստիճան կառուցվածքը՝ «Խնդիր–հիպոթեզ–ստուգում» համընդհանուր ընդունելություն է վայելում դեռևս 19-րդ կերից սկսած: Որքանով էլ համոզիչ հնչի առաջադրված հիպոթեզի գաղափարը, հետազոտողը պարտավոր է ստուգել նրա ճշմարտությունը: Հիպոթեզի ստուգումն ի վերջո իրականանում է համապատասխան փաստական տվյալների հետ համեմատությամբ:

Փոխակերպական տրամաբանությունը կարևոր դեր է խաղում գիտական հիպոթեզ հասկացության ստույգ իմաստի բացահայտման գործում: Հիպոթեզ բառը հին հունարենում նշանակում էր *ենթադրություն*: Գիտական մեթոդաբանությունում հիպոթեզն ունի երկու

հիմնական իմաստ: Նեղ իմաստով, հիպոթեզ են անվանում հետազոտվող երևույթի ենթադրյալ պատճառը: Լայն իմաստով, հիպոթեզ են անվանում հետազոտության կամ խնդրի լուծման ընթացքում առաջ քաշված ցանկացած ենթադրություն: Գիտական հետազոտության տրամաբանության շրջանակներում հիպոթեզ են անվանում այն դրույթը, որն առաջադրվում է որպես հետազոտվող խնդրի ենթադրյալ պատասխան: Շատ հաճախ գիտական հիպոթեզը ունենում է այնպիսի բարդ տեսական կառուցվածք, որ փաստական և փորձնական տվյալներով հնարավոր չի լինում անմիջականորեն ստուգել տվյալ հիպոթեզի ճնշարտացիությունը: Այդպիսի դեպքում փաստերի հետ համադրում են տվյալ հիպոթեզից բխող հետևանքները: Տվյալ դրույթներից անհրաժեշտ հետևանքների բխեցումը տրամաբանական ու մեթոդաբանական գրականությունում անվանում են *դեդուկցիա*: Այդ տեմինը օգտագործելով, հիպոթեզների մեթոդն անվանում են նաև *հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդ*: Անհրաժեշտ հետևանքների բխեցումը հստակ գործընթաց է, և դրա հետ կապված գիտնականների մոտ սկզբունքային դժվարություններ չեն առաջանում: Մյուս կողմից, գիտական հիմնահարցերը, որպես կանոն, «պատրաստի» ձևով են ներկայացվում հետազոտողներին: Այս երկու հանգամանքները մեզ պագորոշ եղանակով ցուցադրում են, որ հիպոթեզների մեթոդի կենտրոնական խնդիրը՝ հիպոթեզների առաջադրումն է: Հիպոթեզների առաջադրման հիմքը խնդրի վերլուծությունն է, իսկ անմիջական միջոցը՝ լուծման գաղափարի համադրությունն է՝ նախատիպ խնդրի լուծման գաղափարի համանմանությամբ:

Ղեկավարվելով փոխակերպական տրամաբանության վերոնշյալ կարգախոսներով, դյուրին է հանգել խնդիրների վերլուծության հետևյալ հիմնային կետերին: Երկրորդական նշանակության տեղեկատվության հեռացման կարևորությունը: Խնդրի հարցը և առաջնահերթ տեղեկատվություն: Խնդրի ենթաբաժանումը ենթախնդիրների: Ենթախնդիրների «ծառի» կառուցում: Գրաֆիկական, նշանային և ստանդարտ ներկայացման կարևորությունը: Խնդրի կառուցվածքի բացահայտումը և նրա տիպի որոշումը: Ռելեվանտ տեղեկատվության ներմուծումը: Վերլուծության «հակադարձ» և ուղիղ եղանակները: Ոչ-բացահայտ, թաքնված և թերկողմնորոշող տեղեկատվությունները: Խնդրի պարզեցված տարբերակների (մոդելների) սկզբունքային դերը:

Ղեկավարվելով փոխակերպական տրամաբանության՝ «բացահայտել ոչ բացահայտը կարգախոսով» դժվար չէ պարզել, որ յուրաքանչյուր հիպոթեզ (հետազոտվող խնդրի լուծման հավանական գաղափար) առաջ է քաշվում երկու հիմնական փուլով, որոնք են՝ հետազոտվող խնդրի վերլուծությունը և հիպոթեզի համադրությունը: Գիտական հիմնահարցի վերլուծության արդյունքով ձևավորվող հիմնահարցի ըմբռնումն այն պարարատ հողն է, որի վրա աճում են այդ խնդրի հնարավոր լուծումների գաղափարները: Խնդրի վերլուծությունը կազմում է այն ամուր հիմքը, որի վրա կառուցվում է հիմնավորված գիտական հիպոթեզը: Որքան խորն ու մանրամասն է հիմնահարցի վերլուծությունը, այնքանով ավելի հավանական է, որ նրա հիմքով առաջադրված հիպոթեզը կլինի ճշմարիտ: Գիտական հիմնահարցի վերլուծությունը կազմում է հիպոթեզի առաջադրման գործընթացի նախապատրաստական փուլը: Երկրորդ, ավարտական փուլը բուն հիպոթեզի առաջադրումն է՝ հիպոթեզի համադրությունը (հիպոթեզի սինթեզում):

Փոխակերպական վերլուծության միջոցով դժվար չէ բացահայտել, որ համանմանությունը խնդրի հնարավոր լուծման գաղափարի որոնման համընդհանուր եղանակն է: Ղեկավարվելով փոխակերպական տրամաբանության հարացույցի ճշգրտման կարգախոսով, այստեղ օգտակար է տարբերակել «ուղիղ» համանմանությունը և «հեռավոր» համանմանությունը: Գիտական հայտնագործությունների աննախադեպ (և աննախատիպ) հեղափոխական տեսության գաղափարների փոխակերպական վերլուծության միջոցով հնարավոր է բացահայտել այն ոչ բացահայտ իսկությունը, որ հեռավոր համանմանությունները և «խելացնոր» գաղափարներն են նրանց բոլորի հիմքում: Ընդհանրացնելով փոխակերպական վերլուծության նշված արդյունքները, կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր հիմնահարցի (խնդրի) հնարավոր

լուծման գաղափարն առաջ է քաշվում որոշ լուծված նմանակ («նախատիպ») խնդրի համանմանությամբ:

Այն միտքը, որ դպրոցական խնդիրները լուծվում են ուսուցչի կողմից դասարանում բացատրված խնդրի լուծման եղանակին հետևելով՝ ոչ միայն գաղտնիք չէ, այլ հենց ողջ դպրոցական ուսուցման ամուր և արդյունավետ հիմքն է: Տնային աշխատանքի խնդիրը լուծելիս, դպրոցականը նախ իր տեսքում որոնում է մի նման խնդրի լուծում, որին ինքը ծանոթացել է անցյալ դասին: Այս դիտարկումից կարելի էր ենթադրել, որ բոլոր խնդիրների լուծումները ստացվում են արդեն լուծված խնդիրների լուծումների նմանությամբ կամ տրամաբանական տերմին օգտագործելով՝ համանմանությամբ: Բայց արդյո՞ք մեր ընդհանրացումը կարելի է տարածել նաև գիտական հիմնահարցերի վրա: Արդյո՞ք գիտնականները նույնպես իրենց հիմնահարցերի լուծումները որոնում են նմանատիպ հիմնահարցերի լուծումների մեջ:

Այն տեսակետը, որ համանմանությունը մեծ դեր է խաղում գիտական հարցերի լուծման գործում, լայնորեն ընդունված է ինչպես գիտնականների կողմից, այնպես էլ գիտական հետազոտության մեթոդաբանների կողմից: Բայց արդյո՞ք որևէ հիմք կա պնդելու, որ բոլոր գիտական հիմնահարցերն իրենց լուծումները ստացել են որևէ արդեն լուծված հիմնահարցի նմանությամբ: Այս հարցը հատկապես սուր է հնչում գիտական մեծ հայտնագործությունների առթիվ, որոնց հանդեպ ընդունված է ասել, որ առաջ քաշելով անսովոր ու արտառոց գաղափար, նրանք աննախադեպ են գիտության պատմությունում, և հետևաբար չէին կարող հենվել որևէ արդեն լուծված «նախատիպ» խնդրի վրա: Եթե մենք կարողանանք հիմնավորել, որ նույնիսկ այսպիսի անհամեմատելի հայտնագործությունները կարող էին ունենալ «նախատիպ» լուծումներ, ապա այդ փաստարկն առավել ևս կվերաբերեր նաև «սովորական» գիտական խնդիրների հետազոտությանը և լուծմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Բրուտյան, Գ. (խմբ.) (2008). Փոխակերպական տրամաբանություն. Գիրք 1 և Գիրք 2. Երևան. «Փիլիսոփայության միջազգային ակադեմիա» հրատ.
- Բրուտյան, Գ. (2008a). Փոխակերպական տրամաբանություն. (Թարգմ. անգլ.) // Բրուտյան, Գ. (խմբ.) Փոխակերպական տրամաբանություն. Գիրք 1. Երևան. «Փիլիսոփայության միջազգային ակադեմիա» հրատ.
- Ջիջյան, Ռ. (2011). “Ակնհայտն՝ անհավատալի”: Պատմաբանասիրական հանդես 2011, №1.
- Brutian, G. A. (1982). Transformational logic. In Ishimoto, A. (Ed.). “Formal Approaches to Natural Language”.
Ձևավորվում է մշակույթ առանց Աստծո կամ կրոնի: Քրիստոնեական կրոնը աստիճանաբար կորցրեց իր ազդեցության ուժը և ոլորտները, իր երբեմնի հզորությունն ու փառքը: Այս երևույթի զարգացման պատճառները բազմազան են և բազմաբնույթ: Գիտության և տեխնիկայի արագընթաց զարգացումը, հասարակության մեջ սոցիալական այլ ինստիտուտների կազմավորումը՝ որպես այլընտրանքային կառույցներ, նվազեցրին քրիստոնեական կրոնի և դրա ինստիտուցիոնալ ձևի՝ եկեղեցու, տեղն ու դերը անհատի և հասարակության կյանքում: Մշակույթի մեջ տեղի ունեցավ որակական փոփոխություն. եթե միջնադարյան արևմտյան մշակույթը տրանսցենդենտ էր, ապա ժամանակակիցը՝ իմանենտ: Գաբրիել Վահանյանի բնութագրությամբ ժամանակակից մշակույթը «այլևս տրանսցենդենտական չէ, այլ՝ իմանենտական, այն այլևս սրբազնային (sacral) չէ և ոչ էլ սուրբ (sacramental), այլ աշխարհիկ (secular) և աշխարհական (profane)» (Vahanian 1961: xxxii): Այս անցումը Արևմտյան քաղաքակրթության և մշակույթի մեջ բացատրվում է այն փաստով, որ քրիստոնեության էապես առասպելաբանական աշխարհայացքը փոխարինվել է իրականության արմատական, գիտական պատկերով, որի սահմաններում կամ Աստված այլևս անհրաժեշտ չէ, կամ նա անհրաժեշտ չէ և ոչ էլ ոչ անհրաժեշտ, նա անհամապատասխան է (irrelevant)՝ նա մեռած է (Vahanian 1961: xxxii): Եթե անցյալում մշակույթի մասին քրիստոնեական գաղափարը հիմնվում էր Աստծո ներկայության վրա, ապա այժմ մշակույթի հիմքում ընկած է Աստծո բացակայության կամ «մեռած Աստծո» դադարում է լինել կրոնական: Բնավ ոչ: Նա կշարունակի լինել կրոնական, սակայն կրոնը հիմնականում այլևս չի ունենա «ուղղահայաց», այլ՝ «հորիզոնական» ուղղվածություն և բնույթ, քանի որ ժամանակակից մարդը չունի և չի կամենում ունենալ որևէ հետաքրքրություն կամ կախվածություն կրոնադիցաբանական «այնկողմնային աշխարհից»: Ընդամին ժամանակակից աշխարհը կարող է լինել կրոնական, բայց ոչ քրիստոնեական, այլ «հետքրիստոնեական», քանի որ, ինչպես նշում է Գ. Վահանյանը՝ «ժամանակակից մշակույթի հիմնադրույթները ոչ ոչ-քրիստոնեական են և ոչ էլ հակաքրիստոնեական, այլ՝ հետքրիստոնեական: Դրանք բխում են քրիստոնեությունից, սակայն դրանցում քրիստոնեությունը տառապում է «ոչ թե տանջալից մահից, այլ՝ հանգիստ էվթանագիայից» (Vahanian 1961: xxxiii): Հետևաբար, արևմտյան աշխարհը «արևմտյան հետքրիստոնեական աշխարհիկ քաղաքակրթություն» է (Օժեյն 2006: 415): Պոստքրիստոնեականը նշանակում է, որ արևմտյան քաղաքակրթության մեջ սկիզբ է առնում «նոր՝ մշակութային առումով քրիստոնեական, հեթանոսություն» (Vahanian 1966: xi) կամ «նորհեթանոսություն» (Օժեյն 2006: 548):

Այն, որ արևմտյան քաղաքակրթության մեջ նկատվում է Աստծուց հեռացում, ինչը նշանակում է հրաժարվել «հավատի քրիստոնեական ձևերից», ակնհայտ իրողություն է, ինչը գիտակցում են ինչպես աստվածաբանները, այնպես էլ հավատացյալ կամ անհավատ մարդիկ: «Հեռացումը քրիստոնեական ավանդույթից», նշում է հոլանդացի աստվածաբան Անտոն Հաութեպենը, լոկ կրոնական նշանակություն չունի, այն ավելին է, քան պարզապես կրոնականը: Դա, առաջին հերթին, «արտահայտվում է կյանքի առօրյա ձևերում, այն ամենում, ինչը մենք անվանում ենք մշակույթ» (Օժեյն 2008: 15): Ընդամին՝ կարելի է եզրակացնել, որ արևմտյան մարդն այլևս կրոնի կամ Աստծո կարիքը չունի: Աստված այլևս դադարել է «աշխատանքային վարկած», «պրոբլեմ լուծող» լինելուց: Այս ամենն ակնհայտ ապացույց է այն բանի, որ արևմտյան և ոչ միայն արևմտյան քաղաքակրթության և մշակույթի մեջ կրոնը՝ մասնավորապես իր քրիստոնեական՝ բողոքական տարատեսակով, հայտնվել է բավականին լուրջ և խորը ճգնաժամի մեջ: Կրոնականը իր բոլոր հնարավոր դրսևորումներով՝ գիտակցությամբ, աշխարհայացքով, մտածելակերպով, ուսմունքով, պաշտամունքով և պրակտիկայով հայտնվել է

լաբիրինթոսում, որից դուրս գալու ճանապարհն այնքան խճճված է և անտեսանելի, որ կարծես թե կրոնն այլևս դատապարտված է:

Իր պատմության և գոյության ընթացքում քրիստոնեությունը մեկ անգամ չէ, որ ճգնաժամ է ապրել՝ կապված սոցիալական հեղաշրջումների և հասարակության հոգևոր կյանքում տեղի ունեցող փոփոխությունների հետ: Ինչպես պատմությունն է վկայում, ճգնաժամերի հաղթահարման գործում որպես միջոց հանդես է եկել «կրոնական գիտակցության փոփոխությունը մարդկանց կյանքի նոր պայմանների հանդեպ» (Åàðääæà 1971: 79), սակայն այդ ճգնաժամերը «համընդգրկուն բնույթ» չեն կրել: «Եկեղեցին, - նշում է Ա. Սարգսյանը, - հարմարվելով պատմական նոր պայմաններին, վերանայելով իր ուսմունքի որոշ կողմեր, փոխելով քաղաքական կողմնորոշումը, դուրս է եկել ճգնաժամից» (Սարգսյան 1984: 7): Այսպես պատահեց, օրինակ, կաթոլիկ եկեղեցու հետ XIII-XIV դարերում, երբ կաթոլիկական աստվածաբանության մեջ տեղի ունեցավ աստվածաբանական ծրագրի կամ հարացույցի փոփոխություն, այն է՝ պլատոնական և նորպլատոնական փիլիսոփայության հիմքերի վրա կառուցված օգոստինոսական աստվածաբանության փոխարինումը արիստոտելական փիլիսոփայության հիմքերի վրա կառուցված թոմասական աստվածաբանությամբ: Աստվածաբանության մեջ կատարած այսպիսի փոփոխության գնով կաթոլիկ եկեղեցին կարողացավ ազատվել ճգնաժամից և ավելի ճկուն դարձավ: Իսկ մյուս դեպքում, կաթոլիկ եկեղեցու դոգմաների, ինկվիզիցիայի և ինդուլգենցիաների, եկեղեցում տիրող բարոյական այլասերվածության դեմ արդարացի բողոքի ձայն բարձրացրած բողոքական (լյութերական) եկեղեցու սկզբնավորումով քրիստոնեությունը հաղթահարեց ևս մեկ ճգնաժամ և շարունակեց իր գոյությունը: Լյութերը, ինչպես կասեր Նիցշեն, «դարձյալ վերականգնեց եկեղեցին» և թույլ չտվեց, որպեսզի Վերածնունդը և կյանքը «հաղթեն քրիստոնեությանը նրա իսկ բնում» (Íèöøà 2007: 330): Լյութերը հնարավորություն տվեց քրիստոնեական եկեղեցուն դուրս գալու ճգնաժամից և նոր ուժով ու շնչով ծավալելու իր գործունեությունը:

Հանդիսանալով հասարակական գիտակցության ամենապահպանողական ձևերից մեկը, կրոնը, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում նույնպես փոփոխվել է, ընդունել նոր ձևեր, որի վառ ապացույցն է քրիստոնեական ուսմունքի էվոլյուցիան: Քրիստոնեական եկեղեցու պատմությունն անընդհատ փոփոխությունների, զիջումների պատմություն է: Ֆ. Էնգելսը իրավացիորեն նկատում է, որ «ամենահետևողական քրիստոնյան նույնիսկ չի կարող ամբողջությամբ ազատագրվել մեր ժամանակի պայմաններից, ժամանակը ստիպում է նրան փոփոխություններ մտցնել քրիստոնեության մեջ» (Íàðèñ & Ýíããèüñ 1954: 488): Կրոնի նկատմամբ անտարբերության տարածումը, կրոնի և աստծո նկատմամբ աստիճանաբար զարգացող և լայն տարածում ստացող կրոնամերժական ու աթեիստական վերաբերմունքը, սեկուլյարիստական (աշխարհիկ) դիրքորոշումը, որոնք դառնում են համընդհանուր երևույթ և ձեռք բերում համընդգրկուն բնույթ, կասկածի տակ են դնում ոչ միայն կրոնի (քրիստոնեության) այս կամ այն հիմնադրույթը, ուսմունքի կամ գաղափարախոսության այս կամ այն կետը, այլև խաղաքարտի վրա է դրվում կրոնն ընդհանրապես: Այս փաստը ոչ միայն գիտակցել են առանձին աստվածաբաններ կամ կղերականներ, այլև քրիստոնեական կրոնի տարբեր դավանանքները՝ կաթոլիկ եկեղեցին, բողոքականության տարատեսակները, ինչպես նաև այլ կրոնները՝ հրեականությունը, իսլամը և բուդդայականությունը: Բացի այդ, անհավատությունը համատարած երևույթ է դարձել նաև քրիստոնեական եկեղեցու մեջ: Ըստ Ռ. Ադոլֆսի «անհավատությունը, կարծես թե, բնութագրում է մեր դարաշրջանը: Խոսքը վերաբերում է ոչ թե ժամանակակից աթեիստական հումանիզմի մշակութային միջավայրին, այլ այն անընթացիկ անհավատությանը, որն առկա է քրիստոնեության մեջ» (Adolfs 1967: 16):

Ավելին, Ռ. Ադոլֆսի համոզմամբ՝ «Ներկայումս քրիստոնեությունը ներառված է լուրջ կրոնական ճգնաժամի մեջ» (Adolfs 1967: 15-16): Ինչպես նշում է Ա. Սարգսյանը՝ «Կրոնի և եկեղեցու արդի ճգնաժամի բնորոշ գծերից մեկը նրա համընդհանրությունն է... Ճգնաժամը թափանցել է եկեղեցու դավանանքի, պաշտամունքի, գաղափարախոսության ու գործունեության

բոլոր ոլորտները: Դիտվում է հասարակական կյանքի ապակրոնացում (սեկուլյարիզացիա)» (Սարգսյան 1984: 7): Արևմտյան քաղաքակրթության մեջ կրոնի՝ քրիստոնեության, այսպիսի լայնածավալ, բազմաբնույթ, խորը ճգնաժամ դիտվում է առաջին անգամ: Այսպիսի ճգնաժամի ճիշտ ախտորոշում է տվել Գ. Վահանյանը, նշելով, որ «Քրիստոնեությունն այսօր ապրում է իր ոչ առաջին ճգնաժամը: Քսան դարերի ընթացքում այն անցել է բազմաթիվ ճգնաժամերի միջով: Այնուամենայնիվ, կասկածից վեր է, որ այն ճգնաժամը, որն ապրում է քրիստոնեությունը, ամենասուրն է, ամենածանրը: Որոշ առումով, այն անգամ աննախադեպ է: Իսկապես, այս ճգնաժամը ոչ միայն կրոնական է, ինչպես հակված ենք մտածելու: Այն և՛ կրոնական է, և՛ մշակութային» (Vahanian 1977: 1):

Արդի դարաշրջանում կրոնի և կրոնական գիտակցության ճգնաժամը ցույց է տալիս, որ կրոնի դիրքերը խարխիվել են, նրա երբեմնի իշխանությունն ու ազդեցությունը հեղինակազրկվել և թուլացել են ժամանակակից մարդու ու հասարակության համար: Որպեսզի ստեղծված իրավիճակը որևէ կերպ փոփոխվի և այսպիսի դժվարին կացությունից դուրս գալու ելք գտնվի ու կրոնի առաջ ծառացած խնդիրներին լուծումներ տրվի, կրոնական ինտելեկտուալ էլիտան՝ աստվածաբանները, պետք է միջոցներ ձեռնարկեն նման իրավիճակից դուրս գալու համար: Իսկ դա նշանակում է, որ նրանք պետք է ստեղծեն աստվածաբանական նոր ծրագրեր, նոր մոտեցումներ ու սկզբունքներ, որպեսզի կարողանան կրոնական՝ մասնավորապես քրիստոնեական դոգմաները, ծիսակարգը և սոցիալական ուսմունքը արմատապես փոխել և համապատասխանեցնել ժամանակակից մարդու պահանջներին: Այլ կերպ՝ կարելի է ասել, որ կրոնական գաղափարախոսությունը, ուսմունքը և այն ամենը, ինչը կապված է կրոնի և եկեղեցական գործունեության ու պրակտիկայի հետ, անհրաժեշտ է դարձնել ժամանակակից: Կրոնի ողջ համակարգը պետք է լինի մոդեռն, որպեսզի կարողանա համապատասխանել ժամանակակից մարդուն ու նրա պահանջներին, ավելին, լինի իմաստալից և բովանդակալից նրա համար իր պրակտիկ կյանքում, իր աշխարհայացքային-գաղափարական ու արժեքային կողմնորոշումներում: Այդ առումով անհրաժեշտ է ամբողջովին վերամեկնաբանել և վերաարժևորել քրիստոնեական ուսմունքը և նրա բովանդակությունը:

XIX-XX դարերում Արևմուտքում (օրինակ՝ լիբերալ աստվածաբանություն, նեոթորոդոքսիա, ռադիկալ աստվածաբանություն, պոստմոդեռն աստվածաբանություն) փորձեր են արվել փրկելու քրիստոնեությունը և այն համապատասխանեցնելու ժամանակակից աշխարհին, սակայն դրանք ձախողվել են, քանի որ աստվածաբանական տարբեր ծրագրերը թեև ունեցել են միևնույն նպատակը, սակայն տարբեր սկզբունքներ և մեթոդներ, այնուամենայնիվ, իրենց բնույթով եղել են ուտոպիական:

Աստվածաբանական ծրագրերը մի կողմից ցույց են տալիս մեր դարաշրջանում կրոնի և կրոնական գիտակցության ճգնաժամը, մյուս կողմից՝ փորձում են փրկել քրիստոնեությունը և այն համապատասխանեցնել ժամանակակից աշխարհին: Այս առիթով ճիշտ է նկատել ռուս փիլիսոփա Վ. Դոբրենկովը, երբ նշում է, որ «Կրոնական մոդեռնիզմը կարելի է դիտել և որպես կրոնի ժամանակակից համընդհանուր ճգնաժամի արտահայտման ձև, և որպես դրա լուծման որոշակի փորձ» (Айвазян 1980: 14): Սակայն ճգնաժամը ոչ միայն կրոնական չէ, այլև՝ աստվածաբանական:

Կրոնական մոդեռնիզմն ընդհանրապես բազմիմաստ հասկացություն է և ներառում է այնպիսի երևույթներ, որոնք վերաբերում են կրոնական մտքին և պրակտիկային (Ильин 1977: 329): Կրոնական կամ աստվածաբանական մոդեռնիզմն առաջին հերթին ենթադրում է փոփոխություն տվյալ կրոնի ուսմունքի կամ աստվածաբանական համակարգի մեջ, սակայն դրա ուղղակի հետևանքները կարող են լինել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում եկեղեցական կազմակերպության և պրակտիկայի մեջ: Կրոնական (կամ աստվածաբանական) մոդեռնիզմը ժամանակակից աշխարհում տեղի ունեցող սոցիո-մշակութային և պատմական փոփոխությունների, մարդու նոր աշխարհայացքի ու

պատկերացումների հանդեպ կրոնի հարմարեցման ձև է» (Íîâèéîâ 1973: 330). Արդիականացումը մի միջոց է, որով կրոնը փորձում է հարմարվել իր գոյության փոփոխվող պայմաններին: Կրոնական մոդեռնիզմը «ճգնաժամային երևույթները հաղթահարելու կամ նախագգուշացնելու ձև է հասարակական զարգացմանը լավագույնս հարմարվելու միջոցով» (Íîâ ðââ. Áîâîîîéîââ 1977: 330): Կրոնական մոդեռնիզմի նպատակն է հարմարվել և համապատասխանել ժամանակակից աշխարհին և մարդուն, նրա աշխարհայացքին, պատկերացումներին և պահանջներին:

Իր նպատակին հասնելու և իր մտադրությունն իրականացնելու համար կրոնական մոդեռնիզմը պատրաստ է լուրջ զիջումների՝ կատարելով արմատական փոփոխություններ իր ուսմունքի և պրակտիկայի մեջ: Մակայն անհրաժեշտ է նշել, որ կրոնական մոդեռնիզմը, թեև կատարելով արմատական փոփոխություններ կամ էական բարեփոխումներ իր ուսմունքի և պրակտիկայի մեջ, այնուամենայնիվ, չի հրաժարվում իր ուսմունքի սկզբնական հիմնադրույթներից և փորձում է դրանք պահպանել հենց արդիականացման միջոցով: Իսկ կրոնական ուսմունքի, ինչպես նաև դրա այս կամ այն դրույթների արդիականացման գործընթացում կրոնական մոդեռնիզմի բարեփոխումները տեսական և մեթոդաբանական հիմնավորման կարիք ունեն, այն է՝ աստվածաբանության:

Ինստիտուցիոնալ քրիստոնեության համար կրոնական մոդեռնիզմը ոչ միայն իր ուսմունքը և պրակտիկան ժամանակակից աշխարհին համապատասխանեցնելու միջոց է, այլև իր խարխիված դիրքերը ամրապնդելու, հեղինակագրկված և ազդեցությունը կորցրած կրոնին և նրա ինստիտուցիոնալ ձևին՝ եկեղեցուն նոր լիցք հաղորդելու, վերջինիս երբեմնի փառքն ու իշխանությունը վերագտնելու և վերականգնելու հարկադրված քայլ է: Կրոնական մոդեռնիզմը ցույց է տալիս կրոնի անկարողությունը՝ պահպանելու իր ազդեցությունը զանգվածների վրա: Եթե հասարակության մեջ կրոնի և եկեղեցու դիրքերը ամուր և ազդեցիկ լինեին, անհրաժեշտություն չէր լինի կատարել հարկադրված փոփոխություններ և բարեփոխումներ՝ արդիականացնելու իր աստվածաբանական համակարգը և վարդապետությունը: Հետևապես, ինչպես իրավացիորեն նշում է Դոբբենկովը, «Կրոնական մոդեռնիզմը պատմական ցանկացած դրսևորումներում ոչ այլ ինչ է, եթե ոչ կրոնի հարկադրված հարմարում, յուրահատուկ ընդօրինակում պատմական իրականությանը: Կրոնական մոդեռնիզմը, ինչ ձևերով էլ այն արտահայտվի, միշտ հանդիսանում է սոցիալապես պայմանավորված երևույթ» (Áîâðâîüéîâ 1980: 13): Ռուս փիլիսոփա Նովիկովը ևս գտնում է, որ «արդիականացումը հարկադրված միջոց է, որը պայմանավորված չէ կրոնից կախված պատճառներով: Եվ արդիականացման այդ պատճառները չեն կայանում հենց կրոնի, այլ դրա գոյության օբյեկտիվ պայմանների մեջ» (Íîâèéîâ 1973: 8-9): Իսկ այդ օբյեկտիվ պատճառները հնարավորություն չեն տալիս կրոնին մնալու խիստ ավանդական և արխայիկ, այլ հարկադրում են, որպեսզի վերջինս իր գաղափարախոսությունն ու ուսմունքի հիմնադրույթները արդիականացնելու քայլեր անի և կրոնական աշխարհայացքն ու պատկերացումները համապատասխանեցի գիտության նոր նվաճումներին և ժամանակակից մարդու մտածողությանը:

Ժամանակակից մարդն այլ կողմնորոշիչներ է ընտրում իր աշխարհայացքի ձևավորման համար, որոնց մեջ իհարկե առկա է նաև կրոնականը, սակայն դա այլևս դոմինանտ չէ և էական, դետերմինացնող նշանակություն ու ազդեցություն չունի ժամանակակից այսպես կոչված աշխարհիկ մշակույթի վրա: Հետևաբար, կրոնի կարգավիճակն ու վարկանիշն այլևս բարձր չէ ինչպես աշխարհիկ կողմնորոշում ունեցող մշակույթի, այնպես էլ հասարակության գիտակցության ու պրակտիկայի, ինչպես նաև իրականության աշխարհիկ ըմբռնման մեջ: Իհարկե, խոսքը վերաբերվում է այս երևույթին որպես օրինաչափություն և ոչ թե բացառություն, որովհետև այսօր էլ կան բազմաթիվ հավատացյալներ այն էլ տարբեր կրոնների ու դավանանքների, որոնք ունեն ֆունդամենտալիստական դիրքորոշումներ և վերաբերմունք, ինչպես նաև բռնացի են հասկանում կրոնական՝ մասնավորապես քրիստոնեական ուսմունքի մի շարք դրույթներ և ավանդապատումներ:

Ժամանակակից մարդու աշխարհայացքային կողմնորոշումների հիմքում ընկած են առաջին հերթին, գիտությունը՝ որպես աշխարհի գիտական պատկերի հիմք, տեխնիկան՝ որպես աշխարհը օգտագործելու և մանիպուլյացնելու միջոց, գիտելիքի այլ տեսակները և այլն: Եթե անցյալի դիցաբանական աշխարհայացքի հիմքում ընկած հավատն առ գերբնական էակները (աստված, հրեշտակներ, չար ոգիներ և այլն) բնական էր (Kee 1971: xix-xx) և կազմում էր դրա էութենական առանձնահատկությունը, դրա առանցքը, ապա արդի աշխարհում կրոնականը, կրոնական աշխարհայացքը և պատկերացումներն ընդհանուր առմամբ այլևս անբնական են, անընդունելի և անհամապատասխան ժամանակակից մարդու, նրա աշխարհայացքի և դրա ձևավորման համար: Այս առումով ճիշտ է նկատել գերմանացի անվանի աստվածաբան Ռուդոլֆ Բուլտմանը՝ նշելով, որ «Սուրբ Գրքի աշխարհայացքը դիցաբանական է և հետևապես անընդունելի ժամանակակից մարդու համար, որի մտածողությունը ձևավորվում է գիտության կողմից և հետևապես այլևս դիցաբանական չէ» (Bultmann 1958: 36): Քրիստոնեական աշխարհայացքը դիցաբանական է, հետևապես ժամանակակից մարդը, ունենալով գիտական աշխարհայացք, չի կարող ընդունել ոչ այդ աշխարհայացքը, ոչ էլ դրանից բխող հետևանքները:

Հետևապես, քրիստոնեական կրոնի գաղափարախոսության ներկայացուցիչները՝ կղերականները և ինտելեկտուալ էլիտան՝ աստվածաբանները շատ լավ գիտակցում են, որ, եթե նրանք էական քայլերի չդիմեն՝ քրիստոնեական կրոնի բովանդակությունն ու վարդապետությունը համապատասխանեցնելու ժամանակակից աշխարհին, նույնիսկ որոշ էական զիջումների գնով, ապա քրիստոնեական գաղափարախոսությունը կդառնա անախրոնիկ, անընդունելի, անհամապատասխան, անկիրառելի, որի արդյունքում այն կդառնա մարգինալ և աստիճանաբար կդատապարտվի ոչնչացման: Ուստի, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել այս ուղղությամբ, իսկ դա հնարավոր է իրականացնել միայն կրոնը, այս պարագայում՝ քրիստոնեությունն արդիականացնելու միջոցով:

Ընդամենը՝ արդիականացման հիմնական գործառույթը կրոնական գաղափարախոսությունը և ուսմունքը ժամանակակից մարդու գիտական պատկերացումներին, նրա ներկա սոցիո-մշակութային և պատմական միջավայրին ու իրականությանը համապատասխանեցնելն է: Այս իմաստով մոդեռնիզմը կրոնը չի դարձնում ժամանակակից, այլ ընդամենը փորձում է նրան հաղորդել նոր, ժամանակակից ոճ և ձև, տալ նոր շունչ և նորովի ներկայանալու հնարավորություն, որպեսզի վերջինս կարողանա պահպանել իր ազդեցությունը հասարակության և առանձին անհատի վրա:

Իհարկե, կրոնական մոդեռնիզմը միակ գործելակերպը չէ կրոնական գաղափարախոսության մեջ, որ փորձում է որոշակի զիջումների միջոցով պահպանել կրոնը և դրա ազդեցությունը հասարակության վրա: Կրոնական մոդեռնիզմին զուգահեռ գործում է նաև կրոնական ավանդապաշտությունը (տրադիցիոնալիզմը) և պահպանողականությունը, որոնք քիչ պակաս նշանակություն չունեն կրոնի և դրա հետևորդների համար: Ավելին, պետք է ասել, որ կրոնական մոդեռնիզմն ավելի շուտ տարածում ունի կրոնական կառույցի կամ եկեղեցու աստվածաբանների և բարձրաստիճան կղերականների և աստվածաբանական քննարկումների շրջանակում, իսկ դրա ազդեցության ոլորտն ու մասսայականությունը շարքային հավատացյալների մոտ բավականին թույլ է: Հետևապես, կրոնի մոդեռնիզացումն այդքան էլ էական ազդեցություն չունի հասարակ հավատացյալների պատկերացումների վրա և ոչ էլ էական փոփոխություններ է կատարում նրանց գիտակցության մեջ, քանի որ նրանց չի հետաքրքրում տեսական-աստվածաբանական մտակառուցումները և գաղափարները:

Կրոնական մոդեռնիզմը, որքան էլ փորձի «մաքրել» կրոնը՝ այն պահպանելու և ժամանակակից մարդկանց գիտակցությանը համապատասխանեցնելու համար, միևնույն է, չի կարող փոխել և զրկել կրոնին իր ուսմունքի հիմնադրույթներից և իր աշխարհայացքային էությունից: Սակայն անհնար է պատկերացնել կրոնական մոդեռնիզմն առանց աստվածաբանական մոդեռնիզմի, քանի որ կրոնական մոդեռնիզմի մտահղացումներն ու

նպատակներն իրականացվում են կրոնական հավատի տեսականացման և ռացիոնալ հիմնավորման՝ աստվածաբանության միջոցով:

Կրոնական մոդեռնիզմը չի առաջացել սոսկ աստվածաբանների սուբյեկտիվությունից, այսինքն այն պարզապես ներքին անհրաժեշտությամբ չի պայմանավորված կամ ուղղակի կամայական դրսևորում չէ, այլ դրա առաջացումը պայմանավորված է արտաքին, այն է՝ օբյեկտիվ անհրաժեշտությամբ:

Մոդեռնիզմի մեջ «միաձուլվում և յուրահատուկ մեկնաբանություն են ստանում սոցիալական և քաղաքական տարբեր իդեալները, բարոյական նորմերը և գիտական պատկերացումները, գեղագիտական և մշակութային արժեքները, որոնք կոնցեպտուալ նշանակություն են ունեցել կրոնական զանգվածային գիտակցության մակարդակում» (Íîàèèîâ 1973: 12): Իսկ աստվածաբանությունը ոչ միայն արձանագրում է կրոնական զանգվածային գիտակցության ձևափոխությունները, այլև ձգտում է նրանց նկատմամբ իրականացնել կարգավորիչ գործառույթ: Այս նպատակին հասնելու համար աստվածաբանությունը փորձում է դուրս գալ նախկին «աստվածաբանական չափորոշիչների» շրջանակից և արժևորել կենսական այն պայմանները, որոնք պայմանավորում են հավատացյալների գիտակցության փոփոխությունը: Քանի որ նման խնդիրը կարող է կատարել բարեփոխված աստվածաբանությունը, ապա, բնական է, որ բարեփոխման գործընթացն այսպես թե այնպես ներառում է կրոնական համակարգի բոլոր կողմերը:

Կրոնական մոդեռնիզմը փորձում է հաղթահարել կրոնական գիտակցության ճգնաժամը, քանի որ վերջինս սկսվում է այն ժամանակ, երբ այն այլևս անկարող է լինում առկա գաղափարական հենքի վրա տալ հավատացյալների համար ինչ-որ չափով ընդունելի որոշում կյանքի կարևոր հարցերի վերաբերյալ, երբ որոշակի պատմական պայմաններում կազմավորված դոգմատիկական կամ աստվածաբանական համակարգը և աշխարհի, մարդու ու աստծո մասին կրոնական ուսմունքները բախվում են կյանքի փոփոխվող պայմանների, ինչպես և փոփոխվող հասարակական գիտակցության հետ (Ãððäæä 1971: 34):

«Սկզբունքորեն, ցանկացած փոփոխություններ, - նշում է Դոբենկովը, - կրոնական գաղափարախոսության, եկեղեցու կազմակերպչական կառուցվածքի և արտակեղեցական գործունեության ուղղվածության և ձևերի մեջ, որոնք տեղի են ունեցել պատմական իրականության փոփոխությունների ազդեցության ներքո, իր ժամանակի համար կարող են որակվել որպես մոդեռնական» (Ãîðäîüèîâ 1980: 14): Այդ փոփոխությունների բնույթը, ինչպես նաև կրոնի արդիականացման յուրահատկությունը պայմանավորված են եղել օբյեկտիվորեն գոյություն ունեցող սոցիալական պայմանների և միջավայրի, ինչպես նաև ժամանակին ադեկվատ լինելու անհրաժեշտությամբ: Եվ քրիստոնեության բազմադարյա պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվել կրոնական մոդեռնիզմի դեմքը՝ կախված որոշակի կոնկրետ սոցիալ-պատմական պայմաններից, որոնք նպաստել են դրա առաջացմանը: Ընդամին՝ կրոնական մոդեռնիզմն անավարտ ծրագիր և գործընթաց է:

Ժամանակակից կրոնական մոդեռնիզմի բողոքական տարատեսակն ավելի արտահայտիչ ու ուժեղ էր, քան դրա կաթոլիկական կամ ուղղափառ տարատեսակները, քանի որ բողոքականության մեջ ի սկզբանե ուժեղ են եղել մոդեռնական միտումները: Բողոքական աստվածաբաններն ավելի համարձակ կերպով են մուտք գործել կրոնական գաղափարախոսության ոլորտը, ավելի ազատ են գործել այդ գաղափարախոսության բովանդակության փոխակերպության հարցում, ինչպես նաև արդի սոցիալ-պատմական իրականությանն այն համապատասխանեցնելու գործում: Ժամանակակից բողոքական աստվածաբանական մոդեռնիզմը համեմատած կրոնական մոդեռնիզմի կաթոլիկական և ուղղափառ աստվածաբանությունների ոչ միայն ավելի ռադիկալ էր իր նկրտումներում, այլև ավելի բազմաբնույթ և բազմադեմ էր իր դրսևորումներում: Դա բացատրվում է նրանով, որ բողոքականությունն ի սկզբանե չունեւ մեկ միասնական եկեղեցի և կենտրոնացված եկեղեցական կառույց. դա ապակենտրոնացված կրոնական շարժում էր, որն ուներ մի քանի

ուղղություններ ու չունե՞ր աստվածաբանական ամուր ավանդույթներ: Բողոքականությունը, ի տարբերություն կաթոլիկության և ուղղափառության, միշտ եղել է քրիստոնեության մեջ այն ճկուն, շարժունակ և արագ արձագանքող տարատեսակը, որը միշտ փորձել է համապատասխանել սոցիո-մշակութային և պատմական իրականությանն ու պայմաններին և, չունենալով սերտ կապեր ինստիտուցիոնալ եկեղեցու և աստվածաբանական ավանդույթների հետ, կարողացել է արագ կողմնորոշվել նոր իրավիճակում և հարմարվել հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններին:

Մա էր պատճառը, որ բողոքական աստվածաբաններն առաջինը սկսեցին զբաղվել «նոր», «բարեփոխված» քրիստոնեության» (Օձձեմիձե՝ 1973: 3) որոնումներով և շատ հեռուն գնացին քան կաթոլիկ և ուղղափառ աստվածաբանները: Բողոքական աստվածաբանները և եկեղեցականները պատրաստ էին ժամանակակից աշխարհի հետ «երկխոսության»: Նրանք պատրաստ էին աստվածաբանության, եկեղեցու ուսմունքի և կառուցվածքի, եկեղեցական գործունեության ու պրակտիկայի ձևի և մեթոդի հարցերում էական զիջումների, անգամ արմատական փոփոխությունների գնալ, քանի որ լավ գիտակցում էին, որ խաղաքարտի վրա է դրված կրոնի և եկեղեցու ճակատագիրը ժամանակակից աշխարհում (Աիձձիւմիձ 1980: 12): Հետևապես, ժամանակակից բողոքական մոդեռնիզմն իր նորագույն դրսևորումներում կարող է յուրակերպ դերակատարություն ունենալ՝ բացահայտելու համար «այն գործընթացների էությունը, որոնք տեղի են ունենում ժամանակակից կրոնական գիտակցության մեջ» (Աիձձիւմիձ 1980: 15) և, դրանով իսկ, առաջ անցնել կրոնական այլ ուղղությունների ներկայացուցիչներից և որոշել այն մոտեցումը, որը և իրենք, և այլ դավանանքների ներկայացուցիչները կարող են գործածել կրոնի արդիականացման խնդրին հանգուցալուծում գտնելու, ինչպես նաև նոր ուղիներ փնտրել կրոնը փրկելու և ճգնաժամային վիճակից դուրս բերելու համար:

Բողոքական աստվածաբանական մոդեռնիզմի ներկայացուցիչների այսպիսի մտահոգությունը և նրանց կողմից կրոնի՝ մասնավորապես քրիստոնեության, այսպիսի ըմբռնումն էապես տարբերվում էր պահպանողական կամ ավանդական աստվածաբանների և կղերականների դիրքորոշումից: Նրանք գիտակցում էին, որ եթե չձեռնարկեն կտրուկ, արմատական միջոցներ, վերանայելու, վերամեկնաբանելու ավանդական քրիստոնեության բովանդակությունն ու գաղափարախոսությունը, ապա վտանգված կլինի քրիստոնեության ճակատագիրն առհասարակ: Հետևապես, աստվածաբանությունն այլևս չի կարող գնալ այն ճանապարհով, որով մինչ այդ գնացել էր քրիստոնեական եկեղեցին: Այլևս հնարավոր չէր շրջվել այս աշխարհից, ինքնամեկուսացվել և ապրել ինչ-որ մտացածին գաղափարներով և պատրանքներով, այլ անհրաժեշտ էր դառնալ դեպի այս աշխարհը, փոխել մարդու սոցիո-մշակութային միջավայրը և բարեկարգել հասարակական կյանքը: Այլ կերպ կարելի է ասել, որ անհրաժեշտ էր ստեղծել քրիստոնեության այնպիսի ձև, որն այլևս չէր ունենա այնկողմնային, «երկնային» նկրտումներ և միտումներ, այլ այսկողմնային, «երկրային» միտվածություն, ուղղված դեպի այս աշխարհը, այս կյանքը, ռեալ իրականությունը: Հարկավոր է ապրել ոչ թե պատրանքներով, այլ ռեալ կյանքի հոգսերով և խնդիրներով, ուստի ինստիտուցիոնալ քրիստոնեությանը պետք է տալ սոցիալական ուղղվածություն և նշանակություն: Բնականաբար, նման մոտեցումը և վերաբերմունքը անպայմանորեն պետք է իր ազդեցությունն ունենար նաև քրիստոնեական գաղափարախոսության և ուսմունքի հիմնադրույթների վրա, որոնք էական, նույնիսկ ռադիկալ փոփոխության պետք է ենթարկվեին:

Այսպիսով, ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Արևմտյան Եվրոպայում կրոնական (բողոքական) մոդեռնիզմը պահանջում էր կրոնական աշխարհընկալման ողջ ավանդական համակարգի, աստվածաբանական հիմնական հասկացությունների, քրիստոնեական աստվածաբանության բովանդակության, ձևի, առարկայի և նպատակի ռադիկալ վերամեկնաբանություն ու վերաարժևորում: Կրոնական (բողոքական աստվածաբանական) մոդեռնիզմն արտահայտում էր իր անբավարարվածությունն այն բանում, որ քրիստոնեությունը,

ՔՈՉԱՐՅԱՆ ՌՈՍԻԿ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի ասիստենտ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՆ .

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ

Իմաստությունը և ճշմարտության (տեսականի) և բարու (գործնականի) հասկացումն ու կատարումն է՝ ըստ մարդկային կարողության:

1. Պատմության և հերմենևտիկայի հարաբերությունը չի ներկայանում որպես առանձին և ուրույն գիտաճյուղերի հարաբերություն: Հերմենևտիկայի խնդրակարգը սկզբունքորեն ներկա է պատմության մեջ: **Հասկացման ու մեկնաբանության խնդրակարգն անհրաժեշտորեն ու հենց հիմնարար ներհուսված է պատմության որպես այդպիսին գոյությունում:** Այս իրողությունը բազմիցս նշվել է պատմաբանների՝ Ռանկեի, Դրոյզենի, Ռ. Քոլինգվուդի, Մ. Բլոկի ու այլոց աշխատություններում:

Ռ. Քոլինգվուդը գրում է. «Պատմությունը փաստական տվյալների (evidence) մեկնաբանությունն է» և ավելացնում՝ «...պատմաբանները կհամաձայնվեն, որ պատմական ընթացակարգը կամ մեթոդը, ըստ էության, բովանդակվում է փաստական տվյալների մեկնաբանության մեջ» (ընդգծումները հոդվածագրինն է՝ Ռ. Ք.): Եվ բնականաբար, որպեսզի ինչ-որ բան մեկնաբանվի, այն պետք է հասկացվի:

Հայտնի միջնադարագետ և պատմության տեսաբան Մարկ Բլոկը պատմության որպես այդպիսին գոյությունում «հասկացման» ու «մեկնաբանության» անհրաժեշտության մասին նշում է ուղղակիորեն ու նաև անուղղակիորեն, երբ խոսում է կոնկրետ պատմական իրողություններից, անգիր և-կամ գրավոր աղբյուրներից ու վկայություններից, մշակութային ու քաղաքակրթական և ուրեմն՝ պատմական, հետքերից, ինչպես նաև հենց պատմական տեքստերից իմանալի իսկությունների ու իմաստների բացահայտման վերաբերյալ: Ինչպես տեսնում ենք, Ռ. Քոլինգվուդի և Մ. Բլոկի պատմագիտական հայեցակարգում պատմության գոյությունում հերմենևտիկական խնդրակարգի ներկայությունը անհրաժեշտ ու նախընտրելի մեթոդի խնդիր է իսկության բացահայտման, որով և՛ պատմության որպես գիտություն գոյության ու կատարելագործման հարակայության:

Պատմության և հերմենևտիկայի այս փոխառնչությունը մանրակրկիտ ուսումնասիրվել է նաև հերմենևտիկայի տեսաբանների՝ Վ. Դիլթայի, Գ. Շպետի, Հ.-Գ. Գադամերի, Պ. Ռիկորի կողմից: Հերմենևտիկայի խնդրակարգը անհրաժեշտորեն ու նաև նախընտրելի պիտոյականությամբ ներկա է և՛ պատմիչ հեղինակի հետազոտությունում ու շարադրանքում, և՛ ամենայն անձանց կողմից պատմության ընթերցանությունում:

Այն, նախ և առաջ, ներկա է պատմաբան հեղինակի **հետազոտությամբ** մարդկային իրողությունների իսկությունը, ըստ մարդկային իր կարողության, հասկացման մեջ: Հեղինակն առնչվում է **իսկության ներկայության** խնդրին՝ հասկանալով ու մեկնողաբար բացորոշմամբ ամրագրելով այն: Պատմությունը իր հետազոտական փուլում կայանում է որպես **իսկության բացահայտություն ու հենց ներկայություն՝ հասկացման ուղիով ու հենց ճշմարտորեն կազմակերպված հասկացման մեջ:**

Պատմության շարադրանքում ևս առնչվում ենք իսկության ներկայության խնդրին: Պատմության շարադրանքում իրագործվում է եղելությունների՝ արդեն հետազոտության փուլում նախապես **հասկացյալ իսկությանն աղեկվատ պատմում:** Ավելին՝ շարադրանքում

պատմիչ հեղինակն առնչվում է, պատմվող իսկության ադեկվատությունն անխախտ պահելու պայմանով, այդ իսկությունը մարդկային հասկացման կարողությանն այնկերպ ու այնչափ մեկնողաբար բացորոշմամբ մատուցելու խնդրի հետ, որ տեքստով (ասված իսկությունը) ընթերցողի հասկացման ձգտմանն ու ջանքին ներկայանա նույնորոշելի ու կրկնորոշելի իր որպիսությամբ:

Պատմությունը կարող է կայանալ ըստ իր կոչման և ուրեմն՝ նախընտրելի իսկությամբ միմիայն այնժամ, երբ իբրև *հետազոտություն*՝ կայանա որպես աշխարհի, որում և՛ մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի, նշանակալի եղելումի իսկությունը հայտող իմաստների ու դրանց պատճառականությամբ ներկայացված միահյուսության հասկացում և, իբրև *շարադրանք*, մեկնողաբար հյուսմամբ ներկայացված բացորոշություն: Պատմությունն իր այսկերպ կայացմամբ՝ բացահայտում է հասկացման ու մեկնաբանության հիմնախնդիրների արմատական ու հիմնարար ներկայությունն իրենում և ուրեմն՝ *հերմենևտիկայի* սկզբունքորեն անհրաժեշտ ու նաև նախընտրելի մասնակցությունը «պատմության որպես այդպիսին գոյության իսկության բացորոշման» խնդրակարգում: **Պատմությունը որպես այդպիսին՝ և՛ որպես հետազոտություն, և՛ որպես շարադրանք, կայանում է հասկացմամբ ու մեկնությամբ իսկության ներկայություն իրագործվելով:**

Հասկացման և մեկնաբանության խնդրակարգը ներկա է նաև ընթերցողի կողմից պատմության տեքստի ընթերցանությունում: **Պատմությունը որպես շարադրանք, որում և՛ հեղինակի կողմից հասկացված իմաստի մեկնողաբար բացորոշմամբ իրագործված ամրագրում, հղված է ընթերցողի հասկացմանը:** Պատմողաբար ասվածում իրագործվում է եղելությունների իսկության ներկայություն ընթերցողի հասկացման ձգտող մտքին: Ավելին՝ պատմությունը արդեն հասկացված և-կամ խորհրդածությամբ **Էական** նկատված իմաստները մեկնողաբար բացորոշությամբ հղում է ընթերցողի հասկացմանը, դիտավորություն, ըստ այդմ՝ կերպարանում ու կատարում ունենալով՝ նաև կենսագործել հասկացված **իսկության և իմաստության խորհուրդի ներկայության հնարավորություն** ամենայն «ընթերցասերի»¹ և «ուսումնասերի»² ինքնության ու այլոց հետ համակեցության ներկայում ու ապագայում: Եվ հերմենևտիկական խնդրակարգը ներկա է նաև «պատմության տեքստ-ընթերցող» ընթերցանության հարաբերությունում՝ «ուսումնասեր» անձանց կողմից պատմվող իսկությունների բացահայտմանն ուղղված հասկացման ու մեկնաբանության ձգտման ու ջանքի գործադրման մեջ:

Պատմության որպես այդպիսին գոյության մեջ քննության առնելով հասկացման ու մեկնաբանության խնդրակարգը, անշուշտ, առավել դյուրին է այն նկատել պատմիչի պարագայում, քանզի «պատմություն-ընթերցող» իրադրությունում համարվում է, որ պատմությունն նախապես արդեն կայացել է իր որպես այդպիսին գոյությունում, և ընթերցման հարաբերությունում հասկացման ու մեկնաբանության խնդիրը անմիջականորեն չի վերաբերում պատմության **գոյության** խնդրին: Սակայն **պատմության գոյությունն ինքնանպատակ չէ:** Պատմությունը հասկանալով ու իր պատմամբ՝ մեկնողաբար բացորոշելով իսկություն, ըստ էության, պատմում է իմաստություն, որով և իմաստության կոչում ընթերցող ու հասկացման ձգտող՝ «ուսումնասեր» ամենայն անձանց ինքնությունն ու կենսակերպը: **Պատմության (պատմագիտության) որպես այդպիսին գոյությունը կոչված է մարդու ինքնահասկացմանը՝ նրա ինքնությանն առնչվող ամենայնի (աստվածային ու մարդկային իրողությունների) կյանքում եղելումի իսկության և հենց այդ առնչության բուն նշանակության հասկացմամբ ու մեկնողաբար բացորոշմամբ:**

2. Պատմագիտության ու նաև պատմափիլիսոփայության համար Էականորեն նշանակալի դիտավորություն և ըստ այդմ՝ կերպարանում ու կատարում է՝ հասկանալ ու մեկնողաբար բացորոշել ընդհանրապես **պատմության բնությունը** և-կամ **պատմության և, մասնավորապես, հայոց պատմության որպես այդպիսին գոյության իսկությունը հայտող իմաստը, որում և՛ իմաստության խորհուրդը, ըստ Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգի:**

Գիտական ուսումնասիրության այսկերպ հասկացված խնդրակարգն իրենում նկատի ունի՝ պատմության իսկություն որոնող խորհրդածությունը և պատմության բնությունը բացահայտող մտքի բանաձևը տեսանել կոնկրետորեն հայոց պատմության նկատմամբ կիրառության մեջ: Խնդրակարգի լուծումն իր լրումին կարող է հասանել, եթե պատմության որպես այդպիսին գոյությունը բաղկացնող և իսկությունը բացահայտող էական առանձնահատկությունները մեկտեղելով՝ բացորոշ ու կարճառոտ ձևակերպվի պատմության սահմանումը, ըստ Խորենացու հայեցակարգի:

Իսկ ինչո՞ւ է անհրաժեշտ ու նախընտրելի՝ սահմանել պատմությունը: Դավիթ Անհաղթը գրում է. «եթե կամի ոք յաղագս իրի ուրուք ճշմարտաբար խորհել և մտածել, պարտ է նախ զիտել զնորին իրի բնութիւնն, այսինքն՝ զսահմանն» (Դավիթ Անյաղթ: 1980, 38): Քանզի «սահման է բան կարճառոտ, յայտնիչ բնութեան ենթակայ իրի» (Դավիթ Անյաղթ: 1980, 40-42): «Պատմություն» գոյավորի գոյության իսկության վերաբերյալ ամենայն խորհրդածությունն ի մի բերող ու կարճառոտ բանաձևմամբ պատմության բնությունը բացահատող միտքը «պատմության» սահմանումն է: Ինչպիսի՞ հարցադրության կարգով կարելի է բացահայտել պատմության բնությունը, նույնն է, թե՛ պատմության որպես այդպիսին գոյության իսկությունը: «Պատմություն» գոյավորի որպես այդպիսին գոյության իսկության հասկացումն ու մեկնողաբար բացորոշումը և ամփոփիչ արդյունքում՝ նաև պատմության սահմանման բանաձևի որոնումի խնդրակարգն ու ուղին հնարավոր ու նախընտրելի է կազմակերպել, խորհրդածությունն իրագործելով ըստ հերմենևտիկայի մեթոդաբանական հայեցակարգի և Դավիթ Անհաղթի աստվածաբանող իմաստասիրության ուսուցանության, հարցադրելով թե՛ «**ի՞նչ է**» և «**ինչպիսի՞ ինչ է պատմությունը**»:

3. Այսպիսով, ո՞րն է պատմության սահմանումը, ըստ Մովսես Խորենացու: Իսկ Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ կա՞, արդյոք, «պատմության» և-կամ «հայոց պատմության» բացորոշ սահմանում: Մովսես Խորենացին իր պատմագիտական հայեցակարգը այդ աշխատության մեջ ներկայացնում է ոչ հավաք մեկտեղյալ ամփոփությամբ, այլ՝ տեղ առ տեղ, զանազան էջերում սփռվածությամբ: Նրա աշխատությունում կարելի է բացահայտել պատմության բնության հստակ ըմբռնում և ուսուցանություն: Նրա պատմական երկում արտահայտված տեսական բնութի մտքերում «ի պահ տրված» ու ոչ միշտ ուղղակի մտադրությամբ ու բացորոշ բանաձևով ընթերցողին հղվածությամբ՝ հասկանալի ու մեկնորոշելի են դառնում **պատմումի վարդապետական եղանակը**³ (Քոչարյան: 2006a, 4-12) և այդկերպ հայեցմամբ ու պատմամբ՝ **բուն ասվածը**⁴ (Քոչարյան: 2006a, 14-21), որոնք և իմաստային տեսադաշտ են բացահայտում իրենցից հետևողականորեն բխող իմպլիկացիաների:

Ըստ իս, տեքստով ասվածի իմաստության ուսումնասեր և հասկացման ու մեկնողաբար բացորոշման ձգտող ամենայն ընթերցողի, առավել ևս՝ հետազոտող պատմաբանի ու իմաստասերի համար էական է հասկանալ ոչ միայն այն, թե ինչ է ասված տվյալ տեքստում կոնկրետաբար, այլև թե ինչ իմաստային հորիզոն (Гадмер: 1988, 358-363, Քոչարյան: 2006, 136-138, 145-146, 148-149) է բացվում այդ ասվածով և ուրեմն՝ ինչ է հետևում ասվածից պատմության տեսության և հենց պատմության իսկության բացահայտման համար: Ուսումնասիրության բուն ու հենց նախընտրելի նպատակն է, ավելի ճիշտ՝ **նպատակը պե՛տք է լինի**՝ ամենայն պատմիչների երկերի, նույնաբար և՛ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատության, հետազոտությամբ՝ հասկանալ տեքստում և-կամ տեքստով կոնկրետորեն ասվողը և վերամտածելով **հեղինակային միտքը**, երբեմն **նույնիսկ շարունակելով ու իր կատարումի լրումին բերելով դրանում ներկա որևոր իմպուլսները**, անհրաժեշտ ու նաև նախընտրելի **պիտոյականությամբ լրացնել մտքի շարժը դեպի իր կատարումը՝ եղելումի իսկությունը հայտող իմաստի, որում և՛ իմաստության խորհուրդի բացահայտմանը, և հասու լինել պատմությամբ հայտնյալ իմաստությանը**:

4. Այդկերպ մոտեցմամբ՝ Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգում բացահայտելի են դառնում պատմության որպես այդպիսին գոյության իսկությունը բացորոշող՝ էականորեն նշանակալի բազմաթիվ սահմանումներ: Պատմությունը կարելի է սահմանել ըստ իր ուսումնասիրության առարկայի և ըստ իր կատարումի՝ առանձնաբար ու տեսական, և կարելի է նաև սահմանել ըստ առարկայի ու կատարումի՝ միասնականորեն, տեսական ու գործնական:

Ո՞րն է **պատմության առարկան**: Նրա հայեցակարգիում պատմության սահմանումների առանձնահատկությունները հստակ նկատելու համար հարկ է դրանց նկատմամբ համեմատական կարգով դիտարկել պատմության այլ սահմանումներ ևս: Արիստոտելն այս առնչությամբ գրում է. «Պատմիչը խոսում է իրական պատահումի մասին» (Արիստոտել: 1984, 655): Ըստ նրա, պատմությունն առավելապես խոսում է եզակիի մասին, ի տարբերություն պոեզիայի, որը խոսում է ընդհանուրի մասին» (Արիստոտել: 2000, 157): Եվ «եզակին այն է, օրինակ, թե **ինչ արեց** Ալկիվիադը կամ **ինչ պատահեց** նրան (*ընդգծումները՝ Ռ. Ք.*)» (Արիստոտել: 2000, 157): Այսպիսով, ըստ Արիստոտելի, **պատմության առարկան՝ իրապես պատահածն ու կատարվածն է**, այսինքն՝ եղելություն դարձած իրադարձություններն ու մարդկային գործերը: Կարելի է նաև ավելացնել, որ հին հունական ոչ առասպելապատումի, այլ՝ պատմագիտության մեջ պատմության առարկան՝ իրադարձություններն ու գործերն են, որ և՛ իրենց պատահման իրական տեղում ու ժամանակում՝ պատճառով հանդերձ, ենթակա են հետազոտությամբ բացահայտման ու ամրագրության: Արիստոտելյան այդկերպ բնորոշմամբ՝ պատմության առարկայի մեջ սկզբունքորեն ընդգրկվում է **ամենայն** եղելություն, այն սկզբունքային չափանիշով, որ իրապես տեղի է ունեցել և անհարկի է այն բացարկել, այլ՝ հարկ է հասկանալ ու մեկնողաբար պատմամբ՝ բացահայտել ամենայն եղելության իսկությունը: Պատմության առարկայի այսկերպ բացորոշմամբ՝ պատմության արիստոտելյան սահմանումը կունենա հետևյալ տեսքը:

Պատմության՝ ըստ առարկայի սահմանում.

Պատմությունը գիտություն է՝ իրապես պատահածն ու կատարվածը՝ պատճառով հանդերձ հետազոտող:

Արիստոտելյան այս բանաձևը կարելի է վերաձևակերպել նաև այլ կերպ.

Պատմությունը գիտություն է՝ կյանքի համայն եղելումը՝ պատճառով հանդերձ հետազոտող:

Սահմանման այս բանաձևում «եղելում» հասկացության միջոցով պատմության առարկայում ընդգրկվող մարդկային իրողությունների ժամանակային որոշարկումը՝ որպես նախկինում ու նաև ներկայում կատարված, արդեն իսկ արտահայտվում է սահմանման մեջ: Ուսումնասիրության ենթակա իրողությունների ժամանակային որոշարկումն ունի պատմությունն էացնող, այսու և՛ էական նշանակություն պատմության որպես այդպիսին գոյության համար, ուստի սահմանման մեջ այն կարող է նշվել նաև առավել բացորոշությամբ:

Պատմությունը գիտություն է՝ կյանքի անցյալ և-կամ ներկա եղելումը՝ պատճառով հանդերձ, հետազոտող:

Պատմության բնությունն ըստ իր առարկայի բացահայտող այս բանաձևը արիստոտելյան սահմանման մեջ նշվող՝ մարդկային կյանքի ամենայն իրողություններն իր առարկայում բովանդակող՝ հնարավոր ու իրավ մի սահմանում է: Մակայն, սկզբունքորեն այդպիսին է, արդյոք, պատմությունը՝ ըստ իր կոչման և առավել նախընտրելի ու կատարյալ իր գոյության իսկության:

Պատմագիտության կայացման ողջ ընթացքում մշտապես արտահայտվել են պատմատեսական բնույթի մտորումներ և երբեմն ձևակերպվել ամբողջական տեսություններ, որոնցում ոչ միշտ հստակ ու որոշակիորեն ձևակերպվել են նաև պատմության սահմանման բանաձևեր: Պատմության որպես գիտություն հասկացման ու սահմանման խորհրդածություններ իրագործվել են նաև ժամանակակից շրջանում: Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգում պատմատեսական բնույթի խորհրդածությունները և դրանցից նաև արտածելի պատմության՝ ըստ առարկայի և ըստ կատարումի սահմանումները, ըստ իս, էական

առանձնահատկությունն ու առինքնող նշանակությունն ունեն պատմության որպես այդպիսին գոյության ինքնահասկացում իրագործող՝ ոչ միայն նախկին, այլև ժամանակակից պատմագիտության տեսաբանող մտորումների ու նաև սահմանումների համեմատ: Այս առնչությամբ՝ հատուկ հետաքրքրության է արժանի հայտնի միջնադարագետ ու հենց ժամանակակից պատմաբան, պատմության տեսական խնդիրների քննարկումների ջատագով ու նորարար՝ Մարկ Բլոկի պատմատեսական խորհրդածություններում պատմության, որպես գիտության սահմանումները համառոտ հիշատակելը:

Փորձելով ձևակերպել պատմության իր ըմբռնումը, Մ. Բլոկը նախ՝ հիշատակում է «պատմություն» տերմինի հին հունական՝ «հետազոտություն» իմաստը (Блок: 1986, 15) և մտորում՝ «Լեզուն պահպանում է «պատմություն» անունը ժամանակի մեջ տեղի ունեցող փոփոխությունների ամենայն հետազոտության համար» (Блок: 1986, 15): Նրա այս մտքում արդեն իսկ ներկա է պատմության սահմանում, ըստ որի՝ **պատմությունը գիտություն է՝ ժամանակի մեջ տեղի ունեցող փոփոխությունը հետազոտող:** «Պատմություն» տերմինի այս կերպ գործածության, որում և՛ պատմության ըմբռնվածության, պրակտիկայում արձանագրելով տարբեր գիտությունների խնդրո նյութի պատմական հետազոտության չտարբերակվածությունը «պատմիչների պատմությունից», նա պատմության առարկայի ճշտորոշման միջոցով պատմության բնության բացահայտությանն ուղղված մտորումների հետևողական ընթացքով հարցնում է. «Ի՞նչ է տեղի ունենում ամեն անգամ, երբ պիտոյաբար պահանջվում է պատմության միջամտությունը» և անմիջապես պատասխանում է. «Մարդկային ի հայտ գալը» (Блок: 1986, 17): Այդ միտքը լրացնելով, Բլոկը վերհիշում է վաղուց ի վեր հայտնի միտքը, թե՛ «պատմության առարկան մարդն է» և ճշտում՝ «ավելի ստույգ՝ մարդիկ» պատճառաբանելով, թե՛ «զանազանի մասին գիտությանն առավել համապատասխան է ոչ թե եզակի թիվը ..., այլ՝ հոգնակի...» (Блок: 1986, 17): Հիրավի, պատմությունը գործ ունի մարդկային իրողությունների հետ, և, սակայն, նկատելի է նաև, որ այդ միտքը հումանիտար և սոցիալական այլ գիտությունների շարքի մեջ պատմությունը որպես այդպիսին դեռևս ոչ լիովին առանձնահատկող բանաձև է, այլ՝ նրանում բացորոշվում է պատմության ուսումնասիրության առարկայական տիրույթի դեռ միայն ամենաընդհանուր սեռային բնույթը: Պատմության առարկայի, հիմնավորությամբ հանդերձ, առավել որոշարկման հասնելու իր մտորումները շարունակելով, հայտնի միջնադարագետը գրում է. «...ամենաչոր՝ իրենց ստեղծողներից լիովին օտարացյալ, փաստաթղթերի ու ինստիտուտների ետևում պատմությունը կամենում է տեսնել մարդկանց...» (Блок: 1986, 18-19), և ինչպես Լյուսիեն Ֆերն է ասում՝ տեսնել «ոչ թե նա մի մարդու և ոչ երբեք պարզապես մարդուն, այլ՝ մարդկային հասարակությունները, կազմակերպված խմբերը» (Блок: 1986, 201): Վերոբերյալ միտքը, թե՛ պատմությունը գիտություն է մարդկանց մասին, կոնկրետորեն պատմության յուրահատկությանը համապատասխան ձևակերպելու, որով և՛ պատմության ուսումնասիրության առարկան ճշտորոշելու համար, Մարկ Բլոկի ավելացնում է. Երբ պատմաբանը մտածում է մարդկային մասին, «միջավայրը, որում շարժվում է պատմողական միտքը, տևողության կատեգորիան է», և այդ կերպ ըմբռնված «պատմության ժամանակը պլազմա է, որում լողում են մարդկային ֆենոմենները, կարծես թե միջավայր է, որում և կարող են հասկացվել այդ ամենը (Блок: 1986, 18-19): Եզրակացնելով՝ Մարկ Բլոկը սահմանում է պատմությունը՝ ըստ առարկայի. **Պատմությունը գիտություն է՝ մարդկանց՝ ժամանակի մեջ ուսումնասիրող** (Блок: 1986, 18-19): Ի մի բերելով իր մտորումները պատմության առարկայի վերաբերյալ, նա մեկ այլ էջում գրում է. «**Պատմության առարկան, ճշգրիտ և վերջնական իմաստով, մարդկանց գիտակցությունն է...**» (Блок: 1986, 86): Իսկ մեկ այլ էջում պատմական վկայությունների նկատմամբ հասարակության հոգածության խնդրին անդրադառնալով, Մ. Բլոկը ոչ ուղղակի դիտավորությամբ՝ պատմությունը սահմանում է որպես **հասարակության բանականորեն կազմակերպված և՛ հիշողություն, և՛ ինքնաձանաչողություն** (Блок: 1986, 44) (ընդգծումները՝ Ռ. Ք.):

Վերոբերյալ սահմանումներով՝ պատմությունը, կարելի է ասել՝ պատմության բնությունը և՛ կամ պատմության որպես այդպիսին գոյությունը, այնպիսին է, որ **նրանում պարզապես ասման կամվերասման կարող է բերվել ու կրկնվել բազմայլ, որևոր ու զանազանակերպ խնդիրների առնչությամբ կյանքում տեղ գտած, նախկինում իրագործված ու նաև ներկայում դեռ շարունակական՝ հասկացման ու ինքնահասկացման անխսկությունը** ևս: Ըստ Մովսես Խորենացու հայեցակարգի, պատմության կոչումը և գոյության իսկությունը հայտող իմաստն այն չէ, որ նրանում սոսկ ասման բերվի կյանքի անցյալ և՛ կամ ներկա եղելումը և, այդպիսով, պատմությունը նույնանա կամ նմանվի կյանքի իրադարձությունների, արդեն եղելական ու նաև անելիք գործերի **հասկացման** ու նաև **ինքնահասկացման որպիսությունների ու հարաբերակցության** խառնաշփոթ ու այլևայլ շահերով խեղակերպ, ինքնակամ ու կամայածին և այսկերպ՝ անխսկական եղելությանը: **Պատմության գոյության իմաստն այն չէ, որ նրանում պարզապես ասման կամ վերասման բերվի ու կրկնվի բազմայլ, որևոր ու զանազանակերպ**

խնդիրների առնչությամբ կյանքում տեղ գտած, նախկինում իրագործված ու նաև ներկայում դեռ շարունակական՝ հասկացման ու ինքնահասկացման անխկությունը:

Վերոբերյալ արհեստողջական սահմանման մեջ հաշվի չի առնված **մարդկային ընտրության** սկզբունքային պահը՝ բարենշանակ իր կերպավորմամբ, և անտեսված է այն, որ մարդը, մարդկային իմացությունը և հենց գիտությունը չի կարող ընդգրկել աշխարհի, որում և՛ մարդկային կյանքի, եղելությունների համայն ու բովանդակ ամբողջությունը:

Պատմության առարկայի վերաբերյալ այս խորհրդածության միևնույն «խնդրո բանին» է առնչվում Մարկ Բլոկը, երբ հարցնելով, թե՛ «ի՞նչ է պատմությունը» (Блок: 1986, 15) և մեջբերելով հանրաճանաչ պատասխանը, թե՛ «պատմությունը գիտություն է անցյալի մասին» (Блок: 1986, 16), այդ բանաձևի և դրանով մեկնորոշվող պատմության բնության ու որպես այդպիսին գոյության իմաստի քննական խորհրդածությամբ ու աստիճանաբար ճշգրտմամբ՝ փորձում է հասկանալ ու ամրագրել պատմության առարկայի իր ընկալումը, որով և՛ պատմության որպիսությունը: Պատմության որպես այդպիսին գոյության հասկացմանը և հենց նրա առարկայի որոշարկմանն ուղղված իր մտորումները կազմակերպելով, Մ. Բլոկը գրում է. «Միտքն իսկ, որ անցյալը որպես այդպիսին կարող է լինել գիտության առարկա, անհեթեթ է: Ինչպե՞ս կարելի է առանց նախապես մաղելու, բանական ճանաչողության առարկա դարձնել ֆենոմենները՝ իրենց մեջ ընդհանուր ունեցող լոկ այն, որ մեզ ժամանակակից չեն» (Блок: 1986, 18-19): Հիրավի, պատմության առարկա դառնալու համար ամենին էլ բավական չէ, որ ինչ-որ բան լինի սուսկ կատարված ու արդեն անցյալ մի եղելություն:

Վերոբերյալ բանաձևերում արտահայտված պատմության ըմբռնմանն ուղղված էական հարցն այն է, թե՛ գիտություն է և իրենում ու հենց իրենով՝ իմաստության ինքնահասկացման ու կենագործության հնարավորություն ընձեռում է, արդյոք, պատմության այն մոդուսը, որն իմաստի ոլորտում ու կյանքում սուսկ վերականգնում ու վերստին ներկա է դարձնում նախկինում եղելական ճիշտն ու սուտը, բարին ու չարը, կենարարն ու ոչնչարարը՝ չիրագործելով և ոչ մի ընտրություն և-կամ նախընտրություն:

Պատմությունը «անսիրտ ու անհոգի» մեխանիզմ չէ, այլ՝ մարդկային գիտություն՝ կյանքի իրողությունների վերաբերյալ, իսկ մարդկային մտքերում, խոսքերում, գործերում ու բովանդակ կյանքում, որպես պոտենցիա ու նաև իրագործվածություն, մշտապես ներկա է անձի բանական բնությանը ներհատուկ **նախասիրությունը, հոժարումն ու ընտրությունը:** Պատմության տողերում ու ողջ տեքստում բովանդակյալ ասելիքում պատմիչը ներդրել, որով և՛ իմաստության, ամենայն առաքինության ու բարեկարգության ուսումնասեր ամենքին է հղել սեր ու ջանք, զգացումնք ու միտք, մտահոգություն ու որոնում, քննություն ու խորհրդածություն, միով բանիվ՝ **սիրտ, հոգի, մարդկային բարենշանակ կենդանություն ու հենց կյանք:** Ինչպես և նշում է Գուրևիչը, «պատմությունը հարում է բարոյական գիտությունների շարքին» (Гуревич: 1990, 7):

Պատմությունը մարդու համար է և բացահայտում է մարդկային մտավիճերի ու արարքների իսկություն՝ մարդկային ինքնությունն ու կյանքը բարեկերպելու համար:

Այն երբևէ անտարբեր չէ այս խնդրակարգի նկատմամբ, ինչպիսին կարող էր լինել, օրինակ, ոչ-բանական և-կամ մարդկայինի նկատմամբ անհոգածու սկզբունքների հիման վրա ստեղծված ու գործող մեխանիզմը: Պատմության, որպես գիտության, կոչումը կյանքի զուտ եղելականության կրկնությունը չէ իմաստի ու հենց բանականի ոլորտում, և պատմության **նախընտրելի ու իմաստուն** գիտականությունը իր հիմնախնդիրը՝ իսկության բացահայտումը, սկզբունքորեն ու նախընտրելի պիտոյականությամբ **չի՛ կարող** այդկերպ ու այդչափ սահմանել:

5. Պատմության որպես այդպիսին գոյության և նրա ուսումնասիրության ենթակա առարկայական տիրույթի արհեստողջական ըմբռումից էականորեն տարբեր է Մովսես Խորենացու հասկացումը: Ըստ նրա, պատմությունն առ ի քննություն ու խորհրդածություն, որպես անհրաժեշտ ու նաև նախընտրելի, **ընտրում** և առարկայական տիրույթում ընդգրկմանն **արժանի է դիտում** անցյալի ու նաև տվյալ ներկայի միայն **նշանակալի** իրադարձություններն ու մարդկային գործերը:

«... Հանդես է մեր՝ ոչ զպատմութեանն ողջաբանութիւն գրել, այլ ջանալ ցուցանել զառաջինսն մեր և զբուն հին նախնիս» (Մովսես Խորենացի: 1991, 6-8): Մեկ այլ տեղում՝ Նոյի երեք որդիների հետնորդ սերունդների

անձանց, բնակության, գործերի ու ժամանակի վերաբերյալ այլ պատմիչների տարապատմություններում փոխզանազանվող ու նաև փոքրաչափ միայն նման ու ընդհանրական (սովածը՝ քննությամբ վերապատմելը դադարեցնելով՝ նա գրում է. «Եւ այտքիկ բաւական լիցին ասել այսչափ: Ձի եթէ զամենայն եղեալն յաշտարակագործութենէն մինչև առ մեզ ի հաստդութիւն քեզ ի մերումս անել ջանասցուք պատմութեան, եւրբ ապա յըղծալին քո հասանիցեմք գրուցաց պատմութիւնն. մանաւանդ զի և առաջիկայս մեր երկար է գործ, և ժամանակ մահկանացուաց սուղ և անյայտ: Այլ սկսեալ ցուցից քեզ զմերն, թէ ուստի՝ և ո՛րպէս» (Մովսէս Խորենացի: 1991, 28): Իսկ մեկ այլ էջում գրում է. «Բազում ինչ զկնի այտքիկ պատմի ի մատենին, այլ մեք՝ որ ինչ պիտոյն մերոյ հաւաքմանս է, շարեացուք» (Մովսէս Խորենացի: 1991, 37):

Ըստ Մովսէս Խորենացու, ընդհանրապես՝ պատմության և հատկապես՝ հայոց պատմության առարկան **մարդկային, որում նաև հայոց ազգի, ինքնության, կյանքի ու մշակույթի նշանակալի եղելումն է:** Այսու և՛ պատմության՝ ըստ առարկայի սահմանում.

Պատմությունը գիտություն է՝ մարդկային, որում և՛ հայոց, ինքնության, կյանքի ու մշակույթի նշանակալի եղելումը՝ պատճառով հանդերձ, հետազոտող:

Վերոբերյալ բոլոր սահմանումներում «նշանակալի» հասկացությունը կարիք ունի լուսաբանման և հստակամտորեն բացորոշման: Երբ ընտրություն է կատարվում, թե աստվածային ու մարդկային իրողություններից՝ «ի՞նչերը» և «ի՞նչպիսի՞ ինչերը» ընդգրկել պատմության ուսումնասիրության առարկայական ոլորտում և ասվում է թե՛ մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի **ոչ ամենայն ու բովանդակ, այլ՝ միայն նշանակալի** եղելումը, արդյոք, աստ ևս չկա՞ ուսումնասիրության հարցադրություն ու ընտրություն՝ «ի՞նչպիսի՞» նշանակալիության:

Մարդկային իրողությունները կարող են լինել բազմալ նշանակալիությամբ՝ քաղաքականորեն, սոցիալականորեն, մշակութային և այլն: Ինչպիսի՞ նշանակալիություն ունեցող մարդկային իրողություններն են ընդգրկվում Մովսէս Խորենացու պատմագիտական հետազոտության առարկայական տիրույթում: Նրա պատմահայեցողության տեսադաշտ են մատչում ու հետազոտության առարկա դառնում իրեն առձեռն և-կամ հիշելի աղբյուրներից բոլոր այն իրողությունները, որ և հնարավորություն կընձեռեն հասկանալ ազգի ինքնության ու կյանքի նախկին ու նաև այժմյան որպիսությունը՝ ոչ միայն **իրագործվածությունը**, այլև **պոտենցիան:** Եվ այդ կնշանակի, որ նրա երկում ընդգրկվում են **մշակութային, քաղաքականորեն, սոցիալականորեն, ... նշանակալի առավելություն կամ նվազություն ցուցանող՝ հայոց ինքնության ու կյանքի կարգավորությունը, իրադարձություններն ու գործերը:** Մարդկային ինքնությունն ու բովանդակ կենսակերպը, առանձնակեցությունն ու համակեցությունը, այսու և՛ մարդկային ինքնության գոյության ու այլ ինքնությունների հետ գոյակցության **կերպը** հատկորոշող քաղաքական, սոցիալական, տնտեսական, ռազմական, իրավական, ... նշանակալիություն իրենցում հայտող ամենայն ապրման արտահայտություն, միտք, խոսք, գործ ու կառույց, ըստ էության, մարդկային մտքի, հոգու և ձեռքի կերտվածք, միով բանիվ՝ հենց մշակույթ են ամենալայն ըմբռնմամբ:

Այն բոլորը, ինչը որպէս մարդկային բազմաբովանդակ կյանքի ատրիբուտներ, նշում ենք որպէս քաղաքական, սոցիալական, տնտեսական, իրավական, ... և մեկնորոշելով ի մի բերում ու կոչում՝ **մշակութային**, կարելի է նաև կոչել **քաղաքակրթական:** Կյանքի եղելումի առանձնահատկությունների այսկերպ միաբերող բնորոշման դեպքում կարող ենք ասել, որ Մովսէս Խորենացու պատմական երկում ընդգրկվում են **քաղաքակրթորեն նշանակալի** առավելություն կամ նվազություն ցուցանող՝ հայոց ինքնության ու կյանքի կարգավորությունը, իրադարձություններն ու գործերը: Պատմության վերոբերյալ սահմանումներում «ի՞նչպիսի՞ նշանակալիություն ունեցող առարկան» կարելի է, այսպիսով, բացորոշել՝ «մշակութային կամ քաղաքակրթորեն նշանակալի»: Խորենացու պատմագիտական հայեցակարգի առնչությամբ այդ հասկացության գործածությունը տեքստի բուն ասելիքին համապատասխան՝ ճշմարտորեն արդարաբան և օրինավոր է, քանզի իր երկում Պատմահայրը բազմիցս՝ նախնյաց ու նաև ներկայի բովանդակ կենցաղավարության բարեկարգության և-կամ անբարեկարգության

գործերի վերաբերյալ իր դրվագապատումներում ու հենց «Ողբ»-ում ընթերցող մտքին «յանդիման է կացուցանում» (Մովսես Խորենացի: 1991, 7, 45) հայոց բովանդակ կյանքը բնորոշող «քաղաքակրթական» որպիսության առանձնահատկություններ: Այսկերպ ճշգրտող հավելմամբ՝ **պատմությունը գիտություն է՝ մարդկային ինքնության ու բովանդակ կյանքի մշակութային և-կամ քաղաքակրթորեն նշանակալի եղելումի իրադարձությունների ու գործերի՝ պատճառով հանդերձ, որպիսությունն ուսումնասիրող և բացահայտող:**

Այս և հետագա բոլոր սահմանումների վերջում ասելով **«բացահայտող»**, հարկ է նկատի ունենալ՝ **«հասկացող** (կամ՝ հասկացման ձգտող) **ու մեկնողաբար բացորոշող»:** Մովսես Խորենացին իր պատմության հյուսման մեջ ներընդգրկելով Հայոց Մեծաց՝ ազգի կենսակերպի բարեկարգմանն ուղղորդված նշանակալի գործեր, ըստ էության, պատմում է մարդկային և կոնկրետորեն՝ **հայոց ինքնության ու կյանքի կարգավորության ու հենց բարեկարգության առավելություն և-կամ նվազություն:** Այսկերպ մեկնորոշմամբ՝ կարելի է ամրագրել պատմության՝ ըստ առարկայի առավել ճշգրիտ ու բովանդակ սահմանում (տեսական)։

Պատմությունը գիտություն է՝ կյանքի նախկին և երբեմն նաև ներկայում դեռ շարունակական եղելումի մշակութային և-կամ քաղաքակրթորեն նշանակալի բարեկարգության առավելության կամ նվազության, իրադարձությունների ու գործերի «ի նչ», «ինչպիսի՞ ինչ» ու «ինչպե՞ս» գոյության որպիսությունը՝ պատճառով հանդերձ, բացահայտող:

Ըստ Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգի, պատմության՝ ըստ առարկայի մեկ այլ սահմանում է (տեսական) նաև հետևյալը բանաձևը։

Պատմությունը գիտություն է՝ մարդկային ու հենց հայ ազգի ինքնության և բազմաբովանդակ կենսակերպի հաստատում և մշակութային ու քաղաքակրթական կերպավորում ստացած անցյալի ու ներկայի որպիսության՝ պատճառներով հանդերձ կայացումը բացահայտող:

Մարդկային բազմաբովանդակ կյանքի ատրիբուտները ժողովելով «մշակութային»-ի կամ «քաղաքակրթական»-ի անվան ներքո, այնուամենայնիվ, լիովին չի լուծվում ինդրի առավել խորությամբ հասկացմանն ուղղորդող այն հարցը, թե՞ դրանց նկատմամբ կոնկրետ որո՞նք է Պատմահայրը դիտում հիմնորոշ և հենց **այդտեսա՛կ** կարգավորության առավելությունն ու նվազությունը, իրադարձություններն ու գործերն ընդգրկում պատմության առարկայում: Հերմենևտիկական մեթոդաբանությամբ Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգի և ըստ այդմ՝ նաև պատմության իսկության բացորոշմանը նվիրված մեր այլ աշխատություններում բացահայտվել է, որ մարդկային, որում և՛ հայոց, ինքնության, և բազմաբովանդակ՝ քաղաքական, ռազմականտն, տնտեսական, մշակութային, իրավական,... կյանքի որպիսության «ի նչ» ու «ինչպե՞ս» եղելումի նշանակալի իրադարձությունները, գործերն ու կարգավորությունը, ընդգրկելով պատմության ուսումնասիրության առարկայում, հիմնարար ու որոշիչ է դիտում՝ հասկանալ ու մեկնողաբար բացորոշմամբ՝ ի պատմություն հյուսել **իմաստության, ամենայն առաքինության ու բարեկարգության առավելության կամ նվազության իսկությունը ցուցանող իմաստները, որոնցում և՛ իմաստության խորհուրդները:**

6. Իսկ ո՞րն է պատմության **կատարումը:** Կատարումն այն է, ինչն իր ուսումնասիրության առարկայի նկատմամբ որպես իր սկզբունքային անելիք՝ դիտավորություն ունի և ըստ այդմ՝ կերպարանվում ու իրագործվում է պատմությունը՝ որպես գիտություն: Պատմության՝ ըստ առարկայի ու կատարումի (տեսական) սահմանման բանաձևը նախնականորեն կընդունի հետևյալ տեսքը։

Պատմությունը գիտություն է՝ կյանքի նախկին և-կամ ներկա նշանակալի եղելումը՝ պատճառով հանդերձ, հետազոտող և որպիսությունը բացահայտող:

Սակայն, ինչ ասել է՝ բացահայտել առարկայի որպիսությունը: Գիտության և կոնկրետաբար նաև պատմագիտության կատարումը հարկ է, որ լինի իր ուսումնասիրության ենթակա տիրույթի, նույն է թե՞ իր առարկայի **իսկության** բացահայտում: Հարկ է ամրագրել, որ **իսկության բացահայտումը** ամենայն գիտության համընդհանուր, համագիտական և, մասնավորապես, պատմագիտության կատարումն է: Իսկություն բացահայտող կատարումն է կայացնում

գիտական գիտելիքը և հենց գիտությունը որպես այդպիսին: Պատմության՝ ըստ առարկայի վերոբերյալ բոլոր սահմանումները կարելի է այժմ արդեն նաև ձևակերպել՝ բացորոշ արտահայտելով պատմագիտությունը և սկզբունքորեն ամենայն գիտությունը գոյացնող ու այդկերպ՝ էական կատարումի առանձնահատկությունը՝ **խսկության** բացահայտումը: Պատմության կատարումի այդկերպ ըմբռնմամբ՝ սահմանվում է պատմության մեկ-միասնական գործառնության դեռ միայն **տեսական** բաղադրիչը: Ըստ այդմ՝ կարելի է ձևակերպել պատմության ամբողջական՝ ըստ իր առարկայի ու կատարումի (տեսական) սահմանման բանաձև.

Պատմությունը գիտություն է՝ մարդկային, որում և՛ հայոց, ինքնության, կյանքի ու մշակույթի նախկին ու նաև ներկա նշանակալի եղելումի իրադարձությունների, գործերի ու կարգավորության՝ պատճառով հանդերձ, և հենց այդ նշանակալիության խսկությունը բացահայտող:

Կարելի է սահմանել նաև այլ կերպ.

Պատմությունը գիտություն է՝ մարդկային ինքնության ու իր կենսաշխարհի, կենսակերպի ու մշակույթի նախկին՝ ընդհուպ մինչև ներկան, «ի՞նչ ու ինչպե՞ս նշանակալի» եղելումի խսկությունը հայտող իմաստի, որում և՛ իմաստության խորհուրդի հասկացման ու մեկնողաբար բացորոշման դիտավորությամբ, կերպարանմամբ ու կատարումով:

Նկատի ունենալով, որ Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգում պատմությունը, որպես հետազոտություն և իմաստային շարադրանք, բացահայտում է իմաստության, ամենայն առաքինության ու բարեկարգության կրթունակությամբ և հենց այդկերպ՝ մշակութորեն ու հենց քաղաքակրթորեն նշանակալի եղելությունների՝ որպես այդպիսին լինելության «գործիքին» ու «կարգը», անշուշտ, «պատճառաւ հանդերձ»⁵ (Մովսես Խորենացի: 1991, 45), պատմության՝ ըստ առարկայի ու կատարումի (տեսական) սահմանման՝ բանաձևը կրնալուի հետևյալ տեսքը.

Պատմությունը գիտություն է՝ մարդկային, որում և՛ հայոց, կյանքի մշակութորեն ու քաղաքակրթորեն նշանակալի եղելումը՝ պատճառով հանդերձ, կայացնող գործությունն ու կարգը և այսկերպ՝ խսկությունը բացահայտող, ըստ մարդկային կարողության:

7. Այն հարցերը թե՛ «ինչպիսի նշանակալիություն ունեցող իրողություններն են ընդգրկվում Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի պատմահետազոտական ոլորտում» և թե՛ «պատմության ինչպիսի՞ կատարում է հասկանում ու իրագործում Պատմահայրն իր երկում», ուղղակիորեն կապվում են Դավիթ Անհաղթի՝ ամենայն գոյավորի վերաբերյալ չորս հարցերից նաև հենց չորրորդի՝ «ինչո՞ւ համար է պատմությունը» հարցի հետ: Ի պատասխան այս հարցի, կարելի է ասել, որ ըստ Խորենացու, պատմությունը մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի ներկայի ու ապագայի լինելիության համար ունի **տեսական ու գործնական** նշանակալիություն և հենց կատարում:

Արդեն ասվեց, որ պատմության տեսական և իր բնույթով անհրաժեշտորեն համագիտական կատարումը **խսկության բացահայտումն է:** Իսկ ինչպե՞ս է ամենայն գիտության համար համընդհանուր այս բանաձևը կոնկրետանում և իր յուրահատուկ արտահայտությունը ստանում հենց պատմության պարագայում: Մովսես Խորենացու հայեցակարգում պատմությունը հետազոտելով **մարդկային, որում և կոնկրետորեն՝ հայոց ինքնության ու կենսակերպի մշակութորեն ու հենց քաղաքակրթորեն առ բարեկարգություն առավելության և-կամ նվազության եղելումը**, ունի դիտավորություն և ըստ այդմ՝ նպատակային ուղղորդվածություն ու կատարում, որպես **տեսական, հասկանալ ու մեկնողաբար բացորոշել ճշմարտությունը և բարին կյանքի նախկին ու նաև ներկա եղելություններում:** Պատմության այս բնույթի տեսական ուղղորդվածությունն ու կատարումը որոշարկում է նրա տեսական նշանակալիությունը: Ինչպես տեսնում ենք, այս բանաձևում որպես տեսական է ներկայանում ոչ միայն ճշմարտության, այլև բարու հասկացումը: Առհասարակ, կատարումի տեսական բաղադրիչ է

դիտվում ճշմարտության հասկացումը, իսկ որպես գործնական՝ բարու գործելը: Սակայն, ինչպես և նշում է Դավիթ Անհաղթը, տեսականում ներկա է նաև գործնականը՝ և գործնականում ներկա է նաև տեսականը, և տեսականն առաջնային է, քան գործնականը՝ «նախ և առաջին տեսականն, վասն զի պատուականագոյն է, քան գործականն (Դավիթ Անյաղթ: 1980, 85, 86) և գործնականը «յետ տեսականին է» (Դավիթ Անյաղթ: 1980, 99), քանզի բարին նախ տեսականորեն հասկացվում է և ապա միայն՝ իրականացվում կյանքում: Այսպիսով, պատմության՝ ըստ առարկայի ու կատարումի միասնական սահմանումը (տեսական) կընդունի հետևյալ տեսքը.

Պատմությունը և հենց հայոց պատմությունը գիտություն է՝ մարդկային, որում և՛ հայոց, ինքնության ու կյանքի նշանակալի եղելումի իրադարձությունների ու գործերի՝ պատճառով հանդերձ, իսկությունը հայտնացույց անող իմաստը և նրանում պահյալ բարենշանակ, որ և՛ բարեկարգության հնարավորություն, անհրաժեշտություն ու նախընտրելիություն ցուցանող, իմաստության խորհուրդը բացահայտող:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ «Իսկ դու, ո՛վ ուշիմ ընթերցատերդ, հայե՛աց ... և զարմացի՛ր» (Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1991, էջ 17 (Ե, 12-14)):
- ² «ո՛վ ուսումնասէր դու և յայտսիկ զմեզ աշխատեցուցանող» (նույն տեղում, էջ 22 (Զ, 11)):
- ³ Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգում պատմումի վարդապետական եղանակի վերաբերյալ տե՛ս Քոչարյան Ռ., Պատմությունը որպես պատմում և պատմումի վարդապետական եղանակը Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգում, (անտիպ):
- ⁴ Պատմվողի և-կամ պատմական գոյավորի վերաբերյալ՝ համառոտ ու նախնական, տե՛ս Քոչարյան Ռ., Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը և պատմության գոյավորության առանձնահատկությունները, գ. Օշական, 1999թ. կոնֆերանսում կարդացված զեկուցման հողվածային տարբերակը – Ռուբիկոն, Եր., 2/10/2006, էջ 14-21, իսկ առավել մանրամասն տե՛ս Քոչարյան Ռ., Պատմական գոյավորը և պատմությունը որպես պատմելիք Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգում (անտիպ):
- ⁵ «...Զպատճառս և զգորութիւն իրացն միայն յայտնելով, և զերկարութիւն գործոյն համառօտ բանիւ յանդիման կացուցանելով» (Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1991, էջ 45):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Անյաղթ, Դ. (1980). Սահմանը իմաստասիրութեան – Երկասիրութիւնը փիլիսոփայականը, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., Եր.,:
- Խորենացի, Մ. (1991). Պատմութիւն Հայոց, Եր., ՀԽՍՀ ԳԱ Հրատ.,:
- Քոչարյան, Ռ. (2006). Հանս-Գեորգ Գադամերի փիլիսոփայական հերմենևտիկան, Եր.,:
- Քոչարյան, Ռ. Խ. (2006). Պատմության մեկնողականությունը և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատության իմաստասիրող առանձնահատկությունը – Ռուբիկոն, Եր., 2/10/2006, էջ 4-12:
- Քոչարյան Ռ. (1984). Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը և պատմության գոյավորության առանձնահատկությունները – Ռուբիկոն, Եր., 2/10/2006, էջ 14-21:
- Аристотель, Сочинения, М., 1984, т. 4.
- Аристотель, Риторика, Поетика, пер. и примеч. О.П. Цыбенко, (Риторика) и В. Г. Аппельрот, (2000). (Поетика), М.,
- Блок, М. (1986). Апология истории, или Ремесло историка. Наука, М.
- Гадамер, Х.-Г. (1988). Истина и метод, Прогресс, М.
- Гуревич, А. Я. (1990). Средневековый мир: культура безмолвствующего большинства, М.,
- Дильтей, В.. Собрание сочинений (в 6-ти томах), «Дом интеллектуальной книги», М., т. 1,3.

- Коллингвуд, Р. (1980). Идея истории: Автобиография, «Наука», М., 1980.
- Шпет, Г. Г.(1989). Герменевтика и ее проблемы—Контекст, литературно-теоретические исследования, Наука, М., с. 231-268; Шпет, Г. Г.(1990). Контекст, с. 219-259 (продолж.);
- Шпет, Г. Г.(1991). Контекст, с. 215-255 (продолж.); Шпет, Г. Г.(1992). Контекст, с. 251-284 (оконч.).
- Шпет, Г. Г. (1988). История как предмет логики – Историко-философский ежегодник, 1988, «Наука», М., 1988, с. 290-320.
- Ricoeur, P. (1982). Hermeneutics and the Human Sciences, Cambridge, New York.

АМИРЯН СЕЙРАН

Кандидат психологических наук, доцент кафедры “Общей психологии” ЕГУ, заведующий НИЛ “Личность и профессиональная деятельность”, кафедра “Общей психологии” ЕГУ

МУРАДЯН Е. Б.

Кандидат биологических наук, старший научный сотрудник НИЛ “Личность и профессиональная деятельность”, кафедра “Общей психологии” ЕГУ

ПСИХОЛОГИЧЕСКАЯ АДАПТАЦИЯ ЛИЧНОСТИ К ТРАНСФОРМИРУЮЩЕМУСЯ ОБЩЕСТВУ

Ключевые слова: *психологическая адаптация; системная социальная адаптация; копинг-поведение; технологии социальных коммуникаций; идеологизацию сознания*

Изменяющееся общество, ускорение мирового развития – характерные черты современности. Современное, постиндустриальное, информационное общество находится на пути усложнения, роста собственной многоликости и многогранности, ведущих к изменению его системной организации.

И в значительной степени данная тенденция обусловлена уровнем развития технологий социальных коммуникаций, которые наряду с духовным и материальным развитием обуславливают прогресс человеческого общества.

Одним из наиболее актуальных вопросов, связанных с глобальными изменениями в жизнедеятельности общества, является понимание влияния специфики развития общества на индивидуальное развитие человека с точки зрения его психологической адаптации к этому обществу.

Так, усложнение социальной среды за счет появления новых видов деятельности, модернизации ранее существующих, ускорения жизненного ритма, роста информационных перегрузок, - все это вкуче предъявляет особые требования к человеку, к его психическим ресурсам.

В психологии принято считать, что адаптация к внешней среде идет через развитие регуляторных возможностей психики. Согласно Мясищеву, психическое - это, прежде всего, система отношений, а обеспечение здоровой психики связано с особенностями взаимосвязи и взаимодействия личности с внешним миром (Баевой 2006). Таким образом, адаптация человека связывается, в некоторой степени, даже отождествляется с успешностью взаимодействия человека на уровне коммуникации с другими людьми. Это один из важнейших факторов осуществления так называемой реальной адаптации.

Адаптацию рассматривают как процесс активного приспособления человека к условиям социальной среды. Причем осуществляться этот процесс может различными способами (Реан 2008):

- 1) активным воздействием на социальную среду, направленными на ее преобразование;
- 2) принятием норм и ценностей, характерных для данной среды;
- 3) использованием обоих перечисленных стратегий.

Также социальную адаптацию рассматривают как результат процесса приспособления к среде, т.е. в данном случае речь идет об отождествлении адаптации с определенным равновесным состоянием личности со средой.

Адаптацию можно рассматривать как поведение личности в рамках социально-значимых норм, направленное на достижение определенного социально-ролевого положения в обществе за счет осуществления общественно-полезной деятельности.

Таким образом, процесс адаптации обеспечивает *состояние* адаптированности.

В качестве возможных механизмов поведения личности, позволяющих ей психологически адаптироваться к стрессовым воздействиям социальной среды

рассматривают механизм защиты и механизм копингов (Маликова, Михайлов, Соломин 2008)

. Причем в качестве адаптивных форм поведения рассматривают копинг-стратегии или стратегии совладания. Копинг-стратегии определяют как зрелое, гибкое поведение личности, направленное на гармоничное взаимодействие со средой. Подобное взаимодействие обусловлено:

во-первых, нацеленностью личности на разрешение проблем в долгосрочной временной перспективе, т.е. человек разрешает проблему так, что повторное ее возникновение в ближайшее время становится маловероятным;

во-вторых, по характеру инструментальной направленности, копинговые стратегии обеспечивают не только личностный комфорт на уровне "самоуспокоения", но и направлены на изменение самой среды, социальных взаимодействий, т.е. человек активно пытается разобраться в проблеме с привлечением всех возможных ресурсов (как внутренних, так и внешних), пытается урегулировать межличностные коммуникации.

В-третьих, с точки зрения функциональной значимости, копинговые стратегии обеспечивают гармонизацию взаимоотношений между средой и личностью, межличностные коммуникации, благодаря чему регулируется также эмоциональное состояние человека;

В-четвертых, копинг-поведение базируется на рефлексии, активном поиске причин возникновения проблем, анализе ситуации, нахождении возможных продуктивных путей разрешения проблем.

На сегодняшний день копинг идентифицируют с приспособляемостью, проявляющейся в адекватности реагирования организма на внешние воздействия; в развитии мощной мотивации в отношении сопричастности к социуму; в способности личности поддерживать психическое равновесие.

Таким образом, о копинг-поведении можно сказать следующее:

А) охарактеризовать его как активное, гибкое, пластичное, зрелое, рациональное и реалистичное;

Б) рассмотреть его в качестве сознательной стратегии преодоления сложных ситуаций с целью адаптации.

Практически копинг-поведение следует рассматривать как обязательное условие для осуществления успешной адаптации.

В этой связи более подробно остановимся на стратегиях поведения, связанных с когнитивной, эмоциональной и поведенческой сферами.

Предлагается выделять следующие виды копингов (Маликова, Михайлов, Соломин 2008: 119):

1. в когнитивной сфере – отвлечение, переключение, принятие ситуации как неизбежной, поиск необходимой информации для объяснения этой ситуации и ее последствий, придание значения и смысла происходящего;
2. в эмоциональной сфере – отреагирование чувств: переживание протеста, злости, временное недопущение чувств, принятие ответственности, пассивное сотрудничество, самообладание и т.д.
3. в поведенческой сфере – уход в работу, проявление альтруизма, компенсация за счет удовлетворения каких-либо собственных желаний, конструктивная активность, активное сотрудничество в изменении ситуации, поиск поддержки.

Процесс активизации копинг-поведения обусловлен когнитивной оценкой личности того или иного события как нарушающего равновесие между человеком и средой, а успешность действий по совладанию зависит от копинг-ресурсов личности (физические, социальные, психологические, материальные).

В этом ракурсе, на наш взгляд, понимание *психологической* адаптации личности связано:

Во-первых, с «адаптацией по внутреннему критерию» (Реан 2008), речь идет об односторонней, неполной, но вполне возможной форме адаптации, когда на первый план выходит не столько социально-нормативная адаптированность человека, а его

самоощущение, т.е. психоэмоциональная стабильность, выражающаяся в переживании комфорта, удовлетворенности, гармонии с самим собой;

Во-вторых, с «системной социальной адаптацией», т.е. с реальной адаптацией как по внешнему, так и по внутреннему критерию, когда личность способна к самоактуализации в гармонии с реальным социумом.

С точки зрения психологической адаптации именно вопрос относительно способности личности к самоактуализации в гармонии с социумом представляется наиболее актуальным. В связи с этим необходимо затронуть проблему - насколько современное общество способствует гармоничному развитию человека, раскрытию его личностного потенциала, предоставляет возможность самореализации, самоактуализации личности в различных сферах жизнедеятельности.

В этой связи весьма интересной представляется точка зрения относительно позитивного влияния современной эпохи на человека за счет прогресса в области технологий социальных коммуникаций.

Благодаря современным коммуникациям становится возможным единение людей друг с другом, переживание ими общности с другими людьми, сопричастности к различным событиям, вовлеченности в некий единый процесс общения. (Маклюен 2003). Рассматривается возможность становления всемирной цивилизации как общества «гармоничной коммуникации и образного мышления, являющихся неперенным условием формирования высших культур» (Соколов 2002: 199).

Обоснование столь оптимистичного взгляда на развитие общества в некоторой степени связано с идеями из области антропологии относительно того, что кооперативные модели поведения обеспечивают безопасность и защиту, что дает возможность социального и духовного развития человеческих способностей.

Также подобный прогноз, в некотором смысле, обусловлен представлениями о функциональной нагруженности коммуникативных систем, что отражено в одном из возможных подходов их дифференциации по содержанию. Так, предлагают различать такие коммуникативные системы как: (Викторов 2008: 537):

- 1) новационная – приобщающая потребителя информации к новым для него знаниям о свойствах и признаках явлений, , объектов и процессов, о технологиях и нормах осуществления коммуникативно- личностной деятельности, актов поведения и взаимодействия, о языках, знаках и средствах коммуникативной системы, обучающая его социальному опыту сообщества или человечества в целом;
- 2) ориентационная – помогающая потребителю информации ориентироваться в системной структуре природного и социального пространства, в иерархической соотнесенности его элементов, социализирующая и инкультурирующая индивида в сообществе его проживания, формирующая его экзистенциальные и ценностные ориентации, задающая критерии оценочных суждений, приоритетов выбора и т.д.;
- 3) стимуляционная – воздействующая на мотивационные основания социальной активности людей, актуализирующая знания человека об окружающей действительности и технологиях деятельности, а также стремление к получению недостающих знаний ради удовлетворения его социальных притязаний и др.;
- 4) корреляционная – уточняющая или обновляющая отдельные параметры перечисленных видов знаний, ориентаций, стимулов.

Как можно заметить, в глобальном масштабе бурное развитие технологии социальной коммуникации предоставляет человеку возможность развиваться, реализовывать себя в различных сферах жизнедеятельности, создает реальные условия для совершенствования и расширения его коммуникативного опыта, способствует приобщению человека к научным и культурным достижениям мирового сообщества.

Подобная перспектива развития общества хоть и обнадеживает, однако несколько сомнительна. На сегодняшний день остро встает проблема одностороннего развития общества за счет научно-технического прогресса, экономического роста, появления различного рода “индустрий”, тогда как наиболее значимые стороны общественного развития: уровень культуры, духовно-нравственный потенциал человека – переживают упадок, даже, в некотором смысле, деградацию. Получается, что современное общество в

результате ускоренного темпа развития, усложнения, технологизации и модернизации различных видов деятельности ставит человека в ситуацию постоянного выбора, предъявляет к нему специфические требования: постоянное самосовершенствование интеллектуальной сферы по технологическому вектору развития, особенно это положение касается людей, связанных с инновационными технологиями. В то же самое время никаких реальных запросов со стороны общества по поводу развития морально-нравственных качеств человека не возникает, что в целом может привести к деформации развития общества. Э.Фромм говорил о том, что развитие общества будет определяться не только тем, что человек имеет, сколько тем, кто он есть, что он может сделать с тем, что имеет.

Более того, можно наблюдать массовую «идеологизацию сознания» людей по бездуховному вектору развития, в результате чего формируется ценностно-смысловая сфера человека определенной направленности: обесцениваются духовно-нравственные личностные качества; утрачивается ценность самой человеческой жизни; «воспеваются» ценность человека с позиции его функциональной значимости: обладает властью, имеет деньги и т.д. Подобное насаждение общественных «ценностей» становится возможным именно в результате развития коммуникативных технологий, за счет так называемых массовых коммуникаций (например СМИ, Интернет).

При подобных тенденциях развития общества рассмотрение адаптации в качестве позитивного феномена становится несколько сомнительным. В такой ситуации: несоответствия социальных норм законам общественного развития - предполагается в качестве адаптивного поведения рассматривать некоторые формы неадаптивного поведения, нацеленные на преобразование, улучшение социальных норм (Егоров 2006).

Также в современном обществе в результате совершенствования технологий социальных коммуникаций, наблюдается подмена опыта реального, непосредственного общения - опосредованным, виртуальным, что далеко не всегда позитивно влияет на развитие человека. Наблюдается тенденция примитивизации содержания коммуникации, снижение уровня «вербального интеллекта», теряется способность адекватного, эмпатичного восприятия людей друг другом.

Подобные проблемы предъявляют особые требования к психологической адаптации человека, к его умению подбирать и использовать ансамбли копинговых стратегий поведения для установления гармоничных отношений с социальной средой.

ЛИТЕРАТУРА

- Викторов, А. Ш. (2008). Введение в социологию безопасности. Курс лекций. Москва, "Канон" РООИ "Реабилитация",.
- Егоров, А. Ю. (2006). Нейропсихология девиантного поведения. СПб.: Речь,.
- Маклюен, М. (2003). Понимание медиа: внешние расширения человека. Москва
- Маликова, Т. В., Михайлов, Л.А., Соломин, В.П., Шатровой, О.В.(2008).
Психологическая защита: направления и методы: Учебное пособие. СПб.: Речь,
- Баевой, И. А. (ред) (2006). Обеспечение психологической безопасности в образовательном учреждении: практическое руководство. СПб. Речь,.
- Реан, А. А. (2008). Психология и психодиагностика личности. Теория, методы исследования, практикум.- СПб.: Прайм-ЕВРОЗНАК,
- Соколов, А.В. (2002). Общая теория социальной коммуникации. Москва

ԱՎԱԳԻՄՅԱՆ ՌՈՂԻԿ

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ

ԱՎԱԳԻՄՅԱՆ ՀԱՅԿ

Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոն, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԴԵՎԻԱՑԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հոդվածում ներկայացված են դեռահասների շեղվող վարքի սոցիալ-հոգեբանական պատճառները փոխակերպվող հասարակության մեջ, հետազոտությունների արդյունքները, որոնք կատարվել են Վանաձորի մանկատան թիվ 2, 3 հատուկ դպրոցների և Ստեփանավանի թիվ 1 հատուկ դպրոցի սաների հետ ու Վանաձորի թիվ 1, 6, 11 միջնակարգ դպրոցների աշակերտների հետ: Հետազոտության արդյունքները և դրանց սոցիալ-հոգեբանական վերլուծությունը թույլ են տալիս հանգելու հետևյալ եզրակացությանը. դեռահաս վարքի տեր դեռահասների ընդհանուր սոցիալ-հոգեբանական բնութագրում առանձնացվում են ցուցանիշներ, որոնցով պայմանավորվում են նրանց վարքագծային շեղումները: Այդ պատճառներից են դեռահասի ցածր սոցիալական կարգավիճակը հասարակության մեջ, ծնողների և մանկավարժների կողմից ուշադրության և հոգածության պակասը, ինքնադրսևորվելու հնարավորության սահմանափակվածությունը, ներքին տագնապայնությունը և անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ և այլն: Դեռահաս երևույթները յուրատիպ են յուրաքանչյուր հասարակության համար և կախված են պատմամշակութային ավանդույթներից, տնտեսական-քաղաքական հարաբերություններից և մի շարք այլ սոցիալ-հոգեբանական գործոններից:

Հանգուցային բառեր և արտահայտություններ` դեռահասների դեռահաս վարք, դեյինկվենտ վարք, փոխակերպվող հասարակություն, սոցիալ-հոգեբանական պատճառներ, ազդեցիկ, ադապտացիա, դեզադապտացիա, սոցիալականացում:

Հայաստանի Հանրապետությունում սոցիոմշակութային փոփոխությունները, տնտեսական ճգնաժամի և 1988 թ. երկրաշարժի ու պատերազմի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակների պայմաններում կյանքը մեր հասարակության անդամների, ինչպես նաև դեռահասների մոտ առաջ է բերել բազմաթիվ սոցիալ-հոգեբանական խնդիրներ: Վերջին ժամանակներս հասարակության յուրաքանչյուր անդամի կյանքը կապված է բազմաթիվ դժվար իրադրությունների հետ, որոնցում նա արդեն պետք է կողմնորոշվի, գտնի ճիշտ լուծումներ, ուղևներ: Բացի դրանից, մշտապես առաջացող դժվար, երբեմն անլուծելի թվացող խնդիրները, որոնք վերապրվում են մարդու կողմից որպես ճգնաժամ և թվում է, որ դրանից դուրս գալու միջոցներ չկան:

Կյանքի արագ տեմպը, իրադարձությունների մշտական անկայունությունը և փոփոխականությունը հանգեցրին մարդկանց մոտ վարքի տարբեր տիպերի առաջացման. հիմնականում անհաստների հատուկ կոմունիկատիվ վարքի հասարակության մեջ, այդ թվում` դեռահաս և դեյինկվենտ վարքի: Մի մասին վերջերս բնորոշ է դարձել մեկուսացումը, մյուսներին` ռիսկի պատրաստականությունը և այլն: Ստեղծվում է միջավայր, որն ապահովում է սոցիալ հատկանիշների դրսևորման հնարավորությունը, ամրապնդվում են կամ միջավայրին հակադրվելու, կամ միջավայրից պաշտվանվելու մարդու գործառույթներ:

Դեռահասի արտահայտվում է որպես անհամաձայնության ձև, որպես պաշտպանական մեխանիզմ միջավայրի ճնշման ազդեցության նկատմամբ: Այնուամենայնիվ, ցանկացած հանգամանքներում ճգնաժամային դժվարությունները անհրաժեշտ է լուծել, ինչի հետ կապված`

ցանկացած մարդ հոգեբանորեն մշակում է դրանց հանգուցալուծման իր եղանակները և գործիքները: Ներկայումս մարդու հոգեկանն ստիպված է կատարել որոշակի փոփոխություններ սեփական պատկերացումների, գործողությունների և վարքի մեջ, նաև նորից ստեղծել անձի պահանջվող հատկանիշները, ակտուալիզացնել առանձնահատուկ հոգեկան փոփոխություններ: Ընդհանուր առմամբ, անորոշության և փոփոխությունների ժամանակաշրջանը, որը բնորոշ է ժամանակակից իրականության պայմաններին, պրոյեկտվում է նաև մարդու հոգեկանի վրա: Մարդու հոգեկանն ստիպված է արձագանքել սոցիալական իրականության մարտահրավերներին: Դրա համար նախ և առաջ, մարդը պետք է պատրաստ լինի կառուցելու անհրաժեշտ փոփոխությունները և կատարելու պահանջվող փոխակերպումները: Սակայն հաճախ ժամանակակից իրականության արագ փոփոխվող իրադրությունները մարդուն դնում են անելանելի դրության մեջ, և ինքն անպատրաստ է լինում հոգեկան փոխակերպումների: Այդ պայմաններում մարդը, որպես կանոն, գործում է փորձի և սխալների մեթոդով, այլ ոչ թե ծրագիրը կառուցում է կառուցողական հիմքի վրա: Դրա հետ միասին հասարակության մեջ կատարվող փոփոխությունները, ուղիղ համեմատական չեն հոգեկանում կատարվող փոփոխություններին, սակայն աստիճանաբար հնարավորություններ են ստեղծում անձի վարքի և կառուցվածքում փոխակերպումների ձևավորման համար:

Հասարակական գործընթացների և սոցիալական խմբերի ազդեցությունը մարդկանց վարքի վրա առաջնահերթ դիտարկվում է սոցիոլոգիական մոտեցման շրջանակներում: Սոցիոլոգիական տեսությունները դիփանտ վարքը դիտարկում են հասարակական գործընթացների, համակեցության և սոցիալական նորմերի համատեքստում, որոնք հաստատված են տվյալ հասարակության մեջ: Սոցիալական դիփացիաները սովորաբար ենթարկվում են սոցիալական օրինաչափություններին, նրանք կախված են ժամանակաշրջանից և հասարակությունից, դրանք կարելի է կանխատեսել, մի շարք դեպքերում էլ կարելի է կառավարել:

Տվյալ ուղղության առավել հայտնի ներկայացուցիչներ են հանդիսանում Օ. Կոնոր, Գ. Թարդը, Ա. Քեթլեն, Է. Դյուրքհեյմը, Մ. Վեբերը, Թ. Փարսոնսը, Ռ. Մերտոնը և ուրիշներ: Հեղինակների կարծիքով՝ դիփացիաների հիմնական պատճառներից մեկը կոնֆլիկտն է նպատակների և նրանց հասնելու միջոցների միջև, որը կարող է հանգեցնել անումիկ լարվածության, ֆրոստրացիայի և ադապտացիայի անօրինական եղանակների որոնման: Տվյալ հանգամանքով է մասամբ բացատրվում հանցավորության հարաբերականորեն բարձր մակարդակը սոցիալական ստորին շերտերի մեջ:

Սոցիալական դիփացիաների այլ օբյեկտիվ գործոններ են ճանաչվում՝ տարբերությունները սոցիալական փոխգործողության մասնակիցների միջև և սպասելիքների չիրականացումը (Թ. Փարսոնս), անհամապատասխանությունը բարիքների բաշխման ու մարդկանց անձնային հատկանիշների միջև (Պ. Սորոկին), դիփանտային ենթամշակույթի նորմերի և ուսուցման ազդեցությունը (Ռ. Կլաուորդ, Լ. Օուլին): Այսպես՝ դիփանտաբան Ե.Ջմանովսկայան և ճանաչված սոցիալական հոգեբան Ի.Կոնը գտնում են, որ վաղ մանկությունից դիփանտային ենթամշակույթում (հանցավոր, կոնֆլիկտային կամ ռետրիստական) ապրող անհատը մեծ հավանականությամբ կդրսևորի դիփանտ վարքի համապատասխան ձևերը (Клейбер 2001: 13) :

Օբյեկտիվ սոցիալական գործոնների հետ մեկտեղ գործում են նաև դիփանտ վարքի սուբյեկտիվ պատճառները: Ստիգմատիզացիայի տեսության համաձայն (Է. Լեմերտ, Գ. Բեքերը)՝ դիփացիաները այն բանի հետևանքն են, որ հասարակությունն ինքն է անհատին կպցնում համապատասխան պիտակներ՝ կոնկրետ մարդու գործողությունները հարաբերակցելով վերացական կանոնների հետ (առաջնային դիփանտություն): Աստիճանաբար ձևավորվում է վարք, որն անհատին ստիպում է հետևել դիփանտ դերին (երկրորդային դիփանտություն) (Выготский 1984: 13):

Սազերլենդը 1939թ. ձևակերպեց դիֆերենցված ասոցիացիայի տեսությունը, ըստ որի՝ դևիացիան վարքի բարդ ու տարբերակված (դիֆերենցված) ձև է: Դրան սովորում են ինտերակցիայում (փոխգործողության մեջ): Այդ գործընթացն իր մեջ է ներառում դևիանտ մոտիվացիայի յուրացումը, դևիանտ վարքի արդարացումը ու նրա իրագործման տեխնիկաները (Выготский 1984: 15):

Սոցիոլոգիական տեսությունները չեն բացատրում, թե ինչու միևնույն պայմաններում տարբեր մարդիկ ցուցադրում են սկզբունքորեն տարբեր վարք, օրինակ՝ աղքատ շերտերի ոչ բոլոր ներկայացուցիչներն են դրսևորում դեյվիզմի վարք: Հարկ է ընդունել, որ սոցիալական պայմաններն իրոք կանխորոշում են սոցիալական դևիացիաների բնույթը (տվյալ երևույթների տարածման չափը հասարակության մեջ կամ սոցիալական խմբում), սակայն դրանք բավարար չեն կոնկրետ անձի շեղվող վարքի պատճառները և մեխանիզմները բացատրելու համար:

Այդ պատճառով անհրաժեշտ է դիտարկել նաև անձի զարգացման սոցիալ-հոգեբանական պայմանները: Դասական բիհեյվորիզմի ներկայացուցիչներն (Է. Թորնդայկը, Ջ. Ուոթսոնը, Բ.Սքինները) առաջարկեցին մարդկային վարքի հիմնական սկզբունքներն ու մեխանիզմները դիտարկել որպես միջավայրի հետ անձի փոխգործողության գործընթաց: Բիհեյվորիստական դրույթներում շեղվող վարքը կարելի է սահմանել որպես միջավայրի բարդ պայմանավորվածության արդյունք (Торндайк, Уотсон 1988; Хельсон-Джоунс 2000):

Սոցիալ-կոգնիտիվ տեսությունը կամ սոցիալական սովորեցման տեսությունը, որը մշակվել է Ա.Բանդուրայի կողմից, իրենից ներկայացնում է սովորեցման դասական տեսության զարգացում: Սոցիալական սովորեցման տեսության համաձայն՝ բնածին են հանդիսանում միայն տարրական ռեֆլեքսները՝ մարդու հնարավորությունների սահմանը: Մարդու ցանկացած վարք սոցիալապես պայմանավորված է, քանի որ նրա հիմքում ընկած են բարդ հմտություններ, որոնք պահանջում են հատուկ սովորեցում: Այսինքն՝ ազդեցիվ վարքը սովորում են, քանի որ ազդեստրը պետք է իմանա, որ ցավ է պատճառում, ինչ է անհրաժեշտ անել և ինչ պայմաններում: Հոգեֆիզիոլոգիական, այդ թվում՝ ժառանգական մեխանիզմների ազդեցությունը թեկուզ առկա է, սակայն որոշիչ դեր չի խաղում (Торндайк, Уотсон 1988: 11):

Սովորեցման տեսությանը շատ մոտ է կոգնիտիվ ուղղությունը, որը նույնպես զարգացել է բիհեյվորիզմի հիմքի վրա: Ա.Բեկի կոգնիտիվ մոդելի և Ա.Էլիսի ռացիոնալ-էմոտիվ տեսության համաձայն՝ վարքի շեղման հիմքում ընկած են ոչ ադապտիվ մտածական սխեմաներ: Ոչ ադեկվատ կոգնիցիաները գործի մեջ են դնում ոչ ադեկվատ զգացումներ ու գործողություններ: Մթերեսային իրադրությունների մեկնաբանման ձևը մարդկանց կողմից կանխորոշում է նրանց վարքը (Хельсон-Джоунс 2000: 19):

Լ.Ս.Վիգոտսկին գտնում էր, որ դեռահասի հոգեբանական զարգացման առանցքն է հետաքրքրությունների խնդիրն անցումային տարիքում: Մարդու բոլոր հոգեբանական գործառույթները զարգացման յուրաքանչյուր աստիճանում գործում են ոչ թե չհամակարգված, պատահական ձևով, այլ որոշակի համակարգով՝ ուղղորդվելով անձի մեջ կուտակված որոշակի ձգտումներով, հակումներով և հետաքրքրություններով: Ըստ հեղինակի՝ մեր վարքի այդ շարժիչ ուժերը փոխվում են յուրաքանչյուր տարիքային փուլում, իսկ նրանց էվոյուցիան ընկած է վարքի փոփոխության հիմքում (Выготский 1984: 6):

Լ.Ս.Վիգոտսկին գրում էր, որ մարդու վարքը ոչ միայն կենսաբանական էվոյուցիայի արդյունք է, որը հանգեցրել է մարդկային տիպի առաջացմանը՝ նրան բնորոշ բոլոր հոգեֆիզիոլոգիական գործառույթներով, այլև պատմական կամ մշակութային զարգացման արդյունք է: Վարքի զարգացումը կանգ չի առել մարդկության պատմական գոյության սկզբի հետ, սակայն այն չէր էլ անցել այն ուղիներով, որոնցով ընթանում էր վարքի կենսաբանական էվոյուցիան (Выготский 1984: 47):

Վ.Լևինը դեռահասության տարիքի երևույթը մեկնաբանում էր իր դաշտի տեսության: համաձայն Լա ուշադրություն էր դարձնում այդ շրջանին բնորոշ կոգնիտիվ դիսբալանսի վրա, այսինքն՝ շեշտը դնում էր մանկությունից մեծահասակի կարգավիճակին անցնելու շրջանում

միջավայրում կողմնորոշման եղանակների անորոշության վրա: Նրա տեսության համաձայն՝ մանկությունից չափահասության անցումը հասկացվում է որպես խմբային պատկանելության փոփոխություն, անցում երեխաների հանրությունից մեծահասակների հանրություն: Նման տեղափոխությունը անցում է կենսական տարածության անձանոթ, կոգնիտիվորեն չկառուցակարգված ոլորտ: Կ.Լ.Լինը այդ տեղափոխությունը համեմատում է անձանոթ քաղաքում հայտնվելու հետ: Անհատի համար պարզ չէ, թե ինչի հետ է կապված իր նոր դիրքը և չգիտի, թե որ ուղղությամբ է նրան անհրաժեշտ շարժվել, որ հասնի նպատակին, մի գուցե նույնիսկ հրաժարվել դրանից: Հստակության բացակայությունը դեռահասի վարքի անկայունության պատճառ է: Նա վստահ չէ, որ ճիշտ է վարվում, քանի որ գտնվում է անձանոթ միջավայրում: Այդ անվստահությունն աճում է, եթե երեխան անտեղյակ է մեծահասակների աշխարհից, որի մեջ նա պետք է մուտք գործի:

Կ.Լ.Լինը առաջ քաշեց դեռահասության տարիքի հոգեբանության համար մի շարք կարևոր խնդիրներ: Նախևառաջ դեռահասի մեծահասակների աշխարհում կողմնորոշման և դեռահասի կողմից սեփական կենսական պլանների ու նպատակների կառուցման խնդիրն է:

Խորհրդային հոգեբաններ Լ.Ս.Վիգոտսկին, Ա.Ն.Լեոնտևը, Բ.Գ.Անանևը, Դ.Բ.Էլկոնինը և այլոք գործունեության մեջ առանձնացնում են երկու կողմեր. 1. առարկայական և 2. մարդկանց և հասարակության հետ փոխհարաբերությունների զարգացմանն ուղղված: Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել էր, որ դեռահասության տարիքի համար բնորոշ է փոխհարաբերությունների նորմերի յուրացման հարցում գործունեության ուղղվածությունը:

Հատուկ ուշադրության է արժանի շեղվող վարքի պատճառականության, պայմանավորվածության հարցը, որն ընկալվում է որպես գործոնների հանրագումար, որոնք առաջացնում, դրդում, ուժեղացնում կամ աջակցում են շեղվող վարքին: Դեկանտ վարքը պայմանավորող գործոնները ազդում են սոցիալական կազմակերպության տարբեր մակարդակների վրա, որտեղ անձը դրանց ենթահամակարգերից մեկն է: Հասարակություն-անձ համակարգը միաժամանակ գործում է մի քանի մակարդակներում՝ գեոֆիզիկական, մակրոհասարակական, սոցիալ-խմբային, միկրոսոցիալական, անհատական-անձնային, հոգեֆիզիոլոգիական:

Ե.Վ. Չմանովսկայան սահմանել է գործոնների հետևյալ խմբերը, որոնք դետերմինավորում են անձի շեղվող վարքը.

1. ֆիզիկական միջավայրի արտաքին պայմանները,
2. արտաքին սոցիալական պայմանները,
3. ներքին ժառանգական-կենսաբանական և կոնստիտուցիոնալ նախադրյալները,
4. շեղվող վարքի ներանձնային պատճառները և մեխանիզմները (Змановская 41):

Շեղվող վարքի առաջացման արտաքին սոցիալական պայմաններն են.

1. հասարակական գործընթացները (սոցիալ- տնտեսական իրադրությունը, պետական քաղաքականությունը, ավանդույթները, նորաձևությունը, զանգվածային լրատվության միջոցները և այլն),

2. սոցիալական խմբերի բնութագրումները, որոնց մեջ ներգրավված է անձը (ռասայական և դասակարգային պատկանելությունը, էթնիկական դիրքորոշումները, ենթամշակույթը, սոցիալական կարգավիճակը, պատկանելությունը ուսումնամասնագիտական խումբը, ռեֆերենտային խումբը),

3. միկրոսոցիալական միջավայրը (ընտանիքի կենսատճը և կենսամակարդակը, հոգեբանական մթնոլորտն ընտանիքում, ընտանեկան դաստիարակության ոճը, ընկերները, այլ նշանակալից մարդիկ) (Змановская 2006: 42):

Դեռահասների դեկանտ վարքի պատճառականության բացահայտման համար մեր ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք որոշակի ընտրանքների բավականին լայն հետազոտություն: Մենք կարողացանք բավականին ներկայացուցչական ընտրանքի վրա

համեմատել շեղվող վարքի ախտորոշման արդյունքները երկու սկզբունքորեն տարբեր ձևով կողմնորոշված մեթոդիկաներով:

Հետազոտության մեջ ընդգրկվել են 12-15 տարեկան 160 դեռահասներ, որոնք կազմել են 2 խումբ, որոնք հետազայում տարբերակվել են խումբ 1՝ “նորմա” և խումբ 2՝ “ոխակի”:

“Նորմա” խումբը կազմել են միննույն տարիքի 80 (35 տղա և 45 աղջիկ) նորմատիվ վարքով դեռահասներ Վանաձորի թիվ 1; 6; 11 միջնակարգ դպրոցներից: Նրանց վարքի նորմատիվությունը որոշվում էր “ոխակի” խումբ միկրոսոցիումի համեմատությամբ, քանի որ երբեմն դեխանտներ են համարում նաև նրանց, ովքեր երբեմն ցուցադրում են ագրեսիվություն կամ մեկ անգամ և պատահաբար իրենց դրսևորել են աշակերտին անվայել ձևով: “Ախենբախի հարցարանի” դեխանտ վարքի ախտանիշներից նրանք հավաքեցին նվազագույն միավորներ, սակայն նրանց մոտ դրսևորվում էին հուզական անբարեհաջողության, դպրոցական դեզադապտացիայի ախտանիշներ:

Կարևոր է նշել, որ “նորմա” խումբը կազմեց ոչ թե աշակերտների պատահական ընտրանքը, այլ ընդհանուր պատահական ընտրանքի (մոտ 400 մարդ քանակությամբ) այն մասը, որի մոտ նկատվում էին դպրոցական դեզադապտացիայի այս կամ այն ախտանիշները և գրանցվել էին որևէ հուզական կամ վարքային խնդիրներ: Այսպիսով՝ հանրակրթական ուսուցման պայմաններում փորձարկվողների մեր խումբը կազմեց բաշխման այն եզրը, որը բնութագրվում էր հոգեբանական և վարքային անբարեհաջողությամբ: Սակայն երկրորդ՝ “ոխակի” խմբի համեմատությամբ դպրոցականների այդ ընտրանքը ցուցաբերում էր նորմատիվային վարք: Առաջին խմբի փորձարկվողները չէին ցուցադրում դելինկվենտ վարքի այնպիսի մակարդակ, որը նրանց կստիպեր դուրս մնալ հանրակրթական դպրոցում ուսուցման շրջանակներից: Հետևաբար, մեր “նորմա” խումբը կարելի է համարել այնպիսին, որի մեջ հոգեբանական խնդիրների մակարդակը ցածր է “ոխակի” խմբի համեմատությամբ, սակայն հանդիսանում է սահմանային “նորմայի” ավելի լայն ընտրանքի մեջ:

“Ռիսկի” խմբի դեռահասների ընտրությունը (80 մարդ. 35 տղա և 45 աղջիկ) կատարվում էր Վանաձորի մանկատան, թիվ 2, 3 հատուկ դպրոցի և Ստեփանավանի թիվ 1 հատուկ դպրոցի սաներից: Նշված հաստատությունների սաները ծնողական խնամքից զուրկ, թափառաշրջիկ, դասերից սիստեմատիկ բացակայող, ցածր առաջադիմությամբ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներն են: Նախնական տվյալներն ստացվել են տվյալ դեռահասների փաստաթղթերի ուսումնասիրությունից, դաստիարակների, մանկավարժների հետ գրույցներից, որոնք յուրաքանչյուր սովորողի համար լրացնում էին «Ախենբախի հարցարանը»:

Դեռահասներից յուրաքանչյուրի հետ հոգեախտորոշման աշխատանքը կատարվում էր անհատապես: Երկու ուսումնասիրված ընտրանքներից որևէ մեկին պատկանելությունը դիտարկվում էր որպես միջխմբային փոփոխականների հիմնական գործոն ներխմբային տարբերությունների հետ նշանակալի փոխգործողությունների բացահայտման համատեքստում, որոնք կապված են ներքին պայմանների փոփոխականների հետ: Որպես այդպիսին մեր կողմից ներկայացված են Ֆրիկի մեթոդիկան ներկայացնող «դիտման թերթիկ» հարցարանը:

Պայմանականորեն առանձնացրել ենք հետազոտության չորս փուլեր.

1. Փաստաթղթերի վերլուծության մեթոդ և նախնական ախտորոշիչ հարցազրույց (ուղղորդված գրույց դեռահասի հետ):
2. K-SADS կիսակառուցակարգված (կիսաստանդարտացված) ախտորոշիչ հարցազրույց:
3. Ա.Բասի և Ա.Դարկիի ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա:
4. “Դիտման թերթերի” (Ֆրիկի հարցարան, Ախենբախի հարցարան) լրացում դաստիարակի, ուսուցչի կողմից:

Համադրած ցուցանիշները թույլ տվեցին սահմանել խնդիրների ընդհանուր ախտանիշները, որոնք ֆիքսվել են կիրառված մեթոդիկաների սանդղակներում:

Հետաքրքրական է մեր կողմից ստացված հետևյալ փաստը՝ ներքին պայմանների փոփոխականները նշանակալիորեն ազդում էին Ախենբախի մեթոդիկայի 3 ցուցանիշների վրա,

այն է՝ սոցիալականացման, մտածողության և դևիանտ վարքի, որը թույլ է տալիս հոգեբանական անբարեհաջողության նշված ախտանիշները դիտարկել որպես դեռահասների հոգեախտաբանորեն պայմանավորված զարգացման դևիացիաների վրա հնարավոր ազդեցությունների առավել ակնհայտ ուղղություն:

Ազրեսիայի մեխանիզմներին նպաստող փոփոխականները, որոնք կապված են սոցիալականացման խախտման հետ, կապված են նաև իմացական ոլորտի առանձնահատկությունների՝ դեռահասների կողմից իրենց շրջապատող իրողությունների հասկացման հետ, ինչը օրինաչափորեն շեղվող վարքին ուղեկցող հատկանիշների շարքում առանձնացնում է մտածողության խնդիրները:

Դեռահասի և նրան խնամող մեծահասակի հետ նախնական գրույցի և փաստաթղթերի վերլուծության ընթացքում ստացված տվյալների համաձայն՝ կառուցվել էին հետևյալ որակական փոփոխականները, որոնք դիտարկվում են որպես դեռահասի սոցիալական (արտաքին) պայմանների զարգացման գործոններ:

Օգտագործված հոգեբանական մեթոդիկաների ցուցանիշների համեմատության արդյունքների համար հիմնական արտաքին չափանիշ է հանդես եկել խմբային պատկանելությունը: Բացի այդ, դիտարկելով նշված գործոնը որպես անկախ փոփոխական, որպես հոգեբանական ցուցանիշների վրա ազդող արտաքին գործոններ դիտարկել ենք որակական փոփոխականների ազդեցությունները, որոնք կառուցված են նախնական հարցազրույցի արդյունքներով.

1. դեռահասի վերաբերմունքը ուսման և դպրոցի նկատմամբ,
2. հարաբերությունները հասակակիցների հետ,
3. հարաբերություններն ընտանիքում,
4. դեռահասների կողմից իրավախախտումների կատարման գործոնները,
5. հարբեցողությունն ընտանիքում,
6. երեխաների քանակն ընտանիքում,
7. ծնողների կրթությունը և աշխատանքը:

Ընտանեկան անբարեհաջողությունը, դպրոցական դեզադապտացիան, ինչպես նաև տրավմատիկ իրադարձությունները (ծնողներից մեկի մահը, երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքն ընտանիքում և ընտանիքից դուրս) և նմանատիպ այլ գործոններ դեռահասի կյանքի խախտված սոցիալական էկոլոգիայի պայմանները դիտարկելիս առաջին պլան են մղվում: Դեռահասական միջավայրի քրեականացման միտումները դիտարկվում են այնպիսի գործոնների համատեքստում, ինչպիսիք են ոչ լիարժեք ընտանիքը, որի հետևանքով նա զրկվում է բազմաթիվ իրադրությունների համար վարքի անհրաժեշտ մոդելներից, դեռահասների միջավայրում ծխախոտի, խմիչքի և թմրանյութերի օգտագործման տարածումը, գիտակցության մեջ վարքի ազրեսիվ մոդելների ամրապնդումը: Դեռահասների խմբերի համեմատության դեպքում անհրաժեշտ է մասնավորացնել արտաքին գործոնների ազդեցությունը հոգեբանական ախտաբանության վրա:

Այսպիսով՝ ուսումնասիրության խնդիրն է դեռահասի սոցիալական շրջապատի այն փոփոխականների հայտնաբերումը, որոնք նշանակալիորեն ազդում են «նորմա» և «դիսկի» խմբի դեռահասների վարքային խախտումների հոգեբանական առանձնահատկությունների և դրանց արտահայտվածության վրա:

Ընտանեկան անբարեհաջողության և խախտված ծնողական պրակտիկայի գործոններն էականորեն ազդում են դևիանտ վարքի ցուցանիշի վրա թե՛ կիսակառուցակարգված հարցազրույցի, թե՛ Ախենբախի մեթոդիկայի օգնությամբ չափման դեպքում:

Սոցիալական դեզադապտացիան նույնպես օրինաչափորեն մեծանում է ընտանիքում բռնության կիրառության, խախտված հարաբերությունների և ծնողներից մեկի մահվան դեպքում: Ընտանիքի պայմաններն ազդում են մտածողության խնդիրների ցուցանիշի վրա,

ավելի շատ սպասելի էին ուշադրության և հիպերակտիվության խախտումները, սակայն հենց այդ ցուցանիշը դիտարկված փոփոխականների նշանակալի էֆեկտների մեջ չէր մտնում: Կոնկրետացնենք փոփոխականների մակարդակները, որոնք կանխորոշում են ներխաժային տարբերությունները դեռահասների ուսումնասիրված խմբերում: Այդ գործոններն են՝ վերաբերմունքը դպրոցի նկատմամբ, հարաբերությունները հասակակիցների հետ, երեխաների քանակն ընտանիքում:

Նշենք, որ նախորդ տվյալների համեմատությամբ որպես կախյալ փոփոխական պարտադիր առկա է ագրեսիան, որը չափվում է Ախենբախի, Բասի ու Դարկիի մեթոդիկաներով: Ագրեսիվ հակազդեցության տարբեր տիպեր ներառված են ընդդիմադիր վարքի և վարքային խախտումների մեջ, որոնք չափվում են կիսակառագուկարգված հարցազրույցի միջոցով և Բասի ու Դարկիի ագրեսիվության ցուցանիշների ախտորոշման մեթոդիկայի միջոցով:

Վերաբերմունքը դպրոցի նկատմամբ: Ստացված արդյունքները վկայում են դպրոցական դեզադապտացիայի լուրջ ախտանիշների մասին. լավ են սովորում 15%-ը, բավարար՝ 16,7%-ը, սովորել չեն ցանկանում՝ պատասխանել են դեռահասների 7%-ը, 16,3%-ը ասել են, որ ունեն լուրջ խնդիրներ կապված վարքի հետ: Հիշեցնենք, որ այդ խմբի դեռահասների 75%-ը սովորում են հատուկ դպրոցներում: Դպրոցի նկատմամբ վերաբերմունքով կանխորոշվեց նշանակալի արդյունքների (էֆեկտների) բաշխումը K-SADS-ի հոգեբանական ցուցանիշներով հետևյալ կերպ.

1. դեպրեսիա,
2. ընդդիմադիր վարքի և վարքային խախտումների ախտանիշներ,
3. ծխախոտի օգտագործում:

Նշանակալի է նաև փսիխոպաթիայի քանակական գործակցի վրա ազդեցության էֆեկտները (ըստ Ֆրիկի հարցարանի), ի դեպ՝ այստեղ կարևոր է ցուցանիշների գերակշռությունը ռիսկի խմբում, ինչպես նաև ծխախոտի օգտագործումը և վարքային շեղումների երկու սանդղակները: Այսպիսով՝ «վերաբերմունքը դպրոցի նկատմամբ» գործոնը, որը վկայում է դպրոցական դեզադապտացիայի աստիճանի մասին, սերտորեն կապված էր վարքային շեղումների ցուցանիշների հետ:

Ըստ Ախենբախի մեթոդիկայի՝ հոգեբանական ցուցանիշները փոխհաստատվում էին K-SADS-ի և Բասի ու Դարկիի մեթոդիկայով ցուցանիշների հետ: Դելինկվենտությունը նույնպես նշանակալիորեն փոխվում էր դպրոցի նկատմամբ վերաբերմունքի գործոնի ազդեցության տակ, ինչպես նաև K-SADS-ի համապատասխան XV և XVI սանդղակները: Փսիխոպաթիայի և ծխախոտի օգտագործման գործակիցների աճը առաջին հերթին արտացոլում էր դեռահասների վարքի շեղումները:

Հասակակիցների հետ հարաբերությունները: Սոցիալական շրջապատի պայմանների այդ գործոնը տվեց նշանակալի էֆեկտ, ինչպես նշանակալի էր նաև նրա խմբային պատկանելության հետ փոխգործողության էֆեկտը: Նախնական զրույցի ժամանակ «ընկերներ ունե՞ք» հարցին «այո» պատասխանեցին «նորմա» խմբի դեռահասների 72,5%-ը, «ռիսկի» խմբում այն կազմում էր՝ 60,7%: Հասակակիցների հետ «մակերեսային հարաբերությունների» մասին նշեցին դեռահասների 17,2%-ը «նորմա» խմբում, 19,4%-ը՝ «ռիսկի» խմբում: «Ոչ ոքի հետ չեմ շփվում» պատասխանել են դեռահասների 3%-ը «նորմա» խմբում և ոչ ոք «ռիսկի» խմբում: Հասակակիցների հետ հարաբերությունները երկու խմբերում կոնֆլիկտային բնութագրեցին մոտավորապես հավասար՝ 7% և 6,2%: Նշենք, թե ինչպիսի հոգեբանական փոփոխականների վրա էին ազդում հարաբերությունները հասակակիցների հետ: Այդ ազդեցությունն արտահայտվում էր դեպրեսիայի, ուշադրության պակասի և հիպերակտիվության ախտանիշի, ընդդիմադիր վարքի և վարքի խախտումների սանդղակների վրա: Բացի այդ՝ նշանակալիորեն փոխվում էր փսիխոպաթիկ վարքի ցուցանիշը Ֆրիկի մեթոդիկայով: Ախենբախի մեթոդիկայով նշակալի էին տազնապայնությունը, սոցիալական դեզադապտացիան, մտածողության խնդիրները, դելինկվենտությունը և ագրեսիան, չի հաստատվել հասակակիցների հետ հարաբերության ազդեցության էֆեկտը ուշադրության պակասի և հիպերակտիվության

ախտանիշի վրա: Այսպիսով՝ մեր կողմից ուսումնասիրված խմբերի դեռահասների գրեթե 60%-ից ավելին պնդում էին, որ նրանք ունեն ընկերներ, սակայն հասակակիցների հետ հարաբերությունների խախտումները կանխորոշեց փոփոխությունները ինչպես շեղվող վարքի սանդղակներով, այնպես էլ՝ ուղեկցող անձնային փոփոխությունների և սոցիալականացման խնդիրների սանդղակներով:

Ընտանիքում երեխաների քանակը: Նշված ժողովրդագրական գործոնը, որն էականորեն փոխում է երեխայի զարգացման միկրոմիջավայրը նաև ազդում է հոգեբանական ցուցանիշների վրա: Ըստ Ախենբախի՝ դեղինկվենտության սանդղակը որպես կախյալ փոփոխական արտահայտել է ընտանիքում երեխաների քանակի աճի ազդեցությունը, նշանակալի է դարձել նաև այդ գործոնի փոխգործունեությունը խմբային պատկանելության գործոնի հետ:

Ամփոփելով փոխակերպվող հասարակության մեջ դեռահասների դեկանտ վարքի պատճառականությունը՝ կարելի է առանձնացնել հետևյալ յուրահատկությունները.

1. Դեկանտ վարքի պատճառականության շղթայում կարևոր տեղ են գրավում արտաքին կամ օբյեկտիվ անբարենպաստ պատճառներն ու պայմանները, որոնք կազմում են անձի սոցիալականացման թերությունները և բացթողումները: Վարքի շեղման սոցիալական պատճառներից են՝ անբարեկեցիկ կյանքը, սոցիալական անարդարությունը, պետական հովանավորության պակասը, հանցավորությունը:
2. Օբյեկտիվ անբարենպաստ գործոնների ազդեցության տակ դեռահասը հետզհետե սոցիալապես ախտահարվում է և դառնում ընկալունակ կրիմինալի նկատմամբ: Այդ գործընթացում անձը ձեռք է բերում մի շարք անբարենպաստ անձնային որակներ և հատկանիշներ (ագրեսիվություն, նեգատիվ դիրքորոշում շրջապատի նկատմամբ, քրեածին վարքի միտումներ և դրդապատճառներ, դաժանություն, կոպտություն, հուզական անտարբերություն և այլն): Դեկանտ վարքի պատճառականության շղթայում այդպիսի գործոնների ամբողջությունը ներկայանում է որպես սուբյեկտիվ գործոն:
3. Դեռահասի դեկանտ վարքի կազմավորմանը հատկապես նպաստում է ծնողների և մանկավարժների վերաբերմունքը աճող մարդու նկատմամբ, անհրաժեշտ հոգածության, սիրո ու փառաքշանքի, ուշադրության պակասը, երեխային՝ որպես անձնավորության ընկալելու, նրա կարծիքի և ցանկությունների հետ հաշվի նստելու, նրա իրավունքներն ու ազատությունները հարգելու բացակայությունը, որոնք նպաստում են դեռահասի վատ սովորությունների ձեռք բերմանը (թափառաշրջիկություն, ծխախոտի, ալկոհոլի և թմրանյութի օգտագործումը և այլն):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Торндайк, Э., Уотсон, Дж.Б. (1988). Бихевиоризм: Принципы обучения, основанные на психологии; Психология как наука о поведении. М.
- Выготский, Л.С., (1984). Собрание сочинений. М., Т.4.
- Змановская, Е.В. (2006). Девиантология (Психология отклоняющегося поведения). М.
- Клейберг, Ю.А. (2001). Психология девиантного поведения. М.
- Кон, И.С. (1978). В поисках себя: личность и ее самосознание. М.
- Нельсон-Джоунс, Р. (2000). Теория и практика консультирования. СПб.

ԱՎԱՆԵՍՅԱՆ ՀՐԱՆՏ

Փոխակերպվող հասարակություններում մարզինալության առաջացման կարևոր գործոններից մեկը, եթե ոչ գլխավորը, մասսայական գործազրկությունն է, որը հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների ու կապերի փլուզման արդյունքն է: Փոխակերպվող հասարակությունում մարզինալացման գործընթացը ընթանում է որոշակի փուլերով, որոնց ընթացքում ձևավորվում են տարբեր կարգի մարզինալ խմբեր: Որոշ իմաստով մարզինալացման փուլերը համընկնում են անցումային հասարակության զարգացման փուլերին: Կարելի է առանձնացնել երեք փուլ: Առաջին փուլում զարգացման նոր միտումները ծագում են հնի գերիշխանության պայմաններում, երկրորդում առաջանում է զուգահեռականության երևույթը, այսինքն՝ ամենուր ընթանում է հնի և նորի պայքար, հասարակական կյանքը աչքի է ընկնում անկայունությամբ, սոցիալական ցնցումները հաջորդում են իրար, երրորդ փուլում նորը դառնում է գերիշխող, նոր կառուցվածքները սկսում են գործել և կայունության միտումները դառնում են անշրջելի:

Առաջին փուլում մարզինալացման գործընթացում ներառվում են այն մարդիկ, որոնք սոցիալական կառուցվածքների փոփոխության հետևանքով նոր-նոր կորցրել են իրենց աշխատանքը ու սոցիալական կարգավիճակը, սակայն վստահ են, որ շուտով կգտնեն նոր աշխատանք: Այսպիսի մարդիկ դեռևս պահպանում են իրենց նախկին արժեհամակարգն ու դիրքորոշումները: Իրենց կարգազուրկ և գործազուրկ լինելը նրանք հակված են բացատրելու որպես պատահականության, օբյեկտիվ հանգամանքների արդյունք կամ սեփական թերությունների և սխալների, անհաշվենկատ գործունեության, անբավարար ակտիվության արդյունք: Նրանք առաջնորդվում են «մեր փողոցում էլ գարուն կլինի» ասացվածքով, ինչը նշանակում է, որ նրանք, թեև հայտնվել են անորոշ իրավիճակում, սակայն չեն կորցրել իրենց հույսը վերգտնելու իրենց սոցիալական կարգավիճակը, դեռ վստահ են իրենց ուժերի հանդեպ: Սակայն, նրանց հոգեկանը ալեկոծության մեջ է: Այդպիսի մարդկանց հոգեբանական վիճակի բնորոշ գծերից են՝ սպասողականությունը, երկիմաստությունը, հուսահատությունը, ընկճվածությունը, անհանգստությունը, կասկածամտությունը և այլն: Այս վիճակի շարունակման և խորացման դեպքում կարող են առաջ գալ լուրջ հոգեխախտումներ, որոնք կարող են հանգեցնել ինքնահարգանքի կորստի և համապարփակ հոգեկան ճգնաժամի: Այս փուլում մարզինալացման միտումները հստակ չեն երևում և չեն գիտակցվում մարզինալացման շրջապատյուրի մեջ արդեն հայտնված մարդկանց կողմից:

Երկրորդ փուլում մարզինալացման գործընթացի մեջ ընդգրկվում, կամ ավելի ստույգ՝ մարզինալ են դառնում այն մարդիկ, որոնք երկար ժամանակ լինելով կարգազուրկ և գործազուրկ, արդեն ճաշակել են գործազրկության բոլոր դառնությունները և գիտակցում են իրենց նոր կարգավիճակը: Նրանց մոտ նկատվում է նախկին սոցիալական կարգավիճակին բնորոշ արժեքների ու դիրքորոշումների միախառնումը նոր արժեքների ու դիրքորոշումների հետ, ինչն էլ բարերար հող է ստեղծում տարբեր տիպի կոնֆլիկտների, անումիաների առաջացման համար: Հուսահատության ու ճգնաժամային իրավիճակները ուղեկցվում են միայնակության, օտարվածության, ավելորդության զգացմունքի սրմամբ: Աշխատանքային մոտիվացիան ու բարոյականությունը պահպանվում են, սակայն դրանք լրացվում են անտարբերությամբ կամ անթաքույց թշնամությամբ դեպի տեղի ունեցող փոփոխությունները, նոր կազմավորվող սոցիալական ինստիտուտները: Այս ընթացքում ձևավորվում են տարբեր կարգի մարզինալ խմբեր: Օրինակ, ձևավորվում են մարզինալ սոցիալական (կառուցվածքային) խմբեր, որոնք «կենտրոնի» կամ սոցիալական նորմալի հանդեպ զբաղեցնում են «ծայրամասի, լուսանցքայինի» դիրք: Եթե նման մարդիկ քիչ թե շատ հարմարվում են իրենց վիճակին, ապա ձևավորվում է մարզինալ գիտակցություն՝ դրան բնորոշ արժեքներով ու դիրքորոշումներով: Մարզինալ այն խմբերը, որոնցում ընդգրկվում են լյուսայենացվող մարդիկ, ձեռք են բերում որոշակի հատկություններ: Նման մարդկանց մոտ աստիճանաբար չքանում են աշխատանքային մոտիվացիան և բարոյականությունը: Աշխատանքը դադարում է պահանջմունք լինելուց: Եթե նպատակային ինչ-ինչ դիրքորոշումներ դեռ մնում են, ապա դրանք անմիջականորեն կապվում

են միայն սպառման հետ: Իսկ ընդլայնվող սպառումը, որը այլևս կապված չէ աշխատանքային գործառնությունների հետ, ստանում է հախուռն, անկազմակերպ բնույթ: Աստիճանաբար «կյանքի հատակը» գլորվող լյուսակենացված մարզինալ մարդը կորցնում է իր սոցիալական բոլոր կապերը: Լրիվ խզվում է կապը նախկին աշխատանքային կոլեկտիվի, ընկերական շրջապատի և ընտանիքի անդամների հետ: Մարզինալ անձը փնտրում է «իր նմաններին»: Եթե հասարակությունը մերժում է այդպիսի մարդկանց, ապա վերջիններս էլ մերժում են հասարակությանը: Չընդունելով սոցիումի արժեքներն ու նորմերը և ցանկանալով միայն սպառել հասարակական (ուրիշների) հարստությունը, լյուսակենացված մարզինալ մարդը հոգեբանորեն պատրաստ է դառնում ագրեսիվ, քայքայիչ, ապակառուցողական հակահասարակական գործողությունների: Այդպիսի մարզինալները հաճախ ընդգրկվում են հակահասարակական և հակապետական շարժումների մեջ, օգտագործվում տարբեր քաղաքական ուժերի կողմից: Այսինքն՝ քաղաքական սուբյեկտից վեր են ածվում քաղաքական օբյեկտի: Այս մակարդակում գտնվող մարզինալների հոգեբանական վիճակը կարելի է բնորոշել որպես անոմիա: Անոմիան հետևանք է սոցիալական ինքնության կորստին: Իրենց սոցիալական որևէ խմբի չնույնացնելով, չընդունելով դրանց նորմերը, մարզինալները գրկում են իրենց լիարժեք մասնակցելու հասարակական-քաղաքական կյանքին: Գտնվելով անոմիայի վիճակում, չկարողանալով որոշել իրենց լուսանցքային կեցության պատճառները, աղեքվատ ձևով չգիտակցելով սեփական շահերը, մարզինալները վերածվում են քաղաքական օբյեկտների: Մարզինալը այլևս չունի իր սեփական ինքնատիպ արժեհամակարգը, ուստի հախուռն ձևով սկսում է նմանակել, ընդօրինակել (հիմնականում խեղաթյուրված կերպով) իրեն քիչ թե շատ հասկանալի սոցիալական ու մշակութային նորմերը: Մարզինալ կարգավիճակի պատճառով մարզինալները ի վիճակի չեն կազմակերպված, օրինական ձևով պայքարելու իրենց շահերի համար, ուստի նրանց բողոքական, ընդվզող վարքագծին բնորոշ է դառնում տարերայնությունն ու անկազմակերպվածությունը:

Մարզինալ մի այլ խմբի մեջ մտնում են զարգացած սոցիալական պահանջմունքներ ու սպասումներ, հիմնականում բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ, որոնք ամբողջությամբ դուրս չեն մղվել սոցիալական կառուցվածքներից, սակայն չեն կարողացել իրագործել իրենց սոցիալական սպասումները: Նրանց բնորոշ է ոչ միայն հարմարվումը մարզինալ արժեքներին, այլև դրանց ձևափոխումը գաղափարականացման միջոցով թե՛ առօրյա գիտակցության և թե՛ տեսության մակարդակում: Նրանք ընդվզում են, բողոքում «անդեմ հասարակության» և «ոստիկանական պետության» դեմ, տեղին-անտեղին քննադատում կատարվող բարեփոխումները, հոռետեսորեն տրամադրվում փոփոխությունների և առհասարակ ապագայի հանդեպ: Նման վիճակում Ես-ի և արտաքին աշխարհի միջև հաստատվում են թշնամական հարաբերություններ, և տարերային, հախուռն անհատապաշտության դիրքերից մարդը հակադրվում է հասարակությանը:

Այս խմբի մարզինալ գիտակցության դրսևորման ձևերից է դառնում անցյալի իդեալականացումը: Դա առավելապես բնորոշ է այն մարդկանց, ովքեր սոցիալականացման փուլերը անցել են նախկին հասարակարգում և նորում վերածվել են տարիքային մարզինալների: Մարզինալը գունագարդում է ոչ վաղ անցյալի սոցիալական հարաբերությունները, նախորդ սոցիալ-քաղաքական համակարգին վերագրում այնպիսի առաքինություններ ու արժանիքներ, որոնք իրականում չեն եղել կամ եղել են մասամբ: Մարզինալ մարդը տառապում է անցյալի կարոտախտով:

Մարզինալ գիտակցության դրսևորման ձևերից են նաև ապատիան և աբսենտիզիմը: Մարզինալ մարդը օտարվում է հասարակության մեջ ընդունված արժեքային նորմերից, մերժում սոցիալական գոյություն ունեցող կառուցվածքները, ամփոփվում իր ոլորտում, որը ընկալվում է որպես «հակահասարակություն»: Նա համակերպվում է իր մարզինալ կարգավիճակի ու դիրքի հետ, թաքնվում կրավորականության խրամատներում: Այդպիսի մարզինալ մարդիկ

հատկապես խուսափում են մասնակցել քաղաքական գործընթացներին: Մարզինալացման գործընթացում ձևավորվում է այսպես կոչված «այլընտրանքային գիտակցություն», որը կարող է ունենալ թե՛ ծայրահեղ և թե՛ չափավոր դրսևորումներ: Աբսենտիստական դիրքորոշումը առավելապես որդեգրում են մտավորական (մշակութային) մարզինալները, որոնք կամավոր կերպով (կամավոր, որովհետև ցանկության դեպքում այդ մտավորականները կարող են վերադառնալ իրենց նախկին կարգավիճակին) հակադրվում, ձեռնոց են նետում հասարակությանը: Եթե այսպիսի մարզինալ մարդը ցուցաբերում է հասարակական ակտիվություն, ապա դրան բնորոշ է լինում չարացածությունը, անարխիզմը, ծայրահեղականությունը, անհանդուրժողականությունը: Իր առանձնահատկությունները ունի երիտասարդների մարզինալացման գործընթացը: Չունենալով կյանքի, աշխատանքային գործունեության փորձ, արժեքների սեփական համակարգ, երիտասարդները տարբեր ձևերով են վերաբերվում մարզինալացման ընթացքին: Նրանք, ովքեր շնորհիվ իրենց էներգիայի, եռանդի, գիտելիքների արագորեն յուրացնում են փոփոխվող խաղի կանոնները, անհամեմատ հեշտությամբ ներգրավում են նոր կառույցների մեջ: Սակայն երիտասարդների շրջանում ադապտացիայի ձևերը հաճախ ծայրահեղ բնույթ են ունենում:

Մարզինալ գիտակցության դրսևորման ծայրահեղ ձևերից է խռովությունը, որը կապված է ոչ միայն գոյություն ունեցող հասարակության չընդունման հետ, այլև դրա բռնի հեղաշրջման հետ: Հաշվի չառնելով օբյեկտիվ հանգամանքները, մարզինալ անձը կամ խմբերը, որոնցում որպես կանոն մեծ թիվ են կազմում երիտասարդ մարզինալները, հակահասարակական, ահաբեկչական տարաբնույթ գործողությունների միջոցով փորձում են կազմաքանդել հասարակական կառուցվածքները: Վարքի միասնական մոտիվացիա և արժեքների ընդհանուր համակարգ ունեցող հասարակության համար ադապտացիայի խռովարարական տիպն այնքան էլ բնորոշ չէ, գրում է Գ. Սողոմոնյանը, մինչդեռ անցումային հասարակությունների համար, ուր անոմիան սովորական վիճակ է, հասարակական հարաբերությունների մեջ ներառման խռովարարական, ծայրահեղական եղանակը դառնում է բավականին տարածված սոցիալական երևույթ: «Որպես կանոն՝ նման մարդիկ կարծում են, որ միայն անսովոր, բացառիկ քաղաքական միջոցներով (ահաբեկչություն, հացադուլ, ինքնահրկիզում, պատանդ վերցնել) կարելի է հասնել ցանկալի արդյունքների: Խռովությունը որպես սոցիոմշակութային ադապտացիայի ձև ընտրած մարդիկ իրենց գործողությունները ներկայացնում են որպես պայքար «հանուն բարձրագույն արդարության» հաստատման: Ճշմարտությունը մենաշնորհած, սոցիալական անհանդուրժողականությամբ և անսխալականության հիվանդագին գիտակցությամբ տառապող այդ մարդկանց համար ծայրահեղականությունը վարքի գերակա եղանակ է» (Սողոմոնյան 2002):

Թեև խռովությունը ադապտացիայի մասսայական ձև չէ, այնուհանդերձ, փաստ է, որ մարզինալ մարդիկ աչքի են ընկնում իրենց ագրեսիվ վարքով, հակում են դրսևորում դեպի բռնությունը: Ավելի ստույգ, նրանք հոգեբանորեն պատրաստ են բռնություն գործելու, թեև իրականում կարող են այդ քայլին չդիմել: Ինչպես նկատում է Լ. Գոզմանը, նման դեպքում կարևոր է ոչ թե մարդու պատրաստակամությունը գործելու բռնություն, այլ նրա վերաբերմունքը բռնություն գործողների հանդեպ: 1988թ. Սուվգախթում հայերի ջարդը իրականացրել էին մի քանի տասնյակ բանդիտներ: Բայց նրանց ուղեկցում էր հանդիսատեսների ամբոխը, շուրջ երեք հարյուր մարդ, որոնք չէին սպանում ու հրկիզում, սակայն իրենց ներկայությամբ խրախուսում էին կատարողներին: Եվ դա տեղի էր ունենում հարյուր հազարանոց բնակչություն ունեցող մի քաղաքում, որտեղ մի շարք հանգամանքների բերումով ձևավորվել էր այնպիսի մթնոլորտ, որ հայի սպանությունը գուցե և չի ողջունվել որպես ավելորդ դաժան գործողություն, սակայն ընկալվել է ըմբռնումով: Միայն այսպիսի մթնոլորտում կարող էր տեղի ունենալ ջարդ, որը մշտապես պահանջում է ոչ միայն զոհեր, այլև հիացող հանդիսատեսներ: Այս պատճառով բռնության նկատմամբ հանդուրժողականության աճը, պատրաստակամությունը դա արդարացնելու վեհ գաղափարներով, անհրաժեշտ պայմաններ կարող է ստեղծել քաղաքացիների որոշ մասի ագրեսիվ հակումների դրսևորման համար: Նրանք կարող են գործել

բռնություն, կարծելով, որ իրենց գործողությունները հավանության կարծանան շրջապատողների կողմից (Гозман 1995):

Բնականաբար, մարզինալության դրսևորումները և դրանց հաղթահարման մեխանիզմների ու ռազմավարությունների ընտրությունը մեծապես կախված է ինչպես տվյալ հասարակության, ազգի էթնոհոգեբանական առանձնահատկություններից, այնպես էլ դրանց ներկայացուցիչների անձնային հատկություններից: Օրինակ, հայ հասարակության մեջ, որտեղ անհատապաշտական սկիզբը ուժեղ է արտահայտված, ավանդաբար բացասական, արհամարհական վերաբերմունք է ձևավորվել «կյանքի հատակում» գտնվող մարզինալ մարդկանց նկատմամբ: Այդպիսիները դիտվում են որպես պատվասիրությունից, արժանապատվությունից, ինքնահարգանքից զուրկ մարդիկ: Նորմալ մարդը, հայի ընդհանրական պատկերացմամբ, էթե անգամ հանգամանքների բերումով մատնվում է անհաջողության, սայթաքում է, ապա պետք է ձգտի ոտքի կանգնել: Այս է պատճառը, որ 90-ական թվականներին գտնվելով անհամեմատ ծանր սոցիալ-տնտեսական ու պատերազմական պայմաններում, այնուհանդերձ, հայաստանյան իրականության մեջ սակավ մարդիկ էին ընդգրկված հետնապահ մարզինալ խմբերում: Բայց, մյուս կողմից, ցանկանալով բարելավել իրենց նյութական վիճակը, ձգտելով դուրս գալ «լուսանցքային կարգավիճակից», նրանց մի զգալի հատված ստիպված էր արտագաղթելու: Այս ձևով կարծես թե հաղթահարելով կառուցվածքային մարզինալությունը, նրանք այլ երկրներում դառնում են էթնոմշակութային մարզինալներ: Բացի դրանից, նման պայմաններում ծաղկում է ապրում կրոնական մարզինալությունը՝ աղանդավորությունը, որը աստիճանաբար վերածվում է հասարակությունը ապակայունացող վտանգավոր գործոնի:

Պետք է նկատել, որ մարզինալացման խորացման ընթացքում փոփոխության է ենթարկվում նաև մարզինալ խմբերի նկատմամբ վերաբերմունքը: Հասարակությունը աստիճանաբար հաշտվում է այդպիսի խմբերի գոյության հետ: Մարզինալացման ճանապարհով ընթացող հասարակությունը չի կարող բարոյական և իրավական խիստ պատժամիջոցներ կիրառել սեփական մարզինալների (մարմնավաճառների, թմրամոլների, մուրացկանների) հանդեպ:

Ամփոփելով վերը շարադրվածը, կարող ենք ասել, որ անցումային հասարակությունում նպաստավոր պայմաններ են ստեղծվում մարզինալության մասսայական դրսևորումների համար, որոնք համընդհանուր անիշխանության պայմաններում կարող են բացասական ազդեցություն ունենալ ինչպես հասարակական կյանքի, այնպես էլ մարդկանց հոգեկանի զարգացման վրա: Նման վտանգավոր զարգացումները կանխելու, այսինքն՝ մարզինալացման գործընթացները կարգավորելու և վերահսկելու, մարզինալացումը հաղթահարելու համար կարևոր է դառնում պետության կողմից իրականացվող ակտիվ և ճկուն սոցիալական քաղաքականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Հարությունյան Է. (2000): Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Երևան:
- Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Ս. (1999): Քաղաքականության պատմական դասերը և արդիականությունը, Երևան:
- Սողոմոնյան Գ. (2002): Սոցիոմշակութային աղապտացիայի առանձնահատկություններն անցումային հասարակությունում, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 1:
- Гозман Л. Я. (1995). Психология перехода, "Вопросы философии", 5.
- Стариков Е. Н. (1994). Социальная структура переходного общества /опыт инвентаризации/, Полис, 4.

ON SOME MANAGERIAL APPROACHES TOWARDS INTERPERSONAL AGGRESSION

The article deals with the main theoretical problems of aggression viewed within the management context, more specifically, through the major tasks of organizational management and administration. It contains the basic standpoints towards the problem of aggressive behavior both individually and socially expressed within the management routine. The issues of main concern help to discover the major items of psychological awareness and competences necessary for managers. Inhere the problem of aggression is perceived both as an impeding cause or circumstance, demotivating process and as a negative consequence or result. Thus, the article gives an overall idea about the possible instances of managerial performance in cases of explicit and implicit aggressive behavior or attitude.

Key terms: implicit/explicit aggression, competition, cooperation, conflict, individual / group behavior, psychological premises, managerial/management model

In most cases the social environment is the most significant sphere of human existence where all the human ambitions, aspirations and objectives open up together with the complex nature of human fears, emotions and feelings. Individuals working in different organizations bring in the personal identities masked under socially determined and sometimes obliged roles.

The scientific interest towards organizational management and individual behavior derives from the interdisciplinary nature of the survey and investigations to be conducted, more precisely, from the perspectives of Psychology, Social Studies and Management and Business Administration.

It is of absolute evidence that the individual behavior and the models of general conduct of a person in social frameworks largely depend on the person-based acts, his/her input and feedback to group works and collective initiatives, as every personal response is mainly motivated by personal interests.

As we know, the traditions of organizational management have been developed on the management experience of the two basic models: collectivism vs. individualism. These two extreme points are described by (Moorhead, Griffin 2011: 674 – 675, 677 – 679, 680). In point of fact, we may state that all the models of management, which comprise both states, have always gained success due to the mutually motivated polarity, giving opportunities to the best one for the given circumstances. However, neither the individual nor the collective models can be of absolute priority. Had they been so, the managerial activities would have resulted in an absolute collapse. A vivid example of this might serve the soviet model of organizational and institutional management, which in fact was substituted by imprecise collective standpoint that later on collapsed, leaving groups of people without any factual guidance. Consequently, the society, which transformed through the period of transition, has faced two tendencies: **an absolute individualism leading to person-base tyranny** (Bernstein, Clarke–Stewart, Penner, Roy, Wichens 2000). and **collective leadership destroyed and still heading for individual indifference** (Moorhead, Griffin, 2011). By indifference we mean lack of any personal initiatives with no leading or guiding teamwork.

The most effective methods of management are aimed at three crucial levels of human interaction within an organization:

- Level 1: People as a network of participants;
- Level 2: People as resources;
- Level 3: People as individuals.

In the development of any management model there are premises of psychological states individually, interpersonally, and culturally motivated. In every situation they might be united in order to model up “*archetypes*” for organizational management models.

The problem of aggression cannot but be viewed within the context of the main cultural archetypes detectable from the perspectives of management, economic and political systems of administration. Therefore, to make further researches much comprehensible, it would be advantageous to view the statistics and other facts gathered under four archetypal groups

distinguished with the help of a wide range of features. From the features summarized by a number of researches we have given preference to those highlighted by a group of Russian scholars (Базаров, Аксенова, & Еремин, и др 2006: 19-21). Thus, in Table 1 we suggest the main characteristics of managerial cultures differentiable through a number of features (See the table at the end of the article.) The table introduces the overall correlations between the top authority line and the common bottom-line of personal freedom and initiatives. As we reckon the correlation between the absolute mandatory control and creative individual participation of absolute priority should be analyzed and detailed in the context of features of absolute priority that we have separated and introduced in the table above. At the same time, the same features might be combined in a specific way to complete a research in order to detect the most crucial psychological problems aimed at the deduction of the most effective mechanisms of management in the given case or in similar cases typologically distinguishable.

As a matter of fact, the psychological, professional and moral components of management in the Armenian society nowadays combine two negative trends as for the power distance: on the one hand, a higher position in management makes the power and decision making process **recognizable** for lower ranks, however, on the other hand, the lack of initiatives mentioned above changes that power into **a pressing control** excluding any creativity or critical observation from a wider group of employees.

The problem of aggression, particularly viewed against the management background, should be analyzed within individual – organization interface (Moorhead, Griffin, 2011: 308 – 309), namely, the visible structure or network of different jobs and positions. This unites people and may serve as an immediate environment for interpersonal contacts and problems in them. Basically speaking, the organizational management should cover all the levels from individual behavior to organizational structures. Thus, the degree of flexibility of management should readily activate “every cell” of the organism. As for the general methodology of implementation of flexible managerial models, it should proceed in two basic phases:

- a) Through the network of wider scope of workers and managers, as stated in classical organizational theory;
- b) Through co-working interpersonal circles in accordance with the scientific management.

The combination of the layers, mentioned above, as well as the theoretical approaches referred to would bring up a leverage in order to avoid models with the absolute priority given to the study of cases of aggressions (for instance, the megalomaniac ventures and regimes), on the one hand, and individual-centered business initiatives (for example family-based business).

Although it may sound drastic, it is obvious that the psychological background of the management models in Armenia, as a post soviet area, is negatively charged coinciding in many features with Douglas McGregor's theory 'X' with all the pessimistic views of people under certain management (Moorhead, Griffin, 2011: 17). However, the modern requirements for management models should be far from being more positively charged and optimistic only. Therefore the two main objectives to gain in the process of management in transformation should premise upon different perceptions of workers and managers:

- ✓ **Worker – a creative participant of business processes** instead of a simple doer of tasks obliged;
- ✓ **Manager – an innovative facilitator of business processes** instead of direct authority of compulsory control.

Together with the individual differences and psychological perceptions of individual's participation in organization management, there are various issues to be described first and analyzed from the psychological perspectives too. For instance, the key factor of motivation in any managerial activity might be viewed not only through individual, but also through the cultural contexts. To make it clear we would like to bring the example of some national cultural peculiarities analyzed by (Moorhead, Griffin, 2011: 689 – 690).

Cf.: The priority given by Japanese to the security needs and the significance of social needs highlighted in Nordic cultures.

The cultural differences, nevertheless, may be as profound as the divergences found among people in one and the same group. So, the cultures with their historical, material, philosophical

bases are as deep as individuals with the psychometric characteristics, level of education and experience.

The organizational culture, as stated, is based on the structural and management aspects of institutions, to be exact, any social grouping motivated by **common interests, targets or the environment they share**. For management proper all these variants of coexistence are important. That is why, human beings cannot but be perceived through individual differences or psychological characteristics that might inevitably be reflected in the organizational layout and inner mechanisms. In fact, the individual participation adds not only a wide spectrum of personal, emotional colors to the psychological background of the organization, but is also capable to make both creative and destructive changes into the internal *organizational engine*. The standpoints that we would recommend to choose for the analysis of individual's participation in different spheres of management and organization might be classified into:

- a) Biological factors;
- b) Inner factors;
- c) Interactive factors

By defining some factors as "biological" ones, we observe them as naturally motivated factors involving the evolution factors and the factors of hormones. Psychologists believe that human social behavior is related to our evolutionary heritage. From this perspective aggression is thought to have helped prehistoric people compete for mates, ensuring survival of their genes in the next generation.

Experiments have shown that aggressive behavior increases or decreases dramatically with the amount of testosterone in an animal's body (Bernstein, Clarke-Stewart, Penner, Roy, Wickens 2000: 648), and violent criminals have been found to have higher levels of testosterone than nonviolent ones (Bernstein, Clarke-Stewart, Penner, Roy, Wickens 2000: 648). Among normal men, variations in testosterone show a small but statistically significant correlation with aggressiveness (Bernstein, Clarke-Stewart, Penner, Roy, Wickens 2000: 648).

As we can see from the explanations quoted above that biological factors, we have viewed, do not depend on social networks, if not derive from human nature. Thus, for the management psychology by inner factors we mean all the circumstances conditioned on individual ↔ society level. To be more precise, we might observe a complex set of mutual linkages between personal psychological experience (i.e. emotions) and group experience accepted or at least recognizable for the group members (more specifically cultures and cultural values).

In general, people are more likely to be aggressive when they are both physiologically aroused and experiencing strong emotions such as anger (Bernstein, Clarke-Stewart, Penner, Roy, Wickens 2000: 649 – 650). People tend either to lash out at those who make them angry or to displace their anger onto defenseless targets such as children or pets. However, aggression can also be made more likely by other forms of emotional arousal. The link between stress and aggressive behavior points to the possibility that stressful environmental conditions can make aggressive behavior more likely (Bernstein, Clarke-Stewart, Penner, Roy, Wickens 2000: 652).

Aggressive behavior is much more common in individualists than in collectivist cultures (Bernstein, Clarke-Stewart, Penner, Roy, Wickens 2000: 649). The effects of culture on aggression can also be seen in the fact that the incidence of aggression in a given culture changes over time as cultural values change (Bernstein, Clarke-Stewart, Penner, Roy, Wickens 2000: 649). Deriving from the biological roots in an individual, aggression is likely to end up in disturbed social interactions, i. e. at the level of wider interpersonal contacts. In addition, people learn many aggressive responses by watching others (Bernstein, Clarke-Stewart, Penner, Roy, Wickens 2000: 649). Children, in particular, learn and perform many novel aggressive responses that they see modeled by others (Bernstein, Clarke-Stewart, Penner, Roy, Wickens 2000: 649). Fortunately, not everyone who sees aggression becomes aggressive, individual differences in temperament, the modeling of non-aggressive behavior by parents and other factors can temper the effects of violent television, for example. Nevertheless, observational learning does play a significant role in the development and display of aggressive behavior (Bernstein, Clarke-Stewart, Penner, Roy, Wickens 2000: 66). This is particularly true and essential for the psychological aspect of methods of management from the standpoint of a group leader, team coordinator or a model employee with successive career progress.

Every psychological issue viewed against the management background deals with groups as a key idea. That is why the aggressive behavior viewed within a group always needs a contextual analysis of different types of interaction or social communication. So, we must differentiate interactive factors which may be singled out within **cooperation, competition or conflict**.

Cooperation is any type of behavior in which people work together to attain a goal. People can also engage in competition, trying to attain a goal to others. Finally, conflict results when one person or group believes that another stands in the way of achieving the goals. One way in which psychologists have learned about all three of these behaviors is by studying social dilemmas (Bernstein, Clarke–Stewart, Penner, Roy, Wickens 2000: 661). Social dilemmas might be understood as situations in which individual's interests or incentives will, if adopted by all others, produce negative consequences for everyone, creating a contrast between personal and group welfare (Bernstein, Clarke–Stewart, Penner, Roy, Wickens 2000: 661).

There is a socially predetermined way, positive social interaction for all the participants of group, organization or social management.

It is common knowledge that communication serves for a number of managerial tasks both as a method and as a tool. Communication can reduce people's tendency to act competitively (Bernstein, Clarke–Stewart, Penner, Roy, Wickens 2000: 661-665). Unfortunately, however, not all communication increases cooperation, just as not all contact between ethnic groups reduces prejudice. If the communication takes the form of a threat, people apparently interpret the threat itself as a competitive response and are likely to respond competitively (Bernstein, Clarke–Stewart, Penner, Roy, Wickens 2000: 661-662). Furthermore, the communication must be relevant. People can also communicate implicitly the strategy they use. It may be illustrated by a cooperation started after a cooperative response over time (Bernstein, Clarke–Stewart, Penner, Roy, Wickens 2000: 663).

In social dilemmas and other situations in which people are interdependent—that is to say, when what one person does always affects the other – cooperation usually leads to the best outcomes for everyone. It goes without saying that such models of management are applicable in spheres of vital importance (national, regional, international), as well as sources of high income for example fuel, food, technologies, etc.

It is beyond any doubt that aggression as a problem to cope with may be as a **potential cause, actual process and result** of interpersonal conflict within a group. Thus, the management of aggression may help to predict, control and neutralize the worst consequences of interpersonal conflict.

The most common way of managing organizational conflict is through bargaining. There are four major causes of interpersonal conflict (Bernstein, Clarke–Stewart, Penner, Roy, Wickens 2000: 663). One is competition for scarce resources. Some managers testify spending as much as 20 percent of their time dealing with interpersonal conflicts based on such competition (Bernstein, Clarke–Stewart, Penner, Roy, Wickens 2000: 663). Second major cause of interpersonal conflict is revenge. People reciprocate not only positive actions but also negative ones. Some people who feel exploited or deprived or otherwise aggrieved spend months, even years, plotting ways of getting back at those they hold responsible (Bernstein, Clarke–Stewart, Penner, Roy, Wickens 2000: 663-664). These cases may sometimes be qualified as **implicitly developing aggression** never expressed apparently or as **an implicit stage of aggression development** eventually growing into an explicit aggression.

As some Western industrialized cultures tend to highlight, there is always an importance of individuals over groups. That is why, the wider the scope of participants in the decisive acts is, the more tolerant and less aggressive the individuals grow. From the standpoint of managerial leadership the psychological background of the management proper should comprise a model that would guarantee the transparency of motivated and fair decisions made by the authorities, on the one hand, and the total understanding of the mistakes made by the subordinates, on the other hand.

The interpersonal conflict has always been viewed as either result of aggression or competitive spirit. Quite reasonable would be the observation that organizational management

should get more guided first by the priority of a group that makes final decisions and carries the responsibility. As a matter of fact, results become factual and productive particularly under the guidance of a group – more **coordinated** than **headed** by a leader. Person-oriented leaders provide loose supervision, ask for group members' ideas and are generally concerned with subordinates' feelings. They are usually well liked by the group, even when they must reprimand someone (Bernstein, Clarke–Stewart, Penner, Roy, Wickens 2000: 664). In order to keep such traditions vivid and follow a **communication strategy** favorable in management for all the participants, we would highlight, as one of the tasks of effective management, the persistent control over the male and female group members' relative amount. The correct quantity correlation between male and female staff members would guarantee:

- a) a constant inner factor against aggression;
- b) a persistent possibility for adequate interaction with outer parties, even more effective in case of aggression and conflicts.

As for the second point, it should be underlined that research on leadership effectiveness and gender provides one explanation as to why one leadership style is not invariably better than another. Men and women are equally capable leaders, but men tend to be more effective when success requires a more task-oriented leader, and women tend to be more effective when success requires a more person-oriented leader. In other words, people of each gender tend to be most effective when they are acting in a manner consistent with gender-role traditions (Bernstein, Clarke–Stewart, Penner, Roy, Wickens 2000: 665). A typical case of contingent management with appropriate psychological bases maybe viewed in situations of urgent or obliged management, as for example personnel reduction, branch reduction or opening or closing of a new office. Consequently, the existence of both models of gender-motivated management provides a higher degree of readiness to cope with a larger and more diversified spectrum of problems and tasks.

Summarizing the general insights, we would emphasize the following spheres of managerial activities to be adjusted and psychologically surveyed in further investigations and developments of effective organizational models:

1. The models of absolute productivity should comprise all **the psychological premises of individualized approaches in management.**
2. The management methodology should be fine-tuned **to the needs, interests and abilities of the team or group.**
3. The constant monitoring of the managerial model applied should assume **psychological components throughout the whole organizational hierarchy.**
4. The feedback expected should detect **psychologically reasoned responses to the management process.**
5. The administrators in charge should involve in the monitoring process **a variety of tools of psychological analyses (tests, interviews, quizzes, etc.).**

REFERENCES

- Bernstein, D., Clarke-Stewart, A., Penner, L. A., Roy, E., Wickens, C. D., (2000). Psychology (Fifth Edition), Boston, New York.
- Moorhead, G., Griffin, R. W. (2011). Organizational Behavior (Second Edition).
- Cremer, D. & Vugt, M. V. (1999). Social identification effects in social dilemmas: a transformation of motives. "European Journal of Social Psychology", Volume 29, Issue 7, pp. 871-893, November.
- <http://www.businessballs.com/psychological-contracts-theory.htm>
- Базаров, Т. Ю. , Аксенова, Е. А. & Еремин, Б. Л. и др. (2006). Управление персоналом, учебник, Юнити, Москва.

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՄԵԼՍ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Հոգեբանության տեսության և պատմության» ամբիոնի վարիչ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԼԻԼԻԹ

Հոգեբանական գիտությունների թեկնածու, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Զարգացման և կիրառական հոգեբանության» ամբիոնի դասախոս,

ՓՈՒՍԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻ
ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ՆՐԱ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՎՐԱ

20-րդ դարի վերջերին աշխարհում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական, քաղաքական իրադարձությունները շատ երկրներում հանգեցրեցին նոր տնտեսական համակարգերի առաջացման: 1988 թ-ի երկրաշարժը և դրան հաջորդած տնտեսական շրջափակումը, քաղաքական և տնտեսական ճգնաժամերը առանձնահատուկ ազդեցություն ունեցան հատկապես ՀՀ-յան ազգաբնակչության համեմատած ավելի խոցելի շերտերի վրա: Հասարակության ներսում առաջացան մինչ այդ բոլորովին գոյություն չունեցող երևույթներ, որոնց հետ մարդիկ գրեթե չէին առնչվել: Հանրապետությունում ամենուր նկատվում էին գործազրկության, աղքատության, արտագաղթի, արտագնա աշխատանքի մեկնողների համատարած երևույթներ: Դրանց ընթացքի շարունակականությունն ու միմիանց հետ փոխադարձ սերտ կապվածությունը ստիպում էին մարդկանց նոր պայմաններում ապրելու հնարավորություններ ստեղծել, ինչ որ ձևով հարմարվել իրականությանը, որում ամենուր անհարմարություններ էին, համատարած դժվարություններ: Մասնագիտական գրականության մեջ նման պայմանները համարվում են կյանքի համար անբարենպաստ, դժվար, արտակարգ (Մկրտումյան 2008, Малкина-Пых 2006, Раен 2006):

Որպես օրինաչափություն, պետք է նշել, որ փոխակերպվող հասարակության սկզբնական փուլերում առանձին երկրներում նկատվող տնտեսական, քաղաքական համակարգերում դեռևս պահպանվող կարծրատիպերի պատճառով դիտարկվում են արտակարգ իրավիճակներ կամ ապրելակերպի առումով դրան մոտիկ պայմաններ: Օրինակ, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անկախություն ստացած նորաստեղծ հանրապետություններում տնտեսական կապերի քայքայման, տարածքային վեճերի ծագման և այլ պատճառներով գրեթե միաժամանակ, բոլոր սուբեկտների տարածքներում առաջացան ապրելակերպի բավականին դժվար պայմաններ:

Փոխակերպվող հասարակությանը բնորոշ է նաև գործունեության բոլոր բնագավառներում իրականացվող բարեփոխումների համատարած դրսևորումներ, որոնք թվում է թե ուղղված են հասարակության բարեկեցիկ կյանքի պայմանների ստեղծմանը, սակայն, որպես օրինաչափություն, դրանք ազգաբնակչության լայն շրջաններում առաջ են բերում բավականին լուրջ անհարմարություններ: Միջավայրում տեղի ունեցող յուրաքանչյուր փոփոխություն իզուր չի անցնում դրանցում ապրող մարդկանց առողջության, ապրելակերպի ու հատկապես հոգեկան համակարգի գործառութային համակարգերի հարմարողական հնարավորությունների կողքով:

Անցյալ դարի 90-ական թվականների ճգնաժամային տարիներին ապրելակերպի նոր պայմաններում ազգաբնակչության կյանքում անընդհատ ավելացող սոցիալ-տնտեսական դժվարություններն ու դրանց հետևանքով առաջացած անհարմարությունները մարդկանց հոգեկան ոլորտում ստեղծում են տագնապի, լարվածության, իրականության և ապագայի նկատմամբ վախի ապրումներ: Հաճախ դրանք արտահայտվում են ուժեղ, տևական

սթրեսների ձևերով, կաշուն վախերի, ներոզների հոգեվիճակներով (Александровский 2001, Емельянова 2004, Тарабрина 2001):

Ա. Ռեանի (և ուրիշներ) կարծիքով նման դեպքերում օրգանիզմը, հայտնվելով շարունակական փոփոխությունների պայմաններում, հնարավորություն չի ունենում հեշտությամբ ու լիարժեք հարմարվելու առաջացող սթրեսորներին, այդ իսկ պատճառով օգտագործում է նրանում գոյություն ունեցող պահեստային հնարավորությունները: Նոր պայմանների պահանջներին համապատասխան օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական համակարգերի գործառության հնարավորությունների ներգրավումը հավանական խափանումների կանխարգելման ու դրանց դիմակայման նպատակով, գործի են դրվում նրա պահեստային հնարավորությունները (Реш 2006): Չնայած, որ այդպիսի իրավիճակներում երբեմն նկատվում են առանձին համակարգերի (սիրտ-անոթային, գազափոխանակության մարսողական, հենաշարժական և այլն) ընդհանուր հնարավորությունների առավելագույն դրսևորումներ (երբեմն խաթարումների ձևերով) սակայն հենց այդպիսի ցուցանիշներն են, որ միջնորդավորված վկայում են այն մասին, որ օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական համակարգերը գործում են իրենց հնարավորությունների սահմանային մակարդակում:

Չնայած փոխակերպվող հասարակությանը բնորոշ փոփոխությունների ընդհանրությանը, ՀՀ-ում հոգեբանական տեսանկյունից այն իրեն բնորոշ առանձնահատկություններով խիստ տարբերվում է մնացած նույնատիպ հասարակություններին վերագրվող առանձնահատկություններով: Նախ, որ ՀՀ-ում սկսած 1987 թ-ից հայտնի պատճառներով հանդես եկան պետության և ժողովրդի համար դեռևս անհասկանալի, բավականին անհայտ բնութագրերով շատ սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային ու բարոյահոգեբանական երևույթներ, դրանց զուգակցվող հիմնական խնդիրներ, որոնք շուտափույթ լուծում էին պահանջում և երկրորդ՝ դրանց լուծման ճանապարհների ու փորձված միջոցների բացակայությունն արդեն հասարակության գրեթե բոլոր խավերի մոտ ստեղծում էր լարվածության, համատարած տագնապի, անորոշության ու անվստահության մթնոլորտ, ուր համատարած անհարմարությունների պայմաններում գործող փորձառու ղեկավարներն անգամ ձեռնպահ էին մնում ինքնուրույն որոշումներ կայացնելու, իրենց վրա պատասխանատվություն վերցնելու նախաձեռնությունից: Հասարակության մեջ դիտարկվող այդպիսի վարքագիծը հոգեբանական իմաստով թերևս կարելի է մեկնաբանել: Այդ նշանավոր օրերին մեկը մյուսին շարունակաբար հետևում էին նորանոր սոցիալ-քաղաքական, տնտեսական, բարոյահոգեբանական անհասկանալի, շատերի համար խորթ երևույթներ: Դրանք իրենց ազդեցության առումով՝ մինչ այդ անհայտ բնութագրեր ունեցող հզոր սթրեսորներ էին: Համատարած անհարմարությունների ու դեֆիցիտների պատճառով օրգանիզմը դեռևս դրանց չհարմարված՝ նրա վրա շարունակ ազդում էին ավելի հզորներն ու վտանգավորները (երկրաշարժ, տնտեսական շրջափակում, պատերազմ, քաղաքական ճգնաժամ, համաշխարհային տնտեսական ճգնաժամ և այլն):

Փոխակերպվող հասարակությունում ապրող մարդկանց դժվարություններից մեկն էլ այն է, որ նրանում ապրող մարդիկ հարկադրաբար գտնվում են մոբիլ, լարված, սպասողական վիճակում: Տեսական այդպիսի վիճակը օրգանիզմից բավականին էներգիա է խլում, որն ուղղվում է գոյություն ունեցող պայմաններում նրա համակարգերի գործառության հարմարմանը, ինչպես նաև օրգանիզմի ընդհանուր հնարավորությունների վերակառուցմանը (Бодров 1995, Куликов 2004):

Օրգանիզմում տեղի ունեցող գործնթացները սովորաբար զուգակցվում են վեգետատիվ ու նյարդային համակարգերի բուռն փոփոխությունների բուռն տեղաշարժերով: Վեգետատիվ նյարդային համակարգության գործունեության մակարդակում՝ դրանք արտահայտվում են օրգանիզմի ընդհանուր հյուծվածությամբ, ջերմատվությամբ, անքնությամբ, կեցվածքի փոփոխություններով, ընդհանուր շարժունակության կորստով, աշխատունակության անկմամբ և այլն: Այդպիսի փոփոխությունները գրականության մեջ դիտարկվում են որպես

հետվնասվածքային սթրեսային խանգարումներ ՀՎՄԽ (Малкина-Пых 2006, Куликов 2004, Тарабрина 2001):

Ըստ Մալկինա-Պիխի ՀՎՄԽ –ի հիմքում ընկած են անձի անցյալում տեղի ունեցած եղելությունների հուզական ապրումները, որոնք մնացորդային բացասական օջախների ձևերով անժամկետ պահպանվում են մարդու հիշողության մեջ: Դրանք չեն մոռացվում, այլ քողարկված կերպով արտացոլվում են մարդկանց սոցիալ հոգեբանական վարքագծում (Малкина-Пых 2006): Կարծում ենք, որ հենց այդ մեխանիզմով պետք է մեկնաբանել վերջերս ՀՀ-ում մարդկանց մոտ դիտարկված խուճապի, տագնապի ու վախի այն զանգվածային դրսևորումները, որոնք կապված էին Ճապոնիայում, Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժի, Տավուշի մարզում տեղի ունեցած սողանքների հետ: ՀՎՄԽ-ների համատարած ախտանիշով պետք է մեկնաբանել նաև միմյանց նկատմամբ մարդկանց մոտ դիտարկվող անհանդուրժող ակնությունը, անտարբերությունը, անձնային մակարդակում՝ դյուրագոգովածու-թյունը, լարված վիճակը: Հոգեկան առողջության, հոգեհիգիենայի առումով, այսպիսի ապրելակերպը նպաստավոր պայման է օրգանական հիվանդությունների, վարքային շեղումների, ընտանեկան հարաբերություններում միջանձնային կոնֆլիկտների ձևավորման համար: Մարդկանց ընդհանուր և հոգեկան առողջության նորմայի և հիվանդագին վիճակների բնութագրերը համաշխարհային առողջապահական կազմակերպության (ՀԱԿ) կողմից սահմանված հստակ ձևակերպումներ ունեն, որոնցում բացակայում են բոլոր տեսակի հիվանդությունները: Նման գնահատականի դեպքում միջավայրի կողմից մարդը ընդունվում է որպես առողջ, հասարակական պարտականությունների մեջ կոմպետենտ, քննադատություն և ինքնաքննադատություն ընդունող, ամեն դրական երևույթների, իրադարձությունների նկատմամբ առողջ հանդուրժողականություն ցուցաբերող: Կատարված հետազոտություններն ու դիտարկումները ցույց են տալիս, որ ՀՀ-ում վերջին տասնամյակներում դիտարկվող մարդկանց հոգեկան ոլորտի ակտիվության դրսևորումները լիարժեքորեն չեն համապատասխանում ՀԱԿ-ի կողմից տրված հոգեկան առողջության բնութագրերին: Դեռ ավելին, դրանք հիմնականում համապատասխանում են առաջադրված կլինիկական բնութագրերին (Մկրտումյան 2008: 35):

Փոխակերպվող հասարակությունում ապրելակերպ դարձած սոցիալ-տնտեսական, քաղաքական անկայունությունը մարդկանց համար դառնում է հոգեբանական լարվածության միջավայր: Օրգանիզմում հոգեֆիզիոլոգիական հավասարակշռություն ստեղծելուն ուղղված կենտրոնական նյարդային համակարգի սահմանային մակարդակի հասնող լարվածությունը սկզբնական շրջանում հանգեցնում է նրա պահեստային հնարավորությունների ներգրավմանը, այնուհետև դրանց սպառմանը: Ուղեղի համար միջավայրի անընդհատ փոփոխվող պայմաններում ճշգրիտ որոշումներ կայացնելու, ինչպես նաև դրանց ընթացքի վերահարմարմանն ուղղված լարվածությունը դառնում է մշտապես պահպանվող վիճակ: Այն համապատասխանում է հոգեֆիզիոլոգիական ապահարմարման բոլոր բնութագրերին:

Ինչպես ցույց են տալիս փորձն ու դիտարկումները գոյություն ունեցող դժվարությունների պայմաններում սովորաբար մարդիկ դառնում են հաշվենկատ, չշփվող, ինքնամփոփ, ընկճված ու անհանդուրժող: Գոյության կոլում «մարգավիճակում» գտնվելու համար նրանցից պահանջվում է բավականին մեծ ջանքեր, ֆիզիկական էներգիա, հոգեկան կայունություն և հուսալիություն, առաջացող բացասական հոգեվիճակների կառավարման հմտություններ ինչպես նաև ինքնատիրապետում: Ստեղծված պայմաններում ժամանակի ընթացքում շատերը դառնում են կոմֆորմիստ, կեղծավոր ու խարդախ, քծնող ու ամեն ինչին ընտելացող: Դրանց մի մասը հասարակության մեջ գտնում են իրենց ուզած տեղը: Շատերը իրենց թույլ չտալով անցնել սեփական սկզբունքների վրայով, կամ չկարողանալով վերափոխվել հասարակության նոր պահանջներին համապատասխան, հայտնվում են անկարողների, մերժվածների, ֆրոստրացվածների շարքերում (Раен, Кудашев, Баранов 2006):

Դրա վտանգավորությունը թերևս կայանում է նրանում, որ հաճախ այդպիսի մարդիկ ակամա հայտնվում են աղքատության մեջ, երբեմն հայտնվում հանցագործ խմբավորումներում, աղանդավորների շարքերում, երբեմն ընդդիմադիր ուժերի բանակում, որոնք ոչ թե քաղաքական հայացքների համար, այլ նրա, որ նրանք դեմ են ամեն ինչի: Այս մեխանիզմով է բացատրվում նաև արտագաղթի ու արտագնա աշխատանքի մեկնողների վարքագիծը, որի հիմքում ընկած է իրականությունից փախուստի հոգեբանական պաշտպանական մեխանիզմը: Այսպիսի մարդիկ սովորաբար աչքի են ընկնում իրենց անվստահությամբ, ցածր ինքնագնահատականով, իներտությամբ ու ամեն ինչի նկատմամբ անտարբերությամբ: Չկայացված լինելով, նրանք կորցնում են իրենց հասարակական նախաձեռնողությունն ու սեփական ուժերի նկատմամբ վստահությունը: Այս երևույթի համատարած բնույթը հասարակությունը դարձնում է անդեմ, ամորֆ, ֆրուստրացված մարդկանց զանգվածների հավաքածու, որը մեր երկրի աշխարհաքաղաքական տնտեսական ռազմաքաղաքական զարգացումների պայմաններում բավականին լուրջ վտանգ է իրենից ներկայացնում: Վտանգների ու սպառնալիքների առումով, նշված երևույթները թերևս բոլորը չեն: Դրանք միայն լողացող սառցաբեկորի վերին մասն են կազմում:

ՀՀ-ը իր աշխարհագրական դիրքով գտնվում է ակտիվ սեյսմիկ գոտում, շրջապատված է առանձնապես ոչ բարեկամ երկրներով, չունի բաց ճանապարհներ դեպի ծով և հարևան երկրներ, որը մշտապես շահագործվում է մեզ շրջապատող երկրների կողմից: Մյուս կողմից՝ ահագնացող արտագաղթն էապես սպառնում է երկրի կարող ուժերին, դեմոգրաֆիական աճին, տնտեսական, մշակութային, գիտական, մասնագիտական ներուժի զարգացումներին, որի պատճառով հասարակությունը դանդաղ կերպով զրկվում է որակյալ բանվորներից, մտավորականներից, արվեստագետներից: Աշխատող ուժերի սակավության, կամ դրանց բացակայության պատճառով հանրապետության գյուղատնտեսական հողերն ու ցանքատարածքները ամայանում են, այգիները՝ չորանում, աստիճանաբար հետաձգ է ապրում անասնապահությունը, վերանում են արհեստները: Մի հանգամանք ևս՝ պատերազմի հետևանքով ականապատված սահմանամերձ հողատարածքները մնում են անմշակ, իսկ շատ տարածքներ էլ չեն մշակվում մշտապես թշնամու նշանատուների ու հրանոթային կրակոցների պատճառով, հավանական պատերազմի ժամառժամ վերսկսվելու պատճառով:

Հանրապետությունում ստեղծվել են այնպիսի պայմաններ, որտեղ գոյատևման և նորմալ կենսագործունեության պահանջը բավարար չէ բոլորի համար: Առաջացել է ծայրաստիճան հարուստների և աղքատների մի հասարակություն, որտեղ մարդկանց միջև գոյություն ունի արժեհամակարգի, ապրելակերպի վերաբերյալ պատկերացումների մեծ անջրպետ: Հասարակ մարդիկ ամենուր հանդիպում են վատ պաշտոնյաների, հարկահավաքների կողմից իրականացվող անօրինականությունների, չարաշահումների: Ամենուր գործում է օրինականություն դարձած անօրինականությունը, որը սոցիալապես անպաշտպան մարդկանց մոտ իրականության, վաղվա օրվա նկատմամբ արհեստական դժգոհություն առաջացնում է առաջացնում պետության, կառավարության ու նախագահի հանդեպ:

Պակաս վտանգ ու սպառնալիք չի հանդիսանում հեռուստատեսությունից հեղեղվող ցածրաձաշակ հաղորդումները, որոնք ավելի շատ վնասում են երեխաների ու պատանիների արժեհամակարգը, տուրք տալով օտար ու խորթ մշակույթի, ապրելակերպի ու վարքային դրսևորումների ընդօրինակման: Հասարակության ներսում բավականին լուրջ վտանգ է հանրապետություն մուտք գործած աղանդների, կասկածելի նպատակներ հետապնդող կրոնական կազմակերպությունների ներկայությունը, որոնք իրենց կործանարար ազդեցությամբ ծանրացել են հատկապես երիտասարդ սերնդի գիտակցության, արժեքային կողմնորոշիչների ձևավորման գործընթացի վրա: Հասարակության ներսում գոյություն ունեցող բազմաթիվ գայթակղիչ երևույթներ ապակողմնորոշում են դեռևս չձևավորված պատանիներին ու երիտասարդներին: Թվում է, թե անկախության համար բազմադարյան պայքարում կորուստներից ու զրկանքներից հետո վերածնված հայրենիքում ամեն ոք իրեն պետք է զգա

լիարժեք քաղաքացի ու հպարտությամբ կրի նրա բարգավաճման պատասխանատվության ու պարտքի զգացումը, երկրում ապրելու պատիվը: Մակայն, հատկապես երիտասարդների շրջանում տիրում է կոսմոպոլիտիզմի, օտարամոլության ու օտար մշակույթի նկատմամբ հակվածությունը, օտար երկրներում ապրելու ձգտումը, դրանցում մասնագիտական ու անձնային ինքնահաստատումը:

Մի կարևոր հանգամանք է, բանակային ծառայությունը յուրաքանչյուր երկրի երիտասարդության համար պետք է հանդիսանա սեփական երկրի ժողովրդի նկատմամբ սիրո, նվիրվածության դրսևորում: Մակայն հայաստանաբնակ երիտասարդներից շատերի մոտ նկատվում է բանակային ծառայության նկատմամբ նույնիսկ հակակրանք: Այսպիսի վերաբերմունքի ձևավորման գործում մեծ մասնակցություն ունեն ապակոդմնորոշիչ դեր խաղացող կրոնական կազմակերպությունները, թաղային, բակային հեղինակություններն ու դպրոցական համակարգում գոյություն ունեցող թերությունները: Այդպիսի երիտասարդները հայտնվելով բանակի շարքերում, չունենալով զինծառայության անհրաժեշտ ֆիզիկական, բարոյահոգեբանական նախնական պատրաստվածություն, ծառայության նկատմամբ դրական շարժառիթներ ու կայուն դիրքորոշում, ընդունակ չեն կրել բանակային կյանքի գրկանքներն ու դժվարությունները, հույժ կարևորություն հանդիսացող խիստ կարգապահությունը: Այսպիսի անպատասխանատու վերաբերմունքն ու ծառայության նկատմամբ ցածր շարժառիթների տեր պատանիները հայտնվելով բանակում, դրանում գոյություն ունեցող պահանջների, մարտական պատրաստության գործընթացի համար դառնում են խոտան: Դեռ ավելին, սպայական անձնակազմի համար ստեղծում են կրկնակի դժվարություններ, որը անդրադառնում է ջոկի, վաշտի, գնդի մարտական պատրաստության ընդհանուր գործընթացի որակի վրա:

ՀՀ-յան փոխակերպվող հասարակության առանձնահատկություններից մեկն էլ հանդիսանում է իրականության փոփոխվող պայմանների, հավանական սպառնալիքների (ահաբեկչական գործողություններ, սահմանի զինված ընդհարումներ, հավանական երկրաշարժեր, սողանքներ, տնտեսական ճգնաժամեր և այլն) վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների բացակայությունը, կամ դրանց աղավաղված լինելը: Տեղեկատվական պակասը ըստ Վ. Պ. Սիմոնովի հանդիսանում է հասարակության մեջ շշուկների, տագնապի ու խուճապի առաջացման ու տարածման պատճառ: Տեղեկատվական դեֆիցիտը, ըստ հեղինակի, առաջացնում է բացասական հույզերի առաջացման զանգվածային երևույթներ, որը տարածվում է շատ արագ և ընդգրկում կենտրոնական քաղաքներից մինչև գյուղերը, բանակն ու երկրի սահմանները (Симонов 1970):

Սոցիալական լարվածության, սթրեսածին գործոնների առկայության պայմաններում լուրջ սպառնալիք է հանդիսանում նաև համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցության հետևանքները, դրանց վերաբերյալ տեղեկատվական վակուումը: Սոցիալ-տնտեսական դժվարությունների ազդեցությունը տեղեկատվական դատարկությունը, դրան զուգակցվող խուճապային տրամադրությունները: Մարդկանց բացասական հոգեվիճակների բազմազանությունը, համատարած գործազրկությունն ու աղքատությունը, պատերազմի վերսկսման հավանականությունը, մշակութային սովն ու հոգևոր արժեքների կորստյան վտանգը շատերին դարձնում են անհույս ու անհեռանկար իրականության մեջ ապրող մարդկանց, որոնց համար գերակա խնդիր է դառնում միայն գոյատևման պահանջմունքը: Սովորաբար այսպիսի պայմաններում առաջնային պլան են մղվում նյութական արժեքները, օրվա գոյատևման պահանջը: Այս ամենը մարդկանց դարձնում է նյութապաշտ, եսամոլ: Ժամանակի ընթացքում աստիճանաբար վերանում են միմյանց նկատմամբ նախկինում ունեցած հուզական կապերը, ապրումակցումն ու հարգանքի, բարեկամական զգացումները: Մարդկանց մոտ հետզհետե ներմուծվում են կոնֆորմիստական, հաշտվողական ու իներցիոն վարքագծեր: Մարդիկ միմյանց ու շուրջը տեղի ունեցող երևույթների նկատմամբ դառնում են անտարբեր ու խորթ: Հասարակությունը վերածվում է միմյանց նկատմամբ չեզոք, հաճախ

թշնամական վերաբերմունքով լցված միայնակ մարդկանց հանրույթի: Այսպիսով՝ փոխակերպվող հասարակությունը իր սոցիալ-հոգեբանական բնութագրերով, նրանում գոյություն ունեցող կյանքի դժվար պայմաններով անբարենպաստ սոցիալ-հոգեբանական միջավայր է: Նրանում տեղի ունեցող անբարենպաստ տեղաշարժերն ու բացասական փոփոխությունները նպաստավոր պայմաններ են ստեղծում անձի օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական համակարգերի գործառութային ապահարմարմանը: Հոգեբանական ապահարմարման իրենց զանգվածային բնույթով, օրգանիզմում տեղի ունեցող օրգանական և գործառնական տեղաշարժերով անձանոթ ու խորթ սոցիալ-հոգեբանական, տնտեսական, քաղաքական փոփոխությունները ուղղակիորեն անդրադառնում են ազգաբնակչության բոլոր շերտերի ընդհանուր և հոգեկան առողջության վրա, դրանով վտանգում անձի հոգեբանական անվտանգության պահպանման գործընթացը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Մկրտումյան, Մ. Պ. (2008). Արտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները.
Երևան:
- Александровский, Ю. А. (2001). Психические расстройства во время и после чрезвычайных ситуаций. М.: ПИТЕР.
- Бодров, В. А. (1995). Психологический стресс: развитие учения и современное состояние проблемы. М.: Инст. псих-гии. РАН.
- Емельянова, Е. В. (2004). Кризис в созависимых отношениях. Принципы и алгоритмы консультирования. СПб.: Речь.
- Ильин, Е. П. (2000). Психология воли. СПб – Москва: Питер.
- Малкина-Пых, И. Г. (2006). Экстремальные ситуации. М.: ЭКСМО.
- Куликов, Л. В. (2004). Психогигиена личности. Вопросы психологической устойчивости и психопрофилактики: Учебное пособие. СПб.: Питер.
- Симонов, П.В. (1970). Теория отражения и психофизиология эмоций. М.
- Тарабрина, Н.В. (2001). Практикум по психологии посттравматического стресса. СПб.: ПИТЕР.
- Раен, А.А., Кудашев, А.Р. & Баранов, А.А. (2006). Психология адаптации личности. СПб.: Прайм- Еврознак.

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԻԼԻԹ

ՀՊՄՀ Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի գիտական քարտուղար

ԼՌՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՏԵՔՍԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Լռությունը ողջ տիեզերքում գոյություն ունեցող երևույթներից թերևս ամենազարմանահրաշն ու առեղծվածայինն է: Վաղնջական ժամանակներից սկսած՝ աշխարհի իմաստուն այրերը փորձել են բացահայտել նրա էությունը և ձգտել պարզել, թե որն է սկզբում եղել՝ խոսքը, թե լռությունը: Այս դիրքորոշումն արդեն վկայում է, որ սկզբից նեթ լռությունն ու խոսքը հակադրվել են իրար: Լռությունն այդպես են մեկնաբանում նաև գրեթե բոլոր բացատրական բառարանները՝ լռության ներքո նկատի ունենալով չխոսելը կամ ձայների բացակայությունը: Սակայն նման դիրքորոշումն այնքան էլ հիմնավոր չէ: Հովհաննես Ավետարանչի հանրահայտ միտքը, թե ի սկզբանե Բանն էր, դեռևս չի նշանակում, թե բառը նախորդել է լռությանը, քանզի հունարեն Լոգոս-Բան-ը ոչ միայն խոսք է, այլև միտք, և նույնիսկ գործ: Թեև երգիծաբան Ստանիսլավ Եժի Լեցը սրամտությամբ նկատում է, որ սկզբում եղել է խոսքը, իսկ հետո առաջացել է լռությունը, այնուհանդերձ, ավետարանական Բանը իր մեջ ներառում է նաև լռությունը: (Տե՛ս [://letter.com.ua/aphorizm/mo/9.php](http://letter.com.ua/aphorizm/mo/9.php))

Չխորանալով այն վեճի մեջ, թե ծագումնաբանորեն դրանցից որն է առաջնայինը, նշենք, որ լռելը և չխոսելը չի կարելի դիտարկել իբրև հոմանիշներ: Լռությունը ոչ թե չխոսելն է, այլ խոսելն է՝ առանց բառերի: Առաջին հայացքից կարող է արտառոց թվալ, թե ինչպես կարելի է խոսել առանց բառերի: Բայց խորանալով լռության ենթատեքստերի մեջ՝ մենք կարող ենք համոզվել, որ ոչ միայն կարելի է, այլև առանց բառերի խոսքը, հատկապես, լռությունը հաճախ առավել պերճախոս է: Թեև աշխարհի ոչ մի հոգեբանական, փիլիսոփայական և տրամաբանական բառարաններում ու հանրագիտարաններում «լռություն» վերնագրով հոդված ներառված չէ, սակայն լռությունն ունի իր փիլիսոփայությունը, տրամաբանությունն ու հոգեբանությունը: Լռության հանդեպ այդ բառարանների ու հանրագիտարանների լռությունը դեռևս հիմք չէ ենթադրելու, թե լռության ենթատեքստերը չունեն իրենց փիլիսոփայական-տրամաբանական-հոգեբանական նկարագիրը:

Հոգեբանական գրականության մեջ լռությունը, որպես կանոն, առանձին չի դիտարկվում, քանզի այն համարվում է խոսքին հակադիր երևույթ:

Ս. Ռուբինշտեյնի այն միտքը, թե հոգեբանական ասպեկտ ունի միայն խոսքը, իսկ լեզվի նկատմամբ նման մոտեցում չի կարելի կիրառել, ենթադրում է, որ լռությունը ևս լեզու է, ուստի այն նույնպես չի կարող ունենալ հոգեբանական նկարագիր:

Լռության ենթատեքստերի հոգեբանական նկարագիրը կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից: Նախ, պետք է զանազանել լռության տարբեր իմաստները՝ բնության մեջ տիրող լռություն-անդորրությունը, լռության մատնել-լռությունը և բուն լռությունը: Եթե առաջինը կեցության վիճակ է և ոչ թե սուբյեկտի կողմից իրականացված գործողություն, ապա մյուս երկուսը ներհատուկ են մարդկանց աշխարհին և ունեն իրենց թեմաներն ու հեղինակները (Эпштейн 2005)

Ինքնին հասկանալի է, որ ենթատեքստեր ու հոգեբանական նկարագիր կարող են ունենալ բունը և լռության մատնելը կամ թերասությունը: Իհարկե, հոգեբանական նկարագիր ունի նաև համրությունը, սակայն այն էապես տարբերվում է լռությունից: Համրությունը խոսելու ունակության բնական կամ ձեռքբերովի կորուստ է, իսկ լռությունը մի գործողություն է, որը վերաբերում է խոսելու ունակությամբ օժտված է, բայց խոսքեր չարտաբերող կամ, ավելի ճիշտ, առանց խոսքերի խոսող մարդուն: Իսկ թե ինչու է մարդ լռություն պահպանում և ինչ է թաքնված այդ լռության ներքո, դրա շարժառիթները կարող են լինել բազմաթիվ և տարբեր:

Ամերիկացի հոգեբան Պոլ Էքմանը լռությունը դիտարկում է ստի հոգեբանական համատեքստում և նշում, որ լռությամբ ստախոսը թաքցնում է ճշմարիտ ինֆորմացիան, բայց, միևնույն ժամանակ, չի հայտնում նաև կեղծը: Անշուշտ, միշտ չէ, որ լռությունը կարելի է համարել ստի դրսևորում, քանի որ մարդիկ լռում են տարբեր պատճառներով և տարբեր հանգամանքներից ելնելով:

Ինքը՝ Էքմանը, նշում է, որ լռությունը կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով՝ - գրուցակիցը դեռևս չունի տրված հարցի պատասխանը.

- Համակարգված է հույզերով (ուրախություն, զարմանք, ճնշվածություն):
- Գտնվում է վախի մեջ,- լցված է աստելությամբ (Սոլ 1999: 5):

Կարող են լինել նաև այլ պատճառներ՝ տրտմություն, շփոթվածություն, զրգովածություն, ձանձրույթ և այլն: Սրանք բոլորն էլ լռության ենթատեքստերի վրա ազդող գործոններ են և միշտ չէ, որ պայմանավորված են ստելու կամ ճշմարտությունը չհայտնելու հետ: Սակայն մեկ այլ բան է լռության պատճառը, իսկ մեկ այլ բան՝ լռության ենթատեքստը, այլ խոսքով՝ լռության ներքո թաքնված խոսքը:

Պետք է ասել, որ լռությունը հույժ կարևոր նշանակություն ունի երկխոսության և ամեն մի հաղորդակցության ընթացքում: Լռությունն անհրաժեշտ է նախ և առաջ գրուցակցի խոսքը լսելու և նրա կողմից հաղորդած ինֆորմացիան ընկալելու ու հասկանալու համար: Դրանից հետո լռությունն անհրաժեշտ է հաղորդած ինֆորմացիային արձագանքելու կամ տրված հարցին պատասխանելու համար: Եթե տրված հարցը համապատասխան արձագանք չի ստանում, կամ էլ հարցը լսելուց հետո գրուցակիցը լռություն է պահպանում, դա դեռ չի նշանակում, թե նա չի խոսում: Պարզապես, նա խոսում է առանց բառերի: Ընդ որում՝ դա ոչ թե սուկ ներքին խոսքն է, որին կարող է հետևել արտաքին խոսքը, այլև մի յուրահատուկ գրույց է՝ առանց բառերի: Լռությունը ոչ միայն մենախոսություն է, այլև երկխոսություն: Սովետական բառերով ոչինչ չասելով՝ մարդն իր լռությամբ գրուցում է ոչ միայն ինքն իր հետ, այլև պատասխանում է գրուցակցին: Այդ պատասխանը գրուցակիցը չի լսում, սակայն նա էլ լռության մեջ փորձում է հասկանալ դիմացինի լռությունը և բացահայտել այդ լռության հոգեբանական ենթատեքստերը: Երկու տարբեր սուբյեկտներ սեփական և միմյանց լռության ներքո փնտրում են տարբեր ենթատեքստեր: Երկու լռությունների միջև ընթանում է սուր հոգեբանական պայքար և մի ինքնատիպ բանավեճ, սակայն բավականին դժվար է դիմացինին համոզել լռությամբ: Ինչպես նշել է Հենրի Ուիլլեր Շոուն (Ձոշ Բիլլինգս)՝ լռությունն առավել դժվար հերքելի փաստարկներից մեկն է ([http:// etter.com.ua/ aphorizm/mol9.php](http://etter.com.ua/aphorizm/mol9.php)):

Բացահայտել լռության հոգեբանական ենթատեքստը՝ նույնն է, թե ըմբռնել լռություն պահպանող սուբյեկտի ներաշխարհը, նրա հույզերի ու մտքերի ամբողջությունը և ներթափանցել նրա հոգու գաղտնաբանները: Լռության ենթատեքստի հոգեբանական նկարագիրը կազմելիս՝ յուրաքանչյուր ոք կշռադատում է՝ ելնելով իր հոգեկերտվածքից և աշխարհընկալումից:

Վիրավորանք ապրած մարդու լռությունը կարող է ստանալ տարբեր բացատրություններ:

Վիրավորանք հասցնողը կարող է մտածել, որ լռություն պահպանողը

- ընդունում է վիրավորանքը,
- վախենում է վիրավորանքին. վիրավորանքով պատասխանել,
- նախապատրաստվում է վրեժխնդիր լինելուն և այլն:

Այդ կամ այլ կերպ կարող են մտածել նաև տվյալ միջադեպի ականատեսները: Ոմանք կարող են համաձայնել վիրավորանք հասցնողի հոգեբանական վերլուծությունների հետ, իսկ ոմանք էլ լռությունը կարող են համարել ներողամտություն, վեհանձնություն կամ էլ առավել նուրբ ու առավել դաժան վիրավորանք: Թեև Շեքսպիրը իր Հուլիոս Կեսար ստեղծագործության մեջ նշում է, որ դավադիրների շարքում իր հոգեզավակին տեսնելով Կեսարը բացականչել է՝ «Եվ դո՛ւ, Բրուտո՛ս», սակայն պատմագիրների վկայությամբ՝ իրականում, այդ դեպքից ցնցված, Կեսարը սուտը մի կողմ է նետել և զարմանքից, զայրույթից, աստելությունից կամ անասելի ծանր

ապրումներից ելնելով՝ ոչինչ չի ասել, այլ խոսքով՝ լռել է: Փաստորեն, «Եվ դո՞ւ, Բրուտո՛ւ» արտահայտությունը Կեսարի լռության ենթատեքստերի հոգեբանական բացահայտումն է Շեքսպիրի կողմից:

Հոգեբանական տարբեր մեկնաբանություն է ստացել նաև Հիսուսի լռություն-համբույրը Մեծ Հավատաքննիչի շուրթերին: Միխայիլ Էպշտեյնի կարծիքով՝ այդ համբույրով Հիսուսը արգելափակում է այն շուրթերը, որոնք կեղծիք են բարբառում և նրանց վերադարձնում է լռության արժանապատվությունը: Այդ համբույրն ունի երկակի նշանակություն. մի կողմից այն խոսքի ընդհատում է, իսկ մյուս կողմից՝ խոսքի պատասխան (Эпштейн 2005):

Էպշտեյնի տեսակետը համոզիչ է մասամբ, քանզի Հիսուսի լռություն-համբույրը, ըստ Դոստոևսկու աշխարհընկալման, նախ և առաջ, աստվածային գրասրտության արտահայտություն է (առավել մանրամասն տե՛ս Լ. Պետրոսյան, «Լռությունը որպես ենթատեքստ»): Առավել հետաքրքիր և ինքնատիպ է լռության արժանապատվության վերադարձի գաղափարը: Բանն այն է, որ աստվածային ճշմարտությունը կարելի է ընկալել լռության մեջ և լռությունն էլ հենց Աստծո բարբառն է: Հաճախ մարդիկ դժգոհություն են հայտնում, թե իրենց ջերմեռանդ աղոթքները և աղերսները ոչ մի արձագանք չեն ստանում Աստծո կողմից: Մարդկանց համար այնքան էլ հասկանալի չէ Աստծո լռությունը: Իհարկե, դժվար է բացահայտել Աստծո լռության ենթատեքստերի հոգեբանությունը: Սակայն կարելի է խորհել՝ իսկ միգուցե Աստված ինքը չի հավատում հավատացյալների աղոթքների անկեղծությանը:

Լռության վերաբերյալ գոյություն ունի մի արմատացած կարծիք, որը շրջանառության մեջ է դրել Հռոմի Բոնիֆացիոս 8-րդ Պապը: Խոսքը «Լռությունը համաձայնության նշան է» ասույթի մասին է, որը ոչ բոլորպարագաներում է ճշմարիտ: Ինչպես գեղարվեստական մեծ վարպետությամբ արտահայտել են Շեքսպիրը (Ռիչարդ III) և Պուշկինը (Բորիս Գոդունով), երբեմն լռությունը լիակատար անհամաձայնության նշան է: Օգյուստ Ռոդենի «Մտածողը» քանդակում նկատելի է մի խորհրդավոր լռություն, որի հոգեբանական ենթատեքստը բազում վերլուծությունների տեղիք է տվել: Առեղծվածային լռությամբ է համակված նաև Լեոնարդո դա Վինչիի Ջոկոնդա կտավում պատկերված Մոնա Լիզայի լուռ ժպիտը:

Լռության ենթատեքստերի հոգեբանական նկարագիրը պետք է դիտարկել որոշակի համատեքստում: Այլ խոսքով՝ պետք է իմանալ երբ լռել, որտեղ լռել և ինչու լռել: Լռության պահպանումը միշտ չէ, որ արդարացված է: Լռակյաց մեծամասնության վարքագիծը բավականին հիմնավոր կերպով դատապարտել է ֆրանս. մշակութաբան Ժան Բոդրիարը (Бодрийар 2000): Հաճախ այնտեղ, որտեղ անհրաժեշտ է խոսել մարդիկ լռություն են պահպանում, իսկ որտեղ նախընտրելի է լռությունը, անհարկի շատախոսում են: Վիտգենշտայնի՝ «Ինչի մասին անհնարին է խոսել, այդ մասին պետք է լռել» (Витгенштейн 1958: 91) ասույթը հաճախ մեկնաբանում են այնպես, թե իբր լռությունն ու խոսքը փոխբացառում են միմյանց: Սակայն Վիտգենշտայնի ասույթի իմաստն այն է, որ պետք է լռել միայն այն հարցերի մասին, որն անհնարին է արտահայտել խոսքով: Ընդ որում՝ խոսք ասելով նկատի պետք է ունենալ բառերով արտահայված խոսքը:

Ինչպես նշել է Մարտին Հայդեգերը՝ մենք մշտապես խոսում ենք, նույնիսկ այն դեպքում, երբ որևէ բառչենք արտաբերում, այլ միայն լսում և կարդում ենք և նույնիսկ այն դեպքում, երբ չենք լսում և չենք կարդում, այլ աշխատում ենք կամ հանգստանում: Ինչ-որ մի եղանակով մենք մշտապես խոսում ենք (Хайдегер 1991: 3): Սա նշանակում է, որ լռությունը նաև մտածողություն է, մի ներքին գրույց՝ առանց որի անհնար է պատկերացնել մարդու կյանքը և որի շնորհիվ մարդ արժանի է դառնում իր իրական կոչմանը:

Երկար դարեր մարդիկ պայքարել են խոսքի իրավունքի համար: Լռությունը նույնպես պետք է ունենա իր իրավունքը: Բայց այդ իրավունքը չպետք է վերածվի պարտականության և պարտադրանքի: Երբ մարդիկ լռում են, դա դեռ չի նշանակում, թե նրանք ոչինչ չունեն միմյանց

ասելու, որովհետև մարդիկ նաև լռում են այն պատճառով, որ այնքան շատ բան ունեն ասելու, որ բառերով դժվար է արտահայտել:

Լռության մասին կարելի է անընդհատ խոսել, սակայն լռության ենթատեքստերի հոգեբանական նկարագիրը թերևս առավել ցայտուն և պերճախոս կարող է արտահայտել հենց ինքը՝ լռությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Бодрийар, Ж. (2000). В тени молчаливого большинства, или конец социального. Екатеринбург.

Витгенштейн, Л. (1958). Логико-философский трактат. М.

Хайдегер, М. (1991). Язык. СПб.

Эпштейн, М. (2005) “Слово и молчание в русской литературе”. «Звезда», N10.

Экман, П. (1999). Психология лжи. Обмани меня, если сможешь. СПб.

<http://letter.com.ua/aphorizm/pol9.php>

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱԶԳԵՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ,
հոգեբանական գիտ.թեկնածու

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՆՆԱ

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի ասիստենտ,
հոգեբանական գիտ.թեկնածու

ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ներկայացված են այն հիմնական հոգեբանական և մանկավարժական պահանջները, որոնց հիման վրա պետք է փոփոխություն կրեն դպրոցական դասագրքերը փոխակերպվող հասարակության անցումային փուլում: Մյուս կրթական միջոցներին ներկայացվող պահանջներին անդրադարձ կկատարվի հետագա հրապարակումներում:

Առանցքային բառեր և բառակապակցություններ՝ փոխակերպություն, անցումային հասարակություն, տրանսֆորմացիոն հասարակություն, հանրակրթության բարեփոխումներ, դասագրքի գործառույթները, դասագրքի գնահատման չափանիշները:

Փոխակերպություն (տրանսֆորմացիա) հասկացությունն ունի լատինական ծագում և նշանակում է փոխել, փոխակերպել, վերափոխել, ձևափոխել և այլն: Փոխակերպությունը բնութագրում է համակարգի այնպիսի փոփոխություններ, որոնք ,ի տարբերություն հեղափոխությունների, ունեն աստիճանական բնույթ:

Ցանկացած “անցումային հասարակություն” նաև “տրանսֆորմացիոն հասարակություն” է: Բայց ամեն մի “տրանսֆորմացիա” դեռևս չի նշանակում, թե համակարգը “անցումային” է: Անցումային հասարակությունը սոցիալական համակարգերի անվերջ տրանսֆորմացիայի կոնկրետ ու սահմանափակ փուլ է, որի ավարտից հետո ձևավորված նոր համակարգը ձեռք է բերում գոյության ու վերարտադրության , զարգացման ու գործառնության նոր հիմունքներ և այդ հիմունքների շրջանակներում շարունակում իր՝ արդեն ներհամակարգային տրանսֆորմացիան (Հարությունյան 2000):

Անցումային շրջանում առավելապես դժվարանում է կրթական համակարգի գործունեությունը, քանի որ փոփոխությունների հորձանուտում այն դժվարությունների է բախվում իր առաքելությունն իրականացնելիս:

“Հանրակրթության պետական կրթակարգում” (ՀՊԿ 2004) նշվում է, որ արդի հասարակության զարգացման միտումներն ու գործոնները հրատապ են դարձրել Հայաստանի Հանրապետությունում կրթությունը ժամանակակից կյանքի պահանջներին համապատասխան կազմակերպելու, կրթության համակարգը բարեփոխելու և այդ նպատակով հանրակրթության հայեցակարգային պատկերացումները, քաղաքականությունը, բովանդակությունը նորովի սահմանելու և կրթության կազմակերպման սկզբունքները ճշգրտելու անհրաժեշտությունն ու իրագործումը:

Հանրակրթության բարեփոխումների համալիրում իր կարևորությամբ և առաջնահերթությամբ առանձնանում է նոր դասագրքերի ստեղծման խնդիրը: Դիպուկ է ասված՝ լավ դասագիրքը դպրոց արժե: Լավ դասագիրքը երեխային և՛ կրթվելու, և՛ դաստիարակվելու, այսինքն՝ սոցիալականացվելու հնարավորություն է տալիս: Այս գործընթացը հանգեցնում է գիտելիքների, սոցիալական վարքի ձևերի, լեզվի, հմտությունների, բարոյական և իրավական սկզբունքների, արժեքների և նորմերի յուրացմանը (Պոդոսյան 1996, Джуринский 1967):

Հայտնի է, որ դպրոցական դասագիրքը ուսուցման կարևորագույն միջոցներից մեկն է, որը համագործակցում է ինչպես “կենդանի ուսուցման”, այնպես էլ ուսուցման մի շարք այլ

միջոցների հետ: Դրանով իսկ այն կոչված է կատարելու մի շարք տարբեր գործառույթներ: Ուստի նպատակահարման է դասագիրքը գնահատել այդ գործառույթների կատարման տեսանկյունից: Նման գնահատումը պետք է պատասխանի հետևյալ հարցերին՝ կատարում է, արդյոք, տվյալ դասագիրքը նախանշված մանկավարժական գործառույթները, ի՞նչ չափով է դրանք կատարում, դասագրքի ո՞ր հատկություններն են նպաստում իր առջև դրված խնդիրների կատարմանը:

Այդ հարցերի պատասխանները թույլ են տալիս կարծիք կազմել դասագրքի արդյունավետության մասին, ինչը և նրա դիդակտիկ ստուգման գլխավոր նպատակն է: Արդյունավետության չափանիշը դասագրքի կողմից իր հիմնական գործառույթների կատարման մակարդակն է: Որո՞նք են այդ գործառույթները և դասագրքի ո՞ր հատկություններն են նպաստում դրանց իրականացմանը:

Մանկավարժական և հոգեբանական գրականության մեջ (Պոդոսյան 2005, Бейлинсон 1985, 1983, Ясвин 2004) առավել հաճախ առանձնացվում են դասագրքի հետևյալ գործառույթները՝ տեղեկատվական, փոխակերպական, հետազոտական, ինքնակրթական, ինչպես նաև ստուգիչ-գնահատող կամ ինքնաստուգիչ: Ըստ այդմ հատուկ ուշադրություն է դարձվում հետազոտական և լայն իմաստով հասկացվող ինքնակրթական գործառույթների վրա, որոնց գերադասելի զարգացումը նպաստում է ժամանակակից դիդակտիկայի ընդհանուր նորագույն միտումներին: Նշված գործառույթներից բացի առավել հաճախ առաջարկվում է հաշվի առնել նաև դասագրքի մոտիվացիոն և վարժեցնող գործառույթները:

Տեղեկատվական գործառույթի առավել ամփոփ իրականացումն այն է, որ դասագիրքն ընդգրկում է տեղեկատվություն ներկայացվող գիտելիքների բնագավառից: Ի տարբերություն ուսուցման մյուս միջոցների՝ դասագիրքն այդ տեղեկատվությունը տրամադրում է տրամաբանական, առարկայական և հոգեբանական տեսանկյուններից՝ համապատասխանաբար կանոնակարգված տեսքով:

Դասագրքի խնդիրն է ոչ միայն աշակերտին նախապատրաստել իրականության ճանաչմանը, այլև դրա վերափոխմանը, որը կատարվում է **փոխակերպական գործառույթի** շնորհիվ: Դասագրքի այդ գործառույթը սերտորեն կապված է նրա **վարժեցնող գործառույթի** հետ, որը նպատակաուղղված է աշակերտի մոտ անհրաժեշտ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը և միաժամանակ կապ է ստեղծում **հետազոտական գործառույթի** հետ: Դասագրքում այն դրսևորվում է կամ իմացության ուղիների և մեթոդների նկարագրության, կամ աշակերտների ինքնուրույն գործունեությունը կազմակերպող հարցերի և առաջադրանքների ձևով: Հետազոտական գործառույթի մշակումը նախատեսում է աշակերտների կողմից իրենց համար մատչելի գործողությունների, հետազոտական բնույթի գործառույթների կատարում և դրանց շնորհիվ յուրաքանչյուր առարկայից նվազագույն մեթոդոլոգիական տեղեկությունների ձեռքբերում:

Դասագրքի **ինքնակրթական գործառույթի** իրականացումը նպատակաուղղված է աշակերտի կողմից տեղեկատվության տարբեր աղբյուրների ինքնուրույն օգտագործման պայմանների ստեղծմանը: Դասագրքի նյութերը պետք է խթանեն տեղեկատվության նոր միջոցների որոնումը, ձևավորեն դրական վերաբերմունք ուսման հանդեպ: Դրան կարելի է հասնել ուսումնական նյութի այնպիսի շարադրմամբ, որը կխթանի հետաքրքրությունը դասերի հանդեպ և կձևավորի մտավոր աշխատանքի կարողություններ:

Դասագրքի **մոտիվացիոն գործառույթի** իրականացումը խթանում և զարգացնում է աշակերտի հուզական-մոտիվացիոն հատկությունները: Խոսքն առաջին հերթին տվյալ առարկայի ուսումնասիրման և ուսումնական գործընթացի հանդեպ դրական վերաբերմունքի ձևավորման մասին է:

Մյուս գործառույթների հետ սերտորեն կապված է դասագրքի **ստուգիչ գործառույթը**: Դրա իրականացման համար դասագիրքը պետք է կառուցվի այնպես, որպեսզի աշակերտը կարողանա ինքնուրույն վերահսկել ոչ միայն բուն դասագրքից, այլև տեղեկատվության այլ

աղբյուրներից ձեռք բերած գիտելիքների յուրացումը: Գիտելիքների ստուգումը պետք է հասկանալ լայն իմաստով. դա և՛ ինքնաստուգում է, և՛ ինքնավերահսկողություն, որոնք ամբողջական հետադարձ կապ են ապահովում աշակերտի և դասագրքի միջև:

Անհրաժեշտ է, արդյոք, որ մի դասագիրքը կատարի նշված բոլոր գործառնությունները և, հետևաբար, անհրաժեշտ է, արդյոք, այն գնահատել այդ տեսանկյունից: Այդ հարցին միանշանակ պատասխանել հնարավոր չէ, քանզի անհրաժեշտ է նկատի ունենալ դասագրքերի գոյության տարատեսակ ձևերը: Վ. Օկոնի դասակարգմամբ (1983) այդ տարատեսակներն են՝ համապիտանի դասագիրք, համակարգված դասագիրք, գործնական վարժությունների դասագիրք և ծրագրավորված դասագիրք: Դրանցից յուրաքանչյուրն ունի տարբեր հատկություններ: Նշված բոլոր գործառնությունները կարող է իրականացնել միայն համապիտանի դասագիրքը, սակայն ամեն մի դասագիրք չէ, որ պիտի այդպիսին լինի: Հնարավոր է, որ դասագիրքը իրականացնի միայն որոշ գործառնություններ, օրինակ՝ գլխավորապես տեղեկատվական և հետազոտական, կամ գործառնությունների մի այլ խումբ: Դա պայմանավորված է դպրոցի կոնկրետ պահանջներով և դրանց հետ փոխկապակցված հեղինակային հայեցակարգերով:

Դասագրքի հիմնական գործառնությունների իրականացումը կախված է (բացի դպրոցական պրակտիկայում նրա մեթոդապես զրազետ օգտագործումից) մեծ թվով տարբեր գործոններից՝ տեսական, մեթոդական, լեզվաբանական, տնտեսագիտական և պոլիգրաֆիական:

Դասագրքի արդյունավետության հետազոտությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ տեսական (վերլուծական) և էմպիրիկական (փորձնական): Դրանք անխզելի կապի մեջ են գտնվում միմյանց հետ և եթե տեսական ստուգումը թույլ է տալիս դասագիրքը գնահատել նրա միայն որոշ հատկությունների տեսանկյունից, ապա դասագրքի իրական պիտանիության մասին կարող են վկայել միայն դպրոցում կատարված էմպիրիկական ստուգումների արդյունքները:

Ինչպես նշեցինք, դասագրքի գնահատման դիդակտիկական չափանիշներ պետք է համարել նրա հիմնական գործառնությունները: Ու՞նի, արդյոք, դասագիրքն այն հատկությունները, որոնք ապահովում են նշված գործառնությունների կատարումը: Այդ հարցին կարելի է պատասխանել միայն նրա մանրակրկիտ վերլուծությունից հետո: Դրա համար անհրաժեշտ է որոշել, թե դասագրքի որ հատկություններն են կապված որոշակի գործառնությունների կատարման հետ:

Որպես օրինակ դիտարկենք հատկությունների այն ցանկը, որոնք պետք է ունենա դասագիրքը **տեղեկատվական գործառնություններ** կատարելու համար:

1. Դասագրքի բովանդակությունը.

- համապատասխանությունը գիտության բովանդակության ժամանակակից վիճակին,
- դասակարգումը առարկայական, տրամաբանական և հոգեբանական պլանում (առարկայի կառուցվածքը հաշվի առնելով),
- համաձայնեցվածությունը ուսումնական ծրագրի հիմնական դրույթների հետ,
- անվանումների միասնականացումը, սահմանումների հստակությունը,
- հարակից առարկաների դասագրքերի հետ եզրույթների և անվանումների համաձայնեցվածությունը,
- տեղեկատվության մատուցման տարատեսակությունը (բառ, նկար, լուսանկար, գծապատկեր և այլն):

2. Դասագրքի կառուցվածքը.

- կառուցվածքի հստակությունը, բաղադրամասերի կրկնվողությունը (օրինակ՝ տեղեկատվական տեքստի, վարժությունների բլոկի, ստուգողական հարցերի բլոկի, եզրակացությունների և այլն),

- դասագրքի բովանդակության կառուցվածքում մտավոր գործունեության մեթոդիկայի հիմնական սկզբունքների իրագործումը՝ գլխացանկը դասագրքի սկզբում, առարկայական, անվանական և այլ ցանկերի օգտագործումը և այլն:

3. Բովանդակության մեթոդական մշակումը.

- համապատասխանությունը լեզվի բնագավառում ժամանակակից դիդակտիկայի պահանջներին (մատչելիությունը, ճիշտ կառուցվածքը, ճկունությունը),
- համապատասխանությունը տվյալ առարկայի մեթոդական պահանջներին,
- հեղինակի դրույթները լուսաբանող օրինակների բազմազանությունը,
- հղումը անցած նյութին և աշակերտների փորձին,
- հիմնական առաջադրանքների բազմազանությունը,
- ուսումնական նյութը ըստ բարդության տարբեր մակարդակների բաժանումը,
- հիմնախնդիրների լուծման գործընթացում աշակերտների մտածական գործընթացների կառավարումը:

4. Ձևավորումը և պոլիգրաֆիական կատարումը.

- դասագրքի օգտագործման հարմարավետությունը,
- կազմի գործնականությունը, նրբագեղությունը և տեղեկատվողականությունը (կազմը պետք է լինի ամուր, դյուրաթեք, հիգիենիկ, հետաքրքիր և տեղեկացնի դասագրքի բովանդակության մասին),
- թղթի որակը (թուղթը պետք է լինի լավ որակի, համապատասխան գույնի և երանգի),
- պատկերազարդումների բազմազանությունը՝ նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ,
- տեղեկատվության աղբյուրի կարևոր դեր կատարող գունավոր պատկերազարդումների առկայությունը, դրանց համապատասխանությունը տեքստային բովանդակությանը և հարմարեցումը աշակերտների ընկալման տարիքային հնարավորություններին,
- պատկերազարդումների մակագրությունների համառոտությունը և հստակությունը, դրանց ձևի և ոճի համապատասխանությունը պատկերազարդումների բնույթին և գործառույթներին,
- համապատասխան ընդգծումների (օրինակ՝ հիմնական հասկացությունների, տեղեկատվական դրույթների և այլ էլեմենտների) օգտագործումը,
- լուսանցքների առկայությունը, որտեղ կարող են տեղադրվել հիմնական հասկացությունները, որոշակի նկարները,
- ընթերցումը խթանող ծավալը,
- դասագրքի հեղինակի, ինչպես նաև նկարչի, գրախոսի և խմբագրի ազգանունների հստակ ընդգծումը:

Նման կերպ կարելի է կազմել դասագրքի վերլուծության չափանիշների ցանկ նաև այլ գործառույթների իրականացման տեսանկյունից: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, դասագրքի պիտանիության մասին ամբողջական պատկերացում կարելի է կազմել միայն նրա տեսական վերլուծությունը համադրելով դպրոցում դասագրքի գործնական փորձարկման հետ:

Մենք ներկայացրեցինք այն հիմնական հոգեբանական և մանկավարժական պահանջները, որոնց հիման վրա պետք է փոփոխություն կրեն դպրոցական դասագրքերը փոխակերպվող հասարակության անցումային փուլում: Մյուս կրթական միջոցներին ներկայացվող պահանջներին կանդրադառնանք հետագա հրապարակումներում:

- Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ (2004): Երևան “Անտարես”:
- Հարությունյան, Է.Ա. (2000): Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ: Երևան, ԵՊՀ-ի հրատարակչություն:
- Պողոսյան, Վ. Վ. (1996): Նոր սերնդի դասագրքերին ներկայացվող հոգեբանամանկավարժական մի քանի պահանջ: Դասագիրքը բարեփոխվող դպրոցում (գիտագործնական համաժողովի նյութեր), Երևան:
- Պողոսյան, Վ. Վ. (2005): Պատմության դասագրքաստեղծման և դասավանդման գործընթացի հոգեբանական դիտանկյունները: “Պատմություն և կրթություն”, թ.1-2:
- Бейлинсон, В.Г., Зуев Д.Д. (1985). О функциональном подходе к оценке школьных учебников. Проблемы школьного учебника, вып. 5, Москва “Просвещение”.
- Джуринский, А.Н. (1967). Развитие образования в современном мире. Москва, “Владос”, 1999.
- Оконь, В. (1983). Очерк общей дидактики. Варшава, . Проблемы школьного учебника. Круглый стол. “Вопросы психологии”, N6,.
- Ясвин, В.А. (2004). Образовательная среда. Москва “Смысл”.

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԿԱՄՈ

Հոգեբանական գիտությունների թեկնածու, Խ.Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի գիտա-հետազոտական
կենտրոնի տնօրեն, դոցենտ

ԱՈՒՏՈՂԵՍՏՐՈՒԿՏԻՎ ՀԱԿՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ
ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉ

Հոդվածում քննարկվում է հեղինակի կողմից ուսումնասիրված աուտոդեստրուկտիվ դեպքերի հոգեբանական առանձնահատկությունները: Հետազոտությունները կատարվել են 2000-2005 թթ.-ին ՀՀ ԶՈՒ տեղի ունեցած ինքնասպանության, ինքնասպանության փորձերի և ինքնախեղման դեպքերի վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազությունում և կայազորների զիվորական դատախազություններում առկա փաստերի հիման վրա: Պարզվում է, որ երբ բացակայում են հոգեբանական ադապտացիայի համար անհրաժեշտ պայմանները, ապա սահմանային հոգեվիճակները կարող են նպաստել ոչ միայն հակառակակողմ գործողությունների, այլ նաև բազմաբնույթ հոգեֆիզիոլոգիական խախտումների ու հոգեմարմնական վնասվածքների առաջացման, ինչպես նաև սուիցիդների դրսևուման, իբրև փակուղային իրավիճակից դուրս գալու վարքային յուրահատուկ ձև:

Հետազոտության արդյունքում առաջարկվում է կանխարգելիչ միջոցառումների մեխանիզմներ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ աուտոագրեսիա, սուիցիդ, սիմուլյատիվ ինքնավնասում:

Մարդկության զարգացման ներկա փուլում, երբ տեղի են ունենում սոցիալ-քաղաքական ու սոցիալ-մշակութային բնույթի աննախադեպ իրադարձություններ ու խոշորամասշտաբ փոփոխություններ, համաշխարհայնացման գործընթացներ, ճգնաժամեր, երբ քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային վերակառուցումների հետևանքով կազմալուծվում են նախկինում կայուն հասարակական կառուցվածքներն ու դրանց տարրերը, սոցիալական խմբերն ու անհատները հայտնվում են սահմանային իրավիճակներում, ինչն անմիջականորեն ազդում է հասարակության սոցիալ-հոգեբանական մթնոլորտի, մարդկանց տրամադրության, ինքնազգացողության, հոգեվիճակների, գնահատականների, դիրքորոշումների ու վարքի վրա: Նման պայմաններում մարդիկ հաճախ են ապրում հոգեկան խռովք, տարաբնույթ կոնֆլիկտներ, ֆրոստրացիաներ ու սթրեսներ, ներկայի ու ապագայի հանդեպ տագնապներ:

Սուիցիդն /ինքնսպանության երևույթն/ իր բնույթով, աճի տենդենցով և տարածվածությամբ անտիկ ժամանակներից ի վեր դարձել է ուշադրության և ուսումնասիրության առարկա: Այդ խորհրդավոր երևույթը փորձել են մեկնաբանել տարբեր բնագավառների գիտնականներ և մասնագետներ: Այստեղից էլ բխում է սուիցիդի վերաբերյալ ուսմունքի՝ սուիցիդոլոգիայի բարդ, գլոբալ և բազմաշերտային բնույթը:

Աշխարհում տարեկան ինքնասպանություն են կատարում 1.000.000 մարդ, իսկ ինքնասպանության փորձերի թիվը տասնյակ անգամ ավելի մեծ է (Վարդանյան 2008: 13): Համաշխարհային առողջապահական կազմակերպության կանխատեսումներով 2020թ.-ին մոտ 1.53 միլիոն մարդ ինքնասպան կլինեն, իսկ 10-20 անգամ ավել մարդիկ կիրականացնեն ինքնասպանության փորձ: Ստացվում է, որ միջին հաշվով, յուրաքանչյուր 20 րոպեն մեկ ինքնասպան կլինի 1 մարդ և յուրաքանչյուր 1-2 վրկ. հետո կկատարվի մեկ սուիցիդալ փորձ (Վարդանյան 2008: 21): Պարզվում է, որ սկսած 19-րդ դարից բոլոր երկրներում դիտվում է ինքնասպանությունների մշտական և հավասարաչափ աճ:

Հիմնախնդիրն այժմ ձեռք է բերել համաշխարհային հնչեղություն, քանի որ այն վաղ տարիքի անձանց լայն շերտերն ընդգրկելու հակվածություն է դրսևորում, այսինքն՝ երևույթը ձեռք է բերել երիտասարդանալու միտում: Այս առումով հիմնախնդրի ուսումնասիրության

արդիականությունը և հրատապությունը կասկած չեն հարուցում: Այն բխում է առաջին հերթին հասարակության կենսական պահանջներից, նրա զարգացման տենդենցներից և առողջ գործելակերպի ապահովումից:

Ինքնասպանության մակարդակը հաշվարկվում է յուրաքանչյուր 100.000 բնակչին ընկնող ցուցանիշով: Եթե այդ ցուցանիշը երկրում կազմում է 10 ավարտված սուիցիդներ, ապա ենթադրվում է, որ հասարակության մեջ առկա է հոգեբանական, սոցիալական բարեհարմարություն, եթե 10-20, ապա հասարակության մեջ առկա է որոշակի լարվածություն և եթե այդ ցուցանիշը գերազանցում է 20-ը, ապա ինքնասպանության մակարդակը համարվում է բարձր՝ ճգնաժամային:

Մեր կողմից նախկին մի շարք աշխատություններում (Վարդանյան 2007) և հողվածներում (Վարդանյան 2009) քննարկվել է ինքնասպանությունների և ինքնասպանության փորձերի քանակական դրսևորումները ինչպես համաշխարհային մակարդակով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության բնակչության առումով: Սույն հողվածում փորձ է արվելու գիտական վերլուծության ենթարկել ՀՀ զինված ուժերում առկա ինքնասպանության և ինքնասպանության փորձերի դրսևորումները: Հետազոտությունները կատարվել են 2000-2005 թթ.-ում ՀՀ ԶՈՒ-ում տեղի ունեցած ինքնասպանության և ինքնասպանության փորձերի վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազությունում և կայագրորների զինվորական դատախազություններում առկա 55 դեպքերի հիման վրա:

Ինքնասպանության և ինքնասպանության փորձ կատարած 55 անձինք եղել են զինծառայողներ, որոնցից 3-ը՝ սպաներ, 52-ը՝ ժամկետային զինծառայողներ, ընդ որում ժամկետային զինծառայողները եղել են 18-23 տարեկան, իսկ պայմանագրային հիմունքներով ծառայողները՝ 30, 37 և 42 տարեկան: Նշված անձանցից ոչ ոք նախկինում հոգեկան հիվանդությամբ չի տառապել, հաշվառման մեջ չի գտնվել և նման հիվանդություններից չի բուժվել: Արձանագրված ինքնասպանություններից 23-ը և դրանց փորձերից 4-ը կատարվել են հրազենով, 25-ը կախվելու միջոցով, 17 փորձերից մեկական ինքնասպանություն կատարվել է ինքնաթուռավորման, բարձրությունից վայր ընկնելու միջոցով և սուր կտրող գործիքով բազկի շրջանում երակները կտրելու եղանակով: Փաստորեն ինքնասպանության ձևը պայմանավորված է ինքնասպանության միջոցի հասանելիությամբ:

Ինքնասպանության և ինքնասպանության փորձ կատարած 55 զինծառայողներից 12-ը ինքնասպանության, իսկ 4-ը՝ ինքնասպանության փորձ են կատարել համաժառանգության կողմից դրսևորած ոչ կանոնադրային փոխհարաբերությունների հետևանքով, 5-ը՝ հոգեկան ընկճված և դեզադապտացիոն վիճակներում հայտնվելու պատճառով, 9-ը՝ ընտանեկան կամ այլ անձնական դրդապատճառներից ելնելով, 6-ը ինքնասպանություն կատարելու պահին գտնվել են աֆեկտի մեջ և հաշիվ չեն տվել իրենց գործողությունների համար, 3-ը ինքնասպանություն են կատարել ծառայել չցանկանալու պատճառով, 2-ը՝ ծանր սոցիալական վիճակի պատճառով, մեկը թմրամոլության հետևանքով և մեկը՝ գիշերամիզությամբ տառապելու պատճառով: Չորս դեպքերով ինքնասպանություն կատարելու դրդապատճառները չեն պարզվել:

Սրանք պաշտոնական հաղորդագրություններ են, սուիցիդալ ցուցանիշներ, որոնք պարունակում են ավարտված կյանքի մեծ ողբերգություններ, որոնք երևույթի կանխարգելման նպատակով պահանջում են մասնագիտական խոր վերլուծություն:

Սովորաբար ինքնասպանությունը սահմանվում է որպես հոգեբանական դեզադապտացիայի արդյունք, երբ անձը հոգեկանի ախտաբանական կամ սահմանային վիճակում ինքնակամ (ներքին կամ արտաքին ազդակներից դրդված) դիմում է լետալ ավարտով աուտոդեստրուկտիվ գործողությունների: Ինչպես նկատում ենք ցանկացած սուիցիդալ գործողություն ենթադրում է դեզադապտացիա և բոլոր սուիցիդենտների մոտ նախասուիցիդալ շրջանում դրսևորվել է առաջնային և երկրորդային դեզադապտացիա իր ֆունկցիոնալ և օրգանական, սոմատիկ հետևանքներով:

Զինակոչիկը, ընդգրկվելով զինվորական ծառայության, կախված նրա դաստիարակությունից և յուրացրած սոցիալական արժեքներից, չի կարողացել հարմարվել կանոնակարգային փոխհարաբերություններին, որտեղ իրենց ամբողջ սպեկտրով սկսում են գործել դեգադապտացիոն գործընթացները: Համապատասխան առիթի դեպքում սուիցիդալ որոշումը, որը ձևավորվել էր նախասուիցիդալ շրջանում, ի կատար է ածվում:

Զմռանանք, քանի որ վերը նշված գործընթացի հիմքում ընկած են սուիցիդալ պատճառները, որոնք ամենատարբեր բնույթի կարող են լինել: Օրինակ՝ N գորամասում ծառայող Վ. Գ.-ն զորակոչվելուց անմիջապես առաջ դժբախտ պատահարից կորցրել էր եղբայրներին: Զորակոչվելով բանակ՝ շրջապատի կողմից նրա նկատմամբ դրսևորվել է ոչ կանոնադրային փոխհարաբերություններ: Վ. Գ.-ն դարձել էր չշփվող, անտրամադիր, մեկուսացված, ապագայի նկատմամբ անտարբեր, իսկ երբ դասակի հրամանատարը իրեն հանիրավի մեղադրել է գողություն կատարելու մեջ, նույն պահին հրամանատարական դիտակետում Վ. Գ.-ն ինքնաձիգով գլխի շրջանում կրակելու միջոցով ինքնասպանություն է կատարել: Տվյալ դեպքում ինքնասպանությանը նպաստել են իրադրային և անձնային գործոնների գուգակցումը (կամուլյատիվ աֆեկտ): Երբեմն ինքնասպանության պատճառը կարող է թաքնված լինել դեռևս անձի քաղաքացիական կյանքում: Անձը, հայտնվելով իրեն համար ոչ սովորական պայմաններում և չարժանանալով սպաների, զինծառայողների ուշադրությանը և օգնությանը, ապրելով հուզական ծանր վիճակներ՝ տանից ստացված դեստրուկտիվ լուրը առիթ կարող է հանդիսանալ սուիցիդալ փորձի համար: Օր.՝ նախաքննությամբ հիմնավորվել է, որ N գորամասի ժամկետային զինծառայող Կ. Մ.-ն գորամասի պահակակետի տարածքում իրեն ամրագրված ինքնաձիգով գլխի շրջանում կրակելու միջոցով ինքնասպանություն է կատարել: Պարզվել է, որ Կ. Մ.-ն ինքնասպանությունը կատարել է մոր անբարոյական վարքագծի մասին ստացած տեղեկատվության առիթով:

Բանակում կատարվող ինքնասպանությունների գերակշիռ մասը կատարվում է զինվորական ծառայության նկատմամբ կանխակալ բացասական դիրքորոշման հիման վրա: Եթե առաջ բանակում ծառայելը տղամարդու պարտադիր վարքագծային դրսևորում էր, հասարակությունը բարձր էր գնահատում նման վարքագիծը, մինչև անգամ առկա էր որոշակի ավանդույթներ (չծառայածին աղջիկ չէին տալիս), ապա ներկայումս այդպիսի դիրքորոշումը արժեզրկվել է և զորակոչիկը մեկնում է բանակ ծառայության նկատմամբ, սեփական անձի նկատմամբ բացասական դիրքորոշմամբ, որը հարմար առիթի դեպքում կարող է նպաստել սուիցիդալ վարքագծի դրսևորմանը:

Հետազոտվող Ա.Գ.-ն մեծ ցանկություն ուներ սովորելու բժշկական համալսարանում: Փոքր տարիքից սկսած ծնողները նրան ներարկել էին, որ բանակ չգնալու համար անպայման պետք է ընդունվել ԲՈՒՀ: Եվ որ բանակ են գնում միայն «թույլերը»: Մակայն չընդունվելով ԲՈՒՀ՝ Ա.Գ.-ն զորակոչվում է: Նա մշտապես տխուր էր, ագրեսիվ տրամադրված բոլորի նկատմամբ, ուներ հավակնությունների բարձր մակարդակ: Միշտ շեշտում էր, որ բանակը իր տեղը չի և իր ապագան խորտակվել է:

Ինչպես նկատում ենք Ա.Գ.-ի մոտ առկա էր ֆրուստրացված հոգեվիճակ: Նման դեպքում, համապատասխան առիթի պայմաններում հետերոագրեսիան կարող է վերաճել աուտոագրեսիայի: Միշտ պետք է հիշել, որ ինքնասպանությունը վերջին քայլն է, որին հանգեցնում են բազմաթիվ պատճառներ և յուրաքանչյուր պատճառ իր հերթին հանդիսանում է հետևանք անթիվ այլ պատճառների: Համաշխարհային առողջապահական կազմակերպությունը հաշվարկում է այդպիսի 800 պատճառներ, որոնցից՝ 41 % անհայտ է, 19 % վախն է պատժվելուց, 18% հոգեկան հիվանդությունները, 18% ընտանեկան հուսալքվածությունը, 6% -ը կիրքը, 3%-ը նյութական կորուստը, 1,4%-ը կյանքից հիասթափվածությունը, 1,2% -ը ֆիզիկական հիվանդությունը:

Ինքնասպանության երևույթը մուլտիդիսցիպլինար, բազմաօրբիտալային հիմնախնդիր է, որտեղ պատճառները խորն են, միահյուսված և երևույթը պետք է մեկնաբանվի համալիր ձևով՝

համապատասխան տարբեր մասնագետների ընդհանրացված կարծիքի հիման վրա: Այստեղից էլ բխում է ինքնասպանությունների մեկնաբանման տարատեսակ մոտեցումները: Ինքնասպանության երևույթը զինված ուժերում ունի որոշակի յուրահատկություններ:

Կանոնակարգային հարաբերությունները կանխարգելում են սուիցիդալ վարքային դրսևորումները, իսկ եթե այդպիսի հարաբերությունները ձևափոխվում են ոչ կանոնակարգային այլ ձևերով, ապա սկսում են ակտիվանալ դեգադայատացիոն գործընթացները՝ հանգեցնելով անձի դեպրեսիվ հոգեվիճակների, որն էլ համարվում է նախասուիցիդալ փուլ:

2004թ. հոկտեմբերի 28-ին ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան Ռազմական ինստիտուտի կուրսանտ Վ.-ն Երևանի «Հաղթանակ» զբոսայգում ծառից պարանով կախվելու միջոցով կատարել է ինքնասպանություն: Հիմնավորվել է նաև, որ Վ.-ին ինքնասպանության են հասցրել նույն ինստիտուտի 6 կուրսանտներ՝ նրա նկատմամբ ոչ կանոնադրային փոխհարաբերություններ դրսևորելու պատճառով, ինչի համար նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 3-րդ 375 հոդվածի 2-րդ մասերով և քրեական գործը 16.03.05թ. մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Զինծառայողների շրջանում առավել մեծ թիվ են կազմում ինքնախեղման դեպքերը, հատկապես սիմուլյատիվ աուտոդեստրուկցիաները, որոնց նպատակը զինված ուժերում ծառայությունից խուսափելն է: ՀՀ զլխավոր դատախազությունը ամենամյա կոլեգիայի նիստերում քննարկման առարկա է դարձնում նման փաստերը: Դրանք ամենատարբեր բնույթի են, մինչև անգամ՝ արտասովոր: Նրանք կարող են կուլ տալ օտար մարմիններ: «Օտար մարմինների» անվանացանկի մեջ նշվում է ամրաձող, գդալ, մեխ, մագնիս, կոճակ: Օրինակ՝ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում պատրաստվել է յուրօրինակ ցուցատախտակ, որտեղ ցուցադրված են դատապարտյալների մարմիններից վիրահատության ժամանակ հանած իրերը: Ամենազավեշտալի նման իրերի մեջ իր տեղն է զբաղեցնում նաև ջերմաչափը: Ամենավտանգավոր իրը կտրող-ծակող իրերի մեջ համարվել է նախկինում դատապարտված Արթուր Հերոյանի «չմարսած» 21,5 սմ մետաղյա ամրանը:

Մակերեսային կամ սիմվոլիկ ինքնասպանությունները, որոնք բաժանվում են կոմպուլսիվ, իրադրային և կրկնվող գործողությունների, իրենցից ներկայացնում են մարմնի տարբեր հատվածների ոչ խորը վնասվածքներ, որոնք վտանգավոր չեն կյանքի համար՝ կտրվածքներ մաշկի վրա, «պատկերներ» բառերի, նախշերի և այլ նշանների տեսքով, վերքերի բուժմանը խոչընդոտում, ոսկորների կանխամտածված վնասում, մարմնի մեջ ասեղներ մտցնելը, եղունգները կրծելը և այլն: Ինքնավնասումների այս տեսակները կարող են հանդիպել անձնավորության հակասոցիալական և սահմանային խանգարումների, հետտրավմատիկ սթրեսային և դիսոցիատիվ խանգարումների ժամանակ: Միմվոլիկ ինքնավնասումները ամենատարածվածներն են ու ավելի քիչ են արձանագրվում բժշկական ծառայությունների կողմից: Ինքնավնասումների հենց այս տեսակն են հաճախ կապվում հոգեբանական դժվարությունների ապրման և աուտոագրեսիայի նկատմամբ հոգեբանական նախատրամադրվածության առկայության հետ (Վարդանյան 2007: 97):

Ի մի բերելով կատարված հետազոտությունները՝ գտնում ենք, որ բանակում ինքնասպանությունների թվաքանակը կարելի է նվազեցնել՝ ձեռնարկելով կանխարգելիչ որոշակի միջոցառումներ.

- զինակոչիկին նախապատրաստել զինվորական ծառայության մինչև բանակում ծառայության գործընթացը՝ սկսած դպրոցական շրջանից,
- հայ զինվորի նկատմամբ հասարակության մեջ դրական դիրքորոշման ստեղծում: Զինվորական ծառայությունը ամեն մի հայ երիտասարդի համար պետք է լինի պարտադիր: Ծառայած անձանց համար պետք է սահմանվեն որոշակի արտոնություններ,

- գորակոչիկի հոգեբանական ոլորտի նախնական խորը վերլուծություն և ռեաբիլիտացիոն ծրագրի կազմում,
- բանակում միայն կանոնակարգային հարաբերությունների հաստատում, օրվա ռեժիմի խստագույն պահպանում,
- հոգեբանների ինստիտուտի ներմուծումը զինված ուժեր:

Առավել արդյունավետ է հոգեբանական աշխատանքները ուղղված սուիցիդի կանխարգելմանը: Այդ նպատակով գորամասի հոգեբանը յուրաքանչյուր զինվորի համար պետք է ունենա հատուկ մատյան, որտեղ գրառի զինծառայողի անամնեզը, զարգացման առանձնահատկությունների մասին տվյալներ, ինչպես նաև հոգեբանական երևույթները նկարագրող փաստեր՝ հատկապես հաշվի առնելով սուիցիդալ իրադրությունները, որոնք կապված են որոշակի կոնֆլիկտների հետ.

- կոնֆլիկտներ, որոնք պայմանավորված են զինվորական գործունեությամբ և զինծառայողների միջանձնային հարաբերություններով,
- կոնֆլիկտներ, որոնք պայմանավորված են զինծառայողի անձնային, ընտանեկան փոխհարաբերություններով,
- կոնֆլիկտներ, որոնք կապված են զինծառայողների սուիցիդալ վարքի հետ,
- կոնֆլիկտներ, որոնք պայմանավորված են զինծառայողի առողջական վիճակով:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել ռիսկի խմբում գտնվող զինծառայողի ընտանեկան դաստիարակության վրա, հատկապես.

1. վաղ տարիքում հոր բացակայություն,
2. ընտանիքում հոգեկան հիվանդների առկայություն,
3. ընտանիքում «մայրիշխանության» ուժի փոխհարաբերություններ,
4. ընտանիքում հաճախակի դրսևորվող կոնֆլիկտներ,
5. անսահման խնամակալություն, դաստիարակություն «ընտանիքի կուռք» սկզբունքով,
6. ծնողների առկայության պայմաններում դաստիարակություն մանկատանը,
7. նախկինում ընտանիքում ինքնասպանության կամ ինքնասպանության փորձերի

առկայություն,

8. մոտ ընկերների կողմից ինքնասպանության կամ ինքնասպանության փորձերի դրսևորում,

9. տվյալ զինծառայողի կողմից սուիցիդալ փորձեր կամ աուտոդեստրուկտիվ այլ գործողությունների կիրառում:

Որքան նմանատիպ հարցերի պատասխաններում «այո»-ները շատ են, այնքան սուիցիդալ ռիսկը առավել մեծ է:

Սուիցիդալ վարքի դրսևորման հավանականությունը մեծանում է.

- ծառայության սկզբնական շրջանում,
- ռազմական հերթապահության ժամանակ գենքի առկայության պայմաններում,
- եթե ստորաբաժանման մեջ առկա է անբարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ:

Սուիցիդենտներին բնորոշ է անձնային հետևյալ առանձնահատկությունները.

- անվստահություն,
- ցածր ինքնագնահատականի մակարդակ,
- ինքնաիրացման մեծ պահանջմունք,
- նրանց համար շատ կարևոր է զգացմունքայնությունը, փոխհարաբերությունների անկեղծությունը, ապրումակցման առկայությունը, ձգտումը միջավայրի կողմից հասկացվել,
- որոշում կայացնելու ժամանակ կամային դժվարություններ,
- լավատեսության և ակտիվության մակարդակի իջեցում, դժվարացում,
- հակվածություն ինքնամեղադրման, սեփական մեղքի չափազանցման,

- ինքնուրույնության բացակայություն,
- անձի ինֆանտիլություն, ոչ բավարար սոցիալականացում:

Զինձառայողների ինքնասպանությանը նպաստող պատճառներից և պայմաններից են՝

1. Զինվորական ծառայության դժվարությունները, ծառայողական տհաճությունները:

2. Զինվորական կոլեկտիվներում ոչ նպաստավոր բարոյահոգեբանական մթնոլորտը, կոնֆլիկտները զինձառայողների միջև:

3. Զինվորական կոլեկտիվներում օրինականության և սոցիալական արդարության բացակայությունը:

4. Ընտանեկան անախորժություններ, ամուսնալուծություններ, խանդ:

5. Բժշկական սպասարկման ոչ բարձր որակը:

6. Զինվորների ազատ ժամանցի միօրինակությունը և չհամապատասխանությունը նրանց հետաքրքրություններին և պահանջմունքներին:

Շատ կարևոր հանգամանք է անչափահաս զինակոչիկի անհատական հոգեբանական առանձնահատկությունները:

«Անչափահաս» տերմինը ինտեգրալ հասկացություն է, որն իր մեջ ներառում է դեռահասությունը /11-14, 15տ./ և պատանեկությունը /15-18տ./: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինքնասպանությունների մեծ քանակը բաժին է ընկնում հենց այս տարիքին: Այս շրջանում տեղի են ունենում բարոյական նորմերի յուրացում, արժեքների ձեռքբերում: Այս երևույթը կախված է ինչպես դեռահասի իմացական զարգացվածության մակարդակից, այնպես էլ դաստիարակությունից և օբյեկտիվ ու սուբյեկտիվ այլ պայմաններից, ինչպես օրինակ՝ շրջապատող միջավայրի ազդեցություն, զանգվածային լրատվամիջոցներ և, ամենակարևորը, ընտանիքի ազդեցություն, որը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Այս ազդեցությունները համապատասխանաբար ձևավորում են անչափահասի բարոյական արժեքները: Անբարենպաստ սոցիալական միջավայրը հանգեցնում է տազնապայնության, գրգռվողականության, անզսպվածության, օտարվածության: Ամենից հաճախ հանդիպում են հետևյալ 7 հոգեվիճակները՝ չարացածություն, անբավարարվածություն, թշնամանք, վախ, անվստահություն, միայնակություն, անտարբերություն, որոնցից յուրաքանչյուրը, միավորվելով անբարենպաստ ներքին նախադրյալների /բարձր գրգռվողականություն, մտավոր զարգացման և կամքի թերություններ/, ստեղծում են այն հիմքը, որը հեշտացնում է բացասական արտաքին ազդեցությունների մուտքն անչափահասի հոգեկան աշխարհ:

Անչափահասին բնորոշ է ոչ բավարար կենսափորձը, դրա հետ կապված ինքնաքննադատության ցածր մակարդակը, կյանքի հանգամանքների բազմակողմանի գնահատման անկարողությունը, շարժողական և վերբալ բարձր ակտիվությունը, նմանակելու հակումը, անկախության սրացված զգացումը, իր համար ռեֆերենտային խմբում հեղինակության ձգտումը, նեգատիվիզմը, գրգռման և արգելակման անհավասարակշռությունը, որոնք սոցիալական անառողջ մթնոլորտի, հանցածին միջավայրի առկայության, համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի բացակայության դեպքում կարող է ձեռք բերել բացասական ուղղվածություն: Վերոնշյալ երևույթները նպաստում են նրան, որ անչափահասները հեշտությամբ ընկնեն դեպրեսիայի մեջ, որն արտաքին և ներքին լարվածության նկատմամբ անձի հակազդումն է: Ինչպես հայտնի է, դեպրեսիան դրսևորվում է անձի նախասուիցիդալ շրջանում: Հատկապես այս տարիքի անձանց մոտ առկա է դեստրուկտիվ հակումներ:

Այսպիսով՝ անչափահասությունը մարդու կյանքի այն սենզիտիվ փուլն է, որի ընթացքում մարդը հավասարապես ընկալունակ է ինչպես դրական, այնպե՛լ էլ բացասական ազդեցությունների նկատմամբ: Եթե զինվորը գտնվում է անբարենպաստ գործոնների ազդեցության տակ, ապա վերջիններս, միավորվելով այս տարիքին բնորոշ առանձնահատկությունների հետ, առաջացնում են հակազդում, որը կարող է ամենատարբեր

ձևեր ունենալ: Արդյունքը կարող են հանդիսանալ շեղվող վարքի տարատեսակ դրսևորումները, որոնք կամ ձեռք կբերեն սոցիալական վտանգավորության աստիճան, այսինքն՝ կկատարվի հակաիրավական արարք, կամ էլ չկարողանալով դուրս գալ ստեղծված կոնֆլիկտային իրավիճակից, անձը կդիմի ինքնասպանության: Սուիցիդալ վարքը «փախուստի ձև է», որը հանդիսանում է սոցիալական իրականությունը գիտակցաբար կամ անգիտակցաբար չընդունելու, այդ իրականությունը՝ հասարակության մեջ ընդունված եղանակներով հակազդելու անկարողության կամ ցանկության բացակայության արդյունք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Վարդանյան, Կ. Ե. (2004). Սուիցիդը՝ որպես շեղվող վարքի դրսևորման յուրահատուկ ձև, «Հոգեբանությունը և կյանքը», N1-2, Երևան:
- Վարդանյան, Կ. Ե. (2004). Ինքնասպանությունը շեղվող վարքի կոմպլեքսում, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական տեղեկագիր, N1, Երևան:
- Վարդանյան, Կ. Ե. (2007). Ինքնասպանության վիճակագրական մեկնաբանումը, Կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները, ԵՊՀ-ի Միջբուհական գիտական հոդվածների ժողովածու, Երևան:
- Վարդանյան, Կ. Ե. (2008). Անձի հոգեբանական առանձնահատկությունների դերը սուիցիդալ վարքի պատճառականության շրջայում/մենագրություն/, «Դավիթ թագավոր», Երևան:
- Վարդանյան, Կ. Ե. (2009). Հայաստանի Հանրապետությունում ինքնասպանության վիճակագրական վերլուծությունը, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները» միջբուհական կոնսորցիումի գիտական պարբերական 3 (6), Երևան:
- Vardanyan, K. E (2010). Unfavorable Social Environment As The Key Suicidogen Reason. 21- րդ դարի մարտահրավերները և մարդկային զարգացման ասպեկտները, Միջազգային գիտական կոնֆերանսի հոդվածների ժողովածու, Երևան:

ՄԱՄՈՒԼԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՄԱՄԲ

ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅ ԵՎ ՕՏԱՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

2012թվականի ապրիլի 16-17-ին Երևանում տեղի ունեցավ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի, Համալսարանի Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի և Հայոց փիլիսոփայական ակադեմիայի կողմից կազմակերպված «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողով:

Գիտաժողովին մասնակցում էին աշխարհի 14 երկրների համաշխարհային ճանաչում ունեցող գիտնականներ, այդ թվում ակադեմիկոս Գեորգ Բրուտյանը (Երևան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, փիլիսոփայության միջազգային ակադեմիայի նախագահ, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ին առընթեր Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական կենտրոնի տնօրեն), ակադեմիկոս Եվանգելոս Մոուսոսպոուլոսը (Աթենքի համալսարանի պատվավոր ռեկտոր, փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ), Հանս Կոխլերը (փիլիսոփայության պրոֆեսոր, Ինսբրուքի համալսարանի (Ավստրիա) փիլիսոփայության բաժանմունքի ղեկավար, փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ), Դեյվիդ Կուկը (Գլազգոյի շոտլանդական համալսարանի դատակլինիկական հոգեբանության պրոֆեսոր, հոգեբանության և իրավունքի Եվրոպական ընկերության նախագահ), Պիտեր Կեմպը (Կոպենհագենի Աարուսի համալսարանի պրոֆեսոր, կրթության բաժանմունքի էթիկայի և իրավունքի կենտրոնի տնօրեն, փիլիսոփայական ընկերության միջազգային ֆեդերացիայի (FISP) նախագահ, փիլիսոփայության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս), Յուրի Իվլևը (Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվ. պետ. համալսարանի տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր փ.գ.դ.), Ֆրանսուա Նոն (Ֆրանսիայի Դիդրոյի անվ. համալսարանի պրոֆեսոր, հոգեբանության դոկտոր), Իրակլի Իմեդաձե (Ն. Դ. Ուզնաձեի անվ. հոգեբանության ինստիտուտի տնօրեն, Վրաստանի ԳԱԱ թղթակից անդամ, հ.գ.դ., պրոֆ.): Գիտաժողովին իրենց մասնակցությունն էին բերել նաև ՀՀ կրթության և գիտության փոխնախարար Մ. Մկրտչյանը, ինչպես նաև Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ռեկտոր պրոֆեսոր Ռ. Միրզախանյանը: Միջազգային գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ համալսարանի, Երևանի Պետական համալսարանի, Մինսկի պետական համալսարանի, Թբիլիսիի բժշկական պետական համալսարանի, ՀՀ ԳԱԱ-ի, Արգենտինայի` Բոունես-Այրեսի հոգեվերլուծական ինստիտուտի, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի, Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ-ի արեւելագիտության ինստիտուտի, Հայաստանի պետական ճարտարագիտական ինստիտուտի, «Ինտերլինգվա» լեզվագիտական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Վ. Բրյուսովի անվ. Եր. ՊԼՀ-ի, Տուրկույի (Ֆինլանդիա) համալսարանի, Հայաստանում ամերիկայան հումանիտար համալսարանի, Բուխարեստի (Ռումինիա) պոլիտեխնիկական համալսարանի և բազում այլ ԲՈՒՀ-երի հոգեբանության, սոցիոլոգիայի, փիլիսոփայության, լեզվաբանության, մշակութաբանության, իրավագիտության, քաղաքագիտության ամբիոնների վարիչներ, պրոֆեսորներ, դոցենտներ, ասպիրանտներ ու մագիստրոսներ: Գիտաժողովին մասնակցում էր նաև ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների հանդեսի գլխավոր խմբագիր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանը:

Միջազգային գիտաժողովի լիազուստ նիստի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ ապրիլի 16-ին, Անի Պլագա հյուրանոցի նիստերի դահլիճում, որը տևեց մինչև կեսօր: Գիտաժողովի բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, փիլիսոփայության միջազգային ակադեմիայի նախագահ՝ Գեորգ Բրուսյանը: Գիտաժողովի մասնակիցներին իր ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ վարչապետ, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի խորհրդի նախագահ՝ Տիգրան Սարգսյանը: Լիազուստ նիստին զեկուցումներով հանդես եկան փիլիսոփայության դոկտոր Եվանգելոս Մոութսոպոուլոսը (Աթենք), փիլիսոփայության պրոֆեսոր Հանս Կոխլերը (Բնսբրոք), Պիտեր Կեմպը (Աարուսի համալսարանի պրոֆեսոր) և Դեյվիդ Կուկը (Գլազգոյի շոտլանդական համալսարանի դատակլիինիկական հոգեբանության պրոֆեսոր):

Այնուհետև ընդմիջումից հետո ժամը 14-ին գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի գիտաժողովների դահլիճում: «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ»-ին վերաբերվող փիլիսոփայական տեսակետները ներկայացնող աշխատանքները զեկուցվեցին գիտաժողովի երկու մասնաճյուղերում: Հիմնախնդիրին վերաբերվող հոգեբանության ոլորտի զեկուցումները տեղի ունեցան 4-րդ և 5-րդ մասնաճյուղերի աշխատանքներում, միացյալ նիստերի ձևով: Մասնավորապես քննարկվեցին փոխակերպվող հասարակության զարգացման հիմնախնդիրների փիլիսոփայական և հոգեբանական ասպեկտները: Զեկուցողները ներկայացրեցին փոխակերպվող հասարակության զարգացման առանձնահատկությունները, հասարակությունների և անձի ձևափոխման յուրահատկությունները, համաշխարհային զարգացումների միտումներն ու հեռանկարները, անձի զարգացման հիմնահարցերը փոխակերպվող հասարակությունում անձի սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունները: Աշխատանքներն ունեին տեսական և հետազոտական բնույթ, որոնք իրենց բովանդակությամբ լուրջ գիտական հետաքրքրություն էին ներկայացնում:

Գիտաժողովի երկրորդ օրը՝ ապրիլի 17-ին, ժամը 10-ին կայացավ փիլիսոփայության և տրամաբանության առաջին և երկրորդ մասնաճյուղերի համապատասխանաբար «Հասարակության համակարգի փոխակերպման առանձնահատկությունները» և «Փոխակերպման տրամաբանության խնդիրները» խորագրերով նստաշրջանների աշխատանքները: Մասնաճյուղի աշխատանքները վարում էին փիլիսոփայության բնագավառի համաշխարհային ճանաչում ունեցող անվանի հայ և օտարերկրյա գիտնականներ:

Նույն օրը կայացան նաև միջազգային գիտաժողովի հոգեբանության ոլորտի 4-րդ և 5-րդ մասնաճյուղերի համապատասխանաբար «Փոխակերպվող հասարակության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները» և «Փոխակերպվող հասարակության և կիրառական հոգեբանության հիմնախնդիրները» խորագրերով գիտական հիմնախնդիրներին վերաբերվող զեկուցումների քննարկման աշխատանքները:

Մասնաճյուղերի վարման աշխատանքները իրականացնում էին ինչպես հրավիրված, այնպես էլ ՀՀ ԲՈՒՀ-երի անվանի գիտնականները: Հոգեբանության մասնաճյուղերում քննարկվում էին փոխակերպվող հասարակության տեսական և կիրառական հիմնախնդիրները, անցումային հասարակությունում անձի հարմարման, սոցիալականացման առանձնահատկությունները, անձի հոգեկան առողջության, հոգեբանական անվտանգության հիմնախնդիրները: Զեկուցվող թեմաները գիտական տեսանկյունից ունեին հիմնարար տեսական եւ հետազոտական բովանդակություն ունեցող կիրառական բնույթ:

Գիտաժողովում քննարկվող զեկուցումների գիտական նշանակությունը հատկապես հայ իրականության համար չափազանց կարևոր է, քանզի նախկին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ՀՀ պետականության կերտման գործընթացը պահանջում է ժամանակակից հասարակությունների զարգացման հոգեբանական, փիլիսոփայական հիմնախնդիրների իմացություն, որոնք լուսաբանվում են գիտաժողովի աշխատանքներում: Հասարակության զարգացման հեռանկարը պայմանավորված է նաև ժամանակի մարտահրավերներին, հավանական և առկա սպառնալիքներին դիմակայման նպատակով, այն է՝ կայուն տնտեսական աճ, ժողովրդի

բարեկեցություն, առողջ հասարակություն, որոնց առնչվող հիմնախնդիրների լուծման բազում հարցեր ևս քննարկվեցին երևանյան միջազգային գիտաժողովում:

Անցումային հասարակություններում տնտեսական, սոցիալական, քաղաքական ոլորտներում տեղի ունեցած զարգացումների ու դժվարությունների հետևանքները անդրադառնում են ինչպես երկրի ընդհանուր զարգացման, այնպես էլ նրանում ապրող ազգաբնակչության ընդհանուր ապրելակերպի, նրանց մշակութային, հոգևոր, գիտական, կրթական, հասարակական բազում այլ ոլորտների առաջընթացի վրա: Վերջիններս ուղղակիորեն անդրադառնում են անձի հոգեկան առողջության, անձի նարդաշնակ զարգացման գործընթացի վրա: Այս տեսանկյունից կարևոր են փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներին վերաբերվող հարցերի գիտական մեկնաբանումները, որը հաջողությամբ առաջադրված հարցերի շրջանակներում իրականացրեց միջազգային գիտաժողովը:

ՀՀ-ը, լինելով դեռևս ձևավորման շրջանում, ունենալով բազում սոցիալ-տնտեսական, քաղաքական չլուծված հիմնախնդիրներ, համաշխարհային գլոբալիզացիայի պայմաններում որպես ուղեցույց, կարող է օգտագործել գիտաժողովում հնչած գիտական զեկուցումները: Կարծում ենք դրանք հետագայում կտան ռազմավարական հեռանկարային արդյունավետ ծրագրերի մշակման հնարավորություն:

Մ. Պ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
«ԱԶԳ», 21 ապրիլ 2012թ

ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ. «ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԿԱՆԳ ԱՌՆԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՈՉ ԹԵ ԴՈՓԵԼ ՏԵՂՈՒՄ, ԱՅԼ՝ ՀԵՏ ԳՆԱԼ»

Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակի շրջանակներում ապրիլի 16-18-ն անցկացված «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողովի ավարտին «Ազգը» մի քանի հարց ուղղեց մանկավարժական համալսարանին առընթեր Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գեորգ Բրուտյանին, ով գիտաժողովի փակմանը նշել էր. «Գիտության մեջ չպետք է հանգստություն ունենալ: Գիտաժողովը հաղթահարեց բազմաթիվ դժվարություններ, բայց բացահայտեց երիտասարդ սերնդի գիտնականների»: Իսկ գիտաժողովի բացմանը անվանի գիտնականը համոզմունք էր հայտնել, թե իր ներքին օրենքներով զարգացող գիտության միջոցով այսօր արդիական է երկրի տնտեսության զարգացմանն օգնել նաև, մանավանդ՝ փոխակերպվող հասարակության կարևոր խնդիրներից է առանց հիներ դեն նետելու՝ ժառանգել այն արժեքները, որոնք մեր ժողովրդին կօգնեն զարգանալ:

Միջազգային գիտության, հայ փիլիսոփայական մտքի և մանկավարժական համալսարանի համար նշանակության տեսակետից դիտարկելով գիտաժողովի կազմակերպումը՝ Գ. Բրուտյանը «Ազգի» հետ զրույցում նշեց.

- Մանկավարժական համալսարանը հետաքրքրական ժամանակշրջան է ապրում՝ հին սովորույթներից վերացարկվում ենք, գնում ենք դեպի նորերը: Միշտ չէ, որ այս համալսարանը հեղինակություն է ունեցել: Գիտնականը պետք է շատ մտածի իր համալսարանի, իր գիտական շրջապատի հեղինակության մասին: Եվ ես հիմա տեսնում եմ, որ համալսարանի ղեկավարությունը այնպիսի կուրս է վերցրել, որ թոթափի անցյալի փոշին, և առաջ գնա: Ի՞նչ ստացվեց՝ կարծես թե համալսարանն իր համար գիտաժողով էր կազմակերպել, բայց գիտե՞ք

քանի-քանի կազմակերպություններ մասնակցեցին՝ հաղթահարելով երբեմն բավական դժվարություններ և իրենց ղեկավարությունների դիմադրությունները: Երկու տասնյակից ավելի կազմակերպություն է մասնակցել գիտաժողովին. ընդունեցին մեր առաջարկը, զեկուցում գրեցին, կարդացին: Իմ կարծիքով՝ ամենակարևոր նշանակությունն այն էր, որ ստեղծվեց նոր գիտական դաշտ, որին մասնակցում էին հայկական գիտության տարբեր ներկայացուցիչները. դա շատ կարևոր հանգամանք է: Մյուս կողմից էլ՝ համալսարանն օրինակ հանդիսացավ այն առումով, որ ցույց տվեց՝ միայն այսպե՛ս պետք է կազմակերպել գիտական կոնֆերանսներ, որոնք հետաքրքրություն առաջացնեն բոլորի մոտ, անկախ նրանից, թե որտե՞ղ են դասավանդում-սովորում, ու յուրաքանչյուր համալսարան, այդ թվում՝ արտերկրի, կարող է գոհ մնալ: Արդեն տեղ չհասած՝ ինքնաթիռներից հաղորդում են այն մարդկանց խիստ դրական կարծիքը, որոնք այստեղ թվում են շատ չոր, ոչ ժպտացող...

Այնպես որ՝ գիտաժողովը և՛ միջազգային գիտական առումով, և՛ մանկավարժական համալսարանի համար մեծ նշանակություն ունի. իմ կարծիքով Աբովյանի անվան մանկավարժական համալսարանը իր ղեկավարության շնորհիվ մտել է նոր ճանապարհ, նոր ուղի է հարթում համալսարանի ապագայի համար: Եթե այն ծրագրերը, որ ռեկտորատը որոշել է ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի գլխավորությամբ, իրականացվեն, ապա համալսարանը կազատվի այն վիճակից, որում եղել է անցյալում և աստիճանաբար կդառնա միջազգային նշանակություն ունեցող համալսարան: Ինչպես ոչ մի զինվոր չի կարող չերազել գեներալ դառնալու մասին, այնպես էլ մեր ժամանակներում բոլոր համալսարանները երագում են դառնալ աշխարհում լավագույններով:

Ամեն տարի հրապարակվում է աշխարհի լավագույն համալսարանների ցուցակը, միշտ պետք է ձգտել ընկնել այդ ցուցակի մեջ, հայերս այդ հնարավորություններն ունենք, քանի որ գիր-գրականությունը, արվեստը, պոեզիան մենք լիուլի ունենք, գիտությունն էլ նույնպես մեր երկրում և մեր ժամանակներում ծաղկել է: Վիկտոր Համբարձումյանի նման, հռչակավոր գիտնական հազվագյուտ է ծնվում, բայց եթե առաջիկա հարյուր-երկու հարյուր տարվա ընթացքում նման մեկն էլ ծնվի, մենք երջանիկ կլինենք: Իսկ առաջ գնալը գիտության մեջ բավականին կոնկրետ է՝ մենք բոլորս էլ գիտության մեջ ձգտում ենք առաջ գնալ: Ամեն կերպ պետք է աշխատենք, որ ոչ թե միայն հասնենք, այլ կանգ չառնենք և անցնենք, որովհետև գիտության մեջ կանգ առնելը նշանակում է ոչ թե դոփել տեղում, այլ՝ հետ գնալ: Այս բոլորը շատ լավ են հասկանում այստեղ, հատկապես համալսարանի ղեկավարությունը: Ես նոր մարդ եմ այստեղ՝ նոր ինստիտուտ էր ստեղծված, և առաջարկեցին ղեկավարել, ու տեսնում եմ, որ այնպիսի ներուժ կա, այնպիսի երիտասարդություն, և դասախոսների մեջ այնպիսի մարդիկ կան, որ կասկած չունեն՝ այսպիսի գիտնականներով համալսարանը կարող է հասնել արդյունքի:

- Գիտաժողովի խիստ արդիական թեման նույնիսկ ոչ գիտական հանրույթին հետաքրքրեց, ընդհանուր գծերով կներկայացնե՞ք ուղղվածությունը:

- Գիտաժողովում հրավիրվածների և մեր տեղի ուժերի շնորհիվ վերլուծվեցին այն խնդիրները, որոնք դրված են այսօր մեր հասարակության զարգացումն ըմբռնելու և ճիշտ ուղիներ փնտրելու-գտնելու և հուշելու, այդ տեսակետից մեր գիտությունը զարգացնելու համար: Գիտաժողովը բավականին լավ անցավ, դա նաև շնորհիվ այն բանի, որ արտերկրի խոշորագույն գիտնականներ համաձայնեցին և սիրով եկան: Դրանցից էր Եվանգելոս Մոթոստպոուլոսը, որը Միջազգային փիլիսոփայական ակադեմիայի համանախագահներից է, Հանս Կոխլերը Ավստրիայից (Ինսբրուքի համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի ղեկավարը), և շատ ուրիշներ՝ 14 խոշոր գիտնականներ էին ժամանել: Եվ դա դեռ ամենը չէ: Մի շարք գիտնականներ չկարողացան գալ, պատճառներից մեկն այն է, որ նրանք շատ վաղ են հաստատում իրենց ծրագրերը, այդ թվում՝ այլ երկրներ այցելելը, և նրանց մոտ այստեղ գալը ծրագրված չի եղել: Բայց ես ուրախ եմ, որ գրեթե բոլորը, ում դիմեցինք, եթե այժմ էլ չեն եկել, որոշեցին, որ հետագայում անպայման կգան, անգամ մոտավորապես հայտնի է, թե ով՞ ո՞ր ամսին է գալու: Դրանցից է աշխարհահռչակ փիլիսոփա-լեզվաբան, քսաներորդ դարի լեզվաբանության հիմնադիր Չոմսկին

(գրում են Խումսկի, բայց Չումսկի է իրապես): Նոեմ Չումսկին մի ամբողջ դար է ստեղծել լեզվաբանության մեջ եւ, շատ լավ հասկանալով փիլիսոփայության կապը այդ գիտության հետ, համալսարաններից մեկում բացել փիլիսոփայության եւ լեզվի ֆակուլտետ եւ ղեկավարում է այդ ֆակուլտետը: Նա մոտ ապագայում խոստացել է անպայման գալ: Եվ մի շարք այլ ախարհահռչակ գիտնականներ: Ամեն մեկը ինչ-որ ժամանակում կգա, երբ էլ գան, մենք կոնֆերանս կկազմակերպենք՝ այս գիտաժողովի բարձր նշաձողը պահելով:

- Ի՞նչ նոր միտումներ մատուցվեցին գիտական առումով...

- Արդեն իսկ փոխակերպվող հասարակության հարցը հրատապ է և հնչում է շատ երկրներում: Գիտաժողովում փորձ արվեց տարբեր կողմերից բացահայտել այս խնդիրը և ճիշտ առաջարկներ անել, թե ի՞նչ ձևով պետք է զարգանա փոխակերպվող հասարակությունը, որի շրջանակում մենք ապրում ենք: Երկրորդը, որ շատ կարևոր է՝ հաճախ խոսվում է փոխակերպվող հասարակության մասին միայն սոցիալ-քաղաքական նկատառումներից ելնելով, սոցիալ-քաղաքական էությունը բացահայտելով՝ տվյալ դեպքում այս համաժողովում գիտության որոշ՝ չափազանց կարևոր հարցեր բխում էին փոխակերպվող հասարակության պահանջներից:

Այստեղ գիտական տեսակետից շատ հետաքրքրական հարցադրումներ եղան և պատահական չէ, անցնող կամուրջ կա այստեղ՝ օրինակ մասնաճյուղերից մեկը կոչվում էր Փոխակերպական տրամաբանության մասնաճյուղ, այդ մասնաճյուղը նվիրված էր այն գիտական հարցերին, որ առաջադրված են Հայաստանում: Եվ Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության փաստարկման տեսության հատուկ ինստիտուտ էլ ստեղծված է, ու բոլոր այս երեք առանձնահատկություններով աչքի է ընկնում մեր՝ հայկական գիտությունը: Շատ երկրներում անպայման խոսում են փաստարկման տեսության երեւանյան դպրոցի մասին, շատերը համարում են իրենց այդ դպրոցից ծնված նոր դպրոցների հեղինակներ: Այս դպրոցը ժամանակին ուներ և ունի մասնաճյուղեր այլ երկրներում, այնպես որ սա չափազանց հայկական փիլիսոփայության նշանավոր հատկություններից մեկն է: Եթե խոսենք՝ ի՞նչ հաջողություն ունի Հայաստանը փիլիսոփայության բնագավառում, պետք է նշենք այդ՝ փաստարկման տեսությունը:

Ավելի կարևոր է, իմ կարծիքով, փոխակերպական տրամաբանության ստեղծումը. եթե փաստարկման տեսությունն այլ երկրներում է ստեղծվել, իսկ մենք դարձել ենք կենտրոններից մեկը, ապա փոխակերպական տրամաբանությունն այստեղ գրոյից է ստեղծվել՝ անունն էլ, տեսություններն էլ: Իսկ հիմա երկու հսկայական հատոր է հրատարակված այդ տեսակետից և բազմաթիվ լեզուներով թարգմանված է՝ տարբեր հատվածներով և տարբեր հոդվածներով: Որ այս ինստիտուտը ստեղծված է՝ մի կողմից դառնում է օրինակ արտերկրի շատ գիտնականների համար, մյուս կողմից էլ նոր թափ է ստանում՝ հարցեր, խնդիրներ կան այդ բնագավառում, որոնք լուծված չեն և անպայման կլուծվեն: Դրանց լրացնում է նաև մետափիլիսոփայությունը, որը խիստ վիճարկելի պրոբլեմներ ունի, այս հարցով զբաղվող գրեթե յուրաքանչյուր մարդ իր տեսակետն ունի: Եւ մեր դպրոցը նույնպես մետափիլիսոփայության խնդիրներով շատ է զբաղվել, և հաշվի են առնում այս դպրոցի կարծիքը: Կան և էլի ուղիներ՝ փիլիսոփայությունն անսահման է, սահման չունի: Բայց ես նշեցի միայն այն դրույթները, այն ուղղությունները, որոնց համար ստեղծվել է միջազգային դարձած այս գիտահետազոտական ինստիտուտը: Եվ այդ բոլորի մասին խոսվեց մեր գիտաժողովում:

Հինգ մասնաճյուղ է աշխատել, որոնցից երեքը փիլիսոփայական հարցերին էին նվիրված, երկուսը հոգեբանությանը. բանն այն է, որ եթե մեր փիլիսոփայական անվանդրոյթները գալիս են շատ հնուց, համաշխարհային մասշտաբով մենք նշեցինք Դավիթ Անհաղթի 1500-ամյակը, դա առիթ տվեց, որ բացահայտեինք նոր դրույթներ Անհաղթի գործերում, դրույթներ, որոնց հետ ծանոթ չէին աշխարհի շատ փիլիսոփաներ, և զարմացած էին, որ Դավիթ Անհաղթը կարող էր լուծել այնպիսի պրոբլեմներ, որոնք մինչև հիմա շատերն են երազում լուծել, բայց չեն

կարողանում հասնել այդ մակարդակին: Իսկ հիմա մենք և՛ մասշտաբներն ենք ընդարձակում, և՛ նորություններն ենք բացահայտում:

- Երիտասարդ գիտնականները դառնում են լավ ժառանգության և այս նոր նախաձեռնությունների կրողը:

- Երիտասարդներին ես մեծ նշանակություն եմ տալիս անձամբ, և շատ-շատերն են լավ ստեղծագործում: Երբեմն այնպիսի բաներ են կատարվում, որ մարդու մտքով էլ չի անցնում: Ինձ մոտ հինգերորդ կուրսում մի քանի տարի առաջ 21 տարեկան Աննա Ամիրխանյանը պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն, մի բան որ չի եղել ոչ արեւմուտքում, ոչ ուրիշ տեղ, դա բացառիկ երևույթ էր: Հիմա մենք հրատարակում ենք նաև միջազգային ամսագիր՝ Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի ամսագիրը՝ «Նորություններ և հայացքներ», սա համաշխարհային նշանակություն ունեցող հրատարակություն է, այստեղ միայն միջազգային ակադեմիայի անդամների գործերն են հրատարակվում: Բայց ես, այնուամենայնիվ, հանգեցի այն եզրակացության, որ այնտեղ պետք է լինի նոր, երիտասարդ գիտնականների բաժանմունք, որովհետև հաճախ ես տեսնում եմ, որ երիտասարդներն այնքան առաջ են անցել, որ մեծի և փոքրի տարբերություն չի զգացվում:

- Այսինքն՝ սերնդափոխության խնդիրը բնականոն ընթացք ունի:

- Գիտե՞ք ինչ՝ ԱՄՆ-ում ռադիոյի աշխատակից մեկը ինձ հարց տվեց՝ «Դուք երիտասարդ կադրեր ունե՞ք», ասացի՝ «Շատ ունեմ, ընդհանրապես իմ դնիզն է՝ մի գիրք էլ պակաս գրեմ, բայց հրատարակեմ իմ ուսանողների աշխատանքները, և՛ այստեղ, և՛ ակադեմիայում հրատարակչություն ունենք և հրատարակում ենք երիտասարդների աշխատանքները»: Հարցրին՝ իսկ հնարավոր համարո՞ւմ եք, որ հենց այսօրվանից նրանք փոխարինեն Ձեզ», ասացի՝ «Ոչ, չեն կարող, քանի որ ես չեմ ուզում դեռ գնալ»: Վերջին իմ ասպիրանտը ասպիրանտուրան մեկ տարում ավարտեց, պաշտպանեց փայլուն դիսերտացիա:

Հարցազրույցը վարեց՝ ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ
«ԱԶԳ», 21 ապրիլ 2012թ

ՎԻՐՏՈՒԱԼԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԻ ՄԻՋԵՎ

Հանս Կոխլերը ներկայացրեց նոր սոցիալական մեդիայի ու հաղորդակցության փոխակերպվող բնույթը:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում անցկացված «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ» թեմայով աննախադեպ միջազգային գիտաժողովի շրջանակներում ապրիլի 15-ին ներկայացված բաց դասախոսություններից մեկը ուսանողներին ու ասպիրանտներին մատուցեց Ինսթրուքի համալսարանի պրոֆեսոր, փիլիսոփայության ֆակուլտետի ղեկավար Հանս Կոխլերը:

Համացանցն ու դրանով պայմանավորված վիրտուալ իրականությունն այսօր այնպիսի ազդեցություն ու դերակատարություն ունեն հասարակության ու անհատի կյանքի առումով, որ փիլիսոփայության պարագայում էլ բազմաթիվ հարցեր են առաջանում, ընդ որում՝ հետաքրքրական էքսկուրսների հնարավորություն տալով ինչպես նախկին, այնպես էլ ներկայիս աշխատությունների դիտարկման համար:

Այս ամենին գիտական ուսումնասիրության ու գործնական նշանակության և ներգործության համատեքստում անդրադարձավ Հանս Կոխլերը՝ ներկայացնելով «Նոր սոցիալական մեդիան ու հաղորդակցության փոխակերպվող բնույթը. մարդաբանական ու

քաղաքական առնչություններ» թեմայով՝ առատորեն մեջբերելով տարբեր ժամանակների փիլիսոփաների դատողությունները ինչպես ընդհանրապես մամուլի, այնպես էլ մերօրյա վիրտուալ դրսեւորումների մասին:

Կոխլերի ներկայացմամբ, համացանցի ի հայտ գալը որակվում է վիրտուալ առումով անսահմանափակ հարաբերությունների դարաշրջանի սկիզբ, որտեղ մարդկային ներուժը կարելի է ուսումնասիրել առավել ամբողջական մոտեցմամբ: Մակայն քաղաքական համադրությունների համատեքստում «աշխարհում տարածված», ողջ աշխարհն ընդգրկող իր բնույթով համացանցն իրականությունը ստուգելու նպատակահարմարություն ունի, հատկապես եթե հաշվի առնվեն այն բոլոր ինտերակտիվ միջոցներն ու հնարավորությունները, որոնք ազդում են սոցիալական իրողությունների ընկալման վրա:

Հետաքրքրական էին Կոխլերի ներկայացրած համեմատությունները ամբոխի վարքի և վիրտուալ առումով ձևավորվող ամբոխի վարքի միջեւ: Փիլիսոփայի խոսքերով, ամբոխի վարքի առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ խորհուրդներ տալը, իմպուլսիվ գործունեության հատկությունները կամ դյուրագրգռությունը, կարող են առավել խոր արտահայտվել «թվային կամ վիրտուալ ամբոխի» շրջանակներում: Այս ֆենոմենները, որոնք ավելի քան մեկ դար առաջ բնութագրել է Գուստավ Լեբնը, կարող են նաեւ ավտոմատացված կապի և լուրերի տարածման չմտադրված հետևանք լինել:

Նորագույն տեխնոլոգիաների որոշ առանձնահատկություններ՝ «մենք ընդդեմ ուրիշների» հուզական մտածողության հիմքով խրախուսում կամ պաշտպանում են կոմֆորմիստական այնպիսի միտումները, որոնք փոքրացնում են հավասարակշիռ կամ չեզոք վերաբերմունք ձևավորելու հնարավորությունը: Ընդ որում, ըստ Կոխլերի, խնդրահարույց է այն հանգամանքը, որ այս ամենը կարող է եթե ոչ դիտավորությամբ, ապա թեկուզ պատահաբար, ազդելով սոցիալական փոխակերպումների գործընթացների վրա, անկառավարելի դարձնել պետությունը, հատկապես երբ վերջինս գտնվում է արդյունաբերական հասարակությունը բնորոշող բարդ պայմաններում:

Ժամանակակից ինտերակտիվ մեդիայի համատեքստում, Կոխլերի ներկայացմամբ, ամբոխային վարքի վերլուծությունը բերում է հարցերի մարդաբանական հետևանքների:

«Արդյո՞ք դրանք անհատի աշխարհընկալման եւ սոցիալական իրականության կառուցման վրա տևական ազդեցություն կունենան: Արդյո՞ք Մարշալ Մաքլուհանի (1911-1980, կանադացի փիլիսոփա, հաղորդակցության տեսաբան, մամուլի ուսումնասիրության անկյունաքարային աշխատությունների հեղինակ, նաև հայտնի, օրինակ, «Մեդիումն է ուղերձը» կամ «զլոբալ գյուղ» արտահայտություններով: Մաքլուհանը համացանցի հայտնագործումից ավելի քան 30 տարի առաջ կանխատեսել է «համաշխարհային ցանց»-ը- Ա.Հ.) «Մեդիումն է ուղերձը» հայտնի կարգախոսն արտահայտում է սոցիալական պարադիգմայի փոփոխությունը: Արդյո՞ք ինտերնետի հաղորդակցային հզորությունը կառուցվածքայնորեն նպաստում է հոգեբանական ամբոխների, ոչ թե միայն տերմինաբանությամբ սահմանված (օրինակ, «ֆեյսբուքյան խմբերի») խմբերի ձևավորմանը: Ի՞նչ է այս ամենը նշանակում արդի ժողովրդավարության կայունության համար»:

Նշվածները հարցերի միայն մի փոքր մասն է, որ դեռևս կարիք ունեն պատասխանների, և, ինչպես նշեց Կոխլերը, զբաղեցնում են փիլիսոփայական միտքը: Ըստ մասնագետի, փիլիսոփաների պարտականությունն է հետևել տեղի ունեցող փոփոխություններին ու դրանց հիման վրա ձևավորվող երեւոյթներին: Կոխլերի հիշատակած հարցերը պետք է քննարկվեն նաև, եթե ցանկություն կա գնահատելու նոր մեդիայի սոցիալական և քաղաքական պատշաճությունը՝ հատկապես դրանց անկանխատեսելիության տեսանկյունը:

Կոխլերի մատուցմամբ, նորարարությունները, ինչպիսին կարելի է գնահատել նաև համացանցը, միշտ չէ, որ նպաստել ու նպաստում են առնվազն հանդուրժողականությանը, հատկապես երբ վիրտուալ և իրական հատվածներում մասնավոր և հանրային ընկալումների

տարբերությունը զգալիորեն մեծանում է, հատկապես երբ վիրտուալ հասարակության բնութագրականները հարցեր են առաջացնում: Մասնավորապես, փիլիսոփայի բերած օրինակներով, վիրտուալ հասարակությունը չունի աշխարհագրական սահմանափակումներ, ազդում է շատ մեծ թվով մարդկանց վրա, շատ դեպքերում անանուն է՝ դրանից բխող անպատասխանատու և անհաշվետու վարքով, անկանխատեսելիությունը բարձր է, վստահության արժանի չէ, չկա ստուգումների ու հավասարակշռման մոտեցում՝ ամենագլխավոր որպես պահպանելով ռեալ ժամանակում քայլերի ու գործողությունների կատարման ազդեցությունը:

«Արդյոք անանուն գործողությունները կարելի՞ է բնութագրել որպես հասարակական, կամ որքանո՞վ են ժողովրդավարական մասնավորի և հանրայինի տարրալուծվող սահմանները», այսպիսի հարցերն, ըստ Կոխլերի, գնալով մեծ նշանակություն են ձեռք բերում: «Մենք պետք է կարողանանք ճիշտ գնահատել նոր իրողությունների առանձնահատկությունները, քանի որ չպետք է անտեսենք տեղեկատվական տեխնոլոգիաների էական գործիքային բնույթը. անհատական կամ խմբային գործունեության համար այն կարող է աննախադեպ կազմակերպչական հնարավորություններ առաջարկել»:

Դա, ըստ Կոխլերի, սոցիալական և քաղաքական ազատագրման համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Ինտերնետային գրագիտությունը, այսպիսով, պետք է լրացվի ցանցի սոցիալական ազդեցության և հաղորդակցության նոր բարոյագիտության գիտակցմամբ:

Դասախոսության ավարտին ուսանողները փիլիսոփայից հետաքրքրվեցին, թե այս ամենով հանդերձ ինչպիսի ռիսկեր է պարունակում հասարակության վիրտուալացումը: Կոխլերի համոզմամբ, իրավիճակը երկակիությամբ է բնութագրվում, բայց և այնպես, հատկապես համացանցային իրողություններում առավել ներգրավված երիտասարդության պարագայում փոխվում են իրականության ընկալումները՝ երկար ժամանակ վիրտուալ աշխարհում ժամանակ անցկացնելու արդյունքում կորցնելով վիրտուալի և իրականի տարբերակումը, իրական կյանքի երևույթները համարժեք դատելու կարողությունը: Նման վիճակն, ըստ Կոխլերի, կարող է նաև նախվություն ձևավորել, քանի որ համացանցում և իրականում քայլեր կատարելը բավականին տարբեր է:

Եվ եթե այս ամենին ավելացնենք նաև, որ համացանցային ակտիվության ու շփումների պատճառով մարդ արարածն ուղղակի կորցնում է իր նմանների հետ շփվելու, ասել է թե սոցիալական լինելու դրսևորումները, ապա նաև կարողությունը, ըստ Կոխլերի, հանգում ենք հասարակության տրիվիալացման:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«ԱԶԳ», 21 ապրիլ 2012թ

ՀՈՒՅՆ ՓԻԼԻՍՈՓԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ Է ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆԱՆՑՈՂԻԿ ԱՐԺԵՔ

Բոլոր ժամանակներում կրթությունը համարվել է երաշխիք զարգացող հասարակության համար: Սա այն բնագավառն է, որն անմիջականորեն առնչվում է կյանքի մյուս բնագավառներին ու պայմանավորում նրանց զարգացումը:

Տարբեր ժամանակներում փիլիսոփաները կրթությունն արժևորել են յուրաքանչյուրն իր ձևակերպումներով, չնայած բոլոր ժամանակներում էլ ակներև է եղել՝ կրթությունը մնայուն արժեք է: Հույն փիլիսոփա Եվանգելոս Մութոսպուլոսն իր դասախոսությունը կազմել էր ելնելով հենց արժեքային սկզբունքներից:

Ապրիլի 15-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ակադեմիկոս Եվանգելոս Մութոսպուլոսը, որն Աթենքի համալսարանի պատվավոր ռեկտորն է և Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահը,

հանդես եկավ «Կրթությունը որպես անանցողիկ արժեք» թեմայով դասախոսությամբ: Ապրիլի 16-17-ին Հայաստանում նա նաև մասնակցեց «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտաժողովին:

«Կրթությունն արժեք է, սակայն ինչպիսի արժեք», հույն փիլիսոփան այսպիսի հարցադրում արեց իր դասախոսության ընթացքում: Այա, դիտարկելով իր հարցադրումը տարբեր կողմերից, ընդգծեց՝ կրթությունը կարող է ցույց տալ արժեք հասկացության բնորոշ բոլոր գծերը:

Պաշտոնապես կրթությունը ներկայացվում է որպես կազմակերպված մի ինստիտուտ, որի դեպքում արժեք հասկացությունից մենք տեղափոխվում ենք սոցիալական ու պետական ինստիտուտներ: Եվ ուսուցումն անմասն չի մնացել նաև տեխնիկական հնարավորությունների ներգրավվածությունից:

Որոշակի գիտելիքներ ձեռք բերելուց հետո մարդը ձգտում է գիտելիքների հարստացման, ինչն իրականացվում է նոր արժեքների ձեռքբերումով: Եվ ժամանակակից կրթությանն ավելի շատ մտահոգում է արժեքների ձեռքբերումը, քան ճշմարտությունների բացահայտումը:

Եվանգելոս Մութսոպուլոսի փոխանցմամբ՝ կրթությունը միայն գիտելիքների ձեռքբերումը չէ, կրթությունը նաև սովորեցնում է դրանք ճիշտ ու օգտավետ կիրառելու ձևերը: Հետևաբար սույն հաջորդականությունը վերաբերում է արդեն շարունակաբար կերտվող արժեքներին: Փիլիսոփան ընդգծում է՝ առանց այդ արժեքների հետագա կյանքը պատկերացնելն անհնար է, իսկ կրթությունն ինքնին անընդհատ առաջադիմող արժեք է:

Եթե մեր օրերում խոսում ենք կրթությունից, ապա ինտերնետի ու համակարգիչների հնարավորություններն անտեսել չենք կարող: Համակարգչային աշխարհն ու ծրագրավորման ոլորտը նույնպես կախված են կրթությունից, և մարդու գիտակցությունն անմիջական շփման մեջ է ինտերնետային ցանցի հետ:

Իր դասախոսության ընթացքում հույն փիլիսոփան անդրադարձավ և մեթոդաբանությանը. մեթոդոլոգիան ու կրթությունը կազմում են մի տիրույթ, որն էլ ձևավորում է կրթության կառուցվածքը:

Դասախոսությանը ներկա էին ուսանողներ, դասախոսներ, ասպիրանտներ, հայցորդներ ինչպես Մանկավարժական համալսարանից, այնպես էլ մյուս բուհերից: Դասախոսությանը հաջորդեց հարց ու պատասխանը, ներկաները Եվանգելոս Մութսոպուլոսին ուղղեցին իրենց հարցերը, որոնց նա հոժարակամ պատասխանեց:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
«ԱԶԳ», 21 ապրիլ 2012թ

ՏՐԱՆՍՍՈՒԱ ՆՈ. «ՈՒՍԱՆՈՂՆ ԻՄ ՀԱՃԱԽՈՐԴԸ ԶԷ»

Հենց այս սկզբունքով է հոգեվերլուծաբան, պրոֆեսոր Ֆրանսուա Նոն ամեն անգամ մտնում ֆրանսիական Դիդրոյի համալսարան, որտեղ դասավանդում է:

Նոնը երկրաշարժից հետո 6 ամիս եղել է Գյումրիում: Հետերկրաշարժյան քաղաքը, ծանր հարված ստացած մարդիկ, պրոֆեսորի համար «մեծ դպրոց էին». «Այնուհետև էլի եղա Հայաստանում 90-ականներին ու պետք է ասեմ, որ կապված եմ Ձեր երկրին», ասաց Ֆրանսուա Նոն:

Գիտաժողովի շրջանակներում պրոֆեսոր Նոն հանդիպեց մանկավարժականի դասախոսների ու ուսանողների հետ ու հանդես եկավ առանձին դասախոսությամբ՝ «Հոգեբանության դասավանդման առանձնահատկությունները Ֆրանսիայում» թեմայով:

Նոն տեղեկացրեց, որ հոգեբանությունը՝ որպես առանձին գիտություն, Ֆրանսիայում առաջացել է միայն Երկրորդ աշխարհամարտից հետո: «Երկար տարիներ հոգեբանությունը մեր

երկրում ներառված էր փիլիսոփայության մեջ, ու առանձին չէր դիտվում: Եվ միայն 1945-ին հայտնվեց առաջին դիպլոմավորված մասնագետը՝ «հոգեբան» որակավորմամբ. առաջացավ հոգեբանություն գիտությունը», պատմում է Նոն:

Այժմ, պրոֆեսորի խոսքերով, Ֆրանսիայում չկա հոգեբանության կրթության ուսումնական միասնական ծրագիր. «Ամեն համալսարան ինքն է որոշում կրթական ծրագիրը՝ 4 տարի կտրվածքով: Բայց սա չի նշանակում, որ համալսարանները ամեն բան կարող են անել: Ներսում ծրագիր կազմելուց հետո, այն ամեն համալսարանի համար դեռ պետք է հաստատի կրթության նախարարությունը՝ առաջիկա 4 տարիների համար», ասում է պրոֆեսոր Նոն: Միեւնույն ժամանակ բանախոսը ընդգծում է, որ «ոչ մի համալսարան հոգեբան չի պատրաստում», այլ այդ մասնագիտությունն ու կոչումը ստանում են առավելաբար գործնական աշխատանքով, տարբեր ասոցիացիաների ու դպրոցների անդամագրվելով. «Ֆրանսիայում կա այսպիսի պրակտիկա. ապագա հոգեբանը նախ ինքն է լինում հաճախորդի կարգավիճակում, հետո նոր հանդես գալիս որպես հոգեբան», պատմում է Նոն՝ հավելելով, որ, անշուշտ, տեսությունները ևս անչափ կարևոր են:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ
«ԱԶԳ», 21 ապրիլ 2012թ

ՓԻԼԻՍՈՓՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՂՎԱ ՕՐԸ

Վաղուց Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ գիտաժողով չէր անցկացվել: Անդրադառնանք փոխակերպվող հասարակության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրներին: Գիտաժողովի ընթացքում ընթերցված զեկուցումները առավել հետաքրքրական եւ ընդգրկուն էին՝ «Մարդու վարքի տեսությունը փոխակերպվող հասարակությունում», «Անձի ինքնաիրացման հնարավորությունները փոխակերպվող հասարակությունում (սոցիալ-հոգեբանական տեսանկյունը)», «Փոխակերպվող հասարակության ինքնագարգացումը որպես նոր հարացույցի բացահայտման միջոց», «Փոխակերպվող հասարակությունը եւ տրանսգենդենտալ մետաֆիզիկական», «Փոխակերպվող հասարակությունը որպես տազնապալիության միջավայր եւ նրա ազդեցությունը մարդկանց վրա»...: Զեկուցումների վերնագրեր, որտեղ ամփոփվում են փոխակերպվող հասարակության հոգեբանական մոտեցումները:

Գիտաժողովը նշանակալից էր, քանի որ հոգեբանական միտքը նոր լիցք ստացավ, ուրվագծվեց ևս մի հետազիծ, որը տեւական ուսումնասիրման կարիք ունի: Երկու օր շարունակ մասնակիցներն ապրում էին հոգևոր վերելք, շնչում էին գիտությամբ, մթնոլորտն այն աստիճան էր վեհացված, որ ամենուր մեզ շրջապատում էին փիլիսոփայական և հոգեբանական մտքերն ու հասկացությունները: Իսկ օտարերկրյա եւ հայ գիտնականների մասնագիտական շփումները եւ մշակութային բազմաթիվ միջոցառումները կարծես թե ի չիք էին դարձնում միջմշակութային հաղորդակցման դժվարություններն ու լեզվական արգելքները:

Փաստորեն, նույն հիմնախնդիրներն են հառնում ինչպես շոտլանդացի, ֆրանսիացի, արգենտինացի, ամերիկացի, վրացի, այնպես էլ հայ հոգեբանների առջև: Եզրակացությունը մեկն է՝ հոգեբանական գիտության զարգացումը ներկա ժամանակաշրջանում ընթանում է ինտեգրման ճանապարհով: Այստեղ է, որ բոլորիս նպատակները մեկտեղվում են այն առումով, որ փոխակերպվող հասարակության հիմնական բնութագիրը մարդու հիմնախնդրի բազմակողմանի, տարբեր խորությամբ հոգեբանական և փիլիսոփայական մեկնաբանությունն է, որի շնորհիվ մարդը հաստատում է իր ինքնությունը ոչ միայն որպես մասնավոր անձ, այլ նաև իբրև սոցիալականացված անհատականություն:

ԻՆՉՊԵՍ ԳՆԱՀԱՏԵԼ ԱՆՁԻ ՄԵՋ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Դատական կլինիկայի հոգեբանության պրոֆեսոր, Գլազգոյի Կալեդոնյան համալսարանի հոգեբանության և իրավունքի կենտրոն եվրոպական ասոցիացիայի նախագահ Դեյվիդ Կուկը գիտաժողովում մանկավարժական համալսարանի ուսանողներին ներկայացրեց անձի բնության ռիսկի գնահատման առանձնահատկություններն ու մոտեցումները:

Դեյվիդ Կուկը խոստովանում է, որ տարիներ առաջ, երբ սկսել է անձի բնության և ռիսկի գործոնների գնահատման մասին հետազոտություններ կատարել, չկար համակարգ: «Այդ ժամանակ հետազոտում էինք տարբեր դեպքերի որոշ դրվագներ և միմյանց համադրելով հանգում եզրակացության: Պարզ չէր, թե ինչ դեպքի հետ գործ ունենք: Երբեմն հարց էր առաջանում՝ դա բնությամբ ղեկավարվող է, թե՞ սովորական, և նման դեպքում շատ դժվար էր հասնել որոշակի գնահատման համակարգի և ճիշտ վերլուծություն կատարել», ասում է Կուկը՝ հավելելով, որ հենց այդ ժամանակահատվածում անձի բնության ռիսկի գնահատումը դարձավ հոգեբանների թիվ մեկ խնդիրը:

Կուկը հիշում է, որ Մեծ Բրիտանիայում բնության ռիսկի գնահատման բազմաթիվ ձևեր կային, սակայն իրենք ցանկանում էին այնպիսի համակարգ ստեղծել, որ կկիրառվեր ամբողջ աշխարհում: Կուկի գնահատման՝ ներկայացվելիք գնահատման համակարգը լավագույնն է, որովհետև բերում է նոր մոտեցումը նաև բժշկական տեսանկյունից: Գնահատման նոր համակարգը ենթադրում է հավանական միջոցը և անհատական մոտեցումներ, որոնց շնորհիվ կարելի է գնահատել՝ անձը հակված է բնության, թե՞ ոչ: Այդ մոտեցումը հնարավորություն է տալիս գնահատելու անձի՝ նաև մեղանչելու հավանականությունը: Կուկը հիշում է, որ մինչ այս ոլորտում աշխատելը ուսումնասիրել է հայտնի դատական հոգեբույժների ուսումնասիրությունները և վերլուծելով ստեղծել գնահատման համակարգ:

Ընդհանուր մոտեցումներից բացի, քրեական ռիսկի նվազման համար Կուկն անհարաժեշտ է համարում կիրառել նաև հոգեբանական տարբեր մոտեցումներ՝ նախ պարզել անձի կենսագրությունը, նրա դժգոհությունները, ֆիզիկական վիճակը, բանտի կամ հոգեբուժարանի վիճակն ու անվտանգության երաշխիքները:

Գիտնականը համոզված է՝ առավել հանգիստ և ոչ ծայրահեղ հասարակությունում և միջավայրում ապրող անձնավորությունն ավելի քիչ է հակված բնության, քան ծայրահեղ միջավայրում ապրողը:

«Ես իմ ուսանողներին միշտ ասում եմ՝ «երբեք մի ասեք երբեք», որովհետև եթե անգամ հանդիպում ես մոլորակի ամենավտանգավոր մարդուն, ապա մի բացառիկ հավանականությունը, որ նրանից ավելի վտանգավորն էլ կա: Եվ հենց այդ մոտեցումը պետք է ստիպի, որ յուրաքանչյուր դեպքի մոտենաս անհատական տեսանկյունից և անհատական վերլուծություն կատարես», ասաց գիտնականը՝ խոստովանելով, որ տարիների կատարած աշխատանքից ու դժվարություններից հետո հանգել է եզրակացության, որ ավելի հեշտ է լինել հոլիվուդյան աստղ, քան զբաղվել անձի մեջ բնության ռիսկի գնահատմամբ:

Գնահատելու համար կերպաների մեջ ագրեսիան՝ Կուկը հաշվի է առնում երեք չափանիշ՝ տարիք, պատճառ և վարքագիծ: Երկրորդ փուլում արդեն գիտնականը առանձնացնում է սեռային պատկանելությունը, կարգավիճակը, հասարակությունից մեկուսացած լինելու փաստն ու պատճառները:

Ավելի քան մեկ ժամ տևած դասախոսության ընթացքում շոտլանդացի գիտնականը ներկայացրեց հատվածներ այլ հոգեբանների կատարած ուսումնասիրություններից, օրինակներ Գլազգոյի կալանավայրերի, և հոգեբուժարանների վերաբերմունքից և մթնոլորտից: Կուկը քննադատում է մոտեցումը, որ կալանավայրերում և հոգեբուժարաններում բոլորին ցուցաբերվում է հավասար վերաբերմունք: «Սա սխալ է, որովհետև միայն անհատական մոտեցմամբ հնարավոր կլինի հասնել ճիշտ կանխագուշակման և եզրահանգման, թե որքանով է նա վտանգավոր հասարակության համար»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«ԱԶԳ», 21 ապրիլ 2012թ

ՄԵՐ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ԵՎ ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓՈՒՅԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Փիլիսոփայական մտքի դարավոր պատմությունը անվերապահորեն համոզում է, որ նրա զարգացման ուղիներն անիմանալի են: Սակայն հայ փիլիսոփայական միտքը՝ Դավիթ Անհաղթի հանճարեղ երկերի շնորհիվ այնպիսի հստակ ու արգասավոր ավանդույթներ է մշակել, որ այս դեպքում որոշակի կանխատեսումները ճշմարտության մեծ հավանականություն ունեն: Ես առաջին հերթին նկատի ունեմ իմացաբանականի ու տրամաբանականի այն սերտ միասնությունը և փոխներգործությունը, որը Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգության ամենացայտուն կողմն է և իր անդրադարձն է ունեցել հայ փիլիսոփայական մտքի պատմության բոլոր դպրոցներում:

Մեր օրերին Դավիթ Անհաղթի նշված ավանդույթն առավելապես նկատելի է ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի աշխատություններում: Այս առումով առավել նշանավոր է ակադեմիկոսի «փոխակերպական տրամաբանության» համակարգը: Փոխակերպական տրամաբանության ուսմունքը պատկանում է ձևական տրամաբանության ոլորտին: Ավելորդ չէ նշել, որ դեռևս 18-րդ դարում գերմանացի մեծ մտածող Իմանուիլ Կանտը այն կարծիքին էր, որ ձևական տրամաբանությունը կատարյալ գիտական համակարգ է: Եվ ահա այդ կատարյալ ուսմունքում Գեորգ Բրուտյանն ի հայտ է բերել այնպիսի հարցադրումների մի ամբողջ շերտ, որոնց պատասխանները կազմում են տրամաբանական գիտության մի կարևոր ոլորտ, որի առանցքային հարցն է, թե ինչպես են փոխհարաբերվում մտքի բացահայտ և ոչ-բացահայտ ձևերն ու կառույցները: Ես միանգամայն վստահորեն կարող եմ կանխագուշակել, որ հայ փիլիսոփայական-տրամաբանական մտքի հետագա զարգացման ուղիներից մեկը հենց փոխակերպական տրամաբանությունն է լինելու: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ սկսած 1968 թ. ակադեմիկոս Բրուտյանը հրատարակել է մի շարք բարձրարժեք հոդվածներ ու մենագրություններ հայերեն, ռուսերեն ու անգլերեն լեզուներով: Հիմնական փաստարկս այն է, որ Բրուտյանն իր աշակերտների ու հետևորդների հետ միասին 2008 թ. հրատարակեց «Փոխակերպական տրամաբանություն» երկհատորյակը:

Մյուս փիլիսոփայական-տրամաբանական ուղղությունը, որն, ըստ իս, ոչ միայն հեռանկարային է, այլ նաև համապատասխանում է ժամանակակից կյանքի սոցիալ-քաղաքական պահանջմունքներին՝ դա փաստարկման տեսությունն է: Եթե ես ճիշտ եմ հասկանում քաղաքական պայքարի բնույթի ներկայիս միտումը, ապա ինձ համար միանգամայն համոզիչ է, որ մոտակա տարիներին տրամաբանորեն փաստարկված միտքը դառնալու է համախոհներ ներգրավելու առավել ազդեցիկ ուղին: Դա բնականաբար կնպաստի փաստարկման ընդհանուր տեսության և նրա արդյունավետ կիրառման եղանակների հետագա զարգացմանը: Հայ փիլիսոփայական մտքի զարգացման այս հեռանկարը բոլոր կասկածներից վեր արգասաբեր կլինի, քանի որ Փիլիսոփայական փաստարկման Երևանյան դպրոցը, որը

հիմնել և ղեկավարում է ակադեմիկոս Գեորգ Բրուտյանը, Բելգիայի ու Ֆինլանդիայի դպրոցների հետ մեկ տեղ փաստարկման տեսության մշակման աշխարհիս ամենաճանաչված կենտրոններից մեկն է:

Հայ փիլիսոփայական մտքի զարգացման երրորդ հեռանկարային ուղին գիտական աշխատանքի տեխնոլոգիայի մշակումն է: Մեր օրերին գիտելիքը դարձավ ամենաբարձր պահանջարկ վայելող ապրանքներից մեկը: Ժամանակակից գիտությունը չի կարող բավարարվել գիտական հետազոտության մեթոդների մասին ընդհանուր տեսական դատողություններով: Այսօրվա գիտելիքների արդյունավետ արտադրությունը պահանջում է ոչ թե գիտելիքի վերացական տեսություններ ու մոդելներ, այլ գիտելիքների արտադրության կոնկրետ տեխնոլոգիաներ:

Հայ փիլիսոփայական մտքի զարգացման ուղին պայծառ է, քանի որ այն լուսավորված է Դավիթ Անհաղթի ժառանգության անմար ջահով:

ՌՈՒԲԵՐՏ ՋԻՋՅԱՆ՝ Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս
«ԱԶԳ», 21 ապրիլ 2012թ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Երևանում երեկ մեկնարկեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կազմակերպած «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ (փիլիսոփայական և հոգեբանական տեսանկյուններ)» թեմայով երկօրյա միջազգային գիտաժողովը: Գիտաժողովին մասնակցում են ակադեմիկոս, Աթենքի համալսարանի պատվավոր ռեկտոր, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ, արդի ժամանակաշրջանի խոշորագույն փիլիսոփա Եվանգելոս Մոութսոպոուլոսը, Ինսբրուքի համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի ղեկավար, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ Հանս Կոխլերը, Փիլիսոփայության ընկերությունների միջազգային Ֆեդերացիայի (FISP) նախագահ ակադեմիկոս Պիտեր Կեմպը, Հոգեբանության և իրավունքի եվրոպական ընկերակցության նախագահ Դեյվիդ Կուկը, ինչպես նաև այլ խոշոր գիտնականներ Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Ավստրիայից, Դանիայից, Բելգիայից, Ֆինլանդիայից, Արգենտինայից, Չեխիայից, Հունաստանից, Ռուսաստանից, Վրաստանից:

«ԱՌԱՎՈՏ», 70/4166/ 17 ապրիլի 2012 թ., էջ 1.

ԱՊԱԳԱՆ ԳԻՏԵԼԻՔԻՆՆ Է

Երեկ տեղի ունեցավ «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ» (փիլիսոփայական և հոգեբանական տեսանկյուններ) թեմայով երկօրյա միջազգային գիտաժողովի հանդիսավոր բացումը:

Հանդիսավոր նիստը բացեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի նախագահ, Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ին առընթեր մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Գեորգ Բրուտյանը. «Մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հնի և նորի պայքարում ստեղծվում է

փոխակերպման միտված հասարակություն: Այդ գործընթացում տեղի է ունենում անցյալից մեզ հասած լավի, օգտակարի և նորի ծիլերի դեռևս չկանգնեցված օրգանական զուգակցում: Դա նշանակում է նաև, որ հինը ոչ թե դեն է նետվում բոլոր դեպքերում ու պայմաններում, այլ կերպարանափոխվում է նորի ազդեցության տակ և նպաստում նորի զարգացմանը: Դա այն է, ինչ մասնագետներն անվանում են փոխակերպվող հասարակություն: Այդ փոխակերպումն իր մեջ ներառում է զարգացման հիմնական շերտերը և փուլերը»:

Լիագումար նիստում զեկույցով հանդես եկավ փիլիսոփայության դոկտոր, ակադեմիկոս, Աթենքի համալսարանի պատվավոր ռեկտոր, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ Եվանգելոս Մոուխտպոուլոսը:

Փիլիսոփայության պրոֆեսոր, Ինսբրուքի համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի ղեկավար, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ Հանս Կոխլերը ներկայացրեց «Արդի բազմամշակութային հասարակությունը և միջմշակութային հարաբերությունների հերմենևտիկան» թեմայով զեկույցը, որում ընդգծեց, որ պետությունների կայունության ապագան կախված կլինի նրանից, թե ինչպես են նրանք վերաբերում մշակութային բազմազանությանը: Ջեկուցման մեջ Կոխլերը ներկայացրեց «քաղաքակրթությունների երկխոսության» ժամանակակից դիսկուրսի համատեքստում միջմշակութային հարաբերությունների դինամիկան՝ գլոբալ քաղաքակրթական գիտակցության զարգացմանը զուգընթաց:

Կոստոպոլիտիզմը մեր ժամանակներում թեմայով զեկույցի հեղինակը Կոպենհագենի Աարուսի համալսարանի պրոֆեսոր, կրթության բաժանմունքի էթիկայի և իրավունքի կենտրոնի տնօրեն, Փիլիսոփայական ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (FISP) նախագահ, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս Պիտեր Կեմպն էր:

Աշխարհի քաղաքացի կամ «կոստոպոլիտ» լինելն այսօր ենթադրում է ընդունել, որ ընդհանուր կարելու խնդիրներ կան, որոնք ոչ մի ազգ՝ նույնիսկ ամենատուժեղը, չի կարող միայնակ լուծել, ասաց նա: Ջեկուցողն ընդգծեց, որ աշխարհի քաղաքացին չպետք է դեմ հանդես գա ազգային քաղաքացուն, այլ ընդհանուր մտածողությունն ու գործունեությունը պետք է ուղղված լինեն անհատական, տեղային և ազգային կյանքի պահպանմանը:

«Փսիխոպաթիա. առնչությունները փոխակերպվող հասարակության հետ» թեմայով զեկույցով հանդես եկավ Գլազգոյի շոտլանդական համալսարանի դատակլինիկական հոգեբանության պրոֆեսոր, Հոգեբանության և իրավունքի եվրոպական ընկերակցության նախագահ Դեյվիդ Կուկը: Նա անդրադարձավ, որ դեռևս Աստվածաշնչում կարելի է հանդիպել փսիխոպաթիայի նկարագրությունների: Նա մանրամասն ներկայացրեց այն բոլոր վարքագծային խանգարումները, որոնք հանդիպում են փսիխոպաթիայի ժամանակ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», 17 ապրիլ 2012թ., էջ 5.

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ. ՀՈՒՅՍԵՐԻ ԵՎ ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՃԱՆԿԱՐ

Հունիսի 27-ից 28-ը Մանկավարժական համալսարանում անցկացվեց «Երիտասարդության արժեքային կողմնորոշումները և նրանց հուզող հարցերը» թեմայով գիտաժողով: Գիտաժողովը հանդիսավորությամբ բացեց համալսարանի ռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը: Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ռեկտորը կարևորեց վերոնշյալ թեմայով գիտաժողովի կազմակերպումը: «Եթե մենք կարողանանք ճիշտ որոշել այսօրվա երիտասարդության արժեքային կողմնորոշումները, ապա ես կարծում եմ, որ մեզ համար բավականին դյուրին կլինի որոշակիորեն պատասխանել նաև նրանց հուզող հարցերին», - ասաց ռեկտորը: Մասնակիցներին մաղթելով արդյունավետ աշխատանք՝ նա հույս հայտնեց, որ այս

գիտաժողովը կնպաստի ի վերջո մոտենալ արդիական այս թեմայի, եթե ոչ ամբողջական ճշմարտությանը, ապա գոնե այդ հարցերի պատասխանները գտնելուն: Ռեկտորի որոշմամբ, գիտաժողովի ավարտից հետո, լավագույն հոդվածները և նյութերը կիրապարակվեն ժողովածուի տեսքով:

Գիտաժողովի ընթացքում մասնակիցները ներկայացրեցին փոխակերպվող հասարակությունում երտասարդների արժեքային կողմնորոշումների, քաղաքական մասնակցության, արևմտացման, սոցիալական ակտիվության և դրանց հետևանքով առաջացած հիմնահարցերի մասին իրենց գաղափարները, տեսակետները, մոտեցումները:

«Երիտասարդ Հայաստան» զեկուցումով գիտաժողովը բացեց սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի պրոֆեսոր, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գևորգ Պողոսյանը: Չեկուցման մեջ նա անդրադարձավ այն հարցին, որ երիտասարդությունը սոցիոլոգիայի տեսակետից բացառապես կարևոր թեմա է, որովհետև անարժանորեն արհամարհված է, քիչ լուսաբանված և ուսումնասիրված: Ըստ նրա, երիտասարդությունը մի սերունդ է՝ որը պետք է որոշի Հայաստանի տեսքը մոտ ապագայում: Հենց նրանք պետք է դառնան նոր կյանքի տերերը, հենց նրանցից կախված կլինի մեր երկրի դիմագիծը 5-10 տարի հետո:

Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Միջազգային Փիլիսոփայական ակադեմիայի անդամ Ռոբերտ Ջիջյանը ներկայացրեց «Երիտասարդության բարոյական արժեքներ և քրիստոնեությունը» թեմայով զեկուցում: Վերջինս նշեց, որ ազատ մրցունակության հասարակությունն առանց քրիստոնեական հավատի ի վերջո հանգում է անհատամոլության և դրամ կուտակելու մոլուցքի: Քրիստոնեական բարոյականության սկզբունքները ժողովրդի ապրելակերպում սերմանելու հետ մեկտեղ, պետք է ուժեղացնել պետության մասնակցությունը երկրի սոցիալ-տնտեսական կյանքին:

Գիտաժողովը կազմակերպվել էր ՀՀ կրթության և գիտության նախարարության և Մանկավարժական համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի համատեղ ջանքերով: Այն անցկացվում էր կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի 2012-2013 ուսումնական տարվա ռազմավարական ծրագրի համաձայն:

Գիտաժողովը նախագահում էին 20-րդ դարի հայ աշխարհահռչակ փիլիսոփա, տրամաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, փիլիսոփայության միջազգային և հայոց փիլիսոփայական ակադեմիաների պրեզիդենտ, ՀՊՄՀ մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, Մշակույթի համաշխարհային ակադեմիայի ցմահ անդամ (Մեծ Բրիտանիա) և տասնյակ այլ երկրների ակադեմիաների անդամ Գեորգ Բրուսյանը, Հայոց փիլիսոփայական ակադեմիայի թղթակից անդամ, ՀՊՄՀ կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ Յուրի Գասպարյանը, Մանկավարժական համալսարանի գիտական քարտուղար Հասմիկ Պետրոսյանը:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», 3 հուլիսի, 2012թ., N 12 (927)

«ՌՈՒԲԵՐՏ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՀՐԱՇՔ Է»,
ԱՍՈՒՄ Է ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԸ

Մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում հեկտեմբերի 4-ին հայտնի երաժիշտ, երգահան, Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության նախագահ Ռոբերտ Ամիրխանյանը հյուրընկալվել էր Մանկավարժական համալսարանում: Մինչ մատուցելու հանդես կգար հիանալի համերգային ծրագրով, համալսարանում նրան անակնկալ էր սպասվում: Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում 20-րդ դարի աշխարհահռչակ փիլիսոփա, Մանկավարժական համալսարանի Մետափիլիսոփայության, փոխակերպման տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի ղեկավար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Փիլիսոփայության միջազգային և հայոց փիլիսոփայական ակադեմիաների նախագահ Գեորգ Բրուտյանը ողջունեց մատուցողի մուտքը համալսարան և Հայոց փիլիսոփայական ակադեմիայի կողմից նրան շնորհեց ակադեմիայի բարձրագույն Պատվավոր անդամի դիպլոմ:

«Ակադեմիան ունի ընտրյալ կազմ. այստեղ լավագույններից լավագույններն են: Ըստ մեր կանոնադրության՝ ակադեմիայի բարձրագույն կոչումը ստացած անձն իրավունք ունի գործել բոլոր բնագավառներում, բայց ոչ մի պարտականություն չունի. վերջինս էլ ընդգծում է պատվավոր անդամի յուրահատկությունը», -ասաց Գեորգ Բրուտյանը: Իսկ մատուցողի երաժշտությունը պարզապես խորհրդավոր հրաշք անվանեց:

Շնորհակալություն հայտնելով իրեն նման պարզևի արժանացնելու համար՝ Ռոբերտ Ամիրխանյանն ասաց. «Ես նման պատվավոր և բարձր կոչմանն արժանանալուն չէի սպասում, սա ինձ համար մի քիչ դժվարամարս է: Երաժշտի գործը ստեղծագործություններ գրելն ու լսարանին ներկայացնելն է: Շնորհակալ եմ այս գնահատականի համար, սակայն ամենամեծ գնահատականն ինձ համար ձեր ժպիտներն ու ծափահարություններն են»:

Կոմպոզիտորը շնորհավորեց նաև համալսարանի 90-ամյակը՝ բուռն անվանելով հայ ուսուցիչների պատրաստման լավագույն օրրան և կարևորելով մեր մեծ ուսուցիչների պատմությունը շարունակելու նրա առաքելությունը: Հանդիպումը սկսվեց հանդիսատեսին հայտնի «Երազ իմ երկիր հայրենիք» երգի կատարմամբ, որին հաջորդեցին սիրված մի շարք ստեղծագործություններ՝ «Երկու կոտունկ», «Տաղ անձնական», «Այնպես ուզում եմ», «Գարնան կաթիլներ» ստեղծագործությունները և դաշնամուրային մի քանի պիեսներ: Հանդիսատեսի ջերմությունը կրկնապատկվեց, երբ հնչեցին մանկության գեղեցիկ հուշեր արթնացնող «Դինգ-դոնգ» և հայտնի մուլտֆիլմերի ծանոթ մեղեդիները: Կոմպոզիտորը հատուկ շնորհակալություն հայտնեց և ողջունեց Մանկավարժական համալսարանի երաժշտական կրթության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Արփինե Լևոնյանին, ում մագիստրոսական թեզի թեման հայկական մուլտֆիլմերի երաժշտությունն է: Ուսանողուհին իր աշխատանքում անդրադարձել է հիմնականում Ռոբերտ Ամիրխանյանի ստեղծագործություններին: «Կարծում եմ նրանից լավ ոչ ոք մուլտֆիլմերի երաժշտություն չի գրել, նա մտել է յուրաքանչյուր կերպարի մեջ և իր երաժշտությամբ բնութագրել յուրաքանչյուր հերոսին», - ընդգծեց ուսանողուհին: Համերգի ընթացքում մատուցողի հետ զուգերգերով հանդես եկավ Սեդա Ամիր-Կարայանը: Ջերմ և հիանալի համերգային ծրագիրը մատուցողն ավարտեց դահլիճի հետ մեկտեղ երգելով «Հայի աչեր» հայտնի ստեղծագործությունը:

«ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», 19 հոկտեմբեր, 2012թ., № 15 (930)

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՌԴ-ՈՒՄ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ

2012 թվականի հունիսի 4-ից 11-ը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը պաշտոնական այցով մեկնել էր ՌԴ և Ուկրաինա, որտեղ հանդիպումներ ունեցավ այդ երկրների մանկավարժական համալսարանների ղեկավարության հետ:

Հունիսի 4-ին Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանում Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, մշակույթի վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը հանդիպեց Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի նորանշանակ ռեկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Կուտուզովի հետ:

Երկու համալսարանների ռեկտորները բանակցությունների ընթացքում քննարկեցին հետագա փոխադարձ համագործակցության հեռանկարների վերաբերյալ հարցեր: Ռուբեն Միրզախանյանը Ալեքսանդր Կուտուզովին շնորհեց Հայկական պետական մանկավարժական համալսարանի «Մանկավարժական համալսարան» պատվավոր մեդալը:

Ավելի ուշ Ռուբեն Միրզախանյանը հանդիպեց Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի նախագահ, պրոֆեսոր Վիկտոր Դյաբովի հետ: Ջրույցի ընթացքում քննարկվեցին երկու համալսարաններում ուսումնական գործընթացի կազմակերպման, տարբեր ոլորտներում միջազգային համագործակցության զարգացման վերաբերյալ հարցեր:

Վերջերս միավորվել են Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանն ու Մոսկվայի հումանիտար համալսարանը և այս երկու խոշորագույն հաստատությունները ղեկավարում է Ալեքսանդր Կուտուզովը:

Հանդիպման ավարտին Ռուբեն Միրզախանյանն այցելեց Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի պատմության թանգարան և հիմնարար գրադարան: Հաջորդ հանդիպումը Ուիկրաինայի Դրագոմանովի անվան Ազգային մանկավարժական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Վիկտոր Անդրյուշչենկոյի հետ էր: Ի դեպ, նա Եվրոպական մանկավարժական բուհերի ռեկտորների խորհրդի նախագահն է: Ռուբեն Միրզախանյանն ընտրվեց այս խորհրդի անդամ և արդեն առաջիկա հոկտեմբերին կմասնակցի ռեկտորների խորհրդի Պրահայում կայանալիք նիստին:

Վիկտոր Անդրյուշչենկոյի հետ հանդիպման ընթացքում Ռուբեն Միրզախանյանը քննարկել է փոխանակման ծրագրերի միջոցով դասախոսների և ուսանողների վերապատրաստման, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման հարցեր: Ռուբեն Միրզախանյանը 20-րդ դարի հայ աշխարհահռչակ փիլիսոփա, տրամաբան ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Մանկավարժական համալսարանի մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, Փիլիսոփայության միջազգային և հայոց փիլիսոփայական ակադեմիաների նախագահ Գեորգ Բրուսյանի հանձնարարությամբ Վիկտոր Անդրյուշչենկոյին շնորհեց «Դավիթ Անհաղթ» մեդալ:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», 18 հունիսի, 2012թ., № 11 (926)

ԸՆՏՐՎԵՑ ԵՎՐՈՊԱՅԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՌԵԿՏՈՐՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

2012 թ. հոկտեմբերի 24-26-ը Պրահայում անցկացված Եվրոպայի մանկավարժական համալսարանների ռեկտորների ընկերակցության վարչության նիստում որոշում կայացվեց

ընկերակցության կազմում ընդգրկել երկու նոր անդամի՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանին և Վարչավայի մանկավարժական համալսարանի ռեկտոր Յուլիանա Աուլեյտներային:

Ընկերակցության վարչության նիստին մասնակցում էին եվրոպական 10 երկրների 15 բուհերի 21 ռեկտորներ կամ պրոռեկտորներ, դեկաններ և գիտական ինստիտուտների տնօրեններ: Ընկերակցության հիմնադիր նախագահ, Ուկրաինայի Դրագոմանովի անվան մանկավարժական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Վիկտոր Անդրյուշչենկոն իր ելույթում կարևորեց Եվրոպայի մանկավարժական սահմանադրության ընդունումը և ներկաներին հրավիրեց ներկայացված փաստաթղթի նախագծի վերաբերյալ հանդես գալ առաջարկություններով և դիտողություններով: Բովանդակային քննարկումների արդյունքում որոշվեց մինչև 2013 թվականի մարտ ամիսը ավարտել մանկավարժական սահմանադրության վերջնական տարբերակի շուրջ քննարկումները և մայիսին Մայնի Ֆրանկֆուրտում կայանալիք ընկերակցության համագումարում ներկայացնել հաստատման:

Վարչության նիստին ներկայացվեց նաև ընկերակցության նոր ամսագիրը՝ «Եվրոպական մանկավարժական ուսումնասիրություններ»:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» 31 հոկտեմբերի 2012թ., № 16 (931)

ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Ապրիլի 16-ին Անի Պլազա հյուրանոցի ընդարձակ դահլիճում տեղի ունեցավ «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ (փիլիսոփայական և հոգեբանական տեսանկյուններ)» խորագրով երկօրյա միջազգային գիտաժողովի հաղիսավոր բացումը: Գիտաժողովը կազմակերպել էին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, Մանկավարժական համալսարանի Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտը, Փիլիսոփայության միջազգային ակադեմիան և Հայոց փիլիսոփայական ակադեմիան:

Հանդիսավոր նիստը բացեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի նախագահ, Խարատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ին առընթեր Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Գեորգ Բրուսյանը: Ողջունելով ներկաներին՝ Բրուսյանն ասաց. «Մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հնի և նորի պայքարում ստեղծվում է փոխակերպման միտված հասարակություն: Այդ գործընթացում տեղի է ունենում անցյալից մեզ հասած լավի, օգտակարի և նոր ծիլերի օրգանական զուգակցում: Դա նշանակում է, որ հինը ոչ թե դեն է նետվում բոլոր դեպքերում ու պայմաններում, այլ կերպարանափոխվում է նորի ազդեցության տակ և նպաստում նորի զարգացմանը: Դա այն է, ինչ մասնագետներն անվանում են փոխակերպվող հասարակություն: Այդ փոխակերպումն իր մեջ ներառում է զարգացման հիմնական շերտերը և փուլերը: Տվյալ պարագայում մեր գիտաժողովը քննության նյութ է դարձնում փոխակերպվող հասարակության գիտական ըմբռնումը ընդհանրապես (մեթոդաբանական տեսանկյուն) և խնդրո առարկայի հետ առնչվող գիտական մոտեցման ու նվաճումների քննական արժեքավորումը՝ մասնավորապես»:

Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին ողջունեց Հայաստանի Հանրապետության վարչապետ, Մանկավարժական համալսարանի խորհրդի նախագահ Տիգրան Մարգարյանը: Նա նշեց, որ քննարկվող թեման խիստ արդիական է ոչ միայն գիտնականների, այլև քաղաքական

գործիչների համար: «Համոզված եմ, որ այս գիտաժողովը կնպաստի Մանկավարժական համալսարանի միջազգային կապերի ամրապնդմանը:

Մենք մշակել ենք համալսարանի զարգացման հավակնոտ ծրագիր՝ նրա մակարդակը միջազգային լավագույն համալսարանների չափանիշներին բարձրացնելու համար», - ասաց Տիգրան Մարգարյանը:

Վարչապետը շարունակեց, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամն առավել սուր ձևով է ներկայացնում փոխակերպվող հասարակության խնդիրները և պահանջում քաղաքական գործիչներից՝ գտնել այնպիսի լուծումներ, որոնք թույլ չեն տա քաղաքացիների կենսամակարդակի նվազում: «Մենք ապրում ենք մի աշխարհում, որի թիվ մեկ բնութագիրն արագ փոփոխություններն են, որոնց արդյունքում էապես ուժգնացել են փոխադարձ ազդեցությունները, և աշխարհը դարձել է շատ ավելի բաց: Մեր աչքի առջև ձևավորվում է որակապես նոր տիպի՝ պոստիմդրուստրիալ հասարակություն, որի հենքային գործընթացը ոչ թե ապրանքների, այլ գիտելիքի արտադրությունն է: Ժամանակակից է համարվում այն հասարակությունը, որն ի վիճակի է արտադրել ժամանակակից գիտելիք», - ընդգծեց ՀՊՄՀ խորհրդի նախագահը:

Լիագումար նիստում «Հավիտ ենական տիեզերքը և մարդու դատապարտված իրավունքը. Համակերպում, թե՞ նախաձեռնողականություն» թեմայով առաջին զեկուցումը ներկայացրեց փիլիսոփայության դոկտոր, ակադեմիկոս, Աթենքի համալսարանի պատվավոր ռեկտոր, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ Եվանգելոս Մոուսոսպոուլոսը: «Մարդկության արտաքին տարածությունը՝ առաքինություններով և թերացումներով հանդերձ, իր մեծացմանը զուգընթաց ստիպված է հանդիպել տիեզերքի անողոք օրենքներին: Կփրկվի՞ այն վերջապես շարունակական վերահարմարեցումների շնորհիվ, թե՞ հարկադրաբար կարտաքսվի Երկրի կողմից...»: Ըստ Եվանգելոս Մոուսոսպոուլոսի՝ նախկին հեռանկարը կարող է գերակշռել միայն այն պայմանով, եթե ենթադրվի մարդու բնությունից ազահության բացառումը: Այնուհետև փիլիսոփայության պրոֆեսոր, Ինսբրուքի համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի ղեկավար, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ Հանս Կոխլերը ներկայացրեց «Արդի բազմամշակութային հասարակությունը և միջմշակութային հարաբերությունների հերմենևտիկան» թեմայով զեկուցում: Նա ասաց, որ «մշակութային ինքնության տեղական, տարածաշրջանային և համաշխարհային հարթությունների միջև առկա բարդագույն փոխհարաբերությունները մեծացնող բազմամշակութային հասարակություններին ներկայացնում են նոր մարտահրավերներ», և որ «պետությունների կայունության ապագան կախված կլինի նրանից, թե ինչպես են նրանք վերաբերվում մշակութային բազմազանությանը»: «Քաղաքակրթությունների երկխոսության» ժամանակակից դիսկուրսի համատեքստում, գլոբալ քաղաքակրթական գիտակցության զարգացմանը զուգընթաց, բանախոսը փորձեց ուրվագծել միջմշակութային հարաբերությունների դինամիկան:

Կոպենհագենի Աարուսի համալսարանի պրոֆեսոր, Կրթության բաժանմունքի էթիկայի և իրավունքի կենտրոնի տնօրեն, Փիլիսոփայական ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (FISP) նախագահ, փիլիսոփայության XXII համաշխարհային համաժողովի (2008) նախագահ, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս Պիտեր Կեմպը հանդես եկավ «Կոսմոպոլիտիզմը մեր ժամանակներում» թեմայով զեկուցմամբ: «Աշխարհի քաղաքացի կամ «կոսմոպոլիտ» լինելն այսօր ենթադրում է ընդունել, որ ընդհանուր կարևոր խնդիրներ կան, որոնք ոչ մի ազգ՝ նույնիսկ ամենաուժեղը, չի կարող միայնակ լուծել», - ասաց նա: Խոսելով այդ խնդիրների մասին՝ զեկուցողն ընդգծեց, որ աշխարհի քաղաքացին «չպետք է դեմ խաղա ազգային քաղաքացուն, այլ ընդհանուր մտածողությունն ու գործունեությունը պետք է ուղղված լինեն անհատական, տեղային և ազգային կյանքի պահպանմանը»:

Լիազույցում նիստի ավարտին «Փսիխոպաթիա. առնչությունները փոխակերպվող հասարակության հետ» թեմայով զեկուցումամբ հանդես եկավ Գլազգոյի Կալեդոնյան համալսարանի դատակլինիկական հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, Հոգեբանության և իրավունքի եվրոպական ընկերակցության նախագահ Դեյվիդ Կուկը: Ըստ բանախոսի՝ դեռևս Աստվածաշնչում են հանդիպում փսիխոպաթիայի նկարագրություններին: Նա ներկայացրեց այն բոլոր վարքագծային խանգարումները, որոնք հանդիպում են փսիխոպաթիայի ժամանակ:

Հանդիսավոր նիստի վերջում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի նախագահ Գևորգ Բրուտյանը ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին շնորհեց Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի պատվավոր դոկտորի կոչում: Տիգրան Սարգսյանն այն համարեց պարտավորեցնող և շնորհակալություն հայտնեց բարձր գնահատանքի համար:

Այնուհետև գիտաժողովն իր աշխատանքը շարունակեց Փիլիսոփայության և հոգեբանության ոլորտի հինգ մասնաճյուղերում, որտեղ դասախոսություններով հանդես եկան խոշոր գիտնականներ Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Ավստրիայից, Դանիայից, Բելգիայից, Ֆինլանդիայից, Չեխիայից, Հունաստանից, Ռումինիայից, Ռուսաստանից, Վրաստանից, Հայաստանից և ԼՂՀ-ից:

Առաջին մասնաճյուղում քննարկվեցին հասարակության համակարգի փոխակերպման առանձնահատկությունները, երկրորդում՝ փոխակերպական տրամաբանության խնդիրները, երրորդում՝ մետափիլիսոփայության և փաստարկման տեսության հիմնահարցերը, չորրորդում՝ փոխակերպվող հասարակության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները, իսկ հինգերորդ մասնաճյուղում՝ փոխակերպվող հասարակության կիրառական հոգեբանության հիմնախնդիրները:

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ 90-ամյակի շրջանակներում անցկացվող երկօրյա միջազգային գիտաժողովի ծրագրից դուրս՝ ապրիլի 15-ին և 18-ին, ներկայացվեցին ևս հինգ դասախոսություններ:

Տարբեր երկրներից հրավիրված գիտնականների հետ գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին և զեկուցումներ կարդացին հանրապետության տարբեր բուհերի դասախոսներ, ինչպես նաև ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական կազմը և լավագույն մագիստրոսները:

Ներկայացվող զեկուցումների շուրջ տրվում էին հարցեր և ծավալվում էր գործնական խոսակցություն, ինչը գիտաժողովի աշխատանքներում բանավիճային մթնոլորտ էր ստեղծում: Աշխատանքային խմբերը հետաքրքիր քննարկումների արդյունքում փորձեցին գտնել փիլիսոփայության և հոգեբանության ասպարեզի գիտական մի շարք հիմնախնդիրների լուծման ուղիները՝ տալով փոխակերպվող հասարակության զարգացման մեջ նրանց առավել բնորոշ ժամանակակից հիմնավորումները:

Ապրիլի 17-ին կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում անցկացվեց հանդիսավոր արարողություն, որով ամփոփվեց «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ (փիլիսոփայական և հոգեբանական տեսանկյուններ)» խորագրով միջազգային գիտաժողովը:

Համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը համատեղ աշխատանքի համար շնորհակալություն հայտնեց գիտաժողովի բոլոր մասնակիցներին, հյուրերին և կազմակերպիչներին: Նա վստահեցրեց, որ իր ծավալով և լավանդակությամբ առաջին և աննախադեպ այդ գիտաժողովը կլինի շարունակական և ավելի կատարյալ:

«Գիտաժողովի նախորդ օրը միջազգային ճանաչում ու համբավ վայելող մեր հարգարժան պրոֆեսորները հանդես եկան հրապարակային դասախոսություններով և մեծ հետաքրքրություն առաջացրին հասարակության շրջանում»,-ասաց ռեկտորը:

Ռ. Միրզախանյանը Մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ համալսարանի պատվավոր դոկտորի կոչումներ շնորհեց ակադեմիկոս, Աթենքի

համալսարանի պատվավոր ռեկտոր, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ Եվանգելոս Մոուստապուլոսին, Ինսբրուքի համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի ղեկավար, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ Հանս Կոխլերին, Կոպենհագենի Աարուսի համալսարանի պրոֆեսոր, Կրթության բաժանմունքի էթիկայի և իրավունքի կենտրոնի տնօրեն, փիլիսոփայական ընկերությունների միջազգային ֆեդերացիայի նախագահ, փիլիսոփայության 22-րդ համաշխարհային համաժողովի (2008) նախագահ, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս Պիտեր Կեմպին, Գլազոյի շոտլանդական համալսարանի դատակլինիկական հոգեբանության պրոֆեսոր, Հոգեբանության և իրավունքի եվրոպական ընկերացության նախագահ (Մեծ Բրիտանիա) Դեյվիդ Կուկին և հոգեբանության դոկտոր, Ֆրանսիայի Դիդրոյի անվան համալսարանի պրոֆեսոր Ֆրանսուա Նոյին: Նրանք բոլորը պարզևատրվեցին նաև «Դավիթ Անհաղթ» մեդալով:

Պարգևատրվածները շնորհակալություն հայտնեցին ջերմ հյուրընկալության և իրենց բարձր պարգևների արժանացնելու համար: Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց գիտաժողովի նախագահը՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի նախագահ, ՀՊՄՀ-ին առընթեր Մետափիլիսոփայության, փոխակերպման տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Գեորգ Բրուտյանը: «Ավարտվեց մեր գիտաժողովը, որը ծնվեց հաճույքով և հաղթահարեց շատ դժվարություններ», - ասաց ակադեմիկոսը: Բրուտյանը շնորհավորեց բոլորին գիտաժողովը լավագույնս անցկացնելու և ավարտելու կապակցությամբ, անդրադարձավ կազմակերպչական խնդիրներին՝ հատկապես ընդգծելով կազմակերպիչների և մասնակիցների՝ անձնագոհության գնով նպատակին հասնելու ջանքերը:

Նա խոսեց հոգեբանության ոլորտի նախկին և ներկա զարգացումների, ինչպես նաև փիլիսոփայական գիտության առաջընթացի մասին: Գ. Բրուտյանն ասաց, որ փիլիսոփայական գիտությունը մեծ ավանդույթներ ունի և այսօր էլ իր գործընկերների հետ շարունակում են զարգացնել այն. «Բայց եթե հասել ես որոշ խնդիրների լուծման, չպետք է կանգ առնել, որովհետև կանգ առնել՝ նշանակում է՝ ետ գնալ: Գիտնականը որպեսզի հանգստանա՝ պետք է անհանգստանա»: Գիտնականը հորդորեց գիտության մեջ երբեք չհանգստանալ, այլ ձգտել միշտ առաջինը լինել: «Ես ցանկանում եմ ամեն ինչ անել, որպեսզի Մանկավարժական համալսարանն ունենա միջազգային հեղինակություն», - ամփոփեց նա:

Հանդիսավոր արարողությունը եզրափակվեց գիտաժողովի մի շարք մասնակիցների և կազմակերպիչների պարգևատրումներով: Գեորգ Բրուտյանը Մանկավարժական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանին շնորհեց Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի պատվավոր դոկտորի կոչում և «Դավիթ Անհաղթ» մեդալ:

Մինսկի պետական համալսարանի փիլիսոփայական գիտությունների և գաղափարախոսական աշխատանքների ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վլադիմիր Բերկովին Գեորգ Բրուտյանը շնորհեց Հայոց փիլիսոփայական ակադեմիայի արտասահմանյան անդամի, իսկ ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ղեկան, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանին՝ Ակադեմիայի թղթակից անդամի կոչում:

Հայոց փիլիսոփայական ակադեմիայի թղթակից անդամի կոչման արժանացան նաև ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի ղեկան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արթուր Մկրտիչյանն ու ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, դոցենտ, քաղաքական գիտությունների դոկտոր Արթուր Աթանեսյանը:

«Դավիթ Անհաղթ» մեդալով պարգևատրվեցին նաև գիտաժողովի մասնակիցներ Անա Բազակը, Ասպեդ Արյանը, Յուհա Ռայկան, Ռիտա Կոյուճյան-Երամյանը, Մանուկ Մկրտչյանը, Ռուբեն Համբարձումյանը, Լիլիթ Բրուտյանը, Վիլ Պողոսյանը, Ռոբերտ Ջիջյանը, Հովհաննես

Հովհաննիսյանը, Նաիրա Հակոբյանը, Հասմիկ Հովհաննիսյանը, համալսարանի պրոռեկտորներ Արա Երեմյանը, Արմեն Թամազյանը, Միեր Մելիք-Բախշյանը, Տիգրան Այվազյանը:

Միջազգային աննախադեպ գիտաժողովի հանդիսավոր փակման արարողությունից հետո գիտնականներն այցելեցին Հայաստանի պատմամշակութային վայրեր, այնուհետև եղան Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Աշխարհի հնագույն և հարուստ ձեռագրատներից մեկում՝ Մատենադարանում, հյուրերը ծանոթացան 17.000 ձեռագիր մատյաններին: Այնուհետև հյուրերն այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր: Նրանք եղան Հայոց ցեղասպանության թանգարանում, որտեղ թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի ուղեկցությամբ ծանոթացան թանգարանային ցուցադրությանը: Հյուրերը Մանկավարժական համալսարանի ռեկտորի և ներկայացուցիչների գլխավորությամբ ծաղկեպսակ դրեցին Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ և մեկ րոպե լռությամբ հարգեցին անմեղ զոհերի հիշատակը: Հայոց ցեղասպանությանն առնչվող բոլոր նյութերին ծանոթանալուց հետո Գլազգոյի Կալեդոնյան համալսարանի պրոֆեսոր, Հոգեբանության և իրավունքի եվրոպական ասոցիացիայի նախագահ Դեյվիդ Կուկը ցավով նշեց, որ դեռևս քիչ երկրներ են ընդունում և դատապարտում Հայոց ցեղասպանությունը: «Տեսնելով այս ամենը՝ ես շատ տպավորված ու ցնցված եմ: Ցավում եմ, որ հայերի նկատմամբ նման երևույթ է իրականացվել:

Ցավալի է նաև, որ իմ հասակակիցները և նոր սերունդը շատ քիչ են տեղեկացված այս ամենի մասին: Այսուհետև ինքս էլ ավելի շատ կհետաքրքրվեմ հայերի պատմությամբ և ավելի մոտ կլինեմ նրանց»,- ասաց Կուկը: Վերջինս անդրադարձավ նաև միջազգային կոնֆերանսին՝ նշելով, որ այն շատ հետաքրքիր էր, լավագույն հնարավորություն՝ լսելու և ծանոթանալու տարբեր երկրների փիլիսոփայության ասպարեզի մասնագետներին:

Հոգեբանության դոկտոր, Ֆրանսիայի Դիդրոյի համալսարանի պրոֆեսոր Ֆրանսուա Նոն, ով երկրորդ անգամ էր լինում այս հուշահամալիրում, նույնպես ցնցված էր. «Կարծում եմ, որ մեզանից յուրաքանչյուրի պարտքն ու աշխատանքն է տեղեկացնել բոլորին այս երևույթի մասին, և ինքս ինձ պարտական եմ համարում գնալ իմ երկիր ու տեղեկացնել բոլորին, թե ինչ է կատարվել հայերի հետ»:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», 28 ապրիլի, 2012թ., № 8 (923)

“МЫ ДОЛЖНЫ СОХРАНИТЬ И РАЗВИВАТЬ НАКОПЛЕННОЕ ЗА ГОДЫ”, - заявил, отвечая на вопросы “Голоса Армении”, ректор Армянского государственного университета им. Х.

Абовяна Рубен МИРЗАХАНИЯН

- А как обстоят дела с научно-исследовательской работой?
- Мы планируем открыть в скором времени лабораторию по выращиванию искусственных кристаллов, в рамках четырехстороннего сотрудничества: АГПУ, ЕрФИ, Госкомитет РА по науке и два французских университета. С особой гордостью также отмечу, что в настоящее время в Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна читает лекции по философии такой корифей в области общественных наук, как академик Г. Брутян. Можете себе представить, что на его лекции стремятся попасть студенты из других вузов, да и просто люди, не имеющие никакого отношения к науке. И мы собираемся основать международный научно-исследовательский институт метафилософии, трансформационной логики и аргументации, которым будет руководить академик Брутян.

«ГОЛОС АРМЕНИИ», 3 мая 2011 год, стр 5.

ТРАНСФОРМАЦИОННОЕ ОБЩЕСТВО: ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРИКЛАДНЫЕ ПРОБЛЕМЫ

Современное общество, отличающееся сложной структурой и неустойчивым развитием, насыщено разнообразными конфликтами. В этих условиях способом преодоления неопределенности и рисков развития выступает разработка моделей различных изменений, выявления негативных тенденций и выбор наиболее перспективных и обоснованных направлений, составляющих трансформацию общества, наиболее адекватно выражающую специфику осуществления социальных изменений. И хотя трансформации охватывают различные сферы жизни общества, до сих пор нет однозначного понимания и глубокого анализа тех оснований механизмов, поражающих социальные трансформации, которые могут выделить общие закономерности этого процесса.

ИЗМЕНЕНИЯ В НАШЕЙ СТРАНЕ ОХВАТИЛИ ВСЕ СФЕРЫ ОБЩЕСТВЕННОЙ И ЭКОНОМИЧЕСКОЙ ЖИЗНИ, в том числе социальную структуру, материальную и духовную культуру, общество в целом. Переходные процессы в обществе или жизни индивида определяются особым состоянием, которое главным образом проявляется в том, что старое уже изжило себя, а новое еще только формируется. В этих переменах все больше проявляются взаимосвязи многообразных социальных, экономических, психологических процессов. Причем трансформационный процесс, являясь результатом взаимодействия множества социальных субъектов, индивидов, организаций, групп, составляет совокупность преобразований общества и зависит от такого множества факторов, что приводит к непредсказуемости результатов этих преобразований. Соответственно меняется система групповых интересов, способов поведения, социальных взаимодействий как отражения разных сторон трансформации общества. Оценивая последствия этих изменений, которые ставят серьезные задачи, связанные с необходимостью повышенного уровня адаптации, на первый план можно выдвинуть задачи сохранения политической, экономической, социальной стабильности, более того, продуктивного развития в подобных условиях личности и социума.

Проблемы, закономерно возникающие в ситуации развития общества в процессе трансформации, являются актуальными не только в отечественной, но и в мировой науке и практике. Сегодня потребность в переосмыслении переходных процессов в обществе и их дальнейшей судьбы в нашей стране ощущается с особой остротой. Что в немалой степени обусловлено возрастанием напряженности в разных сферах социального взаимодействия, с потребностью различных социальных структур и отдельных людей в практической помощи в вопросе разрешения актуальных проблем, связанных с трансформационными процессами в современном обществе.

Именно научному анализу закономерности событий, происходящих в обществе в эти непростые периоды, а также изменений, сопровождающих процесс социальной трансформации, была посвящена проходившая 16-17 апреля в Ереване международная конференция Теоретические и прикладные проблемы развития трансформационного общества. (Философские и психологические аспекты). Целью организаторов и участников международной конференции являлся научный анализ философских и психологических аспектов процессов, происходящих в трансформационном обществе, и их влияния на личность и социальные институты. Организаторы конференции - Армянский государственный педагогический университет им. Х.Абовяна, Международный институт метафилософии, трансформационной логики и аргументации при АГПУ им. Х.Абовяна, Международная академия философии, Армянская академия философии.

КОНФЕРЕНЦИЯ ВЫЗВАЛА БОЛЬШОЙ ИНТЕРЕС, В ЕЕ РАБОТЕ ПРИНЯЛИ УЧАСТИЕ видные ученые и специалисты из Армении, России, Греции, Австрии, Аргентины, Дании, Шотландии, Румынии, Финляндии, Франции, Грузии, преподаватели, аспиранты, студенты различных вузов. Мероприятие стало прекрасной возможностью не только обсудить актуальные проблемы мировой науки и практики, но и познакомиться со своими коллегами, обменяться опытом, установить деловые контакты.

На торжественном открытии международной конференции всех участников и гостей приветствовал премьер-министр Армении, председатель совета АГПУ им. Х.Абовяна Тигран

Саркисян, с вступительным словом выступили академик НАН РА, председатель Международной академии философии, директор Международного института метафилософии, трансформационной логики и аргументации при АГПУ им. Х.Абовяна Г. Брутян и председатель Европейской ассоциации психологов Д. Кук.

В психологической секции был представлен и обсужден широкий круг вопросов, обусловленных тем, что в современном периоде трансформации большинства социальных отношений новая психологическая ситуация наблюдается на всех уровнях общностей, от микросоциального до макросоциального. Трансформационные процессы в обществе, являясь комплексным стрессором, присутствуют во всех основных сторонах жизни человека, семьи, социальных групп и общества. Они оказывают комплексное воздействие, проявляясь одновременно на индивидуальном и социальном уровнях личности. Соответственно в связи с этим психологическому анализу подверглись особо острые проблемы, связанные с изменениями и даже патологическими нарушениями в развитии и поведении личности - такие как агрессия, различные психические патологии и так далее. Социально-психологический анализ различных аспектов трансформационного общества показал, что оно является особой средой, где происходит рост социальной тревожности, этноцентризма, девиантного поведения, и аутодеструктивных тенденций, особенно среди молодежи. Влияние трансформационных процессов было рассмотрено в сфере кадровой политики организаций, в спорте, в вопросе компетенций педагогов, что особенно актуально в период нововведений в образовании.

Механизм социальной трансформации - это сложное, многомерное явление, в котором постоянно взаимодействуют субъективные и объективные составляющие. Субъект здесь, являясь истоком и направляющей энергией преобразований, с одной стороны, осваивает раскрывающиеся для него возможности в новых структурах и институтах, отношениях общества, а с другой использует эти структуры для реализации собственных целей. Следовательно, формируется определенное субъектом будущее, выступающее основой определения настоящего и оценки прошлого.

НАРЯДУ С ДЕТАЛЬНЫМ ОБСУЖДЕНИЕМ НАЛИЧЕСТВУЮЩИХ ПРОБЛЕМ специалисты поднимали и анализировали особенности адаптации и интеграции человека в создавшихся довольно непростых условиях, а именно: каковы возможности самореализации и развития личности, каким образом необходимо способствовать этому процессу. Теоретические разработки нашли свое применение на практике, прикладные аспекты были представлены в различных сферах, например, в психиатрической службе. Был рассмотрен вопрос внедрения новых форм обучения, психоаналитического супервизирования специалистов в сфере здравоохранения, социальных служб, бизнесе, управлении. Известные специалисты-практики поделились опытом работы в различных странах, что открывает новые возможности применения, внедрения и адаптации новых методов и выработки практических рекомендаций по преодолению различных проблем, возникающих в трансформационном обществе. Именно практика решения конкретных проблем сегодня определяет то, каким общество будет завтра.

Практика проведения подобных мероприятий показывает необходимость их расширения и преобразования в своего рода традицию развития научной мысли и ее внедрения в реальную жизнедеятельность общественного организма с целью обеспечения здоровой жизнедеятельности общества и личности, формирования устойчивых представлений об устройстве нашего будущего общества.

С. ГЕВОРКЯН, декан факультета психологии образования и социологии, доктор психологических наук, профессор.

AN EXCEPTIONAL INTERNATIONAL CONFERENCE HELD AT THE
ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY

By Gourgen James Khazhakian
Chief correspondent

The ASPU after Khachatur Abovyan, in joint cooperation with the International Research Institute of Metaphilosophy, Transformational Logic and Theory of Argumentation, as well as the International Academy of Philosophy, and the Armenian

Academy of Philosophy, organized an international conference headed “Theoretical and Practical Problems of Development of Transforming Society /Philosophic and Psychological aspects/” on 16-17 April.

In his opening speech Academician of the RA NAS, President of the International Academy of Philosophy, Director of the International Research Institute of Metaphilosophy, Transformational Logic and Theory of Argumentation at the ASPU **Georg Brutyan**, welcoming the guests among who were the RA PM Dr. **Tigran Sargsyan**, the RA Minister of Science and Education **Armen Ashotyan**, other dignitaries, mentioned that one of the most important problems of the transforming society is, without throwing away the older values, to inherit them which will stimulate the development of our nation.

Georg Brutyan also added that nowadays, through the internal laws of science, attempts should be made to support the country’s economic development.

Afterward, the participants of the conference were greeted by the RA Prime Minister Tigran Sargsyan, who is also the Chairman of the Armenian State Pedagogical University Council:

“The subject of the Conference organized by the Pedagogical University is up-to-date not only among the scientists but also for the executive power operating in any country. We have worked out quite an ambitious program for the University’s development, to increase and improve its quality up to the level of the best universities all over the world.

I am especially pleased to see the world-class scientists next to our native scientists, and this will definitely favour the cooperation of the Pedagogical University’s specialists with the world-class scientists”.

Besides, the RA Prime Minister pointed out that the world economic recession showed the problems of transforming society in a sharper way and demanded that political figures found such solutions which would not allow the decrease and deterioration of the common people’s standards of living.

“On the other hand, science is unable to come up with answers to a number of questions yet. We are living in a world with a number one characteristic feature that is its fast-changing nature, and this significantly affected the increased mutual influences and made the world a more open place. And now, a qualitatively new postindustrial type of a society is forming about our ears, the basic process of which is the production of knowledge rather than goods. The society that is able to produce the contemporary type of knowledge is itself considered up to date,” Tigran Sargsyan said.

Next, at the plenary session, the Doctor of Philosophy, Academician, the Honorary Chancellor of the Athens University, the President of the International Academy of Philosophy **Yevangelos Moutsopoulos** made his report headed “*Education as a Lasting Value*” and expressed his strong belief that values generate ideas rising from the subconscious level.

Afterwards, the Professor of Philosophy, the Head of the Department of Philosophy at Innsbruck University, the Co-President of the International Academy of Philosophy **Hans Kohler** presented his report on the subject “Contemporary Multicultural Society and Intercultural Relationship Hermeneutics”.

Soon after, the Professor of the Aarhus University in Copenhagen, the Director of the Center of Ethics and Law of the Department of Education, the President of the International Federation of the Philosophic Societies (FISP), the Academician of the International Academy of Philosophy **Peter Camp** introduced his report with the topic “Cosmopolitanism in Our Times”.

At the end of the plenary session, the Professor of the Forensic Clinical Psychology of the Glasgow Caledonian University, the President of the European Association of Psychology and Law **David Cook** presented his report headed as "Psychopathy: Connections with the Transforming Society".

And last but not least, during the conference, the Academician of the RA NAS, the President of the International Academy of Philosophy, Georg Brutyan conferred the RA Prime Minister Dr. Tigran Sargsyan the title of Honorary Doctor of the International Academy of Science. In his turn, Mr. Sargsyan expressed his gratitude for the high appraisal and considered it quite a binding duty.

The Conference proceeded with its operations at the ASPU in five sections in parallel actively on both days.

Next day, in his opening speech, Rector of the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Doctor of Historical Sciences, Professor **Rouben Mirzakhanyan** greeted the participants and expressed his gratitude for the common work.

"This international conference on the Philosophical and Psychological subjects was unprecedented in its extents and context for the Pedagogical University. We are assured that such conferences will acquire continuous, more perfect and meaningful character from now on," Chansellor Mirzakhanyan said.

On the previous day of the Conference internationally renowned Professors delivered their public lectures which aroused considerable interest in the public. Based on that fact, the "Honorary Doctor of Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan" and "Davit Anhaght" medals were awarded to Yevangelos Moutsopoulos, to the Professor of the Paris Diderot University **François Neu**, to Hans Kochler, to David Cook and to Peter Camp.

In turn, the Professors expressed their acknowledgement for the warm welcome and high awards.

The driving force of this really unprecedented scientific-public event, Professor Georg Brutyan outlined the immense meaning of organizing such international conferences and advised the participants to always aspire to get to first place; as he then added, *"One should not stay calm in science. The conference overcame a number of difficulties, but also discovered the scientists of the younger generation."*

Further, Georg Brutyan conferred the Rector of the Pedagogical University, Doctor of Historical Sciences, Professor Rouben Mirzakhanyan the title of "Honorary Member of the International Academy of Philosophy" and awarded him with "Davit Anhaght" medal.

Likewise, Georg Brutyan also conferred the Professor of the Department of Philosophical Sciences and Ideological Work of the Minsk State University, PhD **Vladimir Berkov** the title of "Foreign Member of the Armenian Academy of Philosophy", and the Dean of the ASPU Faculty of Psychology and Sociology of Education, Doctor of Psychological Sciences, Professor **Srbouhi Gevorgyan** the title of "Associate Member of the Academy".

And a number of the Conference Armenian participants also received the title "Associate Member of the Armenian Academy of Philosophy" and the "Davit Anhaght" medal.

"Noyan Tapan", #16 (913) April 30, 2012 , p. 12.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

«ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ Է, իսկ մենք՝ չնչին հյուլեներ...»

«Ամեն ազգ առավել քաղաքակիրթ ու կրթված է այնքանով, որքանով ավելի լավ է փիլիսոփայում: Ուստի, պետության համար չկա առավել մեծ բարիք, քան իսկական փիլիսոփաներ ունենալը»:

Դեկարտ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում նոյեմբերի 17-ին նշվեց Փիլիսոփայության համաշխարհային օրը: Այս տարի իմաստասիրության տոնը հետաքրքիր զուգադիպությամբ համընկավ Ուսանողների միջազգային օրվան: Մանկավարժական համալսարանում նման ձևաչափի իր նախադեպը չունեցող սիմպոզիումը ի մի էր բերել փիլիսոփայության հիմնախնդիրներով շահագրգիռ մարդկանց: Հանդիսավոր նիստում ելույթ ունեցողները փորձեցին մի քիչ «փիլիսոփայել»՝ տարբեր ձևակերպումներով և տարբեր տեսանկյուններից դիտարկելով աշխարհի հնագույն գիտությունը:

2002 թվականից, ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ, յուրաքանչյուր տարվա նոյեմբեր ամսվա երրորդ հինգշաբթին նշվում է որպես փիլիսոփայության համաշխարհային օր:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, ՀՊՄՀ մետափիլիսոփայության, փոխակերպման տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտը, համագործակցելով Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի, Հայոց փիլիսոփայական ակադեմիայի և Հայաստանում Ֆրանսիական համալսարան հիմնադրամի հետ, կազմակերպել էր «Փիլիսոփայության համաշխարհային օրը Հայաստանում» թեմայով երկօրյա սիմպոզիում:

Տրամաբանության, տեսական և գործնական փիլիսոփայության, մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հասմիկ Հովհաննիսյանը շնորհավորելով բոլորին Փիլիսոփայության համաշխարհային օրվա կապակցությամբ՝ ասաց. *«Փիլիսոփայության համաշխարհային օրը ողջ մարդկության տոնն է, քանի որ իմաստասիրությունն ընդամենը մասնագիտություն չէ: Մարդը փիլիսոփայում էր շատ ավելի վաղ, քան ինքը կարող էր գիտակցել, որ փիլիսոփայում է և շատ ավելի վաղ, քան ստեղծվել է փիլիսոփայությունը որպես աշխարհի ու մարդու մասին մարդկային խորհրդածություններն ուսումնասիրող երևույթ»:*

20-րդ դարի հայ աշխարհահռչակ փիլիսոփա, տրամաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Փիլիսոփայության միջազգային եւ հայոց փիլիսոփայական ակադեմիաների պրեզիդենտ, Մշակույթի համաշխարհային ակադեմիայի ցմահ անդամ /Մեծ Բրիտանիա/ և տասնյակ այլ երկրների ակադեմիաների անդամ, ավելի քան յոթ տասնյակ մենագրությունների, 200 հոդվածների, լեզվաբանական լրացչության, փոխակերպման տրամաբանության, բազմատրամաբանության հայեցակարգերի հեղինակ, Փաստարկման երևանյան դպրոցի հիմնադիր և ղեկավար Գեորգ Բրուսյանն իր ելույթում անդրադարձավ փիլիսոփայությանը, իմաստասիրությանն ու կյանքին: Հիշելով փիլիսոփայության մեծերի թևավոր մտքեր դարձած փիլիսոփայական խորհրդածությունները՝ նա անթաքույց հպարտությամբ ներկայացրեց հայ փիլիսոփայական դպրոցի ստեղծումն ու զարգացման ուղին, հաջողություններն ու ձեռքբերումները:

«Փիլիսոփայությունն անսահման, ընդգրկուն մի մեծություն է, և մենք չնչին հյուլեներ ենք, որ բավարարվում ենք այս կամ այն դրույթով: Ոչ ոք չի ծնվում որպես փիլիսոփա, բայց բոլորն էլ փիլիսոփայում են: Բոլորը վիճում են իմաստության մասին, կարծիքներ հայտնում, կան մարդիկ, ովքեր չեն ընդունում փիլիսոփայությունը, բայց այստեղ ի հայտ է գալիս շատ հետաքրքիր մի բան, փիլիսոփայության հերքումը հենց ինքն արդեն փիլիսոփայությունն է»:

ուզենք թե չուզենք, պետք է փիլիսոփայենք, մենք չենք կարող դրանից խուսափել» - ավելացրեց աշխարհահռչակ փիլիսոփան:

Անդրադառնալով փիլիսոփայության հիմնական հարցերից մեկին՝ «ինչ է փիլիսոփայությունը», Գեորգ Բրուսյանը մեջբերեց նշանավոր փիլիսոփայի խոսքերը. «Փիլիսոփայությունը Մֆինքս է՝ Մոնա Լիզայի ժպիտով. նրա ժպիտը դյուրում է բոլորին, իսկ գաղտնիքները մնում են չլուծված» ապա դիմեց Դեկարտին. «Ամեն ազգ առավել քաղաքակիրթ ու կրթված է այնքանով, որքանով ավելի լավ է փիլիսոփայում: Ուստի, պետության համար չկա առավել մեծ բարիք, քան իսկական փիլիսոփաներ ունենալը»: Բրուսյանը կոչ արեց ներկաներին՝ սիրեք փիլիսոփայությունը, և հավատացնում եմ, որ այն ձեզ կրկնակի կսիրի:

Ըստ ՀՀ կրթության և գիտության փոխնախարար, մանկավարժական համալսարանի կառավարման խորհրդի անդամ Մանուկ Մկրտչյանի՝ լավ կլինի եթե ուսանողները նվիրվեն հայ փիլիսոփայական մտքին՝ մասնավորապես արստրակտ փիլիսոփայությանը, և Հայաստանը դարձնեն փիլիսոփայության կենտրոն: Նա պատահական չհամարեց, որ փիլիսոփայության համաշխարհային օրը նշվում է հենց Մանկավարժական համալսարանում: «Մանկավարժական համալսարանը պետք է լինի առաջատար բուհը Հայաստանում և առաջնակարգ մանկավարժական բուհ ողջ աշխարհում: Դա պետք է դառնա բոլորիս գործունեության հիմնական սկզբունքը», - ընդգծեց նա:

ՀՊՄՀ ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը ոչ միայն գնահատում, նպաստում ու աջակցում է հայ իրականության մեջ փիլիսոփայական մտքի զարգացմանը, համալսարանում փիլիսոփայությունը նոր հիմքերի վրա դնելու գործին, այլև վերջինիս ջանքերով 2011 թվականին համալսարանում հիմնադրվեց տրամաբանության, տեսական և գործնական փիլիսոփայության, մշակութաբանության ամբիոնը: «Մոտ ապագայում լույս է տեսնելու փիլիսոփայության առաջին միջազգային ամսագիրը, իսկ 2012 թվականին նախատեսվում է անցկացնել միջազգային կոնգրես: Փիլիսոփայական գիտության զարգացումը, նրա դասավանդման նոր որակը, նոր մակարդակը կնպաստեն մեր երկրում որակյալ մանկավարժական կադրերի պատրաստմանը», - ասաց ռեկտորը:

Հայաստանում Ֆրանսիական համալսարանի հիմնադրամի ռեկտոր, իրվաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ժոել լը Մորգելեկն ընդգծեց, թե շատ կարևոր է այն, որ սիմպոզիումն անց է կացվում համալսարանում, որովհետև հենց այս բուհն է Հայաստանում պատրաստում ամենատարբեր մասնագիտության ուսուցիչներ: «Ուսուցման և դատողությունների այդ բարձր մթնոլորտում սովորելով, ձեր ուսանողներն անպայման կգտնեն իրենց ուրույն տեղը հասարակության մեջ: Դուք պատրաստում եք ուսանողներ, ովքեր պետք է լինեն վաղվա մեր քաղաքացիները. սա ուսուցչի մեծագույն առաքելությունն է», - ասաց Մորգելեկը:

Այնուհետև ներկաներին սփյուռքահայ փիլիսոփաների անունից շնորհավորեց Չիկագոյի /Նյու-Յորք/, Բեյրութի ամերիկյան համալսարանի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Սեդա Դադոյանը: Նա խոսեց ՄԱԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշման մարդասիրական փիլիսոփայական սկզբունքների մասին. «Այսօր ազատ խոսքի և մտածումի օր է,- ասաց բանախոսը:- Մենք պետք է հայացնենք փիլիսոփայական գաղափարները կրթական, մշակութային, ընկերային և այլ մակարդակների վրա: Իդեալները շատ հեռու են իրականությունից, սա պարադոքս է, իսկ պարադոքսը կլուծվի, եթե մենք մոտենանք մեր իդեալներին: Պետք է պատրաստ լինենք հրաժարնելու հին կաղապարներից: Մենք հավատում ենք խաղաղ մարդկության իդեալներին, տրամաբանությամբ և խղճի օգնությամբ կհասնենք դրանք»:

Միմպոզիումին ներկա էին Մանկավարժական, Հայ-Ֆրանսիական, Հայաստանում Ամերիկյան համալսարանների ու այլ բուհերի դասախոսներ և ուսանողներ: Փիլիսոփայության համաշխարհային օրվան նվիրված սիմպոզիումի բացման պաշտոնական արարողությունն

ամփոփվեց տոնական համերգով, որին մասնակցեց նաև «Մանկավարժական համալսարանի Գարի Քյոսայանի ջազ քառյակ»-ը:

Այնուհետև նոյեմբերի 18-ին, սիմպոզիումի շրջանակներում, Մանկավարժական համալսարանի հինգ սրահներում տեղի ունեցավ «Ինչպիսին եմ տեսնում 21-րդ դարի փիլիսոփայությունը», «Փիլիսոփայություն, գաղափարախոսություն, քաղաքականություն և կառավարում», «Շախմատը և փիլիսոփայությունը», «Փոխակերպական տրամաբանության մեթոդաբանական հնարավորությունները» և «Փիլիսոփայություն բոլորի համար» թեմաներով զեկուցումներ, որոնց շուրջ ծավալվեցին հետաքրքիր բանավեճեր և քննարկումներ:

Ուշագրավ է այն փաստը, որ սիմպոզիումի աշխատանքներին մասնակցում էին Երևանի տարբեր բուհերի փիլիսոփաներ:

Միմպոզիումը եզրափակվեց Ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Երևանի պետական, Միխիթար Հերացու անվան բժշկական, Հայաստանում ֆրանսիական, Վալերի Բրյուսովի անվան լեզվաբանական, Հայ-սլավոնական, Ճարտարագիտական համալսարանների ինտելեկտուալ թիմերի մասնակցությամբ կայացած փիլիսոփայական թեմատիկայով ուսանողական խաղ-վիկտորինայով /Brain-Ring/: Սա առաջին նման թեմատիկայով մասշտաբային խաղ-վիկտորինան էր: Հաղթող թիմը ընկերական հանդիպում կունենա ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի թիմի հետ:

Այսպիսով մի նոր հիմք դրվեց հայաստանյան բուհերի փիլիսոփայական կենտրոնների համագործակցության համար, ինչը կնպաստի միասնական հայկական փիլիսոփայական դաշտի ստեղծմանը:

«ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», 30 նոյեմբերի, 2012թ., № 16 (913)

2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 17-Ի ՀՊՄՀ-ՈՒՄ ՀՖՀՀ ՌԵԿՏՈՐ ՏԻԿԻՆ
ԺՈՒԼ ԼԸ ՄՈՐԶԵԼԵԿԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Պարոն Ռեկտոր, Հարգելի կոլեգա

Պարոն նախարար

Մետափիլիսոփայության, տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային ինստիտուտի մեծարգո նախագահ, Ակադեմիկոս պարոն Գևորգ Բրուսյան,

Տիկնայք և պարոնայք դասախոսներ,

Տիկնայք և պարոնայք,

Սիրելի ուսանողներ,

2002 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ն որոշեց նոյեմբերի 17-ը նշել որպես Փիլիսոփայության միջազգային օր, սա նաև երիտասարդության միջազգային օրն է:

Այսօր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում մենք միասին ենք, մեզ են համախմբել փիլիսոփայությունը, երիտասարդությունն ու մանկավարժությունը:

Փիլիսոփայությունը սովորեցնում է ուսումնասիրել նախ և առաջ ինքդ քեզ «ճանաչիր ինքդ քեզ» և դու կճանաչես Աստվածներին, կուղղորդվես դեպի գիտելիք: Եթե ես լինեի Սոկրատեսը, ես կասեի. «Մի գուցե դու կգնաս դեպի երջանկությունը»:

Մոռանում ենք, որ Դելֆում՝ Ապոլլոնի տաճարի ճակատին նույնպես գրված է. «Ոչինչ շատ չի»: Մարդու դաստիարակությունը, չափի զգացումը և ավելորդ մերժումը հանգեցնում են իմաստության և որոշակի ներդաշնակության:

Փիլիսոփայության մեջ բացի ինքնաքննումից, հարց են տալիս նաև դիմացինի մասին և այն աշխարհի, որտեղ ապրում են:

Եվ ինքներս մեր համար ստեղծում ենք կյանքի կանոն: Քանի որ ավելի խորը մտածելու դեպքում, փիլիսոփայությունը ապրելաոճ է, ապրելակերպ, էթիկայի կանոնների կիրառում, անհատական բարոյականություն:

Հիմա մենք գտնվում ենք Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, մի համալսարան, որ կրթում է մանկավարժներ ամբողջ Հայաստանի համար, մի համալսարան, որտեղ ուսանողները բացահայտում են թե ինչ է դասավանդումն ու մանկավարժությունը:

Հենց այս մտորումների և մյուսներին նայելուց առաջ, նախ և առաջ ինքնակրթության միջավայրում է, որ մենք միասին նշում ենք Փիլիսոփայության Օրը, որ նշվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից:

Կուզենամ ավելացնել, որ ինքդ քեզ և ուրիշներին բացահայտելը ուղղորդում է, որպեսզի գտնես քո տեղը հասարակության մեջ, որը փիլիսոփայության համար ուսումնասիրության մեկ այլ առարկա է:

Ես վստահ եմ, որ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողներն իրենց տեղը կգտնեն հայ հասարակության մեջ: Նրանք պատրաստ են դրան: Այս միջոցառումը կլինի նաև առիթ Հայաստանում ֆրանսիական համալսարանի (ՀՖՀՀ) ուսանողների համար, որպեսզի կազմակերպեն մի նման միջոցառում, քանի որ, եթե այսօր՝ նոյեմբերի 17-ին այս միջոցառումը տեղի է ունենում այստեղ, ապա նոյեմբերի 25-ին ուսանողների միջև կկայանա խաղի եզրափակիչ փուլը՝ փիլիսոփայական թեմատիկայով մրցույթ, որը կանցկացվի ՀՖՀՀ-ում:

Իրավագիտության, Կառավարման և Մարքեթինգի միջոցով մեր ուսանողները նույնպես նեգրավվում են հայ հասարակություն: Ուսանողների մոտ 85% -ը ավարտելուց անմիջապես հետո աշխատում են իրենց մասնագիտությանը՝ գտնելով իրենց տեղը հայ հասարակության մեջ:

Այսպիսով դուք՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, և մենք՝ Հայաստանում ֆրանսիական համալսարանում (ՀՖՀՀ) կիրառում ենք մեթոդներ, որոնց անդյունքն են մտածելակերպն ու հարցաքննումը: Եվ վաղվա Հայաստանի համար մենք կրթում ենք տղաների և աղջիկների: Դա մեր՝ կրթողներիս և ուսուցանողներիս գործն է:

Եվ այսօր՝ Երիտասարդների միջազգային օրը, մենք մտածում ենք մեր բոլոր ուսանողներին մասին: Դեպի իրենց ենք մենք շրջվում: Մենք պետք է նրանց օգնենք ձևավորվել, կարգավորել իրենց կյանքը, ունենան հաջողություններ ու դրանք ծառայեցնեն:

Վստահ եմ, որ այս աշխատանքն կընթանան լավագույն հովանու ներքո:

Այսօր՝ Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում, մենք բացում այս գիտաժողովը միասին:

Նոյեմբերի 25-ին Հայաստանում ֆրանսիական համալսարանում (ՀՖՀՀ) ուսանողների համար կազմակերպված ինտելեկտուալ խաղով տեղի կունենա այս աշխատանքների փակումը, և մենք նրանց մրցանակներ կշնորհենք:

Շնորհակալություն:

Ժոել Լը Մորգելեկ
Հայաստանում ֆրանսիական համալսարանի ռեկտոր (ՀՖՀՀ)

DISCOURS DU RECTEUR DE L'UFAR, PRONONCE
LE 17 NOVEMBRE 2011, A L'INP ABOVIAN.

Monsieur le Recteur, cher collègue,
Monsieur le Ministre,
Monsieur le Président de l'Institut international de la Logique transformationale et Métaphilosophie,
Monsieur l'Académicien Grigor Broutian,
Mesdames et Messieurs les Professeurs,
Mesdames, Messieurs,
Chers étudiants,

En 2002, l'UNESCO a choisi de faire du 17 novembre la Journée internationale de la Philosophie. Et c'est aussi la Journée internationale de la Jeunesse.

Nous nous trouvons ce matin à l'Institut national pédagogique Abovian : le rapprochement philosophie-jeunesse-pédagogie s'impose.

Le philosophe apprend à s'interroger, à questionner – d'abord soi-même : « gnôthi seauton » : « connais-toi toi-même » - et tu connaîtras les dieux – tu iras vers la connaissance de toi-même.

Si j'étais Socrate, je dirais : « Tu iras peut-être vers le bonheur ».

On oublie qu'au fronton du temple d'Apollon à Delphes, il y avait aussi écrit : « Rien de trop ». La mesure, la discipline personnelle, le refus de l'excès conduisent à la sagesse, à une certaine harmonie.

En philosophie, outre s'interroger sur soi-même, on s'interroge sur l'autre, et sur le monde dans lequel on vit. Et l'on se donne une règle de vie. Car en plus de la réflexion, la philosophie est un mode de vie, une manière de vivre, la mise en pratique d'une éthique, d'une morale personnelle.

Nous sommes à l'Institut national pédagogique Abovian, une université qui forme les professeurs de toute l'Arménie, où les étudiants découvrent ce que doit être l'enseignement, la pédagogie.

C'est donc dans cet environnement de réflexion, de formation – de soi-même d'abord – avant d'aller vers les autres, que nous célébrons, ensemble, cette Journée de la Philosophie voulue par l'UNESCO.

J'ajouterai que la découverte de soi-même et de l'autre conduit à trouver sa place dans la société, autre objet d'étude pour la philosophie.

Les étudiants de l'Institut national pédagogique Abovian trouveront, certes, leur place dans la société arménienne. Ils sont préparés à cela. Et ce sera aussi le cas pour les étudiants de l'Université française en Arménie (UFAR), co-partenaire de l'organisation de ces manifestations. Car si cette journée se déroule aujourd'hui 17 novembre, ici, le 25 novembre prochain, la fin du jeu intellectuel, prévu comme un concours entre les étudiants, autour du thème de la philosophie, se déroulera à l'UFAR.

A travers le Droit, la Gestion et le Marketing, nos étudiants s'insèrent eux aussi dans la société arménienne. Ils trouvent leur place, immédiatement, pour environ 85 % d'entre eux, dès l'issue de leurs études.

Ainsi, vous à l'Institut national pédagogique Abovian, nous à l'UFAR, appliquons des méthodes qui résultent de réflexion, de questionnement. Et nous formons des hommes et des femmes pour l'Arménie de demain. C'est notre tâche de formateurs, notre mission d'éducateurs.

En cette Journée internationale de la Jeunesse, c'est à tous nos étudiants que nous pensons. C'est vers eux que nous nous tournons. Nous devons les aider à se former, à régler leur vie, à la réussir et à servir.

Je suis sûre que ces travaux se dérouleront sous les meilleurs auspices.

Aujourd'hui nous ouvrons ce symposium, ensemble, à l'Institut national pédagogique Abovian.

Le 25 novembre, c'est à l'UFAR que nous clôturerons ces travaux avec un jeu intellectuel pour les étudiants, et nous leur décernerons ensemble des prix.

Merci.

Le Recteur Joëlle le MORZELLEC
Université française en Arménie (UFAR)

ԱՍՏՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Հյուսիսային համալսարանի պրոռեկտոր,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ՀՈՒՄԱՆԻԶՄԸ

ԳԼՈՒԲԱԼԱՑՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

«Pereat mundus, fiat philosophia»¹

Հարգելի բարեկամներ, գործընկերներ, թույլ տվեք նախ շնորհակալություն հայտնել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորատին, ում հյուրընկալ հարկի տակ անցկացվում է փիլիսոփայական այս կարևոր ու ինքնատիպ միջոցառումը՝ Հայաստանում փիլիսոփայության համաշխարհային օրվանը նվիրված ներկա սիմպոզիումը:

Չեմ կարող դրվատանքի ջերմ խոսքեր չուղղել հատկապես ակադեմիկոս Գեորգ Բրուստյանին՝ հայ փիլիսոփաների վերջին մի քանի սերունդների առաջատարին, միջազգային փիլիսոփայական շարժման ճանաչված գործչին, ում նախաձեռնությամբ ու ջանքերով, նաև՝ հեղինակության ուժով կազմակերպվել է այս հրաշալի սիմպոզիումը, անխոնջ ու բեղուն գիտնականին, ով տասնամյակներ շարունակ հավատարմորեն ծառայում է փիլիսոփայական գիտությանը, ստեղծել է միջազգային ճանաչման արժանացած փիլիսոփայական դպրոց և իր գիտաստեղծագործական կրեդոն է դարձրել ռացիոնալ մտածողության սկզբունքների և մտածող բանականության իրավունքների պաշտպանությունը՝ ընդդեմ մեր օրերում ցավալիորեն լայն տարածում գտած իռացիոնալիզմի, ֆիդեիզմի և աբսուրդի փիլիսոփայության ամենատարբեր դրսևորումների:

Ուզում եմ շնորհավորել նաև ներկա միջոցառման մասնակիցներին՝ փիլիսոփայության համաշխարհային օրվա առթիվ և մաղթել ամենայն բարիք, իսկ սիմպոզիումին՝ հաջող ու արգասաբեր աշխատանք:

Առանձնահատուկ ու բացառիկ է փիլիսոփայության տեղը հոգևոր մշակույթի ընդհանուր գանձարանում: Մակայն փիլիսոփայության դերն ավելի է մեծանում հատկապես պատմական կտրուկ շրջադարձերի, սոցիալ-տնտեսական ու քաղաքական սուր անցումների, գիտության ասպարեզում արմատական հեղաշրջումների դարաշրջաններում, առանձնապես մեր օրերում: Այստեղից էլ հարցը՝ **ինչպիսի՞նք է պետք է լինի 21-րդ դարի փիլիսոփայությունը:**

Փիլիսոփայության, փիլիսոփայական գիտելիքի հատուկ դերը գիտակցվել է մարդկային քաղաքակրթության պատմության ողջ ընթացքում: Գիտական փիլիսոփայությունը դարեր ու հազարամյակներ շարունակ եղել է ռացիոնալ մտածողության դրոշակակիրը, որպես անմար կանթեղ լուսավորել մարդկային իմացության ու սոցիալական առաջադիմության ուղին:

Եվ չնայած դրան՝ փիլիսոփայությունը որպես աշխարհայացք և մեթոդաբանություն մեր ժամանակներում ձեռք է բերում աննախադեպ կարևորություն: Դա մեծապես պայմանավորված է մեր դարաշրջանի բուն առանձնահատկություններով, այն մարտահրավերների բնույթով ու մասշտաբներով, որոնց բախվում է մարդկությունը մեր օրերում:

Մյուս կողմից՝ ժամանակակից գիտությունը, հատկապես բնագիտությունը հայտնվել է նոր, աննախադեպ թռիչքի նախաշեմին: Մարդկությունն ապրում է բնության մասին իշխող ավանդական պատկերացումների արմատական փոփոխման ժամանակաշրջան, և մեծ հայտնագործությունները առջևում են: Բնագիտության, մասնավորապես կենսաբանության, տարրական մասնիկների ֆիզիկայի և տիեզերագիտության վերջին տարիներին ձեռք բերած սպավորիչ հաջողություններն առաջադրում են այնպիսի հույժ կարևոր ու հիմնարար հարցեր, որոնք հղի են գիտական նոր պարադիգմայով, աշխարհի մասին մեր պատկերացումների հեղաբեկմամբ:

Այս ամենն առաջադրում է խոր մեկնաբանման, տեսական-աշխարհայացքային ընդհանրացման, փիլիսոփայական-մեթոդաբանական ռացիոնալ իմաստավորման հրամայական պահանջ:

Այս առնչությամբ մեր օրերում, ասես, նոր իմաստ ու հնչեղություն է ձեռք բերում դարերի միջով անցած և սույն հողվածում որպես բնաբան բերված լատինական իմաստուն թեզը, որն ընդգծում է փիլիսոփայության բացառիկ ու անանց դերը՝ «*Pereat mundus, fiat philosophia*»:

Այստեղից էլ, մասնավորապես, փիլիսոփայության և բնագիտության միջև նոր դաշինքի հույժ կարևորությունը, այն բանի գիտակցումը, որ 21-րդ դարի փիլիսոփայության հիմնարար խնդիրներից մեկը պետք է դառնա նրա և բնագիտության միջև դաշինքի նորովի դրսևորումը:

Փիլիսոփայության և բնագիտության միջև այլանաբ թեև զալիս է դարերի ու հազարամյակների խորքից, սակայն յուրաքանչյուր պատմական դարաշրջանում այդ կապն ստանում է յուրահատուկ արտահայտություն:

Պատմականորեն հատկապես սերտ է եղել փիլիսոփայության և մաթեմատիկայի դաշինքը: Սկիզբ առնելով անտիկ աշխարհում, այն անցել է հետագա դարաշրջանների միջով, հասել մինչև մեր օրերը և պիտի շարունակվի ու արգասավորվի նաև 21-րդ դարում:

Այդ դաշինքի ակունքներում կանգնած էր **Պյութագորաս Սամոսեցին** (մ.թ.ա. VI դարի 2-րդ կես – V դարի սկիզբ)՝ անտիկ աշխարհի այդ մեծ մտածողը, ով աշխարհի սկզբնապատճառների, գոյի նախահիմքերի հարցերը քննության էր առնում ու լուծում մաթեմատիկայի, մասնավորապես իր ստեղծած թվերի տեսության հետ սերտորեն շաղկապված՝ թվերին վերագրելով զարմանահրաշ հատկություններ և տիեզերքի ներդաշնակության հիմքում դնելով թվերի ներդաշնակությունը:

Մաթեմատիկային բացառիկ դեր էր վերապահում անտիկ աշխարհի մյուս մեծ մտածողը՝ **Պլատոնը** (մ.թ.ա. 427-347)՝ այն համարելով փիլիսոփայական հետազոտության, աշխարհի ճանաչման անփոխարինելի մեթոդ, միտք-դեմիուրգի արարչագործության հավաստի արտապատկերման միակ հուսալի միջոցը: Մաթեմատիկայի բացառիկ արժեքն է ընդգծված հատկապես «**Ոչ երկրաչափը թող ներս չմտնի**» նշանաբանի մեջ, որը նա դրոշմել էր Աթենքում 387թ. (մ.թ.ա.) իր հիմնադրած առաջին փիլիսոփայական դպրոցի՝ Ակադեմիայի մուտքի պատին, նշանաբան, որին ակադեմիան հավատարիմ մնաց իր հետագա շուրջ 900-ամյա գոյության ընթացքում:

Պատահական չէ նաև, որ **Արիստոտելը** (մ.թ.ա. 384-322) փիլիսոփայական գիտությունները դասակարգելիս մաթեմատիկան զետեղեց գիտությունների այն առաջին եռյակի մեջ, որտեղ հռչակավոր «Առաջին փիլիսոփայությունն» էր՝ Արիստոտելի փիլիսոփայական ուսմունքի միջուկը (հետագայում մետաֆիզիկա կոչվածը՝ կեցության ընդհանուր սկզբունքների մասին տեսությունը՝ ներառած գոյի կատեգորիալ ապարատը, սուբստանցիայի կաուզալ վերլուծությունը և հնարավորության ու իրականության մասին ուսմունքը) և «Երկրորդ փիլիսոփայությունը»՝ բնափիլիսոփայությունը:

Ավելի ուշ՝ փիլիսոփայության և մաթեմատիկայի այլանսի ջատագովներից էր **Ռենե Դեկարտը** (1596-1650)՝ նոր ժամանակների ռացիոնալիզմի հիմնադիրը, ով իր նշանավոր մեթոդի հիմք և կատարյալ տիպար էր համարում մաթեմատիկան՝ «բնություն» հասկացության մեջ ներառելով միայն այն սահմանումները, որոնք կազմում են մաթեմատիկայի բուն առարկան՝ տարածականությունը, մեծությունը, ֆիզուրան և շարժումը:

Այս համատեքստում միանգամայն հատկանշական է նաև, որ **Իսահակ Նյուտոնը** (1643-1727) իր դարակազմիկ աշխատությունն անվանեց ոչ այլ կերպ, քան «Բնափիլիսոփայության մաթեմատիկական հիմունքները» (1687թ.), որում տեղ գտան նրա աշխարհահռչակ գիտական վաստակի զարդը կազմող դասական մեխանիկայի հասկացություններն ու օրենքները, համաաշխարհային ձգողականության (գրավիտացիայի) օրենքի մաթեմատիկական ձևակերպումը, Իռիան Կեպլերի օրենքների տեսական հիմնավորումները և մի շարք ուրիշ հայտնագործություններ:

Մեր ժամանակներում փիլիսոփայության և բնագիտության միջև կապը ուրույն արտահայտություն գտավ արդի ֆիզիկայի հիմնադիրներից մեկի, հարաբերականության հատուկ ու ընդհանուր տեսության ստեղծողի՝ **Ալբերտ Էյնշտեյնի** (1879-1955) աշխատություններում: Ֆիզիկայի տարբեր բնագավառներում նրա տեսական հետազոտություններն ու դարակազմիկ գաղափարները՝ օժտված աշխարհայացքային, փիլիսոփայական-մեթոդաբանական հսկայական նշանակությամբ, սկիզբ դրեցին տիեզերքի մասին նոր հայացքի ձևավորմանը, աշխարհի գիտական, մատերիալիստական պատկերի հարստացմանն ու խորացմանը՝ հիմնված մատերիալի ու նրա շարժման հետ տարածության ու ժամանակի օրգանական կապի բացահայտման վրա: Աշխարհի ռացիոնալ կառուցվածքի և համընդհանուր ներդաշնակության մասին Էյնշտեյնի ուսմունքում, որը կազմում է նրա աշխարհայացքին հատուկ ռացիոնալիստական կոնցեպցիայի հիմքը, բնությունը, ամբողջ տիեզերքը հանդես են գալիս որպես պատճառական կապերի վրա հիմնված և խստորեն դետերմինացված համակարգ, ուր բացառվում է ամեն մի անորոշություն ու պատահականություն:

Արդեն մեր օրերում փիլիսոփայության, մասնավորապես տրամաբանության ու մաթեմատիկայի դաշինքը, նրանց փոխադարձ ներթափանցումը կյանքի կոչեցին մի նոր գիտություն՝ մաթեմատիկական տրամաբանությունը. վերջինս դարձավ մեր աչքերի առջև ծավալվող այն գիտատեխնիկական հրաշքի հիմքը, որը նշանավորվեց մարդկային քաղաքակրթության սկզբունքորեն նոր, անհամեմատ բարձր փուլի՝ տեղեկատվական քաղաքակրթության սկիզբը:

Ներկա դարաշրջանում բացառիկ կարևորություն է ձեռք բերում փիլիսոփայության և աստղագիտության, մասնավորապես կոսմոլոգիայի կապի հարցը:

Մարդկային միտքը ավելի ու ավելի է ներթափանցում տիեզերական հեռուները, փորձում լուծել տիեզերաստեղծման առեղծվածը, հասկանալ աշխարհը, բացահայտել նրա զարգացման ընդհանուր օրինաչափություններն ու դրանց կոնկրետ դրսևորումների առանձնահատկությունները:

Մենք ականատեսն ենք կոսմոլոգիայի աննախադեպ հաղթարշավի: Աստղաֆիզիկայի այդ ճյուղի նվաճումները ապշեցուցիչ են և հեղաշրջում են առաջ բերում տիեզերքի մասին մեր պատկերացումների մեջ: Ըստ Սվինբյորգյան տեխնոլոգիական համալսարանի (Ավստրալիա, Մելբուռն) և Պորտսմուտի համալսարանի (Մեծ Բրիտանիա) աստրոֆիզիկոսների բոլորովին վերջերս կատարած սենսացիոն հայտարարություն՝ մեր աշխարհը 69 տոկոսով բաղկացած է ինչ-որ բանից, որի մասին մենք գրեթե ոչինչ չգիտենք: Այդ սուբստանցիայի 22 տոկոսը կազմում է այսպես կոչված մութ մատերիան և 74 տոկոսը՝ մութ էներգիան:

Ինչպես վկայում է դաշտի քվանտային տեսության, տարրական մասնիկների ֆիզիկայի և կոսմոլոգիայի բնագավառի համաշխարհային առաջատար մասնագետներից մեկը՝ Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Վալերի Ռուբակովը, որքան էլ զարմանալի լինի՝ մենք ստիպված ենք ընդունել այն փաստը, որ տիեզերքի միայն 4 տոկոսն է կազմում այն նյութը, որից բաղկացած է Երկիրը, աստղերը, մոլորակները:

Թե ի՞նչ է այդ մութ մատերիան և մութ էներգիան՝ 21-րդ դարի ֆիզիկայի այդ ամենագլխավոր հարցի պատասխանը գիտնականները թողնում են ապագային՝ առայժմ զբաղված լինելով միայն հիպոթեզների (վարկածների) մշակմամբ:

Եվ այնուամենայնիվ, ժամանակակից ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թե՛ մութ մատերիան և թե՛ մութ էներգիան ծնունդ են առել շուրջ 14 միլիարդ տարի առաջ տիեզերական մեծ պայթյունից անմիջապես հետո: Սակայն չնայած իրենց միաժամանակյա ծագմանը և երկվորյակությանը՝ դրանք բացարձակապես իրար նման չեն դարձել: Ըստ ակադեմիկոս Ռուբակովի՝ դրանք երկու տարբեր սուբստանցիաներ են, տարբեր հասկացություններով: Մութ էներգիան հավասարաչափ տարածված է ամբողջ տիեզերքով մեկ և

պատասխանատու է տիեզերքի ընդարձակման համար, որը տեղի է ունենում գնալով ավելի ու ավելի արագ և ինտենսիվ տեմպերով:

Հակառակ դրան՝ մուլթ մատերիան «ցրված» չէ և ակադեմիկոսի գնահատմամբ, մեծ պայթյունից հետո հավաքվելով ու սեղմվելով դարձել է գնդիկներ, որոնցից գոյացել են համաստեղությունները: Մի փոքր ավելի ուշ մուլթ մատերիայի ինչ-որ մասը «ծանրացել է» պրոտոններով և նեյտրոններով՝ դառնալով սովորական մատերիա, որից և ձևավորվել են աստղերը: Իսկ աստղերի ներսում տիեզերքի նախաստեղծ տարրերից (ջրածին, հելիում, դեյտերիում) ձուլվել են մոլորակների բաղկացուցիչ բոլոր մետաղները: Մի խոսքով՝ մարդկությունը, ըստ Ռուբակովի, մուլթ մատերիայի արգասիք է (<http://elementy.ru/lib/25560/25567>):

Պարզվում է նաև, որ մուլթ էներգիան շատ ավելի տարօրինակ սուբստանցիա է, քան մուլթ մատերիան: Այն չի թանձրանում, այլ հավասարապես «բաշխված է» ամբողջ տիեզերքում: Ընդ որում մուլթ էներգիայի քանակը գալակտիկաներում և գալակտիկաների կուտակումներում այնքան է, որքան դրանցից դուրս: Իսկ ամենաանսովորն այն է, որ մուլթ էներգիան որոշակի իմաստով հակված է դեպի անտիգրավիտացիան:

Այդ տարօրինակ սուբստանցիայի՝ **«Մուլթ էներգիայի բնույթի պարզաբանումը 21-րդ դարի ֆունդամենտալ ֆիզիկայի գլխավոր առեղծվածն է»** – գտնում է ակադեմիկոս Ռուբակովը (<http://elementy.ru/lib/25560/25565>):

Նոր հայտնագործությունների, գիտական թարմ փաստերի ճնշման տակ, ասես սասանվում է դասական բնագիտության մեծ ու հիմնարար սկզբունքներից մեկը՝ բնության մեջ նյութի և էներգիայի պահպանման ու փոխակերպման օրենքը: Մուլթ մատերիայի մասնիկների բնույթը, թվում է թե գալիս է հաստատելու, որ բնության մեջ գործում է նոր, դեռևս չբացահայտված պահպանման օրենք (<http://elementy.ru/lib/25560/25564>):

Ասես՝ փոխվում են նաև **եռաչափ տարածության** մասին տիրապետող պատկերացումները, առաջ է քաշվում **բազմաչափ աշխարհի** կոնցեպցիան, աշխարհ, որն իբր ունի անվերջ թվով լրացուցիչ տարածական չափումներ, որոնք կարող են տեսանելի դառնալ միայն բարձր էներգիաների դեպքում:

Չափազանց հետաքրքիր է, որ տիեզերքում, մակրոաշխարհներում կատարվող խոշորամասշտաբ հայտնագործությունները հաճախ նոր լույս են սփռում միկրոաշխարհի մասին մեր պատկերացումների, տարրական մասնիկների ֆիզիկայի վրա:

Վերջին ժամանակներս ստացված կոսմոլոգիական տվյալները, պնդում է ակադեմիկոս Ռուբակովը, պահանջում են արմատական լրացումներ մատերիայի կառուցվածքի և տարրական մասնիկների ֆունդամենտալ փոխգործակցության մասին ժամանակակից պատկերացումների մեջ:

Նշելով, որ մենք այսօր գիտենք ամեն ինչ կամ գրեթե ամեն ինչ այն «ադյուսիկների» մասին, որոնցից կազմված է սովորական նյութը՝ ատոմները, դրանց միջուկները, վերջիններիս մեջ մտնող պրոտոններն ու նեյտրոնները, ինչպես նաև այն մասին, թե այդ «ադյուսիկներն» ինչպես են իրար հետ փոխներգործում՝ ընդհուպ մինչև ատոմի միջուկի 1/1000 մասը կազմող հեռավորությունների վրա, և մատնացույց անելով, որ այդ գիտելիքն ստացվել է հիմնականում արագացուցիչների վրա կատարված բազմամյա փորձարարական հետազոտությունների ու դրանց տեսական իմաստավորման արդյունքում, ակադեմիկոս Ռուբակովը գտնում է, որ չնայած դրան, կոսմոլոգիական տվյալները վկայում են նոր տիպի այնպիսի տարրական մասնիկների գոյության մասին, որոնք դեռևս հայտնագործված չեն երկրի պայմաններում և որոնք կազմում են «մուլթ մատերիան» տիեզերքում: Ակադեմիկոսի կարծիքով՝ ամենայն հավանականությամբ մենք գործ ունենք միկրոաշխարհի ֆիզիկայում նոր, մինչ այժմ անհայտ երևույթների մի ամբողջ շերտի հետ, և շատ հնարավոր է, որ ֆիզիկական երևույթների այդ շերտը հայտնաբերվի երկրային լաբորատորիաներում՝ ոչ հեռավոր ապագայում:

Բնագիտական ասպարեզի այդ հայտնագործությունները՝ օժտված աշխարհայացքային հսկայական լիցքով, տեսական նոր ու արժեքավոր նյութ են մատուցում փիլիսոփայությանը, կենսական ավյուն հաղորդում նրան, յուրովի հարստացնում ու ակտուալացնում ինչպես ամբողջությամբ վերցրած փիլիսոփայական գիտության, այնպես էլ նրա օրենքների, կատեգորիաների և սուբկատեգորիաների բովանդակությունը:

Մյուս կողմից՝ բնագիտության ասպարեզի նորագույն հայտնագործությունները աշխարհայացքային ու տեսական-փիլիսոփայական ընդհանրացման, իմաստավորման ու ռացիոնալ մեկնաբանման կարիք են զգում: Եվ հենց այստեղ է, որ փիլիսոփայությունը, իր կոչմանը հավատարիմ, կարող է անփոխարինելի օգնություն մատուցել բնագիտությանը:

21-րդ դարի բնագիտությունն իր որոնումների մեջ պետք է հավատարիմ մնա գիտական փիլիսոփայությանը, ապավինի նրա մեծ ու ստեղծարար ներուժին, եթե չի ուզում առանց հուսալի կողմնացույցի դեզերել անհուն ծովում՝ այն էլ դաժան փոթորկի պահին:

Գիտական գիտելիքի անցած պատմական ուղին վկայում է, որ բնագիտությունը չի կարող արդյունավետորեն զարգանալ առանց աշխարհայացքային հուսալի կողմնորոշիչների, առանց գիտական փիլիսոփայության: Ինքը՝ բնագիտության առաջընթացը հաստատում է, թե որքան կարևոր է բնագիտության ու փիլիսոփայության դաշինքը, այն ճշմարտության ըմբռնումը, որ բնագիտության իսկական փիլիսոփայությունը մատերիալիստական դիալեկտիկական է, աշխարհի ճանաչողության այդ առավել հետևողական գիտական մեթոդը: Փիլիսոփայության այդ բացառիկ դերը առանձին ուժով է դրսևորվում հատկապես բնագիտական խոշոր հեղաբեկումների ու սուր անցումների դարաշրջաններում՝ մեծ ու անսովոր հայտնագործություններն իմաստավորելիս, երբ բնագիտությունը, առանց փիլիսոփայության, անխուսափելիորեն հայտնվում է փակուղում: Իր հերթին՝ իրերի տրամաբանության բերումով յուրաքանչյուր անգամ փիլիսոփայությունը հետին թվով վրեժ է լուծում բնագիտությունից, երբ վերջինս լքում է իրեն:

Եվ նոր ժամանակներում փիլիսոփայության մայրամուտի մասին պոզիտիվիստների պնդումներին հակառակ՝ փիլիսոփայությունը շարունակում է իր առաջընթացը՝ նորանոր հաստատումներ բերելով իր ստեղծարար ուժին: Հավատարիմ աշխարհայացքային ու մեթոդաբանական իր բացառիկ առաքելությանը՝ փիլիսոփայությունը ապագայում ևս, ինչպես դարեր ու հազարամյակներ շարունակ, որպես կանխեղ կլուսավորի մարդկային իմացության ուղին:

Մեր օրերում բացառիկ դեր պետք է վերապահվի սոցիալական փիլիսոփայությանը, որի առանցքը, մեր համոզմամբ, պետք է կազմի հումանիզմը՝ ընդդեմ գլոբալացման բացասական հետևանքների, նոր հազարամյակի մարտահրավերների: Հումանիզմը, քանզի դժվար է մատնացույց անել փիլիսոփայական-հասարակագիտական մեկ ուրիշ հասկացություն, որն այնպես ճշգրիտ ու խոր բացահայտեր պատմական տարբեր դարաշրջանների բնորոշ հատկանիշները, նրանց բուն էությունը, որոշեր այս կամ այն հասարակության առաջադիմականության, նրա սոցիալական հասունության աստիճանը:

Այդ առումով համաաշխարհային պատմությունը մեր առջև հառնում է որպես հումանիզմի զարգացման պատմական փուլերի օրինաչափ հաջորդափոխություն, ուր հասարակական հարաբերությունների «մարդկայնության» աստիճանը հանդես է գալիս իբրև պատմականորեն կոնկրետ դարաշրջանի քաղաքակրթվածության դոմինանտ:

Անցումը նոր դարաշրջանին նշանավորում է հումանիզմի զարգացման, մարդասիրական արժեքների հաստատման հաջորդ, ավելի բարձր փուլի սկիզբ, որտեղ նախընթաց հումանիստական մտքի նվաճումները, հասարակական հարաբերությունների մարդկայնացման ասպարեզում ձեռք բերված առաջադիմությունը անհետ չեն կորչում, այլ, չնայած իրենց պատմական սահմանափակությանը, ստեղծագործաբար յուրացվում ու զարգացվում են:

Հումանիզմի պրոբլեմը աննահաղեպ ակտուալություն է ձեռք բերում մեր օրերում՝ կապված արդի դարաշրջանում մարդկությանը նետված նոր մարտահրավերների ու

սպառնալիքների, գլոբալացման գործընթացների հետ:

Մարդկության անցած ուղին վկայում է, որ պատմական յուրաքանչյուր դարաշրջանում մարդկային հասարակությունը հայտնվում է իրեն սպառնացող այնպիսի վտանգների դեմ-հանդիման, որոնց գործողությունը նա պետք է անպայման չեզոքացնի՝ ապահովելու համար քաղաքակրթության հետագա առաջընթացը:

Յուրահատուկ օրինաչափություն դարձած այս միտումը առանձնահատուկ սրությամբ է դրսևորվում հատկապես համաշխարհային պատմության ներկա փուլում, որն առանձնանում է նոր ժամանակներում մարդկությանը նետված մարտահրավերների աննախադեպ մասշտաբներով ու վտանգավորությամբ: Սպառնալի չափեր են ընդունում հատկապես հումանիզմի այնպիսի հակոտնյաներ, ինչպիսիք են միջուկային տեխնոլոգիաների տարածումն ու տիեզերքի ռազմականացումը, զինված հակամարտությունների ծավալումը, բնապահպանական կոլիզիաները, գիտատեխնիկական առաջադիմության բացասական հետևանքների խորացումը, բնական պաշարների աստիճանական սպառումը, բնակչության արագ ու չվերահսկվող աճը, կենսամիջոցների թերարտադրությունը, առանձին երկրների ու տարածաշրջանների հետամնացությունն ու աղքատությունը, անգրագիտության բարձր մակարդակը և այլ նեգատիվ դրսևորումներ, որոնք, ցավոք, շարունակում են մնալ մեր օրերի ուղեկիցը:

Նոր ժամանակներում մարդկությանը նետված սպառնալիքների շարքում հատուկ առանձնանում է միջազգային սահբեկչությունը, որն իր չափերով ու վտանգավորության աստիճանով դարձել է բոլոր ժողովուրդների, համայն մարդկության ընդհանուր թշնամին, 21-րդ դարի չարիքը:

Այդ վտանգները կրում են համապարփակ, գլոբալ բնույթ՝ սպառնալով համայն մարդկությանը, նրա բուն գոյությանը: Ուստի և դրանց դեմ պայքարը ձեռք է բերում արտակարգ հրատապություն, դառնում բոլոր ազգերի ու ժողովուրդների ընդհանուր խնդիրը՝ պահանջելով ընդհանուր նպատակների շուրջ նրանց համախմբում, համայն մարդկության նյութական ու հոգևոր ներուժի միավորում:

Մատնանշված համատեքստում չափազանց կարևոր է հումանիստական աշխարհընկալման ձևավորումը, հումանիզմի գաղափարների տարածումը, մարդկանց, ազգերի ու պետությունների փոխհարաբերություններում հումանիզմի սկզբունքների արմատավորումը:

Նոր, այսպես կոչված տեղեկատվական քաղաքակրթությունը, որը հավակնում է փոխարինել ինդուստրիալ հասարակությանը, բնորոշվում է ոչ միայն հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգի վերարտադրության սկզբունքորեն նոր տեխնոլոգիական եղանակով, այլև մարդու, տեխնիկայի և բնության փոխներգործության յուրահատուկ բնույթով:

Հասարակական արտադրության սոցիալական վերակողմնորոշման և մարդու աշխատանքային գործունեության հումանիզացման միտումները, ծանրության կենտրոնի տեղափոխումը դեպի ինտելեկտուալ, հոգևոր ու լոբոս օբյեկտիվորեն նպաստում են հասարակական կյանքում հումանիզմի դերի ու նշանակության աննախադեպ աճին:

Տեղեկատվական քաղաքակրթության զարգացումը պահանջում է մարդու, նրա արարող դերի ու ստեղծագործական ունակությունների մշտական կատարելագործում: Նոր պայմաններում մարդը դառնում է ոչ միայն հասարակության հիմնական սոցիալական չափումը, այլև նրա գլխավոր սոցիալական բովանդակությունը: Սակայն չնայած դրան՝ ժամանակակից հասարակությունը, կարծես թե պատմական զարգացման տրամաբանությամբ հակառակ, ցուցադրում է քաղաքական ու ռազմական բախումներ, բռնության զանազան ձևեր, սոցիալ-տնտեսական սուր հակասություններ, էթնիկական ու կրոնական անհանդուրժողականություն, այլևայլ նախապաշարմունքներ: Տպավորություն է ստեղծվում, որ արդի հասարակության զգալի մասը հրաժարվում է հումանիստական սկզբունքներից, իսկ պրոֆեսիոնալ գաղափարախոսները շատ հաճախ անտեսում են այդ պրոբլեմի սրությունը:

Փիլիսոփայական գրականության մեջ հումանիզմի մասին խոսելիս շատ հաճախ փորձ է արվում այդ հասկացությունը գրկել սոցիալ-քաղաքական իմաստից և նրա իրական բովանդակությունը հանգեցնել զուտ հոգեբանական, արստրակտ-էթիկական, կրոնական և նման այլ հիմնահարցերի:

Դրա հետ մեկտեղ, աշխարհում՝ գնալով մեծանում է և այն գիտնականների թիվը, ովքեր հանդես են գալիս ի պաշտպանություն հումանիզմի, սոցիալ-տնտեսական ու հոգևոր առաջադիմության՝ ընդդեմ գլոբալացման զանազան դրսևորումների, անհավասարության տարբեր ձևերի, ազգային ճնշման, ժողովուրդներին՝ այսպես կոչված պատմականների ու ոչ պատմականների բաժանման:

Արևմուտքում հումանիզմի նշանավոր ներկայացուցիչ էրիխ Ֆրոմը, մատնացույց անելով հումանիզմի անտեսման, ոգու սովի մասսայական դրսևորումները, գրում է. «Երկուսից մեկը՝ կամ արևմտյան աշխարհը ընդունակ կգտնվի վերածնել հումանիզմը, որի հանգուցային հիմնահարցը հանդիսանում է մարդկայնության առավել լիակատար զարգացումը, այլ ոչ թե աշխատանքն ու արտադրությունը, կամ էլ՝ Արևմուտքը կկործանվի, ինչպես որ շատ ուրիշ մեծ քաղաքակրթություններ» (Փրոմմ 1992: 373):

Մարդկությունը թևակոխել է 3-րդ հազարամյակ՝ իր պատմության նոր, բեկումնային փուլ: Սակայն քաղաքակրթության անցած ուղու արդյունքները ոչ միայն միանշանակ չեն, այլև խիստ հակասական են ու իրարամերժ՝ լի պատմական պարադոքսներով:

Նորերս պատմության գիրկն անցած 20-րդ դարը՝ բոլոր ժամանակներից առավել բարեբերն ու արգասավորը, միաժամանակ դարձավ ամենից դեստրուկտիվն ու կործանարարը՝ հագեցած պատմական դրամատիզմով ու ողբերգական իրադարձություններով:

Քաղաքակրթության պատմության նոր շրջանին բնորոշ խոր վերափոխումները, գործունեության ամենատարբեր ասպարեզներում ձեռք բերված վիթխարի առաջընթացը՝ մարդկության ստեղծագործական հնարավորությունների նկատմամբ հարուցած լավատեսությամբ ու հավատով հանդերձ, տարօրինակ օրինաչափությամբ, կարծես ինչ-որ կախարհանքի ուժով ուղեկցվեցին սոցիալ-քաղաքական կոլիզիաներով ու լայնամասշտաբ ցնցումներով, համաշխարհային պատերազմներով, գլոբալ բնույթի զանազան բացասական դրսևորումներով, շուտափույթ ու արմատական լուծում պահանջող բազում հիմնահարցերով: Աշխարհը չդարձավ ո՛չ ավելի լավը և ո՛չ էլ՝ ավելի արդարացի:

Այդ ամենին դեմ-հանդիման՝ մարդկությունը տագնապած է ու շփոթված, իսկ նրա հավաքական ներուժը՝ պառակտված ու ջլատված: Դրա հետևանքով մարդկության ստեղծարար եռանդը մի շարք դեպքերում ուղղվում է ոչ թե արարմանը, աշխարհի բարեփոխմանը, քաղաքակրթության նոր մակարդակի ձեռքբերմանը, այլ ծառայում է նեգատիվ նպատակների:

Արդի աշխարհում հակահումանիզմի առավել սուր դրսևորումներից է էկոնոմիկայի գնալով ուժեղացող միլիտարիզացիան, ռազմական ծախսերի անշեղ աճը: Մառը պատերազմի ավարտից ի վեր սկսված ռազմական ծախսերի կրճատման ժամանակաշրջանը տևեց ընդամենը 11 տարի՝ ընդգրկելով 1988-1998 թվականները, որից հետո վերսկսվեց դրանց աճը: Ռազմական ծախսերի միջին տարեկան ծավալը վերջին տարիներին կազմում է աներևակայելի մեծ թիվ՝ շուրջ մեկ տրիլիոն ամերիկյան դոլար, որի կեսից ավելին բաժին է ընկնում 5 երկրների, այդ թվում ԱՄՆ-ին՝ 36 տոկոս, Ճապոնիային՝ 6 տոկոս, Ֆրանսիային, Մեծ Բրիտանիային և Ռուսաստանին՝ 4-ական տոկոս:

Ահաբեկչության դեմ գլոբալ պայքարի շրջանակներում Իրաքում, Աֆղանստանում և աշխարհի այլ տարածաշրջաններում ռազմական գործողությունները ԱՄՆ-ի բյուջեից խլում են ահռելի մեծ գումարներ: Ըստ Նոբելյան մրցանակի դափնեկիր Ջոզեֆ Մտիզլիցի և Լինդա Բիլմսի վերջերս համատեղ լույս ընծայած «Երեք տրիլիոն դոլարանոց պատերազմը» գրքի՝ իրաքյան պատերազմն ունեցել է ծանրագույն ֆինանսական հետևանքներ՝ հանգեցնելով ԱՄՆ-ում համախառն ներքին արդյունքի աճի տեմպերի դանդաղեցմանը և երկրի տնտեսության վրա

նատելով շուրջ 3 տրիլիոն դոլար: Միայն ռազմական գործողությունների հետ կապված անմիջական կորուստները կազմել են 845 միլիարդ դոլար: Մինչդեռ ըստ գրքի հեղինակների՝ գոյություն ունեն նաև բազմաթիվ հաշվի չառնված կորուստներ, այդ թվում Իրաքից վերադարձած զինվորներին պահելու ծախսերը, այդ պատերազմի պատճառով նավթի համաշխարհային գների բարձրացումը և այլն: Եվ գրքի հեղինակներն այն կարծիքին են, որ եթե պատերազմական գործողություններն Իրաքում շարունակվեն, ապա դրանց վնասներն առաջիկա տարիներին կարող են գերազանցել Երկրորդ համաշխարհային պատերազմի ընդհանուր կորուստները, որոնք արդի գներով կազմել են 5 տրիլիոն դոլար: Նշենք նաև, որ հենց այստեղ՝ «իրաքյան սինդրոմի» մեջ պետք է փնտրել նաև ԱՄՆ-ի տնտեսական ու սոցիալական ոլորտում վերջին ժամանակներս դրսևորվող և սպառնալի ձևեր ընդունող ճգնաժամային մյուս երևույթների հիմնական պատճառները:

Համեմատության համար նկատենք, որ զարգացող պետությունների հետ համագործակցության ոլորտին ԱՄՆ-ի կողմից տարեկան հատկացվող գումարները չեն գերազանցում նույնիսկ 50 միլիարդ դոլարը:

Ֆանտաստիկ չափերի հասնող վերոհիշյալ միջոցները խաղաղ, ստեղծարար նպատակներով օգտագործելու դեպքում հնարավոր կլիներ կյանքի կոչել բազմաթիվ խոշորածավալ ծրագրեր, լուծել պատմական զարգացման ներկա փուլում մարդկության առջև ծառայած մի շարք հիմնախնդիրներ:

Նոր հազարամյակում մարդկությանը վիճակված գլոբալ ճգնաժամի հաղթահարումը հրամայաբար պահանջում է մշակել ու հասարակական գիտակցության մեջ սերմանել նոր, դարաշրջանի հասունացած խնդիրներին ու ներքին պահանջմունքներին համահունչ գաղափարներ, աշխարհընկալման ու կենսական արժեքների գնահատման նոր եղանակ՝ միտված արդի հասարակության գաղափարաքաղաքական վերափոխմանը, մարդկանց ու ժողովուրդների համախմբմանը, նրանց փոխհարաբերությունների ներդաշնակեցմանը, խաղաղ ու անկոնֆլիկտ աշխարհի ստեղծմանը:

Մարդկության զարգացման նման հեռանկարը, հավանաբար, ի նկատի ունի մեր ժամանակների գերմանական հայտնի փիլիսոփա ու հասարակագետ Յուզեն Հաբերմասը, երբ նշում է, որ եթե 19-20-րդ դարերում մարդն իրեն դրսևորել է որպես անհաշտ, առձակատող էակ, ապա նոր դարում նա պետք է դառնա համաձայնող, կոմպրոմիսի ձգտող:

Հասարակական ամբողջ կյանքը, այդ թվում կրթության ու դաստիարակության ողջ համակարգը պետք է համապատասխանեցվի նոր խնդիրներին, ապագայի միտումներին, հասարակական նոր իդեալներին:

Այն մնայուն ու անանց արժեքների, վեհ ու հիմնարար գաղափարների շարքում, որոնց շուրջ կարող է համախմբվել մարդկությունը, իրենց նշանակալիությամբ ու մոբիլիզացնող ներուժով բացառիկ տեղ է պատկանում հումանիզմի, մարդասիրության գաղափարներին, որոնք ներթափանցված են խոր լավատեսությամբ ու կենսահաստատ մեծ ուժով և առավել համահունչ ու ներդաշնակ են քաղաքակրթության զարգացման ներկա փուլի կենսական պահանջմունքներին, նոր դարաշրջանի ոգուն:

Այստեղից էլ՝ այդ գաղափարների բացառիկ կարևորությունն ու հրատապությունը մեր օրերում:

Իսկ ինչո՞ւ ժամանակակից աշխարհում հենց հումանիզմի գաղափարներին է բաժին ընկել այդպիսի մեծ ու պատմական առաքելություն:

Ամենից առաջ այն պատճառով, որ դրանք ամենալայն ընդգրկումով համամարդկային գաղափարներ են, որոնք ընկած են բոլոր քաղաքակրթությունների և մշակույթների, բոլոր կրոնների, արևելյան և արևմտյան աշխարհընկալումների հիմքում, և ընդունակ են հազարամյակի հիմնախնդիրներին դեմ-հանդիման դառնալու հուսալի կամուրջ՝ միավորելու համար բոլոր երկրներին ու ժողովուրդներին, համայն մարդկությանը:

Նոր ժամանակների հրամայականներին, մարդկությանն սպառնացող վտանգներին դեմ- հանդիման՝ անհրաժեշտ է գործի դնել այդ գաղափարների մոբիլիզացնող ու կոնսոլիդացնող ներուժը, ըստ ամենայնի նպաստել վարքագծի հումանիստական սկզբունքների ու նորմերի ձևավորմանը, մարդկանց ու ժողովուրդների փոխհարաբերություններում դրանց արմատավորմանը այն հաշվով, որ թույլ չտրվի հասարակական հարաբերությունների ապամարդկայնացում, հումանիզմի սկզբունքների ու պահանջների անտեսում:

Անհրաժեշտ է ամենուրեք սերմանել ու ամրապնդել այն գիտակցությունը, որ մենք ամենքս մի ընտանիք ենք, ազգերն ու ժողովուրդները, բոլոր մարդիկ՝ միևնույն նավակի ուղևորներ, որոնք բնավ չպետք է փորձեն գործել միմյանց դեմ, եթե չեն ուզում ճակատագրական նավաբեկության մատնվել:

Բռնությունն ու կոպիտ ուժը տարանջատում ու խորթացնում են մարդկանց ու ազգերին՝ նրանց դնելով համընդհանուր առձակատման եզրին: Պատերազմներն ու ռազմական գործողությունները չեն կարող և չպետք է ծառայեն որպես աշխարհում առկա այլևայլ խնդիրների լուծման միջոց, ուստի և դրանք պետք է փոխարինվեն քաղաքական, տնտեսական, դիվանագիտական, հոգևոր և այլ ներգործության միջոցներով, որոնք կծառայեն ոչ թե ժողովուրդների օտարմանը, այլ մերձեցմանը:

Դա նշանակում է նաև, որ մարդկության ապագան պետք է փնտրել ոչ թե պատակտման ու դիմակայման ուղիներում, այլ տարբեր քաղաքակրթությունների ու մշակույթների, կրոնների ու դավանանքների, Արևելքի ու Արևմուտքի երկխոսության, փոխըմբռնման ու համագործակցության մեջ: Միայն մարդկանց ու ժողովուրդների միջև համագործակցության հաստատմամբ, բարեկամության ու համերաշխության միասնական ոգով ու համատեղ ջանքերով է հնարավոր դիմագրավել մեր ժամանակների փոթորկալի իրադարձություններին, մարդկությանն սպառնացող մարտահրավերներին, հասնել առկա հիմնախնդիրների լուծմանը, մարդկային քաղաքակրթության աննախընթաց վերելքի ապահովմանը, հակամարտություններից ու բախումներից ազատ, խաղաղ ու ներդաշնակ աշխարհի ստեղծմանը:

Դա հնարավոր կդարձնեք լուծելու ոչ միայն մեր օրերում մարդկության առջև ծառայած գլոբալ խնդիրները, այլև մեծապես կնպաստեք տարբեր ժողովուրդների, հատկապես անմիջական հարևանությամբ, պատմական հանգամանքների բերումով իրար կողք-կողքի ապրող ազգերի միջև առկա կոնֆլիկտների ու անցյալից եկող թնջուկների ու անհամաձայնությունների փոխզիջումային կարգավորմանը, ազգային էգոիզմի, օտարման, թշնամանքի ու առձակատման աստիճանական հաղթահարմանը, անցյալի իրողությունների ու պատմական արդարության ճանաչման հիմքի վրա փոխշահավետ շփումների ու բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը: Դա կծառայեք նաև տարածաշրջանային բախումների կարգավորմանն ու կանխմանը:

Այդ պայմաններում հնարավոր կլինեք հաջողությամբ կենսագործել նաև «աշխարհ առանց պատերազմի, առանց էթնիկական ու կրոնական բախումների» մարդասիրական նշանաբանը՝ նոր հազարամյակը դարձնելով մշակույթների ու քաղաքակրթությունների, Արևելքի ու Արևմուտքի միջև շահագրգիռ երկխոսության ու փոխշահավետ համագործակցության ժամանակաշրջան:

Ընդ որում համամարդկային արժեքների ու հումանիստական իդեալների հաստատման ուղղությամբ ջանքերը կարող են առավել հաջող ու արգասավոր լինել միայն այն դեպքում, երբ դրանք գործադրվեն ոչ միայն պետությունների, պաշտոնական կառույցների մակարդակով, այլև ներառեն ժամանակակից հասարակության բոլոր առողջ ու կենսունակ ուժերը, ողջ քաղաքացիական հասարակությունը:

Այնժամ հումանիզմի գաղափարները, ձեռք բերելով կենսական միս ու արյուն, կդառնան պատմական զարգացման ներկա փուլում մարդկանց ու ազգերի փոխհարաբերությունների

սկզբունքները որոշող և նրանց միավորող մեծ ու ստեղծարար ուժ, հուսալի պատվար՝ ընդդեմ մարդկության միասնությունը ջլատող գործոնների, նոր ժամանակների սպառնալիքների ու մարտահրավերների, գալիք ժամանակների անակնկալների:

Դրանք կձառայեն բանականության ու արդարության սկզբունքների վրա խարսխված և ապագային միտված նոր հասարակության կերտմանը, մարդու գոյության և ստեղծագործության համար այնպիսի պայմանների ստեղծմանը, երբ մարդկային ուժի զարգացումը հանդես է գալիս որպես գերիշխող սկզբունք, դառնում հասարակական առաջադիմության գերագույն նպատակը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Թեկուզ աշխարհը կործանվի, բայց եղիցի՝ փիլիսոփայությունը»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Фромм, Э. (1992). Душа человека. М., Республика.

տես՝ <http://elementy.ru/lib/25560/25567>

տես՝ <http://elementy.ru/lib/25560/25565>

տես՝ <http://elementy.ru/lib/25560/25564>



Մելանիա Աբովյան (ԱՄՆ)
(Երգչուհի-ազգագրագետ)

❖ Փիլիսոփայությունը մի բան է, որ պետք է կյանքիցդ ավել սիրես...

❖ Փիլիսոփայությունը հոգու հայելին է: Ներքին հոգեկան խառնաշփոթը հարդարելու համար, հայելի է հարկավոր, այդ հայելին՝ փիլիսոփայությունն է:

❖ Փիլիսոփայի մտքի թռիչքը այնքան գորավոր ու լայնածիր է, որ կարող է շոշափել տիեզերքի փեշերը...

❖ Միջակներին գովաբանելը հեշտ է, նրանք դրա կարիքը շատ ունեն: Մեծերին է դժվար գովեստի խոսքեր ասել, նախ որ նրանք դրա կարիքը չունեն, երկրորդ՝ նրանց մեծությանը համապատասխան խոսքեր պետք է գտնել:

Մեծ մարդը՝ իր ծնունդով ու գոյությամբ է մեծ. գովեստի խոսքերը կտկարացնեն նրա վեհությունն ու ամբողջականությունը:

- ❖ Մեծ մարդը, առանց մեծացնող խոսքերի էլ՝ «Մեծ» է:
- ❖ Լռելը մեծերին է հատուկ: Փոքր մարդիկ չեն կարող լռել:

Կամ՝ մեծը իմանալուց է լռում, փոքրը՝ չիմանալուց:

- ❖ Մովորիք՝ ո՛չ ասել...

Ասա ո՛չ, ոչը՝ նշանակում է ո՛չ...

Մեկը, եթե քեզինց ոչ չլսի, կսկսի շահագործել ու ճնշել քեզ:

- ❖ Անցյալը չես կարող կրկնել, և հարկավոր էլ չէ...
- ❖ Բնությունն ու տիեզերքը ժամանակ չունեն:

Մարդն է ժամանակի վրա ժամանակ կարգել:

- ❖ Այնքան ժամանակ, երբ խոսքը դեռ չես ասել, նա քո բանտարկյալն է:

Բայց երբ արդեն ասել ես, դու կդառնաս նրա գերին:

Իմաստունը ասել է՝

«Ես հաճախ գղջացել եմ որևէ բան ասելուս համար, բայց հազվադեպ եմ ցավել լռած լինելուս համար»:

- ❖ Մեռնողներին պետք չէ՛ խղճալ: Խղճացեք չճնվածներին, որոնք մեռնելու չարժանացան:

❖ Փիլիսոփա լինել չի նշանակում վերացական գաղափարներ ունենալ, կամ որևէ դպրոց, կամ ուսմունք հիմնել: Այլ կյանքի չափ սիրելն է իմաստություն, որի սկզբունքները՝ պարզ, անկախ, վեհանձն, ինքնավստահ կյանք ունենալն է:

- ❖ Փիլիսոփայությունը՝ սերն է դեպի ճշմարտությունը, ազատությունը, գեղեցիկը...

❖ Երբ սովորականից դուրս ծնունդ ես, ներաշխարհի մշտապես գործողության մեջ է, և հրաբխի օջախի պես անընդհատ եփվում է, ու քեզ անհանգստություն պատճառում: Այդտեղ է, որ ուղեղդ ու զգացմունքդ՝ սկսում են համագործակցել:

Եվ, վա՛յ այն վայրկյանի եկած մտքին, որ գրի չառար, կփախչի անվերադարձ:

Թերևս ժամանակ անց կգա մի ուրիշ միտք, ուրիշ խմորմամբ... և այսպես շարունակ...

Գրի առ եկած միտքը, ազատվիր մտային չարչարանքից, և հարդարվիր ներքնապես...

- ❖ Մովորիք ոչ ասել, և ոչը՝ երբ ասել:

Ո՛չ ասելու ճիշտ ժամանակը խիստ կարևոր է:

- ❖ Մեծ անհատականությունները, մեծ մարդիկ՝ ունենում են նաև մեծ սխալներ ու թերություններ: Բայց ունենում են մեծ, բարձր ոգի ու վեհանձն նկարագիր:

Անկեղծորեն և բարեմիտ՝ լայն բացում են իրենց բարձր ներաշխարհը, որից չարաչար օգտվում և շահարկում են՝ փոքր հոգիները, խեղճ մարդիկ:

- ❖ Երբ դու լուռ ես քո կարծիքների ու ցանկությունների մեջ, և մեկ ուրիշն է որոշում, թե դու ինչ ես ցանկանում, կամ մտածում՝ տեղի է ունենում դանդաղ քայքայում, և վեր է ածվում հիվանդության՝ հոգեկան և ֆիզիկական:

Մարդ արարածին անհրաժեշտ է թե՛ ներքին, թե՛ արտաքին ազատություն...

❖ Դիմացիոնին լսելու ժամանակ է, որ նոր բան ես սովորում. երբ դու՛ ես խոսում՝ ասում ես այն, ինչ գիտես...

- ❖ «Ժամանակը» ամենաթանկ նվերն է, որ մարդիկ կարող են նվիրել իրար:

- ❖ Ամեն մի փիլիսոփայություն սկսվում է զարմանքից...

Նրա զարգացումը հետազոտությունն է... վերջը չիմացությունը...

- ❖ Եթե ինչ որ մեկը քեզ սիրում է իր համար՝ դրա անունը սեր չէ...

- ❖ Մեր սխալները մեր եղունգների նման են:

Երբեմն-երբեմն կտրում ենք, բայց նրանք նորից աճում են:

- ❖ Տարիքի տված իմաստությունը՝ կյանքը ավելի գեղեցիկ է դարձնում, ու կատարյալ ճշմարտությունը քեզ ավելի հասանելի է դառնում:



Նարեկ Կիրակոսյան
Ծնվել է 1987թվ. Երևանում:
2003-2008 թվ. սովորել և է
գերագանցությամբ ավարտել
Խ. Աբովյանի անվ. մանկավարժական
համալսարանի բանասիրական
ֆակուլտետը)

Ֆենոմեն է *բառը*՝ ձուլված մտասևեռումներից, Լուսաթաթախ Հարմոնիայի էլեկտրական պաթոսից, որ հեղվում է *մթազնումների պատարագից* վերածվելով Արտաբերման *շարականի*:

Բառի ոգին տիեզերական լիցքն է, էներգիայի պահպանման օրենքը:

Բառը լիցքավորվում է *երկունքի քվանտային մասնիկներից* բոցվելով մթնոլորտում հոգեվիճակների:

Բացարձակ է բառը: Առինքնող, վեհաշուք: Իր մեջ կրում է վերացականն ու զգացականը: Նրա մետաֆիզիկական *էությունն է*: Բառը ժամանակի ու Տարածության սինթեզ է՝ թրծված իմպուլսներից, որ կլանում է Մտավարժանքների Ալքիմիան: Երևույթի բանազանցական խտացումն է *բառը*, որ ներաշխարհում կուտակված հոգեբանական մետամորֆոզները փոխադրում է արտաքին ոլորտ:

Բառը մտացարկումների նախահիմքն է՝ հայելային արտացոլքով *զգացականը* վերացարկում է Տարածական ոլորտ:

Միստիկական պաթոսով անձրևում է Աղջամուղջը Արքայության:

Գանգատուփում կուտակվում է ապագա Բառը, տեսարանը, որ ձեռքում է ձգողական ուժը՝ բախվելով իրականության եզրերին:

Բառն աներևակայելի և անբացատրելի հավատամքով հասունանում է, վայրկյանական դողերոցքով տեմպ տալիս անբջանքներին, որոնք անգիտակից ուժով թելադրվում են երազում: Ֆիլմի պես տեսնում ես բառաբարդումների շիկացումից ծնվող տեսարանը: Կախարդիչ տենդը մղում է քեզ ուրիշ տարածաչափական հորիզոններ՝ դեպի Քառսի Միմֆոնիա և Լուսաժայթքում: Բառն այն բանալին է, որով բացում ես Տարասպարեզ Ոլորտների բաժանարար դուռը: Նրանով անցնում ես սահմանը *նուրբ գծի*, որ զատում է Զգայական տարածությունը Առասպելականից, Ճշմարտությունը՝ Ֆանտազիայից, ուր Կամային է միտքը:

Նրա գիտակցման բանաձևը գալակտիկաների անսահմանությունն է, գունապնակը՝ Աստղալից Խորանը Տիեզերքի:

Զգացածդ, ապրվածդ հաղորդելու համար պետք է կեղևազրկել *բառը* Մերկ Ներվի պես, որով կպրկես Քնարիդ լարերը՝ ամեն հպումից քամելով *մուսաների այգաբացից արեզակի ոսկին*: Բառը մեխվում է քունքիս մեջ:

Մտացոլքը պրկում է միտքս՝ նետելով *տիեզերական ալքիմիայի* ալեբախության ոլորտները : Անգոր եմ հակասող իմպուլսների բախումից ժայթքում է *բառը*. անգիտակցվող, թելադրվող *բառը*, որ տարածության մեջ դառնում է *կշիռ* և զրնգում է *ժամանակից* դուրս:

Բառն աստվածային Սորմոք է, առինքնող, Խենթացնող *հրեջ*:

Աստվածային է բառը, աննյութեղեն, դյուրիչ, որն օծում է մեհյանը պոեզիայի:

ԶՎԱՐՃԱԼԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՍԵՐԳԵՅ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ դոցենտ)

Թալեսի մայրը Թալեսին հորդորում է ամուսնանալ: Թալեսը պատասխանում է, թե դեռ շուտ է: Տարիներ անց մայրը նույն պահանջով է դիմում: Այս անգամ ստանում է հետևյալ պատասխանը, թե արդեն ու՞շ է:

Մի անգամ Թալեսը տանից դուրս է գալիս աստղերը դիտելու: Ստացվում է այնպես, որ ինքնամոռաց երկնքին նայելով՝ ընկնում է մի խոր փոսի մեջ: Անհանգստացած կանչում է.

- Օգնեցե՛ք, օգնեցե՛ք:

Մայրը մոտենում է ու ասում.

- Է՛~ Թալես, դու չես տեսնում ոտքերիդ տակը ու դեռ ցանկանում ես ճանաչել այն,ինչը երկնքում է:

Հույն փիլիսոփաներից մեկը ասում էր, թե կյանքի ու մահվան միջևտարբերություն չկա: Նրան հարցնում են, թե ինչու այդ դեպքում դու չես մեռնում: Նա պատասխանում է, թե հենց այն բանի համար, որ տարբերություն չկա:

Երբ Դիոգենեսը գերի է ընկնում և հանվում վաճառքի՝ գնորդի այն հարցերին, թե ինչ կարող է անել, պատասխանում է, թե կարող է մարդկանց վրա իշխել, և իր կողմից գնորդին հարցում է, թե չի ցանկանում արդյոք նա իր համար տեր գնել:

Ադրյուրից բաժակով ջուր խմող Դիոգենեսը տեսնելով, թե ինչպես մի պատանյակ կռացած անմիջապես ադրյուրի ակունքից է ջուր խմում, ասում է.

- Այս պատանին ինձ գերազանցեց:

Մի անգամ, երբ Դիոգենեսը արևի լոզանք է ընդունում, Ալեքսանդր Մակեդոնացին՝ մոտենալով նրան և կանգնելով գլխավերևում, ասում է.

- Ինչ ցանկանում ես խնդրի ինձնից:

- Մի ծածկիր արևը,- հետևում է պատասխանը:


Մի երիտասարդի Սոկրատեսի տված այն հարցին, թե ինչ խորհուրդ կտա՝ ամուսնանալ, թե ոչ, իմաստասերը պատասխանում է, թե վարվիր ինչպես ցանկանում ես, միննույն է երկու դեպքում էլ փոշմանելու ես:

Բաժինը վարում է փիլիսոփայության գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի տեսական փիլիսոփայության ամբիոնի դոցենտ Սերգեյ Մանուկյանը:

ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐԸ ԶՎԱՐՃԱՆՈՒՄ ԵՆ, ԲԱՅՑ ԵՐԲԵՄՆ ԷԼ
 ԶԱՐՄԱՆԱԼԻՈՐԵՆ ԼՐՁԱՆՈՒՄ ԵՆ...

Դրա մասին են վկայում հայ նշանավոր փիլիսոփա, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Զիջյանի վերջերս ստացած տրանսպորտային միջոցի շարժումը կանխարգելող ավտոմատ համակարգ գյուտի արտոնագիրը.

Հայաստանի Հանրապետություն




ԱՐՏՈՆԱԳԻՐ

№ 2584 А лектуральной

Հայաստանի Հանրապետության
 մրավոր սեփականության գործակալությունը
 օրենքի համաձայն րվել է
 Տրանսպորտային միջոցի շարժումը կանխարգելող ավտոմատ
 համակարգ
 գյուտի սույն արտոնագիրը

ԱԳԵՆՏԱԳՐԱՏԵՐ Ռոբերտ Զիջյան
 ՀԵԳԻՆԱԿ(ՆԵՐ) Ռ. Զիջյան, Ա. Զիջյան, Գ. Զիջյան

Agence de la Propriété Intellectuelle
 République d'Arménie
 BREVET
 Intellectual Property Agency
 of the Republic of Armenia

ՀԱՅՏԻ №	AM20100098
Ներկայացման փակման	23.07.2010
Գյուտի առաջնություն	23.07.2010
Գրանցված է պետական գրանցամատյանում	25.01.2012
Գործակալության պետ	

Արտոնագիր գործարարության համարում է հայաստանի Հանրապետության մրավոր սեփականության գործակալության կողմից հաստատված



(19) AM

(51) ՄԱԴ (2012.01)
B60Q 9/00

**Հայաստանի Հանրապետության
մտավոր սեփականության գործակալություն**

ԳՅՈՒՏԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ (11) 2584 A

(21) Հայտի համարը **AM20100098**
(22) Հայտի ներկայացման թվականը **23.07.2010**
(45) Հրապարակման թվականը **25.01.2012**
(56) **RU 2177886, B60Q 9/00, 2002**
(72) Գյուտի հեղինակը, երկրի կոդը **Ռուբերտ Զալիբեկի Զիջյան (IL), Անահիտ Ռուբերտի Զիջյան (AM), Գայանե Ռուբերտի Զիջյան (AM)**

(71) Հայտատուն, երկրի կոդը **Ռուբերտ Զալիբեկի Զիջյան (IL)**
(73) Արտոնագրատեր, հասցեն, երկրի կոդը **Ռուբերտ Զալիբեկի Զիջյան. 52401, Իսրայել, Ռամատ Գան, Հարոե 121, բն. 3 (IL)**


(54) Տրանսպորտային միջոցի շարժումը կանխարգելող ավտոմատ համակարգ


(57) Գյուտը վերաբերում է երթևեկության անվտանգությունն ապահովող ավտոմատ սարքերին և հատկապես այն սարքերին, որոնք կարող են կանխել տրանսպորտային միջոցի խաչմերուկով անցնելը լուսացույցի կարմիր լույսի դեպքում:

Ավտոմատ համակարգն ունի նախազգուշացնող էլեկտրամագնիսական ճառագայթման բլոկ, որը տեղադրված է ճանապարհային լուսացույցի վրա և նախազգուշացնող էլեկտրամագնիսական ճառագայթի ընդունման ու մշակման բլոկ, որը տեղադրված է տրանսպորտային միջոցի վրա: Կանխող հրամանի հանգույցը մշակում և ուղարկում է նախազգուշացման հրամանը, իսկ եթե վարորդը չի կատարում տրանսպորտային միջոցի արգելակումը, մշակում և ուղարկում է

ավտոմեքենայի ավտոմատ արգելակման հրամանը:

Ավտոմատորեն նախազգուշացվում և կանխարգելվում է տրանսպորտային միջոցի լուսացույցի կարմիր լույսով անցնելը, 1 նկ.:





Պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը 2012 թ. հունվարին ստացել է ՀՀ արտոնագիր № 2584 A տրանսպորտային միջոցի լուսացույցի կարմիր լույսով անցումը կանխարգելող ավտոմատ համակարգի համար: Տվյալ գյուտը վերաբերում է երթևեկության անվտանգությունն ապահովող ավտոմատ սարքերի ոլորտին և հատկապես՝ այն սարքերի, որոնք կարող են կանխել տրանսպորտային միջոցի խաչմերուկով անցնելը լուսացույցի կարմիր լույսի դեպքում:

Գյուտի խնդիրն է ստեղծել ավտոմատ համակարգ, որը կարող է նախազգուշացնել տրանսպորտային միջոցի վարորդին, որ նա մոտենում է խաչմերուկին ճանապարհային լուսացույցի կարմիր լույսով, և կարող է կանխել տրանսպորտային միջոցի խաչմերուկով անցնելը ճանապարհային լուսացույցի կարմիր

Փիլիսոփայության միջազգային լույսով:

ակադեմիայի ակադեմիկոս՝ Ռոբերտ Ջիջյան Վրա տեղադրված նախազգուշացնող էլեկտրամագնիսական ճառագայթի գեներատորի բլոկից և տրանսպորտային միջոցի վրա տեղադրված նախազգուշացնող ճառագայթի ընդունիչ գրեկից: Նախազգուշացնող էլեկտրամագնիսական ճառագայթի գեներատորի բլոկը բաղկացած է էլեկտրամագնիսական տատանումների գեներատոր (1)-ից, որի էլքը կապված է նախազգուշացնող ճառագայթի ալեհավաք (2)-ին, իսկ մուտքը՝ գեներատորի հաճախականության փոխարկիչ (3)-ին, որի առաջին մուտքը կապված է լուսակիրի լույսի գույների փոխարկիչի հետ, իսկ երկրորդ մուտքը՝ թույլատրված ուղղության լուսացույցի փոխարկիչի հետ:

Նախազգուշացնող էլեկտրամագնիսական ճառագայթի ընդունման ու մշակման բլոկը բաղկացած է ընդունող ալեհավաք (4)-ից, որի էլքը կապված է ընդունված ճառագայթի հաճախականությունը որոշող հանգույց (5)-ին, վերջինիս էլքի ազդանշանը ընդունող կանխող հրամանի հանգույց (6)-ից, որի մյուս մուտքն կապված է տրանսպորտային միջոցի GPS նավիգատորի էլքի հետ, իսկ հանգույց (6)-ի էլքը կապված է տրանսպորտային միջոցի ավտոմատ արգելակման հանգույցի, նախազգուշացնող ձայնային ազդանշանների ստանդարտ հանգույց (7)-ի և հաղորդիչ ալեհավաք (8)-ի հետ:

Հայտում առաջարկվող համակարգի աշխատանքը ընթանում է հետևյալ եղանակով. լուսացույցի լույսի գույների փոխարկիչի և թույլատրված ուղղության փոխարկիչի տվյալների հիման վրա գեներատորի հաճախականության փոխարկիչ (3)-ը միացնում է գեներատորի տատանումներն այն հաճախականությամբ, որը նախօրոք որոշված է լուսացույցի լույսի գույնի և թույլատրված ուղղության տվյալ վիճակի համար: Գեներատորի (3)-ի տատանումներն փոխանցվում են ալեհավաք (2)-ին, որը խաչմերուկի Stop գծի ուղղությամբ նախազգուշացնող էլեկտրամագնիսական ճառագայթ է ուղարկում, որի շնորհիվ խաչմերուկի Stop գծի ամբողջ լայնությամբ և որոշակի խորությամբ ստեղծվում է էլեկտրամագնիսական դաշտ:

Խաչմերուկի Stop գծին մոտենող տրանսպորտային միջոցի ընդունող ալեհավաք (4)-ը ընկալում է նախազգուշացնող էլեկտրամագնիսական ճառագայթը: Ընդունող ալեհավաք (4)-ի տվյալների հիման վրա՝ հանգույց (5)-ը որոշում է ընդունված էլեկտրամագնիսական ճառագայթի տատանումների հաճախականությունը և այդ տվյալը փոխանցում է կանխող հրամանի հանգույց (6)-ին: Այդ տվյալի և տրանսպորտային միջոցի GPS նավիգատորից ստացվող մինչև Stop գիծը մնացող հեռավորության տվյալի հիման վրա՝ կանխող հրամանի հանգույց (6)-ը մշակում (արձակում) է նախազգուշացման հրամանը և այնուհետև՝ տրանսպորտային միջոցի ավտոմատ արգելակման հրամանը, եթե վարորդը չի կատարում

տրանսպորտային միջոցի արգելակումը: Նախագգուշացման հրամանը փոխանցվում է հանգույց (7)-ին, որն արձակում է արգելակումը կատարելու վարորդին նախագգուշացնող ձայնային ազդանշաններ, իսկ եթե վարորդը չի կատարում արգելակումը, հանգույց (6)-ը հաղորդիչ ալեհավաք (8)-ի միջոցով դրա մասին տեղեկացնում է ճանապարհային ոստիկանությանը:

Հիշարժան է, որ մոտավորապես 40 տարի առաջ Ռոբերտ Ջիջյանը ստացել է Սովետական Միության գիտական հայտնագործությունների և գյուտերի կոմիտեի հեղինակային վկայականը (այսօր՝ արտոնագիրը) № 383052 (1973 թ.) «Տրամաբանական մեքենա» խորագրով: Գյուտը իրենից ներկայացնում էր էլեկտրոնային ավտոմատ սարքի մանրամասն նկարագիր, որը կարող էր կատարել օրինական եզրակացություններ տրված երկու նախադրյալներից հատկության դատողություններից: Սարքի հիմքում նրա կողմից մշակված դասական կատեգորիկ սիլլոգիզմի ալգորիթմն էր, որը կազմում էր Ռ. Ջիջյանի թեկնածուական ատենախոսության կորիզը: Ինչպես ալգորիթմը, այնպես էլ էլեկտրոնային սարքը ներկայացնում էին անգլիացի տրամաբան Ստենլի Ջևոնսի տեղադրման սկզբունքի և մեխանիկական տրամաբանական մեքենայի կատարելագործում (տե՛ս С. У. Джевоис, Основы науки, Спб., 1881).

Հետագայում Ռ. Ջիջյանը մշակեց նաև բազմասիլլոգիզմի խնդրի լուծումը և ձևակերպեց համապատասխան ալգորիթմը, որը հանարավորություն էր տալիս սիլլոգիստական եզրակացություններ կատարել ցանկացած թվով նախադրյալներից (տե՛ս Р. З. Джиджян, Расширенная силлогистика, Ереван, 1973):

ՈՎՔԵՐ ԵՆ ԱՄԵՆԱՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐԸ ԸՍՏ
«TV ՄՈՒ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

TV մոլ շաբաթաթերթը հրատարակվում է Երևանում 2004 թ.-ից: 2007թ. շաբաթաթերթում բացվել է «Առանց փողկապի» բաժինը: Այդտեղ շաբաթաթերթի աշխատակիցները մտավորականներին ժամանակ առ ժամանակ հարց են տալիս. «Ո՞վ է ամենահետաքրքիր փիլիսոփան»: Հարցը պետք է համարել միանգամայն տեղին, քանի որ Հայաստանը աշխարհում հայտնի է որպես փիլիսոփայության հնագույն օրրաններից մեկը: Պատահական չէ նաև այն հանգամանքը, որ մեր ժամանակներում Փիլիսոփայության միջազգային ակադեմիան հիմնադրված է և գործում է Հայաստանում: Այն հիմնադրված է Հայոց փիլիսոփայական ակադեմիայի հենքի վրա աշխարհի տարբեր երկրների՝ համաշխարհային համբավ ունեցող փիլիսոփաների առաջարկով:

Ինչպիսին է պատկերը վերը ներկայացված հարցի կապակցությամբ:

TV մոլ շաբաթաթերթը «Ո՞վ է ամենահետաքրքիր փիլիսոփան» հարցով իր հիմնադրման օրից (25-31 հոկտեմբերի, 2010) առ այսօր դիմել է հարցազրույցի մասնակիցներից 32 իրազեկների: Վերջիններիս կազմում, ըստ իրենց գործունեության բնույթի, ընդգրկված են պետական, քաղաքական, կուսակցական, հասարակական գործիչներ՝ 13, Ազգային ժողովի պատգամավորներ՝ 5, նախարարներ՝ 1, ընկերակցությունների, ասոցիացիաների տնօրեններ, նախագահներ՝ 7, գիտնականներ՝ 3, գրողներ, թերթերի խմբագիրներ, լրագրողներ՝ 3:

Բոլորը, ի բացառյալ չորսի, հարցին պատասխանել են ըստ էության՝ նշելով այս կամ այն փիլիսոփայի անունը: Հիշատակված չորսից մեկը «հետաքրքիր փիլիսոփա» անվանել է իր մորը, մյուսը՝ «ՀՀ ԱԺ եվրոպական ինտեգրման հարցերի հանձնաժողովի փորձագետ Աստղիկին»՝ հավանաբար ղեկավարվելով այն դրույթով, թե բոլոր մարդիկ էլ փիլիսոփայում են: Հարցազրույցի մասնակիցներից մեկն էլ չի ցանկացել «որևէ մեկին վկայակոչել»:

Նույն շաբաթաթերթի 28 հունիսի - 4 հուլիսի 2010թ. (N25/301 համարում) Դավթաշենի համայնքապետ Արթուր Գևորգյանը «Ամենահետաքրքիր փիլիսոփան» հարցին պատասխանել է. «Լավագույն փիլիսոփան ժամանակն է»: Սա հարցի, ըստ էության, պատասխանելուց խուսափելու դեպքերից է:

Մնացած 28-ից մեծամասնությունը նշել է մեկ փիլիսոփայի անուն, որը և համապատասխանում է առաջադրված հարցին: Մյուսները (9 մարդ), առաջին հերթին նշելով մեկի անունը, լրացուցիչ կերպով հնչեցրել են նաև այլ անուններ (11 փիլիսոփայի անուն): Եթե ի մի բերենք հարցի հիմնական և հավելյալ պատասխանները և հաշվի չառնենք հիշատակված չորս խուսափողական պատասխանները՝ կարելի կլինի ամրագրել 39 փիլիսոփայի անուն:

Պատասխանները հստակ պատկերացնելու համար դիտարկման արդյունքը ստորև ներկայացված է երկու աղյուսակով, որոնք արտացոլում են հիմնական և հավելյալ պատասխանները տարբերակված ձևով: Առաջին սյունակում նշվում են *մեկական* պատասխանները և մեկից ավել պատասխանների առաջին անունները: Երկրորդ սյունակում նշված են *հավելյալ* անունները: Երկու դեպքում էլ անունները նշվում են ըստ TV մոլ-ի հրատարակման ժամանակագրության:

Հիմնական պատասխան

1. Բերդյաս
2. Կանտ
3. Կանտ
4. Կանտ
5. Արիստոտել
6. Նարեկացի
7. Նիցշե

Հավելյալ պատասխան

- 1^ա Կոնֆուցիոս
- 3^ա Լևի Ստրոս
- 6^ա Դավիթ Անհաղթ, Նժդեհ

8.	Միշել Մոնտեն	7 ^ա Շթայներ, Կանտ
9.	Հեգել	8 ^ա Մարկոս Աուրելիոս
10.	Սպինոզա	
11.	–	
12.	Բերդյան	
13.	Գեորգ Բրուսյան	12 ^ա Մոնտեն
14.	Գարեգին Նժդեհ	
15.	Ջոն Դյուի	14 ^ա Արիստոտել
16.	Շթայներ	15 ^ա Կարլ Յասպերս
17.	Պլատոն	
18.	Կանտ	
19.	Դիոգենես	17 ^ա Վիտգենշտայն
20.	Նիցշե	
21.	Էրիխ Ֆրոմ	«ա» տառով ամրագրված թվերը (1 ^ա , 3 ^ա և այլն) կոչված են ցույց տալ, թե հիմնական ցուցակում դրանք որ թվերին (1, 2, 3 և այլն) են համապատասխանում և, հետևաբար, որ փիլիսոփաների հետ են հնչեցված այդ անունները:
22.	–	
23.	Ֆրեյդ	
24.	Կանտ	
25.	Նագարջունա II	
26.	Նժդեհ	
27.	Գալիլեո Գալիլեյ	
28.	–	
29.	Գարեգին Նժդեհ*	
30.	Սոկրատես	

«TV մոլի» (37/312) համարում 20-26 սեպտեմբերի պատասխանը՝ դարձյալ «Գարեգին Նժդեհ» է

Ձայների քանակով հետևյալ պատկերն է ստացվել. Կանտ՝ 6 հիմնական, 1 հավելյալ, ընդամենը՝ 7, Գարեգին Նժդեհ՝ 4 հիմնական, 1 հավելյալ, ընդամենը՝ 5, Բերդյան՝ 2 հիմնական, ընդամենը՝ 2, Նիցշե՝ 2 հիմնական, ընդամենը՝ 2, Արիստոտել՝ 1 հիմնական, 1 հավելյալ, ընդամենը՝ 2, Միշել Մոնտեն՝ 1 հիմնական, 1 հավելյալ, ընդամենը՝ 2, Շթայներ՝ 1 հիմնական, 1 հավելյալ, ընդամենը՝ 2:

Մնացած բոլոր փիլիսոփաների անունները հնչեցվել են հարցին մեկ պատասխան սովորների կողմից. Նարեկացի, Հեգել, Սպինոզա, Գեորգ Բրուսյան, Ջոն Դյուի, Պլատոն, Դիոգենես, Էրիխ Ֆրոմ, Ֆրեյդ, Նագարջունա II, Գալիլեո Գալիլեյ, Սոկրատես՝ հիմնական պատասխանում, և Կոնֆուցիոս, Լևի Ստրոս, Դավիթ Անհադթ, Մարկոս Ավրելիոս, Կարլ Յասպերս, Լյուդվիգ Վիտգենշտայն՝ հավելյալ պատասխանում: Այդ փիլիսոփաների կյանքը և գործունեությունը ընդգրկում է մ.թ.ա. V-IV դդ. մինչև ներկա ժամանակաշրջանը:

«Ո՞վ է ամենահետաքրքիր փիլիսոփան» հարցի պատասխաններն ավելի շուտ ուղղված են դեպի անցյալը, քան ներկան: Նշված բոլոր փիլիսոփաները (39 մարդ), ի բացառյալ մեկի (Գ.Բրուսյանի), իրենց կյանքին արդեն հրաժեշտ են տվել:

Քանի որ տրված հարցի պատասխանները հրատարակվել են հայկական լրատվական միջոցներից մեկում, բնականաբար, հետաքրքիր է նշել, թե հայ փիլիսոփաներից ինչ անուններ են ամրագրվել պատասխաններում՝ անկախ ժամանակաշրջանից: Դրանց թիվը չորսն է՝ Դավիթ Անհադթ (հավելյալ ցուցակում), Նարեկացի (հիմնական ցուցակում), Գարեգին Նժդեհ՝ 4 պատասխան հիմնական ցուցակում և 1 պատասխան՝ հավելյալում, Գեորգ Բրուսյան (հիմնական ցուցակում):

Պատասխաններում նշված փիլիսոփաների անունների վկայակոչումը խոսում է հարցազրույցին մասնակցած հեղինակների փիլիսոփայական նախասիրությունների

ընդհանուր պատկերի մասին: Ինչ-որ իմաստով դա խոսում է նաև փիլիսոփայության վերաբերյալ հայաստանյան մտավորականների պատկերացումների մասին: «TV մոլը» 7-13 հունիսի 2010թ. համարում (22/298) հրատարակել է (էջ11) մի փոքր հաղորդագրություն «Ովքե՞ր են ամենահետաքրքիր փիլիսոփաները» խորագրով (12 տող)՝ ամփոփելով մինչ այդ հրատարակված հարցաատասխանները:

Ավելորդ չէ նշել, որ փիլիսոփայական և փիլիսոփաների մասին նմանատիպ հարցումներ, համաշխարհային չափանիշներով, իրականացնում են նաև լրատվության այլ միջոցներ: Այսպես, օրինակ, News and Views հանդեսը մի քանի տարի շարունակ (սկսած 2008 թ.) հարցումներ է կատարում՝ միջազգային համբավ ունեցող փիլիսոփաների շրջանում: Առաջարկվել են հետևյալ հարցերը.

- Ո՞ր փիլիսոփայական ուղղություններն են 20-րդ դարում եղել առավել ազդեցիկ:
- Դրանցից որո՞նք կպահեն իրենց ազդեցությունը 21-րդ դարում:
- Նշե՞ք 20-րդ դարի ամենամեծ փիլիսոփաներին (ոչ ավել, քան 5 անուն):
- Ի՞նչն էք համարում փիլիսոփայության ամենակարևոր ձեռքբերումը ձեր երկրում:
- Ի՞նչ դեր է փիլիսոփայությունը խաղում սոցիալական կյանքում և գիտության մեջ:

Ակնհայտ է, որ նշված երկու տարբեր հարցումները հետապնդում են տարբեր նպատակներ: Սակայն պարզ է նաև, որ ստացված արդյունքները կարող են զուգակցվել և ավելի բազմակողմանի դարձնել խնդրո առարկայի պատկերը:

«TV Մոլը» 2010թ-ի հունիսի 22 (298) համարում (հունիսի 7-13) հրատարակել է մի հաղորդագրություն **«Ովքե՞ր են ամենահետաքրքիր փիլիսոփաները»** խորագրով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանում գործող Փիլիսոփայության միջազգային ակադեմիան դիտարկելով մեր շաբաթաթերթի «Առանց փողկապի» խորագրի «Ո՞վ է ամենահետաքրքիր փիլիսոփան» հարցը՝ հետաքրքիր վերլուծություն է անցկացրել: Այս խորագրով «TV Մոլ»-ում հարցազրույցներ են հրապարակվում քաղաքական տարբեր գործիչների, կառավարության և խորհրդարանի ներկայացուցիչների հետ: Դիտարկելով այդ հարցազրույցների վերոնշյալ հարցի պատասխանները՝ Փիլիսոփայության միջազգային ակադեմիան հետևյալ եզրակացությունն է արել՝ բոլոր ժամանակների փիլիսոփաների անուններից հայ մտավորականներն ու քաղաքական գործիչները ամենից շատ նշել են Կանտի, Արիստոտելի, Նիցշեի, Մոնտենի, իսկ հայ երևելի փիլիսոփաներից առանձնացրել են Նարեկացու, Դավիթ Անհաղթի, Նժդեհի և մեր ժամանակակից Գեորգ Բրուսյանի անունները»:

Ո՞Վ Է ՀԶՈՐԱԳՈՒՅՆԸ ՄՏՔԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Վիկտոր Համբարձումյանն իր խիստ սուղ ժամանակից հնարավորություն էր գտնում հանդիպելու հայ մարզիչներին, սպորտի գործիչներին և այլոց:

Մի անգամ իմ ներկայությամբ հարց տվեցին Վիկտոր Համբարձումյանին, թե արդյո՞ք նա հետաքրքրվում է ֆուտբոլով այն աստիճան, որ ընդունել է Երևանի «Արարատ» թիմի անդամներին և զրուցել նրանց հետ: Չ՞է որ դա նրանից ժամանակ է խլել, «ոսկե ժամանակ», որն իրեն այնքան անհրաժեշտ էր իր գիտական ստեղծագործության համար:

Մեր հանձարեղ գիտնականը հստակորեն բացատրել է, որ դրանք տարբեր բաներ են և որոնցից ամեն մեկն ունի իր դերը նրա կյանքում: Ընդգծելով, որ ստեղծագործության համար պահանջվող ժամանակն անսահմանափակ է՝ նա նշել է, որ կան նաև այլ բնագավառներ, որ իր համար պակաս կարևոր նշանակություն չունեն, քան իր գիտական ստեղծագործություններն են: «Ինչո՞ւ եմ ես ընդունել հաղթանակած «Արարատ» թիմի ֆուտբոլիստներին և զրուցել նրանց հետ ստեղծագործություններին հաշվին. այն պատճառով, որ մեր ֆուտբոլի թիմը ինձ հուշում է նաև մի կարևոր երևույթի մասին, որը պետք է բնորոշ լինի մեր իրականությանը և ինչո՞ւ չէ նաև հուշի որոշ մեթոդներ մեր հասարակության զարգացման համար: Եթե խիստ համառոտակի ասելու լինեմ, թե որն է այդ հասարակությանը, ապա ես կպատասխանեմ՝ տվյալ դեպքում թիմի անդամների միասնությունը, համոզված եմ, որ դա դյուրին բան չէ, և հավանաբար դժվար ուղի են անցել «Արարատ» թիմի անդամները մինչ այդ հատկության ձեռք բերելը: Միասնություն, ահա այն կարևորագույն հատկանիշը, որով «Արարատ» թիմի անդամներից կարողացել են շատ լավ հասկանալ ու իրացնել դրա դերն ու նշանակությունը: Եվ ի վերջո հասնել բաղձալի նվաճումների: Վիկտոր Համբարձումյանը հիշեցրեց իր սիրած գրող հանձարեղ Եղիշե Չարենցի հետևյալ խոսքերը. «Օ՞ հայ ժողովուրդ, քո փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Չարենցի կոչն անշուշտ պետք է հասկանալ բառիս լայն իմաստով և տարածել հասարակական մտքի բոլոր բնագավառների վրա և ոչ միայն: Առիթից օգտվելով կարող եմ ասել, որ ավանդաբար հայերի և վրացիների մոտեցումը երգի, երաժշտության նկատմամբ մի հարցում, ընդ որում՝ շատ կարևոր հարցում, տարբեր են. վրացիները սիրում են խմբերգեր, հայերը, որպես կանոն, գերադասում են լինել մեներգիչներ: Անշուշտ ամեն մեկն ունի իր առավելությունները, սակայն ես ցանկություն կհայտնեի, որ մեր մեներգիչներն ինչ-որ սահմաններում երգելիս ընդգրկեին նաև այլ երգիչ երգչուհիների, համոզված եմ, որ այդպիսի երգը շատ ավելի տպավորիչ կլինի և ընդունելի ունկրնդիրների տեսանկյունից: (Առիթից օգտվելով ասեմ, որ այսօր Վիկտոր Համբարձումյանի ցանկությունն իրականացնում են մեր երգիչները, թերևս չիմանալով, որ այդ ցանկությունը Վիկտոր Համբարձումյանին է եղել,- Գ. Բ.):

Առանձնահատուկ է նաև Վիկտոր Համբարձումյանի վերաբերմունքը դեպի շախմատը: Դա կարող էր ունենալ մի քանի պատճառ: Մերը դեպի շախմատը խիստ տարածված է և անկախ տարիքից ու սեռից, շախմատով հրապուրվում են տարբեր բնավորության և խառնվածքի մարդիկ, և դա բնական է: Բավական է հիշել, որ շախմատը ներառում է արվեստի, գիտության և սպորտի որոշակի տարրեր, երանգներ, որոնք հրապուրիչ են դարձնում այդ հնագույն խաղը: Այդ բոլորն իհարկե կարող են հասկանալի դարձնել Վիկտոր Համբարձումյանի վերաբերմունքը շախմատի նկատմամբ: Բայց Վիկտոր Համբարձումյանն ավելի խորն էր նկատում երևույթներն ու նրանց էությունները: Խոսքը վերբերում է մասնավորապես Վիկտոր Համբարձումյանի շախմատային խաղի մեկնաբանմանը. Երբ երկրորդ անգամ Տիգրան Պետրոսյանը դարձավ աշխարհի չեմպիոն շախմատի գծով, ինչպես նաև առաջին անգամ, Վիկտոր Համբարձումյանը ողջույնի խոսք հրատարակեց թերթերում: Այս անգամ հատուկ ուշադրության էր արժանի Վիկտոր Համբարձումյանի շախմատի դերի և նշանակության մասին հետևյալ մեկնաբանությունը. «Ինձ հաճույք է պատճառում, որ գոյություն ունի մտավոր գործունեության (ընդգծումն իմն է. Գ. Բ.) մի բնագավառ, որտեղ հնարավոր է օբյեկտիվորեն համեմատել տարբեր անձնավորությունների մտքի կարողությունները և միարժեք կերպով որոշել, թե ով է

հզորագույնն աշխարհում: Այդ բանագավառը շախմատն է: Առավել հաճելի է գիտակցել, որ մտքի այդպիսի գերազանցությունը պատկանում է մեր հարազատ Տիգրան Պետրոսյանին»:



Պրոֆեսոր Խաչատուր Թևոսյանը Տիգրան Պետրոսյանի գերեզմանին ծաղկեպսակ դնելիս

Այժմ, երբ շախմատը թափանցել է անգամ դպրոցներ՝ ուսումնական առարկայի ձևով, էլ ավելի մեծ է հետաքրքրությունը այդ հնագույն, հանճարեղ խաղի նկատմամբ: Օգտվելով այն առիթից, որ պրոֆեսոր Խաչատուր Թևոսյանը Մոսկվա էր մեկնում, ես խնդրեցի նրան այցելել Տիգրան Պետրոսյանի որդուն և պարզել մեր մեծ շախմատի արքայի ատենախոսության հրատարակման հարցը, քանի որ այդ մասին տարբեր կարծիքներ են եղել շախմատի շրջանակներում: Պրոֆեսոր Թևոսյանը սիրով կատարել էր այդ հանձնարարությունը և հայ-ռուսական միության նախագահի առաջին տեղակալ Տիգրան Պետրոսյանի վաղեմի բարեկամ Տեր-Ղազարյանցի օգնությամբ ստացել Վարդան Պետրոսյանի հավաստագիրը հոր ատենախոսությունը տպագրելու վերաբերյալ, ստորև վերարտադրում ենք նամակը:

Մեր ամսագրի հաջորդ համարում կտպագրվի վերոնշյալ նյութի շարունակությունը «Տիգրան Պետրոսյանի շախմատային և փիլիսոփայական ստեղծագործության ժառանգության այսօրվա վիճակը և մեր անելիքները» խորագրով:

Գ. Բ.

25 июля 2012 год.

Москва

Доверенность

Академику Георгию Абеловичу Брутяну

от наследника авторского права на издание текста диссертации моего отца Тиграна Вардановича Петросяна по теме «Некоторые проблемы логики шахматного мышления»

Мой отец, двукратный чемпион по шахматам Тигран Варданович Петросян, в 1968г защитил диссертацию в Ереванском Государственном Университете на тему «Некоторые проблемы логики шахматного мышление» на соискание учётной степени кандидата философских наук (по специальности «логика»).

Его научным руководителем был доктор философских наук, профессор, академик Г. А. Брутян.

При жизни отца, он и его научный руководитель думали об издании его диссертации, но интенсивная шахматная деятельность, а затем его преждевременная смерть не дали возможность осуществить задуманное.

В настоящее время академик Г.А. Брутян сообщил мне о желании опубликовать диссертацию под своей редакцией.

Я приветствую его решение и прошу всех, от кого зависит решение вопроса о публикации названной диссертации, всячески содействовать академику Г.А. Брутяну.

Я передаю все мои полномочия на авторское право по вопросам, связанным с публикацией диссертации моего отца «Некоторые проблемы логики шахматного мышление», академику Г.А. Брутяну.

Подпись В.Т. Петросяна

Заверяю

Первый Вице-Президент

Союза Армян России

Тер-Газарян

Р. Мелбаевичу

27. июля 2012г.



Вардан Тигранович Петросян

Петросян
(подпись)

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ



Սեդա Դադոյան

«ԱՅԼԱԽՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՌՈՂՋ ԵՐԼՈՒՅԹ Է», - ԱՍՈՒՄ Է ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ ՍԵՂԱ ԴԱԴՈՅԱՆԸ

- *Տիկին Դադոյան, ինչո՞ւ ապագա մանկավարժների համար հատկապես ընտրեցիք «Հայկական այլախոհությունը» թեման...*
- Որովհետև կարծում էի, որ դասախոսությամբ հանդես եմ գալու ապագա հոգեբանների և պատմաբանների լսարանի առաջ:
- *«Այլախոհությունն առողջ երևույթ է», - ասացիք Դուք: Ի՞նչ էք կարծում, լսարանն ընկալե՞ց դասախոսության թեման:*
- Հայկական այլախոհությունը նոր նյութ է: Ուսանողները կարծում եմ ավելի դյուրին ընկալեցին, քան այն մարդիկ, որ անըդհատ գրականության մեջ են:

Կարծես դրսի աշխարհից տեղեկություն չունեն: Մի տեսակ վախ կա. «Եթե իմ իմացածը սխալ լինի, ինչ պիտի անեմ...»:

Ես եկել եմ Հայաստան, որ համագործակցային կապեր ստեղծեմ: Նայում եմ մարդկանց աչքերին ու հասկանում, որ մտայնության հարց կա. դա պետք է մի քիչ փոխվի, պատրաստակամություն պետք է լինի, մարդը պետք է ընդունի ուրիշ մտտեցում, եթե այն ավելի լավն է:

- *Իսկ մարդիկ հոգեբանորեն պատրաստ են...*


Հայաստանում շատ դժվար են ընդունում քննադատությունը, հիվանդագին, իսկ ինքնաքննադատություն բոլորովին չկա...

- *Ի՞նչ կասեք խորհրդային շրջանի այլախոհների մասին...*

- Ցավոք, խորհրդային տարիներին մեր շատ մտածողներ այլախոհ լինելու համար գոհ գնացին՝ Մինասը, Սևակը...

- *Նոր սերունդը թերևս չի կրկնի նախորդների սխալները կամ կփորձի շտկել...*

- Մենք լավ սերունդ ունենք, լավ ուսանող երիտասարդություն, որը համարձակորեն կարող է մտածածը բարձրացնել:



Նունե Ավետիսյան

Նունե Ավետիսյան (հաղորդավար) - Կան մարդկային ճակատագրեր, որոնք լեռ են հիշեցնում և չափազանց տարողունակ են: Նման մարդկանց հետ հանդիպելիս գերադասում ես լռել ու անվերջ լսել նրանց, օգտվել այն կենսունակ ավյունից, որը նրանք պահպանում են իրենց մեջ հենց իրենց ճակատագրի ձեռքբերումներով: Նման մարդկանց հետ հանդիպումը չափազանց հաճելի և պատվաբեր է մեզ համար: Ընդ որում՝ նմանները շատ քիչ են ոչ միայն մեր ժողովրդի մեջ, այլև, ընդհանրապես, մոլորակի վրա, և, բախտի բերմամբ, “Բարև” հեռուստահաղորդման ընթացքում ներկայացվող հյուրը հենց այդպիսի մարդկանցից մեկն է ակադեմիկոս Գեորգ Բրուտյանը, ում

աշխատանքներն ընդհանրապես գերազանցում են մարդկային հնարավորությունները: Նրա կատարած աշխատանքների համար մեկ

կենսագրությունը պետք է որ չբավականացներ, բայց, ինչպես տեսնում եք, կան մարդիկ, ովքեր իսկապես տարողունակ են իրենց բնույթով և կարողանում են տեղավորվել այդ սահմանների մեջ: Նախ և առաջ, ներկայացնեմ Հայաստանից Միացյալ Նահանգներ հյուր եկած ու այսօր նաև “Բարև”-ի հյուր՝ ակադեմիկոս Գեորգ Բրուտյանին: Ողջույն պարոն Բրուտյան, ինչպե՞ս եք:

Գ.Բ. - Շնորհակալություն, շատ լավ:

Նունե Ավետիսյան- Որպես մասնագետ, որպես փիլիսոփա, համաձայն՞ն եք այն ամենին, ինչ ես ասացի: Իսկապե՞ս կան մարդիկ, ում հնարավորությունները մեր պատկերացումներից ավելին են, և ամեն ոք չի կարող այդքան հնարավորություններով տեղավորվել այդ կենսագրության սահմանների մեջ և կարողանալ ներկայանալ մարդկությանը:

Գ.Բ. - Դուք ճիշտ եք ընկալում իրավիճակը, և դա ունի մի շարք պատճառներ: Պատճառներից մեկն այն է, որ ոմանք ծնվում են հենց այդպիսին, իսկ ոմանց էլ կյանքն է դարձնում փիլիսոփա:

Նունե Ավետիսյան - Կարո՞ղ ենք ասել, որ փիլիսոփայությունը վերացական գիտություն է: Արդյո՞ք ունեցել եք հստակ դիրքորոշում, որն ուղղորդել է Ձեզ այս գիտության ընտրության հարցում, որը շատ հաճախ վերացական գիտություն է համարվում:

Գ.Բ. - Դժվար է միանշանակ ասել, թե դա վերացական գիտություն է: Շատերն են կարծում, թե ամենավերացական գիտությունը փիլիսոփայությունն է, բայց այժմ աշխատում են ստեղծել պատկերավոր փիլիսոփայություն, փիլիսոփայությունը պատկերների մեջ, և այլն, ու ցույց տալ, որ այդ վերացականը միևնույն ժամանակ շատ կոնկրետ իրավիճակում կոնկրետ տեսք է ստանում:

Նունե Ավետիսյան - Որն. Բրուտյան, ընդհանրապես մարդ արարածին ուսումնասիրելով Դուք ի՞նչ եզրակացության եք եկել, արդյո՞ք մարդ, երբ ավելի երիտասարդ է, առավել հավանական են նրա փիլիսոփայական հնարավորությունները, մտածելակերպը և այլն, քան, երբ նա արդեն հասուն տարիքում է: Ինչպե՞ս եք մեկնաբանում դա:

Գ.Բ. - Դա տարբեր մարդկանց մոտ տարբեր կերպ է դրսևորվում, բայց հիմնականում, իհարկե, պետք է ասել, որ ինչքան մարդիկ մեծանում են, այնքան իմաստնանում են: Այս հարցին շատ հետաքրքիր ձևով անդրադարձավ իմ թոռնիկներից մեկը: Մի քանի տարի առաջ ես նրա հետ գնացել էի Սան Ֆրանցիսկո: Թոռնիկիս անընդհատ ծանոթացնում էի մեծ փիլիսոփաների հետ, ներկայացնում շատ իմաստուն մարդկանց: Մի անգամ նա հարցրեց. “Պապի՞ կ, երբ մեծանում են, բոլո՞րն են դառնում իմաստուն փիլիսոփա”: Ասացի. “Ո՞չ, իմաստուն դառնում են, երբ երիտասարդ ժամանակ խելացի են լինում”:

Նունե Ավետիսյան - Դուք Հայաստանի ազգային ակադեմիայի ակադեմիկոս եք, նախագահության խորհրդական, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի պրեզիդենտ: Իսկ ինչպե՞ս է ժամանակի հետ համընթաց քայլում այս գիտությունը, պրն. Բրուտյան:

Գ.Բ. - Ասել, թե փիլիսոփայությունն ամենահին գիտությունն է, քիչ է: Փիլիսոփայությունն առաջացել է մարդու առաջացման հետ միասին: Դա եղել է ն՛ հոգեկան բավարարվածության նշան, ն՛ աշխարհը ճանաչելու եղանակ: Եվ պատահական չէ, որ բոլոր երկրների համալսարաններում կան փիլիսոփայական ֆակուլտետներ, դպրոցներ, տարբեր կազմակերպություններ: Խորհրդային Միությունում շատ հաստատ ու հստակ էր պատկերը: Բոլոր հանրապետություններն էլ ունեին ակադեմիաներ, բայց ոչ բոլոր ակադեմիաներն ունեին փիլիսոփայության բաժանմունքներ: Եվ այդ պայմաններում, այնուամենայնիվ, Խորհրդային միությունն առաջին էր, որտեղ ստեղծվեց երկրորդ ակադեմիան՝ Հայոց փիլիսոփայական ակադեմիան: Պատճառը մի քիչ զարմանալի է: Ես լավ կապերի մեջ էի հարևան հանրապետությունների փիլիսոփաների հետ, ում հետ ես հանդիպում էի տարբեր միջազգային գիտաժողովներում, համաժողովներում, լսում նրանց ելույթները և այլն: Վրաստանում, հատկապես, կային մի շարք նշանավոր փիլիսոփաներ՝ Նուցուբիձե, Բաքրաձե, Շերեթելի: Նրանք տարիքով ինձանից բավականին մեծ էին, և առաջինն ինձ առաջադրեցին իմ թեկնածությունը Հայաստանի գիտությունների ակադեմիայի անդամության համար: Մի անգամ ինձ մոտ եկան Վրաստանից յոթ փիլիսոփաներ, ընդ որում՝ մի մասը Սուխումիից Աբխազիայից, մի մասը՝ բուն Վրաստանից: Զանգահարեցին և խնդրեցին ընդունել իրենց: Ընդունեցի, յոթ օր մնացին և, վերջապես, գաղտնիքը բացահայտեցին. «Դուք սիրում եք Պիցունդան Աբխազիա», - դիմելով ինձ ասացին, - «Եվ պետք է իմանաք, որ Աբխազոտելը Պիցունդայում է թաղված»: Իհարկե, դա այդպես չէր: Բայց ի՞նչն էր նրանց համար կարևորը. նրանք ուզում էին ամեն կերպ ինձ համոզել, որ ես գնամ և Սուխումիում հիմնեմ Փիլիսոփայական ակադեմիա: Դա 1987 թվականին էր, այսինքն գոտ 25 տարի առաջ, և նաև փաստարկ էին բերում, որ մենք ունեցել ենք մեծ փիլիսոփաներ, ովքեր հիմա չկան և հիմա Դուք պետք է անեք ձեր հարևան հանրապետության համար այն, ինչ նրանք անում էին մյուսների համար: Դա, իհարկե, շատ դժվար հարց էր: Ես աշխատում էի Վիկտոր Համբարձումյանի հետ, ով գիտեր հարցերը հետաձգել և մտածել: Ես նրան պատմեցի կատարվածի մասին: Վերջինս ասաց, որ ցանկալի է մի քանի օր մտածել այդ խնդրի շուրջ և, ի վերջո, որպես հարցի լավագույն լուծում՝ առաջարկեց ստեղծել հայոց փիլիսոփայական ակադեմիա Հայաստանում: 1987 թ-ին ստեղծվեց Հայոց փիլիսոփայական ակադեմիան և գործող համաշխարհային ակադեմիաների ցանկում, ըստ էության, դարձավ առաջինը: Դա այն պատճառով, որ մեր ժամանակներում կան երկու ակադեմիաներ՝ մեկը Լիխտենշտեյնում, մյուսը՝ Ֆինլանդիայում: Սակայն դրանք ուսումնական հիմնարկներ էին, այնպես, ինչպես, օրինակ, Արվեստի ակադեմիան Հայաստանում: Այն ուսումնական հաստատություն է, իսկ Ակադեմիան, ըստ էության, գիտահետազոտական կառույց է: Որպես այդպիսին սա առաջինն է մեր ժամանակներում: Աշխատանքի լավ կատարման համար անհրաժեշտ էին ն՛ փորձ, ն՛ էներգիա, բայց, նման դեպքում, ոգևորությունն էլ մեծ նշանակություն ունի: Եվ ստացվեց այնպես, որ աշխարհի լավագույն փիլիսոփաները ընդգրկվեցին որպես այս Ակադեմիայի արտասահմանյան անդամներ: Եվ նրանց առաջարկությամբ, արդեն 2001 թվականին, Հայոց փիլիսոփայական ակադեմիան իր տեղը զիջեց Փիլիսոփայության միջազգային ակադեմիային, իսկ ինքը դարձավ Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի հայկական բաժանմունքը՝ պահպանելով նաև իր ինքնուրույնությունը:

Ի դեպ, երբ միայն Հայոց փիլիսոփայական ակադեմիան էր գործում, ես հրատարակում էի նաև ակադեմիայի հանդեսը, որը կոչվում էր “Armenian Mind”, իսկ Միջազգային ակադեմիայի ստեղծումից հետո հրատարակում ենք “News and Views”-ը, այսինքն՝ «Նորություններ և հայացքներ»: Այն հրատարակվում է որպես Ակադեմիայի հանդես և տարածվում

ակադեմիկոսների շրջանում: Ի դեպ՝ ակադեմիան ունի շուրջ 100 ակադեմիկոսներ՝ 44 երկրներից:

Նունե Ավետիսյան - Այդպես ամրապնդվում է շփումն ու մտքերի փոխանակումը:

Գ. Բ. - 2001 թվականից հետո մենք մի քանի միջազգային գիտաժողովներ ենք կազմակերպել: Առաջին գիտական համաժողովը տեղի ունեցավ 2005թ.-ին Հայաստանում: Մասնակցում էին մոտ քսան երկրների անդամներ: Վերջիններս գոհ էին, քանի որ այն շատ լավ անցավ: Հայրենիք վերադառնալով՝ նրանք անմիջապես նամակ գրեցին՝ խնդրելով իմ համաձայնությունը անմիջապես մեկ տարի հետո երկրորդ գիտաժողովը Հունաստանում կազմակերպելու՝ նշելով, որ այն լինի՝ Երևանյան մոդելով”:

Նունե Ավետիսյան – Մեծ հպարտությամբ ես պետք է նշեմ Ձեր մեծ կենսագրությունից մի փոքր տեղեկություն. «Ակադեմիկոս Գ.Բրուտյանի գրչին են պատկանում ավելի քան վեց տասնյակ գրքեր և շուրջ երկու հարյուր հոդվածներ, որոնք թարգմանվել և հրատարակվել են քսան լեզուներով աշխարհի տարբեր երկրներում: Փիլիսոփայության մեջ ունեցած ներդրումների համար նա ընտրվել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի անդամ (1971), Հայոց փիլիսոփայական ակադեմիայի հիմնադիր պրեզիդենտ (1987), Համաշխարհային մշակույթի ակադեմիայի ցմահ անդամ (Մեծ Բրիտանիա, 1990), «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ (Փարիզ, Ֆրանսիա, 1992), Լոնդոնի Դիվանագիտական ակադեմիայի հիմնադիր անդամ (Լոնդոն, Մեծ Բրիտանիա, 2000), Միջազգային դիվանագիտական ակադեմիայի անդամ (Լոնդոն, Մեծ Բրիտանիա 2000), Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի հիմնադիր պրեզիդենտ (ԱՄՆ - Ավստրիա - Հայաստան - Հունաստան, 2001), Նոոսֆերայի (կայուն զարգացման) միջազգային ակադեմիայի անդամ (Մոսկվա, 2009),- սա ուղղակի մեկ էջն է այն կենսագրության, որը փորձեցի ներկայացնել:

Պրն. Բրուտյան, քանի որ երկար տարիներ Երևանի պետական համալսարանում դասավանդում եք և դասախոսություններով հանդես եք եկել աշխարհի տարբեր համալսարաններում, սա ևս Ձեր կենսագրության կարևոր բաժիններից է, նշանակում է՝ երիտասարդությունը, այսպես ասենք, անցնում է Ձեր թրի տակով: Ինչպե՞ս է Ձեր կապն ընդհանրապես հաստատվում երիտասարդության հետ և այն գլխավոր դասը, որ Դուք կարծում եք ամենից կարևորն է, այն առաջին դասը, որը պետք է փիլիսոփայությունը ծանոթացնի այն երիտասարդին, ում Դուք հանդիպում եք: Ո՞րն է Ձեզ համար ամենամեծ պատգամն այն մարդ արարածին, ում Դուք պետք է այդ ուղիով հետագայում տանք:

Գ.Բ. - Միրել փիլիսոփայությունը և սիրել գիտական աշխատանքը, զբաղվել այդ աշխատանքով: Ի միջի այլոց, նշեմ, որ շատ հաճախ ասում են. «Մեր ժամանակն ուրիշ էր, իսկ այժմյան երիտասարդները զիջում են իրենց ունակություններով»: Սակայն պետք է ասեմ, որ այդպես չէ: Ես միշտ ղեկավարվել եմ հետևյալ սկզբունքով. «Եթե որևէ կուրսում կա գոնե մեկ ուսանող, ով հետագայում լավ գիտնական դառնալու հույս էր ներշնչում ինձ, ապա ես ինձ պարտավոր եմ համարել այնտեղ դասավանդել՝ անկախ ամեն ինչից»: Եվ պետք է հպարտությամբ ասեմ, որ շատ լավ կադրեր եմ պատրաստել. Տիգրան Պետրոսյանը, ով հանձարեղ մարդ էր, և նա էլ, սիրելով փիլիսոփայությունը, դարձավ փիլիսոփայական գիտությունների թեկնածու, պաշտպանեց դիսերտացիա Հայաստանում: Ես իմ նախկին գիտական ղեկավար, աշխարհահռչակ փիլիսոփա Ասմունսին հրավիրեցի որպես Տիգրան Պետրոսյանի ընդդիմախոս և, ի վերջո, նրանք երկուսն էլ դարձան Հայոց փիլիսոփայական ակադեմիայի ակադեմիկոսներ: Դա շատ կարևոր հանգամանք է և եզակի դեպք չէ: Պետք է նշեմ իմ սաներից մի քանիսին ևս.

Աննա Ամիրխանյանը, ով հինգերորդ կուրսում, որպես բացառություն, պաշտպանեց ատենախոսությունը և դարձավ աշխարհի ամենաերիտասարդ փիլիսոփան, փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճանով: Ինձ մոտ աշխատելիս՝ նա գրեց հինգ գրքույկ և ամենաբարդ խնդիրների մասին: Փոխակերպական և մաթեմատիկական տրամաբանությունների փոխհարաբերության վերաբերյալ: Հիմա մենք երկհատորյակ ենք

հրատարակել այդ հարցերի վերաբերյալ, որը բացառիկ գործ է: Իմ մյուս տաղանդավոր սաներն են՝ Աթանեսյան Արթուրը՝ սոցիալական գիտությունների դոկտոր, ամբիոնի վարիչ (ԵՊՀ), Հովհաննես Հովհաննիսյանը, Հասմիկ Հովհաննիսյանը, ովքեր այժմ փիլիսոփայական գիտությունների թեկնածու են, դոցենտ, զգալի թվով հոդվածների և գրքերի հեղինակ: Նշեմ նաև իմ մեկ այլ սանի՝ Հակոբ Մադոյանին, ով պաշտպանեց այս տարի և այժմ կարդում է դասախոսություններ: Դավիթ Մոսիսյանը, ում 20 տարեկանում նշանակեցի Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի հրատարակչության տնօրեն: Մենք ունենք Internatioanal Academy for Philosophy Press՝ Oxford Press-ի օրինակով, որտեղ մենք հրատարակում ենք հոդվածներ՝ խիստ ընտրված կարգով:

Եվ, նաև, իմ ուսանողուհին՝ Լիլիթ Պետրոսյանը, ով Գիտահետազոտական կենտրոնի կրտսեր գիտաշխատող է, Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի գիտական քարտուղար, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի պրեզիդենտի օգնական, Հայոց փիլիսոփայական ակադեմիային առնթեր երիտասարդ հասարակագետների ընկերակցության անդամ: Լինելով առաջին կուրսի մագիստրանտ՝ հոգեբանության ֆակուլտետի երկրորդ կուրսում դասախոսություններ է կարդացել «Գիտական աշխատանքի տեխնոլոգիան» դասընթացի շրջանակներում: Նաև գրել է «Լինել թե չլինելու տրամաբանություն» գրքույկը:

Նունե Ավետիսյան - Գրքի անվանումն արդեն հետաքրքիր է:

Գ.Բ. - Իհարկե, շատ հետաքրքիր է, ահա նա է: (Ցույց է տրվում հեղինակի գրքույկը):

Նունե Ավետիսյան - Օ՛, գեղեցկուհի է:

Գ.Բ. - Եվ, նաև, անզլերեն թարգմանությունը՝ “THE LOGIC OF TO BE OR NOT TO BE”.

Նունե Ավետիսյան - Հետաքրքիր է և շատ հաճելի:

Գ.Բ. - Եվ ես աշխատում եմ ներկայացնել դրանք ոչ միայն ակադեմիկոսներին, այլև արտասահմանյան շատ այլ գիտնականներին: Եվ վերջին անգամ, երբ ամերիկյան Metaphilosophy ամսագրի խմբագիրը ծանոթացել էր այս գործի հետ, Լիլիթին անմիջապես հրավիրել էր Ամերիկա՝ իր կուրսերից մեկում դասախոսություն կարդալու:

Նունե Ավետիսյան - Հրաշալի է:

Գ.Բ. - Այսպես, նմանատիպ մարդիկ շատ կան: Ես հպարտանում եմ նրանցով: Ես գտնում եմ, որ ավելի լավ է մեկ գիրք պակաս գրեմ և աշխատեմ նման խելացի սերունդների հետ:

Նունե Ավետիսյան - Շատ շնորհակալ աշխատանք է:

Գ.Բ. - Նշեմ նաև իմ մեկ այլ ուսանողի ևս, ով գրեց «Լոություն» խորագրով գրքույկ:

Նմանատիպ հաջողություններով ես ավելի շատ եմ ուրախանում, քան իմ հաջողություններով:

Նունե Ավետիսյան - Մի միամիտ հարց պետք է տամ Ձեզ ակադեմիկոս: Մենք գիտենք, որ գոյություն ունի ազգային մշակույթ, ազգային ճարտարապետություն, ազգային քանդակագործություն և այլն: Կարո՞ւ էք ասել, որ գոյություն ունի ազգային փիլիսոփայություն:

Գ.Բ. - Իհարկե, մենք ունենք Հայոց փիլիսոփայության պատմություն: Եվ փիլիսոփայությունն էլ ունի ինչպես ազգային, այնպես էլ՝ համամարդկային բնույթ:

Նունե Ավետիսյան - Իսկ որքանով է այն հետաքրքիր այլ ժողովուրդներին:

Գ.Բ. - Փիլիսոփայությունը զարգանում է: 1980 թվականին ես կազմակերպեցի Դավիթ Անհաղթի 1500-ամյա հոբելյանի համաժողովը համաշխարհային մասշտաբով և հրավիրեցի Փիլիսոփայական ընկերակցությունների միջազգային ֆեդերացիայի նախագահին, բոլոր երկրների ամենախոշոր փիլիսոփաներին, Խորհրդային միության հանրապետությունների պատվիրակությունների ղեկավարներին, կրթության կամ արտաքին գործերի նախարարներին: Այդ իրադարձությունը շատ մեծ արձագանք գտավ, և մենք շատ գրքեր հրատարակեցինք:

Նունե Ավետիսյան - Եվ մեր ազգային փիլիսոփայությունը, հետաքրքրո՞ւմ է օտարներին:

Գ.Բ. - Այո՛, անկասկած:

Նունե Ավետիսյան - Պրն. Բրուտյան, արդյո՞ք փոխվել են փիլիսոփայական բազմազան հարցերի ու զանազան տեսանկյունների վերաբերյալ Ձեր տեսակետները, և ընդհանրապես, եղե՞լ են դեպքեր, երբ հակադրվեք ինքներդ Ձեզ: Այսինքն՝ ունեցե՞լ եք հակասական պահեր, որ գլխովին փոխվել է Ձեր կարծիքը այսինչ փաստի կամ երևույթի վերաբերյալ, որպես փիլիսոփա:

Գ.Բ. - Ես ապրել եմ շատ ծանր ժամանակաշրջանում: Խորհրդային միության տարիներին խիստ սահմանափակ էին հնարավորությունները: Մակայն, այնուհանդերձ, ես գրել եմ այնպիսի գործեր, որոնք օտարերկրացիների կողմից լավ էին ընդունվում, և ես 1958 թվականից սկսած մասնակցում էի բոլոր համաշխարհային համաժողովներին, և հաճախ ղեկավարում մի որևէ մասնաճյուղ: Ստեղծել էի Փաստարկման երևանյան դպրոց և վերջին համաժողովներում, անգամ, կլոր սեղան այդ հարցի շուրջը և, որի հետ կապված, մեծ պատմություններ եղան: Հատկացրել էին երկու ժամ, որի ընթացքում հինգ մարդ պետք է զեկուցեին, բայց 53 մարդ պայքարում էին տեղերի համար և հարկադրված եղանք դա Անգլիայում անցկացնել: Համաժողովի ղեկավարությունը սրահ տրամադրեց և կազմակերպեց երկրորդ նիստը: Ընդ որում այդ նիստի համար նրանցից ոմանք, ովքեր պատրաստ էին զեկուցելու, բայց հաջողություն չունեցան, մինչև անգամ Ավստրալիայից մեկ օրով եկան՝ մասնակցելու այդ երկրորդ նիստին:

Իհարկե, իմ գրքերն էլ են անցել շատ ծանր շրջաններ: Երբեմն խմբագիրներն այնպիսի դարձվածքներ են կիրառել, որոնցից ես սարսափում էի: Բայց, ժամանակն էր այդպիսին: Հետագայում պարզվել է, որ մասնագետներն ինձ համարել են, և հանդեսներում էլ վերջերս գտա, որ ես, ինչպես նաև մի շարք այլ փիլիսոփաներ, եղել ենք «ոչ պաշտոնական փիլիսոփայության հիմնադիրներ»:

Նունե Ավետիսյան - Մեր հեռուստադիտողներից մեկը Ձեզ ուղղված հարցադրում ունի: Լսենք:

Հեռուստադիտող- Բարի երեկո Ձեզ: Նախ, պետք է նշեմ, որ շատ հաճելի է լսել Ձեզ նման հանճարեղ մարդկանց: Խոնարհվում ենք Ձեր առջև: Ինչպե՞ս կարող ենք ձեռք բերել Ձեր գրքերից:

Գ.Բ. - Դրա համար ես պետք է խնդրեմ, որ վերահրատարակեն:

Նունե Ավետիսյան - Չկան այլևս հիմա:

Մենք չենք կարողանալու այս ծրագրի ընթացքում ծանոթանալ Գեորգ Բրուտյանի ապրած կենսագրության անգամ փոքր հատվածին, բայց ես ձեզ խոստանում եմ, որ առանց ակադեմիկոս Բրուտյանի ներկայության, մի անգամ ես կփորձեմ նրա կենսագրությունը ձեզ ներկայացնել, որովհետև արժե մեր մեծերին անդրադառնալ և դա անել հենց այն ժամանակ, երբ նրանք մեր կողքին են, երբ նրանց ժամանակակից ենք: Մենք պարտավոր ենք ներկայացնել նման մարդու ծավալված գործունեությունը ոչ միայն իր երկրում, այլև ամբողջ աշխարհում, և դա պետք է անել հիմա, քանի դեռ նա մեր կողքին է: Նշեմ նաև, որ Գ. Բրուտյանի այցելությունը Միացյալ Նահանգներ պատահական չէ, նպատակային է, ուստի պետք է խնդրեմ, որ մեզ մի փոքր ներկայացնեք այս այցելության նպատակը:

Գ.Բ. - Վերջին տարիներին ես այստեղ կազմակերպել եմ համաժողովներ՝ փիլիսոփայություն և մետափիլիսոփայություն թեմաներով, որոնք բավականին լուրջ խնդիրներ են, և ես շատ եմ զբաղվել դրանց ուսումնասիրությամբ: Համաժողովից հետո ես խորհրդակցեցի HI-AM բարեգործական միության ղեկավարի՝ Նշան Աճեմյանի հետ, ով շատ ջերմ մոտեցում ցուցաբերեց, և որոշեցինք կազմակերպել Հայաստան-Կալիֆոռնիա երիտասարդ հասարակագետների և հումանիտար ուսմունքների գիտական համաժողով, որին կարող են մասնակցել նաև այլ երկրներից, եթե նրանց զեկուցումներն ընդունվեն կազմկոմիտեի կողմից: Մենք աշխատում ենք ավելի լայն հնարավորություններ ստեղծել զեկուցողների համար, ուստի զեկուցումները կարող են լինել կա՛մ անգլերեն, կա՛մ հայերեն:

Նունե Ավետիսյան - Հիանալի մտահղացում է:

Գ.Բ. - Այնուհետև, ինչն է կարևորը, առաջին գիտաժողովը տեղի կունենա Գլենդելում: Փորձենք, գուցե 2011թ-ի հոկտեմբերին, իսկ երկրորդը տեղի կունենա Հայաստանում (Երևան-Սևան):

Նունե Ավետիսյան - Օ՛, ինչ լավ բան եք մտածել:

Գ.Բ. - Եվ այս փաստը համընկնում է Հայոց փիլիսոփայական ակադեմիայի ստեղծման 25-րդ

տարվա տարելիցի հետ:

Նունե Ավետիսյան – Այսինքն՝ հորելյանական է: Հրաշալի է:

Գ.Բ. - Եվ ես հույս ունեմ, որ բավականին աշխատանք ենք կատարելու միասին: Գիտաժողովի նպատակն է՝ ի մի բերել բոլոր զեկուցումները և տեսնել, թե ի՞նչ նորություն են հաղորդում երիտասարդներն այն խնդիրների վերաբերյալ, որոնք դեռևս չեն լուծվել ավագ սերնդի կողմից: Մենք պետք է երիտասարդներին շատ աջակցենք, քանի որ նման մի երիտասարդ էլ մենք ենք եղել ժամանակին:

Նունե Ավետիսյան - Բիարկե, ինչու հիմա չօգնել նրանց, որպեսզի նրանք էլ այս մակարդակի հասնեն: Կարծում եք կգա՞ն նորերը, որոնք կկարողանան փոխարինել:

Գ.Բ. - Անպայման կգան, անպայման, և, ավելին, ես կարծում եմ, որ նրանք պետք է ավելին անեն, քան մենք:

Նունե Ավետիսյան - Բիարկե, որովհետև ամբողջ ապագան հենց նրանց ձեռքում է, պրն. Բրուսյան:

Գ.Բ. - Եվ, պատահական չէ նաև, որ ինչ ակադեմիա էլ ես ստեղծել եմ, նրանց աշխատանքներին ներգրավում եմ երիտասարդներին: Օրինակ՝ նույն Փիլիսոփայության միջազգային ակադեմիան, որն ունի իրեն առընթեր երիտասարդ հասարակագետների ընկերակցություն, Միացյալ Նահանգների բարեգործական միությունը, Հայաստանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտը:

Նունե Ավետիսյան - Ուրախալի փաստ է բոլորիս համար:

Մեր գրույցն արդեն պետք է ավարտենք և ավարտենք այն բարի կամեցողությամբ, որը վերաբերում է գալիք սերնդին, որոնցից մեկը ինչպես ինքը՝ պրն. Բրուսյանը նշեց, ժամանակին ինքն է եղել, իրեն էլ են վստահել, ցանկացել, որպեսզի նա հաջողությունների հասնի: Ու այսօր տեսնել հասուն, կայացած, ինքնահաստատված մի հայրերու այս մոլորակի վրա, ով մեծ հնարավորությունների տեր անձնավորություն է, ակադեմիկոս, նրա թրի տակով բազմաթիվ ժողովուրդների բազմաթիվ երիտասարդներ եկել են ու անցել և դարձել հիանալի մասնագետներ ու փիլիսոփաներ: Պիտի ուղղակի խոնարհաբար մեր բոլորի անունից շնորհակալություն հայտնեմ այս աշխարհում Ձեր ներկայության համար, որպես հայ փիլիսոփա, Ձեր ներդրումների համար այս մոլորակում որպես հայ մասնագետ, որպես հայ դասախոս, որպես հայ գիտնական: Եվ Ձեր ցանկությունների համար, որոնք առնչվում են մեր հայրենակիցներին: Այն շատ կարևոր գիտական հանդիպումների վերաբերյալ, որոնք մեր միտքը առաջ կտանեն, մեր երիտասարդներն էլ կվոզկորվեն:

Գ.Բ. - Միշտ պատրաստ եմ օգնել մեր երիտասարդներին:

Նունե Ավետիսյան - Ուզում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ այս հաճելի հանդիպման համար և HI-AM բարեգործական միությանը, նրա ղեկավարին, Նշան Աճեմյանին, ով կազմակերպեց այս հանդիպումը, և հուսամ, որ մեր կապը, մեր բարեկամությունը Միացյալ Նահանգների, Ձեր և այստեղի համայնքի միջև կշարունակվի և Ձեզ նորից կտեսնենք այստեղ և Հայաստանում կայցելենք Ձեզ, կյսենք Ձեր դասախոսությունները, որոնք պատկերացնում եմ, թե ինչ չնաշխարհիկ ժամեր են Ձեր ուսանողների համար: Ձեզ բարի վերադարձ եմ ցանկանում և նորանոր հաջողություններ: Դուք այնքան կենսունակ եք, որ, վստահ եմ, դեռ տարիներ շարունակ պետք է մարդկությանը պարզեք այն, ինչ ունեք Ձեր ներսում: Շնորհակալություն:

Գ.Բ. - Շատ շնորհակալ եմ, շատ ապրեք:

Նունե Ավետիսյան - Ձեզ հաջողություն: Այսքանը բարեկամներ, թող Աստված պահապան լինի Ձեզ: Բարին ընդ Ձեզ:

Հարցազրույցը տեղի է ունեցել 2011թ.-ի փետրվարին
Ներկայացվում է խմբագրված տարբերակով
Նունե Ավետիսյան

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Microsoft Office Word ծրագրով, A5 ձևաչափի թղթի վրա Arial տառաձևով և 11 տառաչափով, վերնագրերը, հեղինակների անունները և ազգանունները՝ մեծատառերով, տողերի միջև հեռավորությունը՝ 1.2: Եթե տեքստը պարունակում է թվաբանական նշաններ/ոչ տառային նշաններ, օրինակ՝ մաթեմատիկական և տրամաբանական բանաձևեր, ապա տեքստի PDF տարբերակը պետք է կցվի անհրաժեշտ ստուգման համար (PDF տարբերակը հեշտությամբ Word կարելի է դարձնել Adobe Acrobat Standard ծրագրի օգնությամբ):

Հոդվածներում պետք է օգտագործվի ցիտման APA տարբերակը, այսինքն՝ տեքստում բերված մեջբերումներից և հղումներից հետո փակագծերում ինֆորմացիայի աղբյուրը պետք է նշել հետևյալ կերպ. (հեղինակի անունը, հրատարակման տարեթիվը, անհրաժեշտության դեպքում՝ էջերը), օրինակ՝ (Quine 1953: 45) :

Մեջբերվող աղբյուրի վերաբերյալ լրիվ ինֆորմացիան պետք է տեղադրվի հոդվածի վերջում այբբենական կարգով «Գրականություն» վերնագրով: «Գրականության» վերաբերյալ լրիվ ինֆորմացիայի ձևերը հետևյալն են.

Գիրք մեկ հեղինակով.

Toulmin, S. E. (1958). The Uses of Argument. (updated ed., 2003; reprint, 2006). New York: Cambridge University Press.

Գիրք երկու հեղինակով.

Hilbert, D. & Bernays, P. (1934). Grundlagen der Mathematik (vol. 1). Berlin: Springer.

Խմբագրի կողմից կազմված գիրք.

Ayer, A. J. (Ed.). (1959). Logical Positivism. The Free Press, Glencoe, Illinois.

Ամսագրում տպագրված հոդված.

Hacking, I. (1979). "What is Logic". The Journal of Philosophy, Vol. LXXVI, N. 6, June (pp. 285-319).

Հատորի կամ ժողովածուի մեջ տպագրված հոդված.

Quine, W.V. (1953). "Two Dogmas of Empiricism." In Quine, W. V., From a Logical Point of View (pp. 20-46). Cambridge, Mass.

APA ցիտման ձևի վերաբերյալ մանրամասն տեղեկության համար տես՝ Publication Manual of the American Psychological Association, 4th ed., 1994:

Տեքստերը, նկարները և այլ հրատարակվող նյութերը պետք է ուղարկվեն խմբագրություն հետևյալ հասցեով՝ Գ. Բրուտյան, Տիգրան Մեծ փող. 17, Երևան 375019, Հայաստան:

Էլեկտրոնային հասցե (e-mail)՝ georgbrutian@gmail.com

Հեռ.՝ (+37410) 597093, (+37494) 452856, Ֆաքս՝ (+374 10) 597001

Նյութերը, նկարները և սկավառակները ետ չեն վերադարձվում:

INSTRUCTIONS FOR AUTHORS

The Articles and the Biographical Sketches should be written in Microsoft Office Word on A5 paper with the font "Arial", font size – 11, titles and author's name - UPPERCASE, line spacing – at 1,2. If the text contains non-alphabetical symbolism, for example, mathematical or logical formulas, the PDF version of the text should be enclosed for the verification. (PDF can be easily created from Word document using Adobe Acrobat Standard).

The articles and biographical sketches should be constructed according the APA citation system, i. e. in the text, after the citation or reference, in the brackets should be mentioned the source in the following way – (author, year published, the page if necessary), for example: (Quine 1953: 45). The full information about the cited materials should be placed at the end of the text under the title 'References' in the alphabetical order. The forms for the full information in 'References' are as follows:

For a book by a single author

Toulmin, S. E. (1958). The Uses of Argument. (updated ed., 2003; reprint, 2006). New York: Cambridge University Press.

For a book by two authors

Hilbert, D. & Bernays, P. (1934). Grundlagen der Mathematik (vol. 1). Berlin: Springer.

For a book by an editor

Ayer, A. J. (Ed.). (1959). Logical Positivism. The Free Press, Glencoe, Illinois.

For an article in a journal

Hacking, I. (1979). "What is Logic". The Journal of Philosophy, Vol. LXXVI, N. 6, June (pp. 285-319).

For an article in a collection or volume

Quine, W.V. (1953). "Two Dogmas of Empiricism." In Quine, W. V., From a Logical Point of View (pp. 20-46). Cambridge, Mass.

For a detailed account of the APA citing style see the Publication Manual of the American Psychological Association, 4th ed., 1994.

Texts, photos and other publishing materials should be sent to EDITORIAL ADDRESS: G. Brutian, Tigran Mets Str. 17, Yerevan 375019, Armenia.

E-Mail: brut@sci.am, georgbrutian@gmail.com

Phone: (37420) 597093, (+37494) 452856, Fax: (37410) 597001

ИНСТРУКЦИИ ДЛЯ АВТОРОВ

Статьи должны быть написаны по Microsoft Office Word на бумаге размером А5, шрифтом «Arial», размер шрифта 11, заголовки, имена и фамилии авторов заглавными буквами, межстрочный интервал - 1,2. Если текст содержит не алфавитную символику, например, математические и логические формулы, то PDF версия текста должна быть приложена для верификации (PDF версия может быть легко создана из Word документа при помощи Adobe Acrobat Standard).

Статьи должны быть составлены согласно системе цитирования APA, то есть, в тексте после цитаты или ссылки следует в скобках указать источник следующим образом - (автор, год издания, страницы при необходимости), например: (Quine 1953: 45). Полная информация о цитируемом источнике должна быть дана в конце текста статьи в алфавитном порядке под заголовком «Литература». Форма для полной информации «Литературы» должна быть следующей:

Для книги с одним автором.

Toulmin, S. E. (1958). The Uses of Argument. (updated ed., 2003; reprint, 2006). New York: Cambridge University press.

Для книги с двумя авторами.

Hilbert, D. & Bernays, P. (1934). Grundlagen der Mathematik (vol. 1). Berlin: Springer.

Для книги с редактором.

Ayer, A. J. (Ed.). (1959). Logical Positivism. The Free Press, Glencoe, Illinois.

Для статьи из журналов.

Hacking, I. (1979). "What is Logic". The Journal of Philosophy, Vol. LXXVI, N. 6, June (pp. 285-319).

Для детального знакомства со стилем цитирования APA см. Publication Manual of the American Psychological Association, 4th ed., 1994.

Тексты, фотографии и другие материалы, публикации следует направлять по АДРЕСУ РЕДАКЦИИ: G. Brutian, Tigran Mets Str. 17, Yerevan 375019, Armenia.

E-Mail: georgbrutian@gmail.com

Телефон: (37410) 597093, (+37494) 452856, Fax +(374 10) 597001

Рукописи, фотографии и дискеты не возвращаются.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- Հանդեսում կարող են հրատարակվել միայն այն հոդվածները, որոնք նախկինում չեն հրատարակվել:
- Հեղինակները պատասխանատու են տրամադրված տեղեկատվության ճշգրտության համար:
- Հրատարակված հոդվածները արտահայտում են հեղինակների կարծիքները և ոչ պարտադրաբար/անհրաժեշտաբար խմբագրական խորհրդի:
- Հոդվածներն ընդունվում են վերջնականորեն խմբագրված տեսքով՝ ըստ տվյալ ամսագրում զետեղված «Ցուցումներ հեղինակների համար» բաժնի:

DEMANDS TO AUTHORS

- Only articles which have not been published before may be published in Wisdom.
- The articles published express the opinions of the authors and not necessarily those of the Editorial Board.
- Authors are responsible for checking the accuracy of information supplied.
- The articles are accepted only in a finally edited form according to "Instructions for authors" section placed in the journal.

ТРЕБОВАНИЯ ДЛЯ АВТОРОВ

- В журнале могут быть опубликованы только те статьи, которые ранее не были опубликованы.
- Авторы несут ответственность за точность предоставляемой информации.
- Опубликованные статьи отражают мнение авторов и не обязательно редколлегии.
- Статьи принимаются в окончательном виде, согласно "Инструкции для авторов" данного журнала в разделе.